Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ 122

ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 138

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 141
Պաշտոնական դրամաշնորհներ 164
Այլ եկամուտներ 166

ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 170

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 171
Ընթացիկ ծախսեր 171
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ 173

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 174
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ 174
Պաշտպանություն 198
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն 200
Տնտեսական հարաբերություններ 207
Շրջակա միջավայրի պաշտպանություն 253
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ 261
Առողջապահություն 266
Հանգիստ, մշակույթ և կրոն 287
Կրթություն 309
Սոցիալական պաշտպանություն 334
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր 356

ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 357

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 365

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 366

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ) 367

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ) 377

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 382

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 388

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ 1664

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ 1763

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ) 3643

2017 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական զարգացում

Գործարար և ներդրումային միջավայր, արտահանման զարգացում

Գործարար միջավայր: ՀՀ կառավարությունը կարևորում է ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, այդ թվում՝ վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայրի ստեղծման ուղղությամբ քայլերի շարունակական իրականացումը: Այդ համատեքստում շարունակվել են կարգավորման ազդեցության գնահատման համակարգի միջոցով տնտեսական ոլորտի կարգավորումները բիզնեսի վարման համար առավել նպաստավոր դարձնելուն ուղղված քայլերը՝ նպատակ ունենալով կրճատել ինչպես ուղղակի ֆինանսական, այնպես էլ՝ վարչարարական ծախսերը:

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման տարեկան ծրագրի շրջանակներում շեշտադրվել են գործարարների համար վարչարարական ընթացակարգերի պարզեցման, պետական մարմինների հետ ուղղակի շփումների կրճատման, ոչ արդիական կարգավորումների վերացման, գործարարների համար նպաստավոր կարգավորումներն առավել հասանելի դարձնելու ուղղությամբ աշխատանքները, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականության ուղղությամբ:

Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը 2018» վարկանիշային զեկույցի տվյալներով Հայաստանը 190 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով 0.59% աճ «Հեռավորությունը լավագույն արդյունքից» ցուցանիշով՝ գրանցելով 72.51 միավոր (առավելագույնը՝ 100): Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2017 թվականին ծրագրված 49 միջոցառումներից 47-ը կատարվել են, 1-ի մասով անհրաժեշտ իրավական փոփոխությունները վերջնական լրամշակման փուլում են, 1-ը տեղափոխվել է 2018 թվականի ծրագիր:

Ներդրումային միջավայր: Ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվել են կարգավորող դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես, մշակվել և ՀՀ ԱԺ քննարկմանն է ներկայացվել ««Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքով կատարելագործվում են օտարերկրյա ներդրումների ներգրավման, պաշտպանության և հետներդրումային գործունեության հետ կապված հարցերը: Հստակեցվում են

առկա սահմանումները, տրամադրվում են լրացուցիչ արտոնություններ, ամրագրվում են ներդրողների պաշտպանության նոր երաշխիքներ, սահմանվում է վեճերի լուծման նոր մեխանիզմ: ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթուղթը, որի հիման վրա ներկայումս մշակվում է համապատասխան օրենսդրական փաթեթը:

Աշխատանքներ են տարվել ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) զարգացման ուղղությամբ: Մշակվել և ՀՀ ԱԺ քննարկմանն է ներկայացվել «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով առաջարկվող փոփոխությունների շնորհիվ որոշ դրույթներ համապատասխանեցվում են ԵԱՏՄ ազատ/հատուկ տնտեսական գոտիների և մաքսային օրենսդրության գործող դրույթներին, հստակեցվում են ազատ տնտեսական գոտու գործարկման և ազատ տնտեսական գոտու սահմանագծին ներկայացվող պահանջները, շահագործողների հայտերի գնահատման, թույլտվությունների տրամադրման և դադարեցման ընթացակարգերը, ամրագրվում է շահագործողների պարտավորությունների կատարման մոնիթորինգի համակարգը, ինչպես նաև՝ ներգրավված կողմերի իրավասությունները և պարտականությունները:

«Այյանս» և «Մերիդիան» ԱՏԳ-երի շահագործողի թույլտվություն են ստացել համապատասխանաբար 6 և 1 ընկերություններ: Տրվել է «Մեղրի» ազատ տնտեսական գոտու գործունեության պաշտոնական մեկնարկը: ԱՏԳ կազմակերպման վերաբերյալ պայմանագիր է կնքվել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (ՏԶՆՆ) և «Մեղրի ազատ տնտեսական գոտի» փակ բաժնետիրական ընկերության միջև:

Մարզերի ներդրումային հնարավորությունների բացահայտման նպատակով, ՀՀ վարչապետի՝ մարզեր կատարած այցերի արդյունքում, հավաքագրվել է շուրջ 180 ներդրումային ծրագիր, որոնցից 127-ը մշակվել և բերվել է ընդհանուր ձևաչափի: 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թվով 20 ներդրումային ծրագրի համար հաստատվել է 730.0 մլն դրամ և տրամադրվել 471.0 մլն դրամի ֆինանսավորում:

Շարունակվել են աշխատանքները ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկկողմ համաձայնագրերի կնքման ուղղությամբ: Ներկայումս բանակցային փուլում են ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկկողմ համաձայնագրերի նախագծերը 10 երկրների հետ:

Հայաստանի ներդրումային միջավայրի հնարավորությունների վերաբերյալ ակտիվ իրազեկման աշխատանքներ են տարվել ինչպես Հայաստանում և արտերկրում տեղի ունեցած մի

շարք գործարար ու ներդրումային համաժողովների ընթացքում, այնպես էլ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացում

ՓՄՁ ոլորտում իրականացվող քաղաքականության ներքո շարունակվել են պետական աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ զարգացման խթանման աշխատանքները, որոնք կազմակերպվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից՝ «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիր-ների իրականացմանը» բյուջետային ծրագրի շրջանակներում: 2017 թվականին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը տրամադրել է թվով 11487 աջակցություն հետևյալ ուղղություններով՝

- Սկսնակ գործարարների ձեռներեցությանը՝ թվով 464 աջակցություն,
- Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ՝ թվով 246,
- Տեղեկատվական և խորհրդատվական՝ թվով 10337 աջակցություն,
- Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին՝ թվով 81 վարկային երաշխավորությունների տրամադրում,
- ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում՝ թվով 348,
- Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում՝ թվով 11 դրամաշնորհի տրամադրում,
- Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում՝ թվով 126 ՓՄՁ սուբյեկտների աջակցություն:

Ներքին շուկայի պաշտպանության և մրցակցության քաղաքականություն

2017 թվականին մշակվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով առաջարկվում էր սահմանել, որ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի գնի չհիմնավորված բարձրացում կամ պահպանում չի համարվում գնի այնպիսի բարձրացումը կամ պահպանումը, որի արդյունքում այդ ժամանակահատվածի ակտիվների շահութաբերության մակարդակը չի գերազանցում 12 տոկոսը, ինչպես նաև ամրագրել, որ գների չհիմնավորված բարձրացման միջոցով գերիշխող դիրքի

չարաշահմամբ տնտեսավարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման ՀՀ պետական բյուջե 7-րդ հոդվածում լրացվող 4-րդ մասով նախատեսված ակտիվների շահութաբերության մակարդակը գերազանցող գումարի չափով:

Միաժամանակ, մշակվել են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Շահագրգիռ մարմինների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ վերոնշյալ նախագծերի շուրջ կայացած քննարկումների արդյունքում պարզվել է, որ նախագծերի շրջանակներում վերջիններիս մտահոգող խնդիրներն ըստ էության կարգավորվում են:

Արտաքին տնտեսական քաղաքականություն

Արտաքին տնտեսական կապերի աշխարհագրության ու համագործակցության ձևաչափերի ընդլայնման, ինչպես նաև արտաքին առևտրային քաղաքականության գործիքների հաշվեկշռված և արդյունավետ կիրառմամբ ազատ առևտրի հնարավորությունների հասանելիության բարձրացման համատեքստում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

ԵԱՏՄ շրջանակներում առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման համատեքստում ավարտվել են «ԵԱՏՄ անդամ երկրների և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» և «ԵԱՏՄ անդամ պետությունների և ՉԺՀ-ի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրերի շուրջ բանակցային փուլերը: Համաձայնագրերը ներկայացված են ԵԱՏՄ անդամ պետությունների ներպետական համաձայնեցմանը: Բանակցային տարբեր փուլերում են Սերբիայի, Իսրայելի, Հնդկաստանի, Եգիպտոսի և Սինգապուրի հետ համաձայնագրերը:

Եվրոպական Միության հետ համագործակցությունը շարունակել է մնալ Հայաստանի առաջնայնությունների շարքում: 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում կայացած ԵՄ Արևելյան գործընկերության գագաթաժողովի ընթացքում ստորագրվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:

ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP)» արտոնյալ առևտրի ռեժիմի «GSP+» դիտանցման շրջանակներում պատրաստվել և ԵՀ-ին է տրամադրվել Հայաստանի

Հանրապետության զեկույցը՝ ապահովելով ռեժիմի տրամադրման և իրականացման շարունակականությունը: Զեկույցում ներկայացվել են «GSP+» ռեժիմից օգտվելու նախապայման հանդիսացող՝ մարդու իրավունքներին, աշխատանքային իրավունքներին, բնապահպանությանը և արդյունավետ կառավարմանը վերաբերող 27 միջազգային կոնվենցիաների իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքներն ու զարգացումները: Նախապատրաստվել և 2018 թվականի հունվարից ներդրվել է ԵՄ «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո «Գրանցված արտահանողների համակարգ» (REX) ինքնահավաստագրման էլեկտրոնային համակարգը:

Շարունակվել է համագործակցությունը եվրոպական կողմի հետ գործող բոլոր աջակցության ծրագրերի շրջանակներում: Հաստատվել է ԵՄ կողմից Հայաստանին աջակցության տրամադրման «Միասնական աջակցության շրջանակ 2017-2020թթ.» փաստաթուղթը՝ 144-176 մլն եվրո ընդհանուր բյուջեով: 2017 թվականին մեկնարկել են ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման 3 համաձայնագրեր՝ մոտ 45 մլն եվրո ընդհանուր արժեքով: Ավարտվել է 2 Թվինինգ ծրագիր, ՀՀ շահառուների կողմից ստացված հայտերի հիման վրա հաստատվել են 15 Թայեքս հայտեր: Ապահովվել է Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրավորման 2014-2020թթ. շրջափուլի գործողությունը: Բանակցվել, ստորագրվել և ՀՀ համար ուժի մեջ է մտել ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը՝ մասնակից 8 երկրների համար ընդհանուր 54 մլն եվրո բյուջեով: Հաստատվել է Սոսյու գործիքի ներքո առաջին ծրագիրը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:

Արդյունաբերական քաղաքականություն

Արդյունաբերական զարգացման նպատակով ապահովվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության շարունակականությունը և ընդլայնումը՝ հասցեագրելու արդյունաբերության ճյուղերի և կազմակերպությունների ուղղակի աջակցությունը, արտահանման զարգացումը, տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Իրականացվել է «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության 2017 թվականի ծրագիրը: Ապահովվել է արտերկրում և Հայաստանում անցկացված գործարար համաժողովներին հայկական կողմի մասնակցությունը, որոնց շրջանակներում կնքվել է 11 հուշագիր, 1 էքսկլյուզիվ պայմանագիր, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ: Ապահովվել է հայկական 93 ընկերության մասնակցություն արտերկրում կայացած 10 միջազգային ցուցահանդեսի, որոնց արդյունքում կնքվել են շուրջ 100 արտահանման պայմանագրեր:

Շարունակվել է արտահանման խթանման և ժամանակակից արտադրությունների կազմակերպման նպատակով իրականացվող ներդրումային ծրագրերի իրականացմանն աջակցության կիրառումը: Ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող ապրանքների մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ վճարման ժամկետների հետաձգման գործիքի ներքո հավանության են արժանացել 27 ընկերության ներդրումային ծրագրեր:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

2017 թվականին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման քաղաքականությունն ուղղվել է պետություն-մասնավոր հատված համագործակցության հենքով հետազոտական, կրթական կենտրոնների, լաբորատորիաների, աքսելերատորների զարգացմանը, տեխնոլոգիական ձեռներեցությունը խթանող ենթակառուցվածքների, այդ թվում՝ ֆինանսական մեխանիզմների զարգացմանը, ՏՏ ոլորտի նոր վերազգային կազմակերպությունների հետ համատեղ հեռանկարային ծրագրերի իրականացմանը, ՏՏ ոլորտի սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին աջակցմանը, էլեկտրոնային առևտրի զարգացմանը: Մասնավորապես.

- շարունակվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տարածքում գործող Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի և Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի, Երևանի պետական համալսարանում գործող Հայ-հնդկական տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) գերազանցության կենտրոնի և «ԱյԲիէմ»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի զարգացման աշխատանքները,
- շարունակվել է Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ծրագրի իրականացումը,
- Երևանի Ջրվեժ թաղամասում շարունակվում է իրականացվել Ճարտարագիտական քաղաքի հիմնման ծրագիրը:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության զարգացման քաղաքականությունը ներառել է միջոցառումներ ինստիտուցիոնալ բարեփոխումների, ենթակառուցվածքների զարգացման, մարքեթինգային քաղաքականության ակտիվացման, մարդկային ռեսուրսների զարգացման, միջազգային համագործակցության խորացման ուղղություններով:

Համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում մասնավոր հատվածի և միջազգային դոնոր

կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Իրականացման փուլում է Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագիրը: Միաժամանակ, պետական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ մարզերում թվով 8 փառատոների անցկացմանը և թվով 5 տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը: Գյումրիում հիմնադրվել է զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, մեկնարկել են աշխատանքները Մեղրիի տեղեկատվական կենտրոնի հիմնադրման ուղղությամբ:

Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի առաջմղման և խթանման նպատակով հետևողական ջանքեր են տարվել ակտիվ մարքեթինգի իրագործման ուղղությամբ: Մասնավորապես.

- Մշակվել և www.wikiloc.com կայքում տեղադրվել են 20 քայլարշավային երթուղիներ.
- Մեկնարկել է էլեկտրոնային մարքեթինգի ռազմավարության իրագործումը: Տրվել է www.armenia.travel զբոսաշրջային պաշտոնական կայքի մեկնարկը՝ Google որոնողական համակարգում գովազդային արշավի արդյունքում ապահովելով կայքի այցելուների կտրուկ աճ: Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է Facebook, Instagram, VK, Telegram, Twitter, Google Plus սոցիալական ցանցերի հարթակներում.
- Նկարահանվել է Հայաստանի զբոսաշրջային ներուժը ներկայացնող “Feel Armenia” խորագրով տեսահոլովակը, նկարահանվել և արխիվացվել է 15-ժամանոց օրիգինալ տեսանյութ: Նկարահանվել է “Follow Us” գովազդային տեսահոլովակը, որը թարգմանվել է չինարեն և ցուցադրվել է Չինաստանում համաժողովների շրջանակներում.
- ՌԴ-ում, Արաբական ծոցի երկրներում, Չինաստանում, Իրանում, Ղազախստանում և այլ նպատակային շուկա հանդիսացող երկրներում կազմակերպվել են հայկական զբոսաշրջային ներուժը ներկայացնող շնորհանդեսներ: Հայաստանի զբոսաշրջության գրավչությունները ներկայացվել են թվով 5 միջազգային ցուցահանդեսների, ինչպես նաև Profi.travel առցանց ցուցահանդեսին.
- Կազմակերպվել են 11 երկրներից թվով 102 միջազգային հայտնի ԶԼՄ ներկայացուցիչների ճանաչողական այցեր, որոնց արդյունքում Հայաստանի մասին տպագրվել է 100-ից ավելի հոդված միջազգային մամուլում, ցուցադրվել 15 տեսանյութ.
- Բոլոր նպատակային շուկաների համար տպագրվել են բազմալեզու բրոշյուրներ (այդ թվում՝ թվային), բաներներ, քարտեզներ և տեղեկատվական թռուցիկներ:

Մարդկային ռեսուրսների զարգացմանը նպաստելու նպատակով աջակցություն է ցուցաբերվել Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի գործունեությունը: Կազմակերպվել է միջազգային 2 դասընթաց հրավիրված գիդ-թրեյների դասավանդմամբ:

Միջազգային համագործակցության շրջանակներում ապահովվել է մասնակցությունը ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մի շարք քննարկումներին ու նստաշրջաններին, Մետաքսի ճանապարհի շրջանակներում ՄԱԿ ՁՀԿ աշխատանքային խմբի հանդիպմանը, Սանկտ Պետերբուրգում կայացած ԱՊՀ զբոսաշրջության խորհրդի հերթական նիստին, ԱՄԷ-ում կայացած VFS GLobal ընկերության կողմից կազմակերպված iConnect ամենամյա կոնֆերանսին: ՄԱԿ ՁՀԿ և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության հետ համատեղ Մետաքսի ճանապարհի շրջանակներում ներկայացվել է «Գինու զբոսաշրջություն» ռազմավարությունը և մարքեթինգային քաղաքականությունը: Դյուրացվել է սահմանային անցման գործընթացը Չինաստանի, ԱՄԷ, Քաթարի, Ճապոնիայի, Հնդկաստանի և ՌԴ քաղաքացիների համար:

Մշակվել և շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ է անցել «Զբոսաշրջության մասին» և ոլորտին առնչվող ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսվում է համապատասխան հիմքեր ձևավորել զբոսավարների, ուղեկցորդների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների, ռեստորանների որակավորման համակարգերի ներդրման, տեղեկատվական կենտրոնների գործունեությանն աջակցության, ոլորտի վարչական ռեգիստրի ստեղծման համար:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման բնագավառ

2017 թվականին ապահովվել է վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունը: Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնց համաձայն 8 մարզերի թվով 325 համայնքների միավորման արդյունքում ձևավորվել են թվով 34 համայնքային փնջեր: Այսպիսով, իրականացված ծրագրերի արդյունքում 465 համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է թվով 52 համայնք: 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ համայնքների ընդհանուր թիվը կազմել է 502, խոշորացված փնջերի թիվը՝ 52, խոշորացված համայնքների թիվը՝ 465, դեռևս չխոշորացված համայնքների թիվը՝ 450, փնջում ներառված համայնքների միջին թիվը՝ 8.9, փնջի բնակչության միջին թիվը՝ 12560: Խոշորացված համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքի կազմում ներառված նախկին համայնքների (ներկայիս բնակավայրերի) բյուջեներից, ինչի արդյունքում հնարավոր է դարձել համայնքի համախմբված բյուջեի միջոցների հաշվին բնակավայրերում իրականացնել կապիտալ ներդրումներ: Խոշորացված

համայնքներում իրականացվում են մեծածավալ ներդրումներ միջազգային կազմակերպությունների կողմից: Ներդրումների հաշվին իրականացվում են կապիտալ ծրագրեր, տեխնիկայի ձեռքբերում: ԱՄՆ և ՀՀ միջև «Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրի» շրջանակներում իրականացվում է 8.6 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագիրը, իսկ ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Շվեյցարական դաշնային զարգացման գործակալության միջև կնքված «Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում» համաձայնագրի շրջանակում իրականացվում է 2.3 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագիրը, որոնք ուղղված են վարչատարածքային միավորների գործունեության զարգացմանը:

Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) տեղադրվել և գործարկվել է միավորված Տեղ, Սարապատ, Արփի, Նոյեմբերյան, Այրում, Կողբ և Գորիս համայնքներում: 2017 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ ՀԿՏՀ-ն շահագործվում է միավորված 18 համայնքներում: Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ) են գործարկվել Նոյեմբերյան, Վանաձոր, Մեղրի, Արփի և Ամասիա համայնքներում: ՔՍԳ-ի հիմնման աշխատանքներ են ընթանում Տեղ, Աշոցք և Սարապատ միավորված համայնքների կենտրոններում: Ընդհանուր առմամբ, ՔՍԳ-ներ են գործում հանրապետության թվով 19 միավորված համայնքների համայնքապետարաններում: Գրասենյակների նպատակը համայնքապետարանի կողմից տրամադրվող ծառայությունների՝ «մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքի համաձայն մատուցումն է, առավելապես էլեկտրոնային եղանակով:

2017 թվականին մշակել է խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար ընթացակարգային աշխատանքների իրականացման ձեռնարկը, որը տրամադրվել է խոշորացված համայնքներին:

Մշակվել և համայնքներին է տրամադրվել խոշորացված համայնքների ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունը, որի հիման վրա 18 խոշորացված համայնքներում արդեն իսկ բյուջեների նախագծերը մշակվում են ծրագրային ձևաչափով:

2017 թվականի ընթացքում համայնքների հետ հետևողական մեթոդական աշխատանքների իրականացման, ինչպես նաև վարչարարության արդյունքում նկատվել է համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աճ:

Տարածքային կառավարման բնագավառ

2017 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունները և

Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագիրը (ՏԶԳԾ):

ՏԶԳԾ-ն համարվում է Հայաստանում տարածքային զարգացման համար առաջին համախմբված ծրագիրը: ՏԶԳԾ-ի մյուս կարևոր նշանակությունն այն է, որ այն նախատեսում է տարածքային և տեղական մակարդակի ներդրումների և զարգացման ծրագրերում ներգրավել ու ակտիվացնել տեղական դերակատարներին, առաջին հերթին տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես ծրագրի առաջարկողներ և իրականացնողներ, ծրագրերի մրցունակ հայտադիմումների ներքո:

ԵՄ-ի հետ համագործակցությամբ իրականացվում են տարածաշրջանային զարգացման հետևյալ 8 ծրագրերը:

1. Ինտեգրված աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը,
2. Շիրակի մարզում տեխնոլոգիական զարգացման խթանում,
3. Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանում,
4. Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում,
5. Դիլիջանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն,
6. ՓՄՁ մրցունակության բարձրացում կայուն նորարարական տեխնոլոգիաների առավել լայն կիրառման և խթանման միջոցով,
7. Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում,
8. Ամասիայում բրդյա թելերի և կտորի արտադրություն:

Մարզպետների աշխատանքների արդյունքները Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության (ՀՏԶՌ) համատեքստում իրականացնելու նպատակով մշակվել են Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը և կատարված աշխատանքների գնահատման նոր չափորոշիչները:

Սահմանադրական նոր իրողությունները, մասնավորապես՝ խորհրդարանական կառավարման համակարգին անցումը, պահանջում են մարզերում պետական կառավարման հարաբերությունների օրենսդրական կարգավորում: Այդ նպատակով մշակվել է «Տարածքային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Տարածքային ներդրումային քաղաքականության բնագավառ

ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրին համապատասխան մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանությանն են արժանացել ՀՀ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգերը: Հայեցակարգերի կիրարկմամբ ակնկալվում է հանրապետության երեք մարզերում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման՝ ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին:

2017 թվականին մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել նաև «Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգը», որով առաջարկվում է ՀՀ տարածաշրջաններում ձևավորել «տարածքային աճի բևեռներ», որոնց զարգացումը թույլ կտա անցում կատարել միաբևեռ, մայրաքաղաքում կենտրոնացած տնտեսությունից բազմաբևեռ, կայուն, համաչափ զարգացող տնտեսության:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել նաև «Համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման ընթացակարգը», որով նախատեսվում է իրականացնել ներդրումային և գործարար ծրագրերի առավել ընդգրկուն և բազմագործոն գնահատում, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի ավելի իրատեսական և արդյունավետ ծրագրերի իրագործման համար ցուցաբերել պետական աջակցություն՝ ծրագրերի վարկային բաղադրիչների սուբսիդավորման միջոցով:

Տարածաշրջանային համագործակցություն

ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրին համապատասխան մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Անդրսահմանային տարածքային համագործակցության հայեցակարգը»: Հայեցակարգով սահմանվում են անդրսահմանային տարածքային համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների նպատակները, սկզբունքները և գործունեության ուղղությունները՝ հաշվի առնելով ՀՀ մարզերի և համայնքների անդրսահմանային երկկողմ համագործակցության ոլորտում կուտակված փորձը: Հայեցակարգը հանդիսանում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների համար որպես ուղեցույց՝ անդրսահմանային տարածքային համագործակցություն իրականացնելու նպատակով:

Արխիվային գործ

2017 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը», որով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի, համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը արդի պայմաններում, օժանդակում առավել արդյունավետ մեթոդների ներդրմանը, այդ փաստաթղթերի երաշխավորված և անվտանգ պահպանության ապահովմանը:

Ներդրվել և 2017 թվականի փետրվարից գործում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից էլեկտրոնային հարցում կատարելու և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ից հարցմանը էլեկտրոնային պատասխան տրամադրելու համակարգը: Հաշվետու տարվա ընթացքում ստացվել և պատասխանվել է 10500 հարցման:

Ստեղծվել և գործում է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի և նրա տարածքային ստորաբաժանումների միջև կորպորատիվ ցանցը:

Ավարտվել են իրավաբանական և ֆիզիկական անձանցից դիմումների առցանց ընդունման, վճարման և պատասխանի տրամադրման ծրագրի իրականացման աշխատանքները, մասնավորապես կապալառու «ԴՆՍ» ՍՊԸ-ն իրականացրել է ծրագրի մշակումը, «Ամերիա» բանկում բացվել է բանկային հաշիվ առցանց վճարումների համար, «ՄՈԲԻՍ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր SMS հաղորդագրությունների առաքման համար:

Բնակչության միգրացիայի կարգավորման ոլորտ

2017 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունը, որը Հայաստանի միգրացիոն քաղաքականության սահմանման 4-րդ հիմնարար փաստաթուղթն է 2000 թվականից ի վեր: Ռազմավարությունն ունի 8 հիմնորոշ ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված են նպատակը, դրան հասնելու ճանապարհին առկա խնդիրները և վերջիններիս լուծմանն ուղղված միջոցառումները:

2017 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել նաև Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը, որը միջոցառումներ է նախատեսում իմիգրանտների ինտեգրման նպատակով հայեցակարգում նախատեսված հետևյալ երեք ուղղություններով՝

- հայերեն լեզվի ուսուցման դասընթացի կազմակերպում,
- քաղաքացիական կողմնորոշման դասընթացի կազմակերպում,
- ժամանակավոր կացարանի տրամադրում:

Բնակչության միգրացիայի կարգավորման ոլորտում իրականացված աշխատանքները նպատակաուղղված են եղել նաև միգրանտների, ապաստան հայցողների ու փախստականների հարցերին վերաբերող միջազգային կոնվենցիաներով ու համաձայնագրերով ստանձնած հանձառությունների կատարմանը:

Իրականացվել են «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի՝ միգրացիայի ոլորտի մասով կիրարկմանն ուղղված աշխատանքներ:

Նոր թափ է ստացել համագործակցությունը Եվրոպական Միության հետ՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ուժի մեջ մտած «Աջակցություն միգրացիային և սահմանների կառավարմանը» ԵՄ տեխնիկական աջակցության ֆինանսավորման համաձայնագրի իրականացման շրջանակներում:

Իրականացվել են «ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021թթ. ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրով» 2017 թվականի համար նախատեսված 16 միջոցառումներ:

Իրականացվել են «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի իրականացմանն ուղղված գործողությունների ծրագրով» նախատեսված մի շարք միջոցառումներ:

Շարունակվել են աշխատանքները ՌԴ ՆԳՆ միգրացիոն հարցերով գլխավոր վարչության հետ՝ ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի բացման նպատակով:

2017 թվականին ռուսական կողմին է ուղարկվել 344 դիմում: Դրական պատասխանների թիվը կազմել է 44-ը:

Շարունակվել են օտարերկրյա պետություններից վերադառնալու ցանկություն ունեցող ՀՀ քաղաքացիներին վերադարձի հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորություն ընձեռող Tundarc.am կայքի միջոցով խորհրդատվության տրամադրման ուղղությամբ աշխատանքները:

Շարունակվել են աշխատանքները ծառայությանը դիմող ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին միգրացիոն տարբեր հիմնախնդիրների շուրջ խորհրդատվության տրամադրման և միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին ու քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ:

Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն

Ագրարային հատվածում ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2017 թվականին նպատակաուղղվել է գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության բարելավմանը, և դրա հիման վրա պայմաններ են ստեղծվել ագրոպարենային ոլորտի կայունացման համար, նախադրյալներ են ապահովվել առաջիկայում ընդլայնված վերարտադրության, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման, պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար: Իրականացված քաղաքականությունն ուղղված է եղել նաև սերմնաբուծության համակարգի ամրապնդմանը, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարին, անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի) մատչելիությանը, վարկավորման մեխանիզմների բարելավմանը, ոլորտում արդիական տեխնոլոգիաների ներդրման համար պայմանների ստեղծմանը:

Կարևոր ուղղություններից է եղել հանրապետության անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության և օգտագործման բնագավառներում աշխատանքների իրականացումը:

ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը հիմք ունենալով՝ նպատակ է դրվել գյուղատնտեսությունում արդյունավետության բարձրացման միջոցով նպաստել գյուղում կենսամակարդակի բարձրացմանը: Առանձնակի ուշադրություն է դարձվել բարձր լեռնային ու սահմանամերձ շրջաններին: Շարունակվել են ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված են եղել հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և մասնավոր հատվածի միջև իրավահարաբերությունների կատարելագործմանը և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի բարելավմանը,
- գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը,
- գյուղատնտեսությունում գործող տնտեսավարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծմանը և մրցունակության բարձրացմանը,
- գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացմանը, մասնավորապես՝ կոոպերացիայի խթանմանը,

- գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացմանը և տնտեսավարողներին մատչելի՝ լիզինգային մեխանիզմներով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարմանը,
- խորհրդատվական համակարգի կարողությունների ընդլայնմանը, համակարգի մեխանիզմների բարելավմանը,
- գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավմանը, գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների փոխհարաբերությունների կատարելագործմանը,
- ագրարային արտադրական գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությանը:

Նշված քաղաքականության կենսագործման նպատակով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվող ծախսերն առաջնահերթ կարգով նպատակաուղղվել են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- բույսերի պաշտպանության և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին,
- հողերի ագրոքիմիական հետազոտություններին և բերրիության բարձրացմանը,
- բնական կերհանդակների նպատակային և համակարգված օգտագործմանը,
- գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի, տարբեր մշակաբույսերի բարձր վերարտադրության սերմերի մատչելիության մակարդակի բարձրացմանը,
- վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շարունակմանը և բարելավված մեխանիզմներով նոր ծրագրի իրականացմանը,
- տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդմանը և զարգացմանը,
- ագրարային ոլորտի տնտեսավարողներին շուկայահանման գործընթացի աջակցությանը,
- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ճյուղի զարգացմանն աջակցությանը, արտահանման խթանմանը,
- անտառային տնտեսության պահպանմանը և պաշտպանությանը:

Որպես ագրոպարենային համակարգի զարգացման 2017 թվականի քաղաքականության գլխավոր նպատակ՝ պահպանվել է երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ հետևողական աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսության հիմնական նյութական ռեսուրսների մատչելիության, վարկավորման բարելավման, ոլորտը սպասարկող ենթակառուցվածքների զարգացման, օրենսդրական հիմքերի բարելավման և ագրարային ոլորտում

տարբեր տնտեսավարման ձևերի զարգացման ուղղությամբ, որը նպաստավոր պայմաններ է ապահովել ագրարային ոլորտի մասնավոր հատվածի կարողությունների օգտագործման և տնտեսավարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների կառավարման բնագավառ

Էներգետիկ ենթակառուցվածքներ

Էներգետիկ ենթակառուցվածքների բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն նպատակաուղղվել է ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, տեղական վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկ ենթակառուցվածքների բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են՝ սեփական վերականգնվող էներգապաշարների տնտեսապես հիմնավորված պոտենցիալի իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների կառուցումը, ատոմային էներգետիկայի պահպանումը և զարգացումը, այդ թվում՝ գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման հետ կապված աշխատանքների իրականացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի հատկացումների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվել են՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկ) աջակցությամբ իրականացվող՝ Հրազդան ՋԷԿ-ից մինչև Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած շուրջ 230 կմ երկարությամբ Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ օդային գծի, շուրջ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծի, «Հաղթանակ», «Աշնակ», Երևանի ՋԷԿ-ի 220 կՎ և «Չարենցավան-3», «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների վերակառուցման աշխատանքները, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվել են «Ագարակ-2» և «Շինուհայր» 220 կՎ ենթակայանների, կարգավարման կառավարման ավտոմատացված (SCADA)

համակարգերի ընդլայնման ու արդիականացման պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության Արտահանման զարգացման բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին՝ Իրան-Հայաստան 400 կՎ լարման նոր էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքները:

Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ շարունակվել է Հայկական ԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների իրականացումը, իսկ սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին իրականացվել են Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքները:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն ընդգրկված է ՀՀ Նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի 182-ՆԿ կարգադրությամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգում» և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի № 836-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցում»: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից մշակվել է ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրը (պլան-ժամանակացույցը), որը գտնվում է համաձայնեցման փուլում: Մշակված ծրագիրը ներառում է նոր միջուկային էներգաբլոկի կառուցման բոլոր խոշոր փուլերը՝ սկսած ներդրողների ներգրավումից մինչև կառուցում և շահագործում:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը Համաշխարհային բանկի կողմից տրված դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացրել է Կլիմայի Ներդրումների Հիմնադրամի Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի շրջանակներում (SREP) արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման և Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Կարկառում, երկրաջերմային հետախուզական հորատման աշխատանքները, ինչպես նաև ջերմային պոմպերի ու արևային ջրատաքացուցիչների ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը:

2014 թվականի հունիսի 27-ին Կլիմայի ներդրումային հիմնադրամների Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի (CIF SREP) ենթահանձնաժողովը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության վերականգնվող էներգետիկայի ներդրումային պլանին»՝ որպես հիմնարար փաստաթուղթ, այնտեղ ընդգրկված ծրագրերի հետագա իրականացման նպատակով 40

մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ֆինանսավորման հնարավորությամբ: Նշված գումարի շրջանակներում ներդրումներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ երկրաջերմային էներգետիկայի, արևային ֆոտովոլտային էներգետիկայի, արևային ջրատաքացուցիչների և ջերմային պոմպերի համար ենթակառուցվածքների ստեղծման և/կամ բարելավման ծրագրերի իրականացման նպատակով:

2015 թվականի հուլիսի 23-ին ՀՀ Նախագահի № ՆՀ-471-Ն հրամանագրով վավերացվել է Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար» թիվ TF0A0418 դրամաշնորհի համաձայնագիրը: Ներդրումային ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից հատկացված 2 միլիոն ԱՄՆ դոլար դրամաշնորհով և ՀՀ կառավարության 0.5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով համաֆինանսավորմամբ իրականացվել են Հայաստանի արևային էներգիայի ներուժի գնահատումը, ընտրված վեց տեղանքների համար տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրությունների իրականացումը, գործարքի խորհրդատվական ծառայությունները, համապատասխան կարողությունների զարգացումը և դրա հետ կապված այլ միջոցառումներ: Արևային ցանցային ֆոտովոլտային կայանների կառուցման ծրագրի շրջանակներում արդեն իսկ ծրագրի խորհրդատու «Արիես Ինժեներիա» խորհրդատվական ընկերության կողմից ֆոտովոլտային կայանների կառուցման համար ընտրվել են 6 տեղանքներ, և 2017 թվականի բյուջետային հատկացումների շնորհիվ խորհրդատվական ընկերության կողմից պատրաստվել են ընտրված տեղանքների տեխնիկատնտեսական հիմնավորումները և մրցութային փաթեթները, որոնք հիմք են հանդիսացել ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում մրցույթային կարգով ընդունելի արևային էլեկտրակայանների սակագների սակարկումը կազմակերպելու համար: Այդ կայանների կառուցման արդյունքում կնվազի ՀՀ կախվածությունը ներկրվող էներգակիրներից:

«Երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագրի» շրջանակներում, «Կարկառ» կոչվող հարթակում ավարտին են հասցվել մերձատար ճանապարհի կառուցման և հորատման հարթակի շինարարական աշխատանքները և մեկնարկել են նեղ հորատանցքերի հորատման աշխատանքները: 2017 թվականի բյուջետային հատկացումների շնորհիվ հորատվել են 2 նեղ հորատանցքեր: Երկրաջերմային համապատասխան պոտենցիալի հաստատման դեպքում կկառուցվի երկրաջերմային էլեկտրակայան:

Իրականացվել են էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի վերամշակման և ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ միջազգային ստանդարտներին ու նորմերին համապատասխան դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ, ինչպես

նաև ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի:

Հանրապետության *գազամատակարարման համակարգի* վերականգնման ու զարգացման ուղղությամբ կատարվել են հանրապետության գազափոխադրման ու գազաբաշխման համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի օպտիմալ ծավալի որոշման և դրա արդիականացման աշխատանքները: Կշարունակվեն գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանն և շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Ընդերքի բնական պաշարներ

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2017 թվականին իրականացված պետական քաղաքականության նպատակներն էին.

- միջազգային չափորոշիչներին համահունչ հետախուզված և գնահատված ընդերքի պաշարների՝ սահմանված կարգով փորձաքննության ապահովումը,
- «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարումը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը,
- Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով երկրաբանական տեղեկության թափանցիկության և պոտենցիալ ներդրողների համար վերջինիս հասանելիության ապահովումը,
- «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացումը և հրապարակումը,
- հանքարդյունաբերության թափանցիկության ապահովման նպատակով «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն» անդամակցությունը,
- ընդերքօգտագործող կազմակերպությունների գործունեության հետ կապված հիմնախնդիրների լուծման համար նոր, ժամանակակից, ինչպես նաև միջազգայնորեն ընդունված մոտեցումների կիրառման խթանումը:

Միջուկային անվտանգություն

Միջուկային անվտանգության բնագավառում առաջնահերթ ուղղություններն են միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի զարգացումն ու կատարելագործումը: Ոլորտում իրականացված առաջնահերթ միջոցառումներն են.

- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության և Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին, ինչպես նաև, հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի և «սթրես-թեստի» ուսումնասիրության արդյունքները, զարգացած երկրների փորձը և նկատի ունենալով Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումը, ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը,
- «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, ստանդարտների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը, Հայկական ԱԷԿ-ի «սթրես-թեստի» ազգային հաշվետվության վերաբերյալ Եվրահանձնաժողովի փորձագետների առաջարկություններն ամփոփող հաշվետվության հիման վրա մշակված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը,
- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի՝ ՀՀ կողմից վավերացրած միջազգային 10 պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը (օրենսդրության համապատասխանեցում պայմանագրերի պահանջներին, տեղեկատվական բազայի ստեղծում և փոխանակում պայմանագրերի անդամ-պետությունների միջև, ազգային հաշվետվությունների մշակում և ներկայացում),
- ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի տեխնիկական աջակցության կազմակերպության՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը,
- ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը, բնակչության՝ շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված ճառագայթահարումը վերահսկելու համար,

- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),
- միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,
- միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը,
- կոմիտեի գործունեության որակի ապահովման ծրագրի կատարելագործումը,
- ժամանակակից պահանջներին համապատասխանող վթարային կենտրոնի զարգացումը,
- միջազգային համագործակցության զարգացումը:

Վթարային հակազդման համակարգի զարգացման, վթարային հակազդման ազգային համակարգը ՀՀ միջազգային պայմանագրերի և ԱԷՄԳ պահանջներին համապատասխանեցնելու համար.

- կատարելագործվել է գործող ճառագայթային մոնիթորինգի և տեղեկատվության համակարգը,
- վթարային հակազդման կենտրոնը, ներառյալ կենտրոնի գործունեության հրահանգները, համապատասխանեցվել է ժամանակակից պահանջներին՝ հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի ուսումնասիրության արդյունքները,
- անցկացվել են վթարային վարժանքներ ԱԷՄԳ պահանջներին համապատասխան,
- վերանայվել են վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող նախարարու-թյունների և գերատեսչությունների հետ փոխգործությունների մասին համաձայնագրերը,
- կատարելագործվել են ներքին և արտաքին տեղեկատվական համակարգերը:

Միջուկային նյութերի չտարածման երաշխիքների, հաշվառման և հսկման պետական համակարգի զարգացման նպատակով.

- վերամշակվել են նորմերը և կանոնները՝ համաձայն ԱԷՄԳ առաջարկությունների և ստանդարտների,
- կատարելագործվել է միջուկային և ռադիոակտիվ նյութերի հաշվառման և վերահսկման պետական համակարգը,
- մշակվել և ներդրվել են միջուկային և ռադիոակտիվ նյութերի պետական հաշվառման արդիական համակարգեր, ներառյալ՝ ծրագրային միջոցներ:

Միջուկային և ռադիոակտիվ նյութերի ու տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության կարգավորման շրջանակներում.

- լրամշակվել են նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը,

- միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության վիճակը գնահատելու համար ՀՀ այլ պատասխանատու գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ անցկացվել են միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի տեսչական ստուգումներ, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով նոր մարտահրավերները, վերանայել նախագծային սպառնալիքը,
- ստեղծվել են պաշտպանված կապուղիներ:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացման ուղղությամբ իրականացվել են.

- «միջուկային անվտանգության գնահատման ժամանակակից մեթոդների, ներառյալ՝ ռիսկի գնահատման մեթոդների յուրացումը և կիրառումը,
- մասնագիտական որակավորման բարձրացումը և նոր կադրերի պատրաստումը, ռադիոլոգիական ազդեցության գնահատման և չափումների նորագույն միջոցների և մեթոդների ներդնումը:

Տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում շարունակվել է միջազգային համագործակցությունն ԱԷՄԳ-ի, Եվրոպական հանձնաժողովի, ԱՄՆ-ի, Չեխիայի, ՌԴ և այլ երկրների միջուկային կարգավորող մարմինների հետ:

Ջրային տնտեսություն

2017 թվականի ընթացքում ջրային տնտեսության ոլորտում ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթները, «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները: Ոլորտի գերակայություններն են հանդիսացել.

- պահանջվող որակի և անհրաժեշտ քանակի ջրով ապահովումը,
- շարունակական ջրամատակարարման ապահովումը,
- ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների զարգացումն ու բարելավումը (տեխնիկական վերազինում և կադրերի պատրաստում), հատկապես՝ գյուղական վայրերում, և ջրամատակարարման համակարգերում ջրի կորուստների նվազեցումը,
- գյուղական վայրերում անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների զարգացումն ու բարելավումը,

- էներգատար ջրամատակարարման համակարգերի հնարավորինս փոխարինումը ինքնահոս համակարգերով և օրվա կարգավորիչ ջրամբարների վերանորոգումն ու նորերի կառուցումը,
- ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը,
- կեղտաջրերի մաքրման կայանների անհրաժեշտ վերանորոգումը և նորերի կառուցումը, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայության դեպքում կեղտաջրերի կենսաբանական մաքրման ապահովումը և կեղտաջրերի նախնական մաքրում իրականացնելու արդյունավետ մեխանիզմների ստեղծումը,
- ջրամատակարարման և ջրահեռացման ոլորներում ենթակառուցվածքների զարգացումը,
- ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը:

Ջրային տնտեսության ոլորտում 2017 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

5 ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի (որպես միասնական գույքային համալիր) օգտագործման իրավունքը 2017 թվականի հունվարի 1-ից վարձակալությամբ փոխանցվել է մեկ կառավարչի՝ 15 տարի ժամկետով:

2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրվել է վարձակալության պայմանագիր: Վարձակալի գործունեությունը մեկնարկել է 2017 թվականի հունվարի 1-ից:

Համաձայն վարձակալության պայմանագրի մրցութային կարգով իրականացվել է անկախ տեխնիկական աուդիտորի ընտրություն: Անկախ տեխնիկական աուդիտոր է ընտրվել գերմանական «Սաքսեն Վասսեր» ընկերությունը (“Sachsen Wasser GmbH”), որի հետ 2017 թվականի սեպտեմբերի 13-ին կնքվել է պայմանագիր՝ պայմանագրային առաջին 5 տարիների ընթացքում վարձակալի աշխատանքի և նվաճումների տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման ամենամյա աուդիտի, ինչպես նաև պայմանագրով նախատեսված այլ աշխատանքների իրականացման համար:

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեում ձևավորվել են գույքի կառավարման և ներդրումների իրականացման կարողություններ: Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի միջև 19.12.2014թ. ստորագրված «Ուղեկցող միջոցառումներ

Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II-Փուլ 3» 1.0 մլն եվրո լրացուցիչ ֆինանսական համաձայնագրի հիման վրա ստորագրման փուլում է խորհրդատվական պայմանագիրը 18 ամիս գործողության ժամկետով՝ 999 705 եվրո գումարի չափով:Խորհրդատուի գործառույթներից է ինչպես խմելու ջրի և ջրահեռացման վարձակալությամբ հանձնված գույքի հաշվառման, գրանցման, պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի իրականացման հաշվետվությունների արձագանքման մասով խորհրդատվության ապահովումը, այնպես էլ ոռոգման համակարգի գույքի հաշվառումը:

Ջրային տնտեսության բնագավառում օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ֆինանսավորվող վարկային ծրագրերն արդյունավետ կառավարելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ ջրային ոլորտի ծրագրերի իրականացման լիազորությունները վերապահվել են «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին:

Ավարտվել է Երևանի Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շինարարությունը: Ծրագրի ավարտով պայմանավորված՝ դադարեցվել է «Համայնքային զարգացման ծրագրերի գրասենյակ» ՊՀ-ի գործունեությունը:

Մասնագիտացված օպերատորի կողմից չսպասարկվող ՀՀ 577 գյուղերում պատշաճ մակարդակի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ապահովման նպատակով նախատեսվում է ստեղծել նախադրյալներ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ: Այս գործընթացի հիմքում պետության կողմից տարվող քաղաքականության հիմնական ուղղվածությունն է պետություն-մասնավոր տնտեսավարող (ՊՄԳ) փոխշահավետ համագործակցության ապահովումը: Նշված գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման համար պահանջվող ներդրումների ծավալը չափազանց մեծ է, բացի այդ, դրանց ցրված տեղաբաշխման պատճառով շահագործման ծախսերը նույնպես բավականին բարձր են, որի պատճառով բարձր են ստացվում նաև ծառայությունների սակագները: Ծառայությունների համահարթեցման նպատակով խնդիր է դրված այդ գյուղերում ապահովել միասնական օպերատորի հետ կնքված պայմանագրում ամրագրված կատարողական ցուցանիշների արժեքներին համադրելի ցուցանիշներ:

Ոռոգում-ջրառ իրականացնող «Ջրառ» ՓԲԸ-ի, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 14 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքներով ապահովվել է 97473 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը:

2017 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ոռոգման ջրամատակարարման ոլորտում ջրի փաստացի օգտագործումը հաշվի առնող կառավարման հայեցակարգը և վերջինիս միջոցառումների ծրագիրը:

Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2017 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2017 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 21.93 մլրդ դրամ՝ 2016 թվականի 21.83 մլրդ դրամի փոխարեն, կամ ավել է գանձվել 101.9 մլն դրամ: Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2017 թվականին կազմել է 87.24%, իսկ ոռոգման ոլորտում՝ 64.72%:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 17.78 մլրդ դրամ՝ 2016 թվականի 17.96 մլրդ դրամի դիմաց, կամ պակաս է գանձվել շուրջ 176.8 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.15 մլրդ դրամ՝ 2016 թվականի 3.78 մլրդ դրամի դիմաց, կամ ավել է գանձվել շուրջ 278.7 մլն դրամ:

Հաշվի առնելով 2017 թվականի սակավաջրությունը և եղանակային անբարենպաստ պայմանները՝ համակարգը նախորդ տարվա հետ համեմատած ավելի շատ էլեկտրաէներգիա է սպառել: 2017 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 221.93 մլն կՎտ ժ՝ 2016 թվականի 172.68 մլն կՎտ ժ-ի դիմաց, կամ ավել է ծախսվել 49.25 մլն կՎտ ժ:

2017 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 7.6 մլրդ դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

2017 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռված տևողությունը Երևան քաղաքում եղել է 23.5 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 18.5 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 13.4 ժամ/օր:

Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված են 873802 հատ ջրաչափական սարքեր, որը 2016 թվականի համեմատությամբ ավել է 25387 հատով: Ջրաչափությունը կազմում է 90.3%:

2017 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Ոռոգման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրառի մասին» որոշմամբ Սևանա լճից 2017 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170 մլն խոր. մ:

Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովության դեֆիցիտը մասնակիորեն մեղմելու, ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ ընդունվել է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման

միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որի համաձայն 2017 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակն ավելացվել է 100 մլն խոր. մ-ով և սահմանվել է մինչև 270 մլն խոր. մ:

2017 թվականի մայիսի 7-ից սեպտեմբերի 15-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 266.757 մլն խոր. մ ջուր, իսկ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել 110.819 մլն խոր. մ ջուր: Սևանա լճի մակարդակը 2017 թվականի տարեվերջին կազմել է 1900.42 մ:

«Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը, 2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն, հանձնվել է հավատարմագրային կառավարման «Արփա-Սևան» ԲԲԸ-ին: «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություն» ծրագրի շրջանակներում Արփա-Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներն իրականացվում են պայմանագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան: 2017 թվականին իրականացվել են 1689.54 մլն դրամի աշխատանքներ: Թունելով ջրի բացթողնման արդյունքում աշխատանքները դադարեցվել են 2017 թվականի ապրիլի 15-ին և վերսկսվել են 2017 թվականի հուլիսի 4-ին:

2017 թվականին տեղերում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են բերվել առաջնահերթ իրականացման ենթակա հակահեղեղային միջոցառումներն ու սահմանված կարգով հաշվարկվել դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, որոնք հատկացվել են ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից: Հատկացված գումարների հաշվին իրականացվել են ՀՀ Արմավիրի մարզի Բագարան համայնքի տարածքում 40/1-41 սահմանային սյան հատվածում Արաքս գետի ողողված ափի ամրացման, ՀՀ Շիրակի մարզում Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքային, ելքային հարակից լանջերի մաքրման (200մ), ինչպես նաև Արթիկ քաղաքի տարածքով անցնող Բմբուլենց և Մովրովի հեղեղատարների առաջնահերթ հատվածների (1-ին փուլ) մաքրման և ափերի ամրացման աշխատանքները:

Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

- *Վեդու ջրամբար:* 2017 թվականի մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի շինարարական աշխատանքների մեկնարկը: Ավարտվել են դաշտային գեոտեխնիկական հետազոտություններն ու գեոդեզիական ուսումասիրությունները, և շուտով պատրաստ կլինի նաև ամբողջական մանրամասն աշխատանքային նախագիծը: Խորհրդատուի հետ կազմակերպվել են հանդիպումներ և քննարկվել են կապալառուի կողմից ներկայացված նախագծային լուծումները: Կապալառուն արդեն ավարտել է մոբիլիզացիոն աշխատանքները, ենթակառուցվածքների

(գազատար, խմելու ջրագիծ, էլ. սնուցման գիծ և ճանապարհ) կառուցումը: Ներկայումս ընթանում են պատվարների հիմքի և վարարային ջրհեռի փորման աշխատանքները, ինչպես նաև ավարտին են մոտենում ոռոգման ջրանցքի (կուլվերտ) հողային աշխատանքները: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ոռոգման ցանցի վերակառուցման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի տեխնիկական առաջարկները ներկայացվել են սույն թվականի դեկտեմբերի 25-ին: Ներկայումս ընթանում է մրցութային առաջարկների գնահատման գործընթացը:

- *Կապսի կիսակառույց ջրամբար:* «ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1» ծրագրով նախատեսվում է կառուցել 25 մլն խմ ծավալով ջրամբարի պատվարը: Ջրամբարը կբարձրացնի Շիրակի ջրանցքի իշխման տակ գտնվող շուրջ 12325 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև, մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով, անխափան և հուսալի ոռոգում կապահովի շուրջ 2280 հա հողատարածքների համար՝ տարեկան խնայելով 1.3 մլն կՎտ ժ էլեկտրաէներգիա: Ներկայումս ընթանում են Կապսի ջրամբարի կառուցման մանրամասն նախագծման աշխատանքները, ավարտվել են երկրաբանական հետազոտությունները, գեոդեզիական ուսումնասիրությունները, սեյսմիկական և գեոֆիզիկական հետազոտությունները: Տեղի է ունեցել փորձագետների հանձնաժողովի հանդիպում, որի ընթացքում քննարկվել են նախագծային լուծումները:

Քննարկման փուլում է գտնվել «ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 2» ծրագիրը նախատեսվում է Կումայրի ոռոգման թունելի, ջրի տեղափոխող ինքնահոս խողովակաշարի և շուրջ 750 հա ոռոգելի տարածքներում ոռոգման ցանցի կառուցման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների սարքավորումների ձեռքբերման և տեղադրման համար:

- *Մասրարայի ջրամբարը* նախատեսվում է կառուցել ՀՀ Արմավիրի մարզում՝ Սելավ Մաստարա գետահովտում: Ջրամբարը նախատեսվում է լցնել Սելավ Մաստարա և Ախուրյան գետերի ազատ հոսքով: Ջրամբարը նախատեսվում է կառուցել 10.2 մլն խոր. մ ընդհանուր ծավալով: Իրականացվել է Սելավ Մաստարա ջրամբարի ուսումնասիրություն: 2017 թվականի ընթացքում մրցութային կարգով իրականացվել են համապատասխան խորհրդատուների ընտրության աշխատանքները: Տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքներն արդեն իսկ մեկնարկել են, ավարտը նախատեսվում է 2018 թվականին: Դրամաշնորհը, որը կազմում է 670.0 հազ. ԱՄՆ դոլար, տրամադրել է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ինստիտուցիոնալ զարգացման ծրագրերի հավատարմագրային հիմնադրամը: Ջրամբարի կառուցման արդյունքում կապահովվի 3794 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, կավելանա լրացուցիչ 590 հա ներկայումս չմշակվող ոռոգելի տարածք, կտնտեսվի տարեկան շուրջ 2.1 մլն էլեկտրաէներգիա, կկրճատվի ստորգետնյա ավազանից իրականացվող ջրառը:

- Փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրի շրջանակներում քննարկվել են հանրապետությունում փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագրերի իրականացման հնարավորությունները և առանձնացվել առաջնահերթ կառուցման ենթակա 11 ջրամբարներ՝ հիմք ընդունելով նախնական գնահատմամբ տեխնիկատնտեսական նպատակահարմարության ցուցանիշները:

Պետություն-մասնավոր գործակցության ակտիվացման քաղաքականությամբ առաջնորդվելով՝ նախանշվել են նաև փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրերը ՊՄԳ շրջանակներում իրականացնելու տարբերակներ՝ միաժամանակ գնահատելով ծրագրի իրականացման հարակից բիզնես հետաքրքրության շրջանակները:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ըստ առանձին ջրամբարների, կատարել առավել մանրամասն ուսումնասիրություններ՝ ծրագրերի իրականացվելիությունը գնահատելու և հետագայում սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերի շրջանակներում իրականացվել են 189 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ, ինչպես նաև Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքերում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

2017 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 163 կմ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2017 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման տևողության ավելացումը:

Տրանսպորտ և կապ

Տրանսպորտի և կապի ոլորտների պետական կարգավորման, համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների գործունեության կառավարման և կոորդինացման միջոցով 2017 թվականին շարունակվել են տնտեսության մյուս ճյուղերի կազմակերպությունների և բնակչության պահանջարկի ապահովումը՝ փոխադրումների (բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների), փոստային ծառայությունների մատուցման, հեռուստառադիոհեռարձակման, ինչպես նաև ճանապարհների պահպանման բնագավառներում:

Ճանապարհային տնտեսություն

Ճանապարհային տնտեսության բնագավառում ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև դրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլ արհեստական կառուցվածքներ) վերանորոգումը, հիմնական վերակառուցումը և ընթացիկ պահպանումը մշտապես գտնվում է կառավարության ուշադրության ներքո՝ հաշվի առնելով տրանսպորտային ենթակառուցվածքների կարևորությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման բնագավառում:

Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների հուսալիության և արդյունավետության ապահովման նպատակով իրականացվել են միջպետական, հանրապետական, մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, ինչպես նաև միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման ու շահագործման ծրագրերը: Նշված ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել են առաջնահերթ վերականգնման ենթակա շուրջ 46.7 կմ ճանապարհահատվածներ: Մրցույթների արդյունքում ձևավորված տնտեսումների և կատարված վերաբաշխումների արդյունքում կատարվել են նաև հրատապ ճանաչված 6.4 կմ երկարությամբ 11 ճանապարհահատվածների հիմնանորոգման և անցանելիության ապահովման աշխատանքներ: Բացի այդ, ա/ճ Մ4-Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման կմ31+500-կմ36+000 հատվածում տեղադրվել են 5.5 կմ ընդհանուր երկարությամբ մետաղական արգելափակոցներ: Հիմնանորոգվել են թվով 7 կամուրջներ, ինչպես նաև իրականացվել են 3477.1 կմ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ու շահագործման աշխատանքներ՝ մշտապես ապահովելով ճանապարհների և կառույցների պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

Աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով 2017 թվականից կիրառվել են հաստատված նոր հիմնական կատարողական ցուցիչները:

2017 թվականին առաջին անգամ իրականացվել է 2.2 կմ ճանապարհահատվածներում պարբերական պահպանում (միջին նորոգում), որը կշարունակվի իրականացվել 2018 թվականին:

Շարունակվել են Ասիական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի շինարարության, Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Բագրատաշենի կամրջի վերակառուցման ծրագրերը, ինչպես նաև իրականացվել է Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման վարկային նոր ծրագիրը:

Վերոնշյալ վարկային ծրագրերի շրջանակներում շարունակվել են «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ով, Տրանշ 3-ով և Տրանշ 4-ով Եվրասիական զարգացման բանկի կողմից իրականացվող՝ մեկնարկած ճանապարհային հատվածների վերակառուցման, լայնացման, հողերի օտարման աշխատանքները, ինչպես նաև Բագրատաշենի կամրջի վերակառուցման աշխատանքները:

Տրանսպորտի բնագավառում 2017 թվականին շարունակվել են «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) կիրառման աշխատանքները:

Աշխատանքներ են իրականացվել նաև Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման ու զարգացման, միջպետական և միջմարզային երթուղիների չվացուցակների և սխեմաների նախագծերի մշակման և կատարելագործման, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի և տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկների տպագրման, պահպանման, հաշվառման ու տրամադրման, տեղեկատվական բանկի վարման ուղղություններով:

Երկաթուղային տրանսպորտ

Երկաթուղային տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների կազմակերպումը բարելավելու նպատակով մշակվել է նոր երթուղային ցանց՝ երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների կապակցմամբ՝ փոխադրումների սկզբնակետերի ու վերջնակետերի համատեղման ճանապարհով:

Երկաթուղով 2017 թվականի համաձայնեցված ծավալներով և ուղղություններով իրականացված ուղևորափոխադրումներից առաջացած տարեկան վնասի փոխհատուցման նպատակով սուբսիդիավորվել է դրանք իրականացնող համապատասխան ընկերությունը: Շարունակվել են «Հարավային երկաթուղու» կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման և նախագծման աշխատանքները:

Կապ

Կապի բնագավառում «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը հանձնվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը՝ ընկերության սեփականաշնորհումն իրականացնելու նպատակով:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ տարածքում գրանցված ռադիոկապի տարբեր ցանցերի միաժամանակյա աշխատանքի ապահովման, շահագործվող ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեխնիկական պարամետրերի փորձաքննության, կապի և ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում խորհրդատվական ծառայությունների մատուցման, ռադիոէլեկտրոնային միջոցներին հատկացվող անհրաժեշտ հաճախությունների (կապուղիների) համապատասխան մարմինների հետ համաձայնեցման և միջազգային իրավական պաշտպանության ապահովման, ռադիոխանգարումների և տեսչավորման արդյունքում ներկայացված տվյալների, չափումների արձանագրությունների, ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության փորձաքննության և հաճախությունների օգտագործման հնարավորության անհրաժեշտ հաշվարկների կատարման ուղղությամբ:

2017 թվականին կապի բնագավառում շարունակվել է Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալման ծրագիրը:

Քաղաքացիական ավիացիա

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով բնագավառում 2017 թվականին իրականացվել է թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցում եվրոպական և միջազգային ստանդարտներին: Շարունակվել են արդիականացվել Երևանի «Զվարթնոց» միջազգային և Գյումրու «Շիրակ» օդանավակայանները և նրանց ենթակառուցվածքները՝ ուղևորների օդանավակայանային սպասարկման ներկայիս մակարդակը պահպանելու և բարձրացնելու նպատակով: Հավասար

մրցակցային պայմաններ են ապահովվել Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:

2017 թվականին շարունակվել են ստորև նշված ուղղություններով աշխատանքները՝

- Օդային տրանսպորտի բնագավառում վարվող քաղաքականության հիմնադրույթների մշակում, ներքին և միջազգային օդային հաղորդակցությունների իրավունքների և այդ իրավունքներին վերաբերող, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության սպասարկման նպատակով միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող միջազգային պայմանագրերի նախապատրաստումը, քննարկումն ու բանակցությունների վարումը.
- Օդանավակայանային գործունեության և օդային երթևեկության կազմակերպման, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգումը և վերահսկողությունը.
- Ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնելու համար համապատասխան սերտիֆիկատների, լիցենզիաների, վկայականների և թույլտվությունների տրամադրման, օդանավերի թռիչքային պիտանիության, աերոնավիգացիոն միջոցների և այլ ավիացիոն սարքավորումների, թռիչքային անձնակազմերի, օդային երթևեկության կարգավարների և օդանավերի տեխնիկական սպասարկման անձնակազմերի վկայականների տրամադրման և վավերացման ուղղությամբ.
- Օտարերկրյա պետության ավիացիոն իշխանությունների կողմից տրված օդանավի անձնակազմի անդամների վկայականների ճանաչման ուղղությամբ.
- Քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող բոլոր շահագործողների, կազմակերպությունների ու ընկերությունների շարունակական վերահսկողության և դրանց կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների որակի վերահսկողության տեսչական ստուգումների անցկացման ուղղությամբ.
- Օդանավ շահագործողի վկայականի տրամադրման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրի վարման շարունակականության ապահովման և քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի վարման ուղղությամբ:

2017 թվականին շարունակվել են բաց երկնքի քաղաքականության ստորև նշված ուղղություններով աշխատանքները՝

- Օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի վերանայման և գործող սահմանափակումների վերացման աշխատանքներ գործընկեր պետությունների հետ.

- 2017 թվականին ԵՄ արևելյան գործընկերության գագաթաժողովի շրջանակում նախաստորագրվել է «ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը.
- Եվրոպական Միության ընդհանուր ավիացիոն գոտուն միանալու նպատակով բանակցությունների վարում Եվրոպական Հանձնաժողովի հետ և համապատասխան աշխատանքներ ավիացիայի ոլորտի օրենսդրական դաշտի՝ ԵՄ չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ.
- Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ համակարգված տրանսպորտային քաղաքականության իրականացման փուլերի և հիմնական ուղղությունների գործողությունների ծրագրի մշակման և մասնակից պետությունների կողմից օդային տրանսպորտի հարցերով միջոցառումների պլանի մշակման աշխատանքների իրականացման ուղղությամբ.
- Հայկական ավիափոխադրումների շուկան նոր ավիաընկերություններով համալրելու ուղղությամբ ավիաընկերությունների հետ բանակցությունների վարում, վերջիններիս շուկայի ուսումնասիրության նպատակով համապատասխան տեղեկատվության և այլ աջակցության տրամադրում:

Քաղաքաշինություն

2017 թվականին քաղաքաշինության ոլորտում ՀՀ կառավարության խնդիրներից են համարվել սոցիալական ոլորտի պետական սեփականություն հանդիսացող կրթական, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների կապիտալ վերանորոգումը, վերականգնումն ու կառուցումը, որն արտացոլվել է 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսային ծրագրերում:

2017 թվականին ոլորտում իրագործվող ծրագրերը նպատակաուղղված են եղել հատկապես ՀՀ մարզերում բնակչության զբաղվածության և ընդհանուր կենսամակարդակի բարձրացմանը, կրթության, մարզական, մշակութային և առողջապահական ոլորտներում վարվող միասնական քաղաքականության ապահովմանն օժանդակելուն:

Շինարարության ոլորտում 2017 թվականի ընթացքում կարևորվել է կրթական, մարզական, մշակութային և առողջապահական օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակական բնույթի ապահովումը, ինչը նպաստել է կրթական համալիրի վերազինմանը, ուսման, մարզական, մշակութային կյանքի և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի էական բարձրացմանը:

ՀՀ մարզերի համաչափ զարգացման ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով 2017 թվականին թվով 51 օբյեկտներում իրականացվել են նախագծային փաստաթղթերի մշակման, շինարարական աշխատանքների և դրանց նկատմամբ տեխնիկական ու հեղինակային հսկողության

ծառայություններ՝ ընդհանուր 2699.4 մլն դրամի չափով: Ամբողջապես ավարտվել և շահագործման են հանձնվել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոնը և Գավառի Լևոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնը, ավարտական փուլում են գտնվում Երևանի «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի, Աշտարակի մարզադպրոցի շինարարական աշխատանքները և Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոցին կից օժանդակ մասնաշենքի կառուցման աշխատանքները:

2017 թվականին քաղաքաշինության հիմնական խնդիրներից է համարվել նաև աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացումը, որի շրջանակներում ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված 560.0 մլն դրամ միջոցների հաշվին լուծվել է մոտ 100 ընտանիքի բնակարանային խնդիր՝ բնակարանի գնման վկայագրի (ԲԳՎ) միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցության տրամադրմամբ:

Շենքերի շահագործման հուսալիության և սեյսմակայունության բարձրացման վերջնական արդյունքներին հասնելու նպատակով «Շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրի շրջանակներում 2017 թվականին հանրապետությունում իրականացվել են 18990.0 հազար դրամի չափով թվով 64 տարբեր նշանակության շենքերի փաստացի տեխնիկական վիճակի մանրամասն հետազոտություններ (դիտողագործիքային եղանակով), և դրանց արդյունքների հիման վրա կազմվել են համապատասխան եզրակացություններ և տեխնիկական անձնագրեր:

ՀՀ կառավարության գերակայություններից մեկը հանդիսացող «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում)» ծրագրի շրջանակներում միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի բարեփոխման և արդիականացման նպատակով 2017 թվականին մշակվել են «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու», «Հասարակական շենքեր և շինություններ» (շարունակական), «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» (շարունակական) և «Պողպատե կոնստրուկցիաներ» (շարունակական) ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուները՝ ընդհանուր 19900.0 հազար դրամի չափով, ինչը հնարավորություն է տվել ապահովելու նախագծային և շինարարական աշխատանքների որակական երաշխիքները, միասնական շուկայում հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությունն ու տեխնոլոգիաների արդիականացումը:

Արտակարգ իրավիճակների ոլորտ

2017 թվականին արտակարգ իրավիճակների ոլորտի հիմնական խնդիրներն են հանդիսացել՝

- քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը.
- փրկարարական, վթարային-փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը.
- քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման ու որոշումների մշակման և ընդունման աշխատանքների, նշված ոլորտներում կառավարման իրականացումը.
- արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը.
- արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության իրականացումը.
- հատուկ թույլատրողական և վերահսկողական գործառույթների իրականացումը.
- քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարհանման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու իրականացումը.
- արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների իրականացումը.
- պետական մոբիլիզացիոն ռեզերվների ձևավորումը և կառավարումը.
- պետական պահուստի պաշարների պահպանումն ու սպասարկումը.
- սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացումը.
- հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացումը.
- մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների իրականացումը.
- գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների և միջազգային փորձի հիման վրա տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման ապահովումը.
- արտակարգ հումանիտար արձագանքման գործողությունների իրականացումը.

- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում բնակչության ուսուցման կազմակերպման համակարգումը.
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով բնակչության և կառավարման մարմինների իրազեկումը.
- աղետների ռիսկի կառավարման ազգային ռազամավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի նախագծերի մշակումը:

2017 թվականին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Կանկունում (Մեքսիկա) կայացած Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմին: Աշխատանքային այցի շրջանակներում մշակվել է Մեքսիկայի համապատասխան կառույցի հետ համագործակցության համաձայնագրի նախագիծը:

Ստորագրվել են մի շարք համաձայնագրեր Հայկական Կարմիր խաչի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA), Ռուսաստանի Դաշնության էկոլոգիական, տեխնոլոգիական և ատոմային հսկողության դաշնային ծառայության ներկայացուցիչների միջև: Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրի» շրջանակներում կնքվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը 36 հրշեջ մեքենա, 3 շարժասանդուղք տրամադրելու մասին դրամաշնորհային համաձայնագիրը:

2017 թվականի հոկտեմբերի 11-13-ը Երևանում նախարարության և միջազգային գործընկերների հետ համատեղ կազմակերպվել է «Դիմակայունության բարձրացում կայուն զարգացման նպատակով» խորագրով միջազգային համաժողով:

ԵՄ ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացվել է 230000 եվրոյին համարժեք գույք և սարքավորումներ (անհատական պաշտպանության միջոցներ, աղտահանման սարքեր, մոնիթորինգի սարքեր): ԱՄՆ-ի եվրոպական հրամանատարության մարդասիրական աջակցության ծրագրի շրջանակներում Մասիսի, Արարատի, Սիսիանի և Մեղրիի հրշեջ կայաններին տրամադրվել է 400000 ԱՄՆ դոլարին համարժեք գույք:

Հայաստանի չորս մարզերում (Լոռի, Տավուշ, Շիրակ, Սյունիք) աղետների ռիսկի կառավարման ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակում իրականացվել են տեղական մակարդակում ռիսկերի կառավարման ուղղությամբ մոնիտորինգի աշխատանքներ: Ընտրվել են հիմնականում 1000 և ավելի բնակիչ ունեցող 12 համայնք: Մոնիտորինգի հիմնական նպատակն է եղել առաջ քաշել համայնքներին բնորոշ աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերը, համայնքին սպառնացող վտանգները, համայնքի խոցելիությունը, առկա կարողությունները և վերջիններիս համադրությունից բխող աղետների ռիսկը:

«Վեոն Արմենիա» և «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերությունների հետ համատեղ կառուցվել են «911», «112», «101» թվային հեռախոսակապի լրացուցիչ IP ցանցեր, որոնք կապահովեն նշված հեռախոսահամարների հասանելիության եռաստիճան պաշտպանվածություն:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի «911» ծառայությունում ներդրվել է ահազանգերի սպասարկման թվային համակարգ, որը 2017 թվականին գտնվել է փորձարկման փուլում:

Երևան քաղաքի, Լոռու, Շիրակի մարզային փրկարարական վարչությունների ստորաբաժանումներում տեղադրվել են GPS համակարգի 100 նոր սարքավորումներ:

Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման տարածաշրջանային կենտրոնին ժամանակակից փրկարարական սարքավորումներով վերազինելու նպատակով ռուսական կողմը նախատեսում է տրամադրել 16 մլն ԱՄՆ դոլարին համարժեք աջակցություն, որից 10 մլն ԱՄՆ դոլարը տրամադրվել է 2017 թվականին՝ հիմնականում ուղղվելով Փրկարար ծառայությանը:

Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը ժամանակավոր շահագործման նպատակով հատկացվել են «Ուրալ 305» ԱԲ 40 մակնիշի 2 միավոր հրշեջ ավտոմեքենաներ:

ԱՄՆ եվրոպական հրամանատարության մարդասիրական աջակցության ծրագրի շրջանակներում փրկարարական գույք է տրամադրվել Սյունիքի և Արարատի մարզային հրշեջ-փրկարարական ջոկատներին: ԱՄՆ Կալիֆորնիա նահանգից նվիրաբերվել է Pierce մակնիշի երկու մեքենա:

Ճապոնիայի կառավարության դրամաշնորհի շրջանակներում տրամադրվել են 15 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ նոր ու ժամանակակից 36 հրշեջ մեքենաներ, 3 ավտոսանդուղք և 1 շարժական արհեստանոց:

2017 թվականին անցկացվել է 252 հատուկ տակտիկական ուսումնավարժություն: Մասնավորապես՝ INSARAG-ի (Միջազգային որոնողական և փրկարարական խորհրդատվական խմբի) միջազգային չափորոշիչներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ և ուսումնավարժություններ:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ ՀՀ ԱԻՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչության Արտաշատի ՀՓՋ-ում կառուցվում է նոր հրշեջ դեպո, նախատեսվում է Մասիսի, Սիսիանի և Մեղրիի ՀՓՋ-ներում նույնպես կառուցել հրշեջ դեպոներ: Նշված ջոկատների կարողությունների զարգացման նպատակով տրամադրվել է փրկարարական գույք:

ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքում բացվել է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում ավարտին են հասցվում կամավորական հրշեջ-փրկարարական հենակետի ստեղծման աշխատանքները: 2017 թվականին վերանորոգվել է Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 38 հասցեում գտնվող շենքը, ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ Գյումրու ջոկատի փրկարար ծառայողների կողմից պատշաճ կարգով ծառայություն իրականացնելու համար: Բացի այդ, վերանորոգվել են նշված հասցեում գտնվող թվով 15 ավտոկայանատեղիները:

2017 թվականի ընթացքում փոփոխության է ենթարկվել փրկարարական ծառայողի համազգեստի ձևը: Այն արդիականացվելով համապատասխանեցվել է ժամանակակից պահանջներին:

Բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ 2017 թվականին անցկացվել են տարաբնույթ ուսումնավարժություններ: Մասնավորապես՝ ՓԾ տարածքային ստորաբաժանումների կողմից անցկացվել են 7 հրամանատարաշտաբային, 9 շտաբային, փրկարարական ծառայողների հետ թվով 22 շտաբային և 11 ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:

Քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ ստեղծվել են հատուկ օբյեկտների պահպանության 2 ջոկատներ, 12 հենակետեր ՀՀ Տավուշի մարզում:

ՀՀ ազգային անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը՝ արտակարգ իրավիճակների համակարգը, իրականացնում է հանրապետությունում տեխնածին և բնական աղետների կանխարգելման, բնակչության վաղաժամ իրազեկման և ուսուցման գործառույթները, ինչպես նաև մթնոլորտի և ջրոլորտի լայնածավալ և մանրակրկիտ մոնիտորինգի իրականացումը, տեխնածին վթարների կանխարգելման, դրանց հետևանքների վերացման, այդ վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված գործառույթները, որոնք իրականացվում են «Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Կենտրոնի կողմից 2017 թվականին իրականացվել է 8910 տեխնիկական անվտանգության փորձաքննություն, որոնցից 89-ը՝ բացասական եզրակացությամբ, 1364 հրդեհային անվտանգության փորձաքննություն, 16 դժբախտ դեպքերի տեխնիկական քննություն: Իրականացվել են արտադրական վտանգավոր օբյեկտների թվով 1476 ինժեներատեխնիկական և մասնագետ կադրերի ուսուցում և որակավորում:

Սեյսմիկ պաշտպանության բնագավառում իրականացվել են ընթացիկ սեյսմիկ ռիսկի գնահատման և նվազեցման ծրագրեր: Սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում իրականացվել է բնակչության պատրաստվածության բարձրացում հատուկ հեռուստահաղորդումների կազմակերպման, նոր տեսաֆիլմերի ստեղծման, համապատասխան գրականության և

ձեռնարկների լույսընծայման և տարածման, երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո բնակչության գործողությունների վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակման և օգտագործման, օգնություն ցուցաբերելու անհատական և կոլեկտիվ միջոցների ուսուցման, բնակչությանը երկրաշարժից և դրա հետ կապված երկրորդային աղետից պաշտպանությունն ուսուցանող պատրաստված հրահանգիչների ցանցի ստեղծման, ուսումնական տագնապ-տարհանումների անցկացման միջոցով: Այս միջոցառումներն իրականացնում են բնակչության տարբեր տարիքային խմբերի, հատուկ կարիքավոր մարդկանց համար առանձնահատուկ մոտեցում կիրառելով:

Հանրապետության տարածքում սեյսմիկ մշտադիտարկման ցանցի ընդլայնման և արդյունավետության բարձրացման, հուսալի մոնիթորինգն ապահովելու նպատակով, ֆրանսիացի գործընկերների ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում տեղադրվել են նոր սեյսմիկ կայաններ և սարքեր:

Շվեյցարիայի տեխնոլոգիական ծառայության կողմից ստացվել է գրունտի ուժեղ շարժումների 12 նոր թվային կայան, որից 3-ը տեղադրվել է Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի թունելում, 4-ը՝ ՀՀ և Արցախի տարածքներում, իսկ մյուսները կտեղադրվեն 2018 թվականի ընթացքում:

Համաշխարային բանկի տեխնիկական օժանդակության առաքելության շրջանակներում սկսվել են ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի 1:1500000 մասշտաբի հավանակային գնահատմամբ նոր քարտեզի կազզման աշխատանքները: Երկրաշարժերի ազգային կատալոգը համալրվել է երկրաշարժի օջախի հիմնական պարամետրերի մասին 1130 տվյալներով:

Ուսումնասիրվել են միկրոռեգիոնալ մակարդակի՝ մակացված տարածական պլանավորման նախագծերի ՀՀ Տավուշի մարզի 55 համայնքների համար կազմված ինժեներաերկրաբանական և սեյսմամիկրոշրջանացման քարտեզներ: Իրականացվել են Հայաստանի և Արցախի թվով 379 շենք-շինությունների տեխնիկական վիճակի, ինչպես նաև սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման աշխատանքներ: Սեյսմիկ պաշտպանության դիտացանցի արդիականացումն իրականացվում է միջազգային համագործակցության շրջանակներում:

Հիդրոմետ ծառայությունում 2017 թվականին շարունակվել է հիդրոօդերևութաբանական դիտարկումների և հակակարկտային ներգործության գործընթացը մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողի, գյուղատնտեսական մշակաբույսերի, ռադիացիոն ֆոնի մոնիտորինգի, հելիոերկրաֆիզիկական երևույթների՝ օզոնային շերտի, ուլտրամանուշակագույն ճառագայթման, ակտինոմետրիական, աերոլոգիական ուսումնասիրությունների և կարկուտի դեմ պայքարի վերաբերյալ 47 օդերևութաբանական, այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված կայաններում՝ լրիվ ծրագրով, իսկ 26 հիդրոլոգիական և 2 ագրոօդերևութաբանական

դիտակետերում՝ կրճատ ծրագրով (միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան բարձրության):

2017 թվականի կարևորագույն նախաձեռնությունը հակակարկտային հրթիռային պաշտպանության պիլոտային ծրագիրն էր, որի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում տեղադրվել են 3 հրթիռային արձակիչ կայաններ, որոնց պաշտպանության տիրույթում են գտնվում 60 համայնքների շուրջ 45 հազար հա հողատարածքներ,
- արդիականացվել է ՀՀ Արագածոտնի մարզում տեղակայված ռադիոլոկացիոն կայանը,
- վերանորոգվել են Արագածոտնի և Արմավիրի հակակարկտային կենտրոնների հրթիռների պահեստարանները,
- կազմակերպվել են հրթիռային եղանակով հակակարկտային պաշտպանություն իրականացնող անձնակազմի մասնագիտական ուսուցման դասընթացներ,
- կնքվել է պայմանագիր՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՌԴ «Պոլիմերային նյութերի գիտահետազոտական ինստիտուտ» բաժնետերական ընկերության միջև 120 հատ հրթիռների ձեռք բերման վերաբերյալ, որոնց մատակարարումը կատարվել է 2018 թվականին,
- Հակակարկտային ներգործությունների ժամանակ միջգերատեսչական փոխգործակցությունն ապահովելու նպատակով մշակվել է «ՀՀ տարածքում հակակարկտային կրակոցների կազմակերպման ու իրականացման մասին» հրահանգը հաստատելու մասին՝ ՀՀ պաշտպանության, արտակարգ իրավիճակների և բնապահպանության նախարարների, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի համատեղ հրամանը, որն այժմ գտնվում է ստորագրման փուլում,
- 2017 թվականին մշակվել է «Մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2017 թվականին ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում իրականացվել են նախատեսված վերապատրաստման, կրթական և մեթոդական բոլոր աշխատանքները: Մեկնարկվել են ակադեմիայի cmsa.am, 911tert.am կայքերը և ֆեյսբուքյան էջերը: Dasaran.am-ի հետ համատեղ ներդրվել է «Սուպեր Դավիթ» առցանց խաղը, և շարունակվում են անտառային հրդեհների թեմայով խաղի մշակման աշխատանքները: Ձևավորվել է համագործակցություն nout.am-ի հետ 3D առցանց ուսուցման մեթոդների ներդրման համար: ՀՀ ՊՆ

տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրի հետ համատեղ շարունակվում են ուսումնասիրությունները հեռավար ուսուցման ներդրման ուղղությամբ:

Ուսումնական գործընթացում Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) ներդրման համար ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալներ, մասնավորապես՝ վերապատրաստվել են մասնագետներ, և ձեռք է բերվել անօդաչու սարք, որի միջոցով նախատեսվում է կատարել հեռավար զոնդավորում և ռիսկերի գնահատում:

Գերմանական կարմիր խաչի հետ շարունակվում են աշխատանքները Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (ՃԿԱԿ) և 911 ծառայության օպերատորների որակավորման բարձրացման համար: Ձևավորվել են նախադրյալներ ՌԴ ԳԱ Անտառի ինստիտուտի հետ գիտահետազոտական համատեղ աշխատանքների ուղղությամբ:

UNDP-ի, UNISEF-ի, Save the Children-ի, OXYGEN-ի հետ համատեղ իրականացվում են անվտանգության մշակույթի ձևավորմանն ուղղված ուսումնական ծրագրեր:

Լուսակերտ ուսումնական բազայում իրականցվում է անհրաժեշտ վարժահրապարակների ձևավորում, ինչը կօժանդակի զարգացնելու հրշեջ կիրառական սպորտաձևերը:

2017 թվականին ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ են անցել 1941 ունկնդիր (պլանով՝ 1830) 90 ուսումնական խմբերում (պլանով՝ 86 խումբ):

Ապահովվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ԱՌՆԱՊ (Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ) հիմնադրամի, Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից համատեղ կազմակերպված աղետների ռիսկի կառավարման ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի նախագծերի քննարկմանը հանրային ոլորտի մասնակցությունը:

Ընտրված 10 համայնքներում իրականացվել է խոցելիության ու կարողությունների գնահատում, և կազմվել են հաշվետվություններ: Վերոնշյալ 10 համայնքներում ներդրվել է աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգը, ձևավորվել են համայնքների խոցելիության և կարողությունների գնահատման աշխատանքային խմբեր, որոնց կազմում ընդգրկվել են աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմերի ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ, ուսուցիչներ, աշակերտներ, բնակիչներ, խոցելի խմբեր (կանայք, երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք): Համայնքներում ներդրված աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի հիման վրա, համայնքներին սպառնացող աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների պլանավորման մեխանիզմների կիրառման արդյունքում իրականացվել է հավաքագրված տվյալների վերլուծություն, տրվել են

առաջարկություններ, իրականացվել է համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն: Բացահայտվել են համայնքներում աղետների ռիսկի նվազեցման գործընթացը խոչընդոտող գործոնները, դրանց պատճառներն ու բացասական հետևանքները, ինչպես նաև համայնքների կայուն զարգացմանը խոչընդոտող աղետների ռիսկի նվազեցման խնդիրները:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով հաստատվել է «Աղետների ռիսկի կառավարումը տեղական մակարդակում» կիրառական ուղեցույցը: Աշխատանքներ են իրականացվել համայնքներում ուղեցույցի ներդրման ուղղությամբ:

Արտաքին քաղաքականություն

2017 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները Հանրապետության Նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշերի և նրա կողմից տրված հանձնարարականների ու ՀՀ կառավարության ծրագրի հիման վրա:

Հայաստանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների հետ շարունակել է Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծմանը, Վիեննայի, Սանկտ Պետերբուրգի և Ժնևի գագաթաժողովներին ձեռք բերված պայմանավորվածությունների կյանքի կոչմանն ուղղված ջանքերը:

2017 թվականի հոկտեմբերի 16-ին Ժնևում տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների գագաթաժողովը: Տարվա ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների միջև կայացել է հինգ հանդիպում: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները երեք անգամ այցելել են տարածաշրջան՝ հանդիպելով ՀՀ Նախագահի, ԱԳ նախարարի հետ: Նրանք այցելել են նաև Ստեփանակերտ, հանդիպել Արցախի ղեկավարության հետ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով ընդունվել է 14 հայտարարություն: Մասնավորապես՝ դեկտեմբերին Վիեննայում ԵԱՀԿ նախարարների խորհրդի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահ պետությունների պատվիրակությունների ղեկավարները հանդես են եկել տարեկան ամփոփիչ հայտարարությամբ, որում լիակատար աջակցություն են հայտնել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ հիմնված միջազգային իրավունքի երեք հիմնարար սկզբունքների՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության ու ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վրա: Շեշտել են, որ պետք է իրականացվեն Վիեննայի ու Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներին ձեռք բերված համաձայնությունները: Կոչ են արել ընդլայնել ԵԱՀԿ գործող նախագահի անձնական

ներկայացուցչի գրասենյակի մոնիտորինգային կարողությունները և այլն: Սրանք այն դրույթներն են, որոնց բազմիցս իր աջակցությունն է հայտնել Հայաստանը՝ ի տարբերություն Ադրբեջանի:

Հայկական դիվանագիտության առաջնահերթությունների թվում շարունակել է մնալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը նոր ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված՝ միջազգային հանրության ջանքերում: Ապրիլի 25-ին Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատն ընդունել է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև: 2017 թվականին ԱՄՆ ևս 4 նահանգ ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը՝ դրանց քանակը հասցնելով 48-ի:

Հայաստանի ջանքերը երկկողմ հարաբերությունների զարգացման առումով ուղղված են եղել Ռուսաստանի Դաշնության հետ բոլոր ուղղություններով դաշնակցային, ռազմավարական հարաբերությունների հետագա ամրապնդմանը, հայ-ամերիկյան բարեկամական գործընկերության զարգացմանը, գործնական քայլեր են իրականացվել հարևան երկրների՝ Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների առավել ընդլայնման ուղղությամբ: Արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից է շարունակել մնալ Եվրոպական միության հետ փոխգործակցության խորացումը: Նոյեմբերի 24-ին ստորագրվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:

Քայլեր են ձեռնարկվել ԱՊՀ երկրների հետ հարաբերությունների և համագործակցության հետագա զարգացման ուղղությամբ: Ջանքեր են գործադրվել եվրոպական երկրների հետ համագործակցությունը սերտացնելու ուղղությամբ: Ուշադրության կենտրոնում են եղել Չինաստանի, Հնդկաստանի, ինչպես նաև Ճապոնիայի, Կորեայի և ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի այլ երկրների հետ համագործակցության ընդլայնման հարցերը: Քայլեր են ձեռնարկվել Մերձավոր Արևելքի գործընկեր երկրների հետ համագործակցության օրակարգը նոր ոլորտներով համալրելու ուղղությամբ: Աշխատանքներ են տարվել ամերիկյան մայրցամաքի երկրների հետ փոխգործակցության խորացման նպատակով:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակվել է ՀՀ ներկայացուցիչ Յուրի Խաչատուրովը:

2017 թվականին Հայաստանը շարունակել է սերտ համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում:

Հայաստանը ակտիվ ներգրավվածություն է ունեցել ՄԱԿ-ի և մի շարք այլ բազմակողմ հարթակներում: Հայաստանը ստանձնել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ)

նախարարական համաժողովի նախագահությունը: Մեր երկիրն իր կարևոր նպաստն է բերել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, նաև՝ Եվրոպայի խորհրդի աշխատանքներին: Շարունակվել է Հայաստանի և Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) միջև փոխգործակցությունը:

Արտաքին քաղաքական կարևորագույն ուղղություններից է եղել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը: Դեկտեմբերին Հայաստանը ստանձնել է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) նախագահությունը:

Աշխատանքներ են իրականացվել խորհրդարանական դիվանագիտության, ապակենտրոնացված համագործակցության ընդլայնման, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ: Կարևոր տեղ է հատկացվել միջազգային մշակութային համագործակցությանը:

Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել 7 երկրի հետ՝ հաստատված երկկողմ հարաբերությունների ընդհանուր թիվը հասցնելով 175-ի: Ստորագրվել է 73 միջազգային պայմանագիր:

Ուշադրության կենտրոնում է եղել արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայերին աջակցության ցուցաբերումը: Հյուպատոսական ծառայության կողմից սպասարկվել է 151 000 քաղաքացի:

2017 թվականին ՀՀ Նախագահը կատարել է 21 օտարերկրյա այց: Պաշտոնական այցով Հայաստան են այցելել 4 պետության ղեկավար: ՀՀ ԱԺ նախագահը կատարել է 8 արտասահմանյան այց: Հայաստան է այցելել 3 պետության խորհրդարանի ղեկավար: ՀՀ վարչապետը կատարել է 8 այց արտերկիր: Հայաստան է այցելել 8 երկրի կառավարության ղեկավար:

ԱԳ նախարարի մակարդակով տեղի է ունեցել է 41 օտարերկրյա այց: Հայաստան է այցելել 19 արտգործնախարար և միջազգային կազմակերպության ղեկավար: Հայաստանի արտգործնախարարը 105 հանդիպում է ունեցել տարբեր երկրների իր գործընկերների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների հետ:

Շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

Արդարադատություն

Արդարադատության նախարարության համակարգին ուղղված ծախսերի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է:

Հակակոռուպցիոն և պետական կառավարման համակարգի բարեփոխման ոլորտ

2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն ՀՀ-ում առաջին անգամ ստեղծվելու է կոռուպցիայի կանխարգելման մարմին: Ի տարբերություն գործող հակակոռուպցիոն մարմինների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ունենալու է ինքնուրույն աշխատակազմ, ֆինանսավորվելու է ՀՀ պետական բյուջեից, օժտված է լինելու անկախության երաշխիքներով:

2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, հստակեցվել է փոխկապակցված անձանց շրջանակը, ներդրվել է շահերի հայտարարագրման ինստիտուտը, ինչի արդյունքում կբարձրանա հանրային հաշվետվողականությունը:

2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը և հարակից օրենքները, որոնց շրջանակներում սահմանվել են ազդարարների պաշտպանության երաշխիքների, ինչպես նաև գործուն կառուցակարգերի ներդրման դրույթներ, ինչը կնպաստի հանրության մեջ կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը, կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը, կոռուպցիոն դեպքեր բացահայտող մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ձևավորվում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից բխող մեխանիզմները: 2017 թվականի հուլիսի 31-ին ՀՀ-ում Միացյալ Թագավորության դեսպանատան հետ ստորագրվեց «Աջակցություն ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» խորագրով համատեղ ծրագիրը: Ծրագրի շրջանակներում մշակվել և ներկայումս շրջանառության մեջ են գտնվում «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը, ազդարարման էլեկտրոնային հարթակի տեխնիկական բնութագիրը: Իրականացված միջոցառումների արդյունքում կբարձրացվի քաղաքացիական հասարակության և հանրային իրազեկվածության մակարդակը՝ «Ազդարարման համակարգի մասին» օրենքի հիմնական սկզբունքների, կարգավորումների և նպատակի վերաբերյալ:

2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Դատախազության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որի համաձայն բարեփոխվել է հանցագործությունների վիճակագրության համակարգը:

2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով քրեական օրենսգրքի 3112-րդ հոդվածը (Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը) համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին:

Մեկնարկել է նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացը:

2017 թվականի հոկտեմբերի 30-ին մեկնարկել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման 4-րդ փուլը: Միաժամանակ, սույն թվականի սեպտեմբեր ամսին Փարիզում, ՏՀԶԿ հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման 3-րդ փուլի շրջանակներում, գնահատվել է Հայաստանի առաջընթացը: Մասնավորապես, գրանցվել է, որ Հայաստանին տրված 23 առաջարկներից 21-ի կատարման գործընթացում արձանագրվել է առաջընթաց, ընդ որում 5 հանձնարարականների առումով՝ նշանակալի առաջընթաց:

2017 թվականի դեկտեմբերին Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) հերթական 78-րդ լիագումար նիստում ընդունվել է ՀՀ վերաբերյալ 4-րդ փուլի գնահատման համապատասխանության զեկույցը, որի արդյունքում Հայաստանին տրված 18 հանձնարարականներից 17-ով գրանցվել է առաջընթաց:

Էլեկտրոնային արդարադատության և ծառայությունների մատուցման ոլորտ

2017 թվականին որպես էլեկտրոնային ժողովրդավարության գործիք ներդրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքը, որն ապահովում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առցանց հանրային քննարկում կազմակերպելու և քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված առաջարկներն ամփոփելու գործուն մեխանիզմ՝ ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, պետության իրավաստեղծ գործունեությանը հասարակության մասնակցության ապահովմանը, իրավական ակտերի նախագծերի մշակման առավել բաց, թափանցիկ և հաշվետու գործընթացի կազմակերպմանը:

Մշակվել և ներդրվել է www.e-penitentiary.am «Կալանավորված անձանց և դատապարտյալների տեղեկատվական ռեգիստր» էլեկտրոնային կառավարման համակարգը, որը ներառում է

կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր, բժշկական քարտեր և այլ տեղեկատվություն:

Իրականացվել են e-notary էլեկտրոնային համակարգի արդիականացման աշխատանքներ, ինչի արդյունքում ընդլայնվել են e-notary էլեկտրոնային համակարգի գործառույթները, էլեկտրոնային եղանակով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների շրջանակը, ինչպես նաև իրականացվել են ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգի, ՀՀ ոստիկանության էլեկտրոնային կառավարման համակարգերի հետ ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հետ համակցման աշխատանքներ: Համակարգի արդիականացման արդյունքում ընդլայնվել է այն նոտարական գործողությունների շրջանակը, որոնք իրականացվում են առցանց եղանակով, զարգացել է առցանց հերթագրման համակարգը, ստեղծվել է նաև առցանց եղանակով նոտարին որոշակի հարցումներ ուղարկելու հնարավորություն:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներդրվել և ներկայումս պիլոտային կիրարկման փուլում է գտնվում թեժ գծի www.e-hotline.am կայքը, որի նպատակն է ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, ոլորտային խնդիրների լուծումը, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովումը:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներդրվել է էլեկտրոնային ապոստիլի www.e-apostille.am համակարգը, որը հնարավորություն է ընձեռում փաստաթղթերն ապոստիլով վավերացնելու դիմումներն ընդունել էլեկտրոնային եղանակով, իսկ ստացված ապոստիլների վավերականությունն ստացող պետության իրավասու մարմինը կարող է ստուգել առցանց:

Քրեակատարողական ոլորտ

2017 թվականին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-49-Ն օրենքի 1-ին հոդվածը չեղյալ ճանաչելու մասին» ՀՀ 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-62-Ն, «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-63-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-64-Ն օրենքները, որոնցով բարեփոխվել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուցիոնալ համակարգը:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-59-Ն, «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-60-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-61-Ն օրենքներով տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու ընթացակարգը համապատասխանեցվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի ՍԴՈ-1082 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը:

Միջազգային հարաբերությունների ոլորտ.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ N 483-Ն որոշմամբ հաստատվել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագիրը»: Ծրագիրը մշակվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ: Մասնավորապես՝ 2017 թվականի առաջին եռամսյակի ընթացքում շահագրգիռ պետական մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ոլորտի միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ տեղի են ունեցել շուրջ 10 ոլորտային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները փորձել են գտնել հնարավոր փոխզիջումային ձևակերպումներ միջոցառումների վերաբերյալ՝ հաշվի առնելով ոլորտային քաղաքականության առաջնահերթությունները, բյուջետային հնարավորությունները և իրականացման հնարավոր ժամկետներն ու կանխատեսելի ռիսկերը:

ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ ստեղծվել է համակարգող խորհուրդ՝ բաղկացած շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչներից: Խորհրդի հիմնական նպատակը գործողությունների ծրագրի կատարման ընթացքը համակարգելը, մշտադիտարկելը և միջոցառումների կատարմանը նպաստելն է:

Միաժամանակ, ՀՀ կառավարության N 483-Ն որոշմամբ ամրագրվել է, որ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո համակարգող խորհուրդը կազմակերպում է հանրային քննարկում՝ ծրագրով նախատեսված գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ

Մշակվել են ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՀ կառավարության 18.03.2010թ. թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին, ինչպես նաև «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիայով նախատեսված գործառույթները կանոնակարգող օրենսդրական ակտերի նախագծերը:

Պրոբացիայի ոլորտ

Պրոբացիայի պետական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և փուլային սկզբունքով գործարկվում է ռիսկերի և պահանջմունքների գնահատման գործիքը, որը թույլ է տալիս վեր հանել շահառուի ռիսկերն ու պահանջմունքները և վերասոցիալականացման գործընթացը դարձնել առավել թիրախավորված: Մշակվել է պրոբացիայի շահառուների վերահսկողության պլանի ձևը, մեկնարկել է «Անչափահաս և երիտասարդ դատապարտյալների վերասոցիալականացման զարգացում» ծրագիրը, որի շրջանակներում ընտրվելու են 14-30 տարեկան 100 դատապարտյալներ, որոնց հետ տարվող աշխատանքներով փորձ է արվելու ապահովել երիտասարդ դատապարտյալների վերասոցիալականացումը համայնքում: Պրոբացիայի շահառուների կողմից մասնագիտական հմտությունների ձեռքբերման նպատակով շահագործման են հանձնվել 3 սենյակներ, որոնք նախատեսված են համակարգչային, թաղիքագործության, լուսանկարչության դասընթացների իրականացման համար, ստեղծվել է հոգեբանի անկյուն, որտեղ պրոբացիայի շահառուների հետ տարվում են հոգեբանական աշխատանքներ, մշակման փուլում է գտնվել Պրոբացիայի պետական ծառայության պաշտոնական կայք-էջը (probation.am):

Սփյուռք

2017 թվականին Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ ՀՀ սփյուռքի նախարարության աշխատանքներն իրականացվել են՝ ելնելով ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ցանկից և գերակա խնդիրներից:

Աշխատանքներ են իրականացվել Հայաստանի և հայկական սփյուռքի մասին աշխարհում իրազեկվածության աճի, հայապահպանության ամրապնդման և զարգացման, Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման և կապերի խորացման, համահայկական ներուժի համախմբման ուղղություններով:

ԱՄՆ արևմտյան ափում գործող կրթական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման նպատակով հունվարին 15 օրով ԱՄՆ է գործուղվել դասախոս: Գործուղման ընթացքում վերապատրաստվել են 27 դպրոցի հայոց լեզվի և հայագիտական առարկաների 50 ուսուցիչներ:

2017 թվականի փետրվարի 18-24-ը հայտարարվել է մայրենիի շաբաթ, որի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ:

Սփյուռքի հայկական կառույցների ղեկավարների հետ համատեղ աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվում և մշտապես աջակցություն ցուցաբերվում սփյուռքում կիրակնօրյա դպրոցների ստեղծմանը: Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 16 նոր մեկօրյա դպրոց Ռուսաստանում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Սերբիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում և Իրաքում: Նորաստեղծ դպրոցներին տրամադրվում են դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ և դիդակտիկ նյութեր: 2017 թվականի նորաբաց մեկօրյա դպրոցների 7 ուսուցիչներ մասնակցել են «Սփյուռք» ամառային դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:

Մայրենի լեզվի հեռավար ուսուցման ծրագրերում կարևորվում է ՀԲԸՄ վիրտուալ համալսարանի գործունեությունը՝ որպես օնլայն-հեռավար կրթության վերջին զարգացումները կրող լեզվուսուցման կայուն կենտրոն: Հեռավար այս համալսարանի միջոցով իրականացվում են հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) և մշակութային կրթության ուսումնական ծրագրեր՝ տարվա մեջ 4 ենթաշրջաններով: Հայկական վիրտուալ համալսարանի ուսուցման ենթաշրջանների մասին տեղեկություններն առաքվել են սփյուռքի համայնքային, կրթամշակութային, երիտասարդական կազմակերպություններին, տեղադրվել ՀՀ սփյուռքի նախարարության կայքերում:

2017 թվականին շարունակվել են աշխատանքները Հայաստանի և սփյուռքի համայնքների միջև կրթական, մշակութային և երիտասարդական շփումների, ճանաչողության, տեղեկացվածության և հաղորդակցման մակարդակի բարձրացման ուղղությամբ: Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրին 2017 թվականին մասնակցել է 1300 մասնակից, որից 1055-ը՝ սփյուռքահայ պատանի ու աղջիկ աշխարհի 36 երկրից: Ծրագրի ընթացքում կազմակերպվել են հայոց լեզվի 5-օրյա արագացված դասընթացներ, որոնք անցկացվել են մասնակիցների լեզվական իմացության մակարդակին համապատասխան ձևավորված խմբերով: Դասերն անցկացրել են երևանյան դպրոցների հայերենի լավագույն ուսուցիչներն ու մասնագետները, ինչպես նաև՝ սփյուռքի հայկական կրթօջախների փորձառու ուսուցիչները: Հայոց լեզվի և հայրենագիտության դասընթաց է կազմակերպվել նաև ծրագրի ճամբարային 4 օրերի ընթացքում: Ծրագրի մասնակիցները, ինչպես ամեն տարի, այցելել են Հայաստանի պատմամշակութային վայրեր, թանգարաններ, ՀԲԸՄ վիրտուալ համալսարան և այլն:

Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ իրականացվող «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար-2017»

մրցանակաբաշխությանը սահմանված են եղել «Մայրենիի պաշտպան» (անհատներ), «Լավագույն հայկական կրթօջախ», «Երիտասարդական կամ ուսանողական կազմակերպություն» անվանակարգերը, անցկացվել է «Ազատ Արցախ» մանկապատանեկան լավագույն ստեղծագործությունների մրցույթը: Ստացվել են ավելի քան 160 անհատի և կազմակերպության հայտեր մոտ 20 երկրներից: Արդյունքները կամփոփվեն 2018 թվականի սկզբին:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի մշակման և տրամադրման ծրագրի շրջանակներում 37 երկրի մոտ 200 սփյուռքյան կրթօջախների բաշխվել են մոտ 87000 կտոր դասագրքեր ու ուսումնաօժանդակ նյութեր: Բացի ուսումնական նյութերից՝ սփյուռքյան կառույցներին, հայաստանյան կազմակերպություններին ու անհատներին տրամադրվել են ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով հրատարակված, նվիրաբերված և հավաքագրված գիտահանրամատչելի գրքեր, ձայնասկավառակ ու խտասալիկ, ՀՀ պետական խորհրդանշանների փաթեթներ, ամենատարբեր հրատարակչական նյութեր՝ մոտ 12000 կտոր:

ՀՀ ԳԱԱ ինստիտուտում ստեղծվել է 3 հանձնախումբ՝ արևմտահայերենի անաղարտության, զարգացման, լեզվի 2 ճյուղերի մերձեցման համար: Մշակվել է արևմտահայերենի պահպանման, անաղարտության և զարգացման ռազմավարությունը:

Սփյուռքի համայնքներին գիտակրթական, մշակութային, տեղեկատվական իրազեկման, հայրենիքի և հայ ինքնության վերաբերյալ իմացության մակարդակի բարձրացման և հայապահպանության ամրապնդման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները:

Հունվարի 19-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ ԳԱԱ հայագիտական ինստիտուտների հետ կազմակերպել է «Հրանտ Դինք. 10 տարի անց» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցել են անվանի գիտնականներ, թուրքագետներ, քաղաքագետներ, պատմաբաններ, լրագրողներ, մտավորականներ:

Հրատարակվել է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը փաստաթղթերում և լուսանկարներում» պատկերագիրքը, որը փաստաթղթերի և լուսանկարների միջոցով արտացոլում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հայաստանում և սփյուռքում իրականացված աշխատանքները:

ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով 2017 թվականի ընթացքում մի շարք գիտական հաստատությունների կողմից իրականացվել են Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ, որոնք տպագրվել են: Նախարարության պատվերով ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակել է «Հայերեն-քրդերեն, քրդերեն-հայերեն» բառարանը:

Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողովի «Արտաքին քաղաքականության օրակարգի» թեմատիկ ուղղության շրջանակներում տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանության ճանաչում, ցեղասպանությունների կանխարգելում. քաղաքական և իրավական գործընթացները» նիստը, որին մասնակցել են անվանի գիտնականներ, վերլուծաբաններ, պաշտոնատար անձինք Հայաստանից և սփյուռքից:

Օժանդակություն է ցուցաբերվել Իսպանիայի 2 քաղաքներում և Արգենտինայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարերի տեղադրմանը:

2016 թվականի հոկտեմբերի 20-24-ը Հայաստանում և Արցախում կայացած լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի մասնակիցների առաջարկով սկսվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժումը: Պատրաստվել է շարժման խորհրդանիշը՝ Արցախի «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի պատկերով, շարժման վերաբերյալ տարածվել է տեղեկատվություն: ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» (hayernaysor.am) էլեկտրոնային պարբերականում բացվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» խորագիր, որտեղ տեղադրվում է շարժման շրջանակներում իրականացված միջոցառումների մասին տեղեկատվություն (ավելի քան 130 տեղեկատվական նյութ): Սփյուռքյան շուրջ 40 լրատվամիջոցների առաջին էջերում բացվել են բաժիններ՝ շարժման խորհրդանիշով: Սփյուռքի առաջատար լրատվամիջոցների խմբագիրներն ու լրագրողները հանդես են եկել շարժմանը սատարելու հրապարակումներով, ելույթներ ունեցել տեղական լրատվամիջոցներով, կազմակերպել են այցելություններ Արցախ: Շարժմանը միացել են սփյուռքի բազմաթիվ համայնքային կառույցներ, դպրոցներ, մշակութային խմբեր և անհատներ՝ իրականացնելով տարաբնույթ միջոցառումներ: Համերգների և այլ միջոցառումների ժամանակ հանգանակված գումարների մի մասը փոխանցվել է Արցախի մշակութային կենտրոններին և դպրոցներին, Հայաստանի սահմանապահ համայնքներին, իսկ մյուս մասով գնվել են 300 երաժշտական գործիքներ և տրամադրվել են դպրոցներին: Սփյուռքահայ տասնյակ անհատ բարերարներ օգնություն են ուղարկել Արցախ, այդ թվում՝ այնտեղ ծառայող զինվորներին, զոհված զինծառայողների ընտանիքներին:

Սփյուռքի համայնքներում կայացել են Շուշիի ազատագրման 25-ամյակին նվիրված 10-ից ավելի մշակութային միջոցառումներ, ցուցահանդեսներ, կազմակեպվել են դասախոսություններ և այլն: Ֆրանսիայի հայ համայնքի աջակցությամբ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայացել է «Ֆրանսիայում Արցախի օրեր» փառատոնը:

«Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում 2017 թվականին համագործակցություն է հաստատվել հայաստանյան և սփյուռքյան 6-ական դպրոցների միջև:

Մայիսյան հաղթական հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակի նախաշեմին սեպտեմբերի 18-20-ը Երևանում անցկացվել է «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը: Համաժողովն անցկացվել է 3 լիագումար նիստերի և 4 ուղղություններով՝ 16 նիստերի նիստերի միջոցով: 4 թեմատիկ ուղղություններն էին՝ Հայաստանի զարգացման հիմնախնդիրները, ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում, Արտաքին քաղաքականության օրակարգը և Հայապահպանության հիմնախնդիրները: Հայաստան-Սփյուռք համաժողովին մասնակցել է 1837 հոգի 71 երկրից (16 երկրից առաջին անգամ), ընդ որում 1363-ը՝ սփյուռքից: Համաժողովի փակմանը ընդունվել է հայտարարություն, որտեղ նշվել են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հիմնական ուղղությունները և ուղենշվել հետագա անելիքները: Գործարկվել է համաժողովի կայքը՝ paf2017.am, որտեղ տեղադրվել են համաժողովի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ծրագիրը և այլ նյութեր:

ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ առողջապահության նախարարության և «Ակցիա Առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության հետ համատեղ հոկտեմբերի 13-14-ը Երևանում կազմակերպել է Սրտաբանության Եվրակովկասյան 6-րդ համաժողովը:

«Հայկական առևտրային ցանց» համահայկական կազմակերպությունը մասնաճյուղեր ունի ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Մերձավոր Արևելքում և Եվրոպայում: Աշխատանքներ են տարվում ցանցն ընդլայնելու ուղղությամբ: 2017 թվականին Պորտուգալիայում ստեղծվել է «Պորտուգալիա-Հայաստան» առևտրային պալատը: Հայկական առևտրային ցանցի 3-րդ համաժողովն անցկացվել է սեպտեմբերի 20-ին Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի շրջանակներում:

Աշխատանքներ են իրականացվել մի շարք երկրներում Հայ բժիշկների ընկերակցություն ստեղծելու ուղղությամբ: Այս նպատակով կայացել են մի շարք հանդիպումներ, կազմակերպվել է ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Լիբանանի հայ բժիշկների մասնագիտական կառույցների ներկայացուցիչների հետ տեսաժողով, որոնց ընթացքում քննարկվել են հետագա անելիքները:

ՀՀ առողջապահության և սփյուռքի նախարարությունների աջակցությամբ Արգենտինայում մայիսի 31-ից հունիսի 2-ը կայացել է Հայ բժիշկների 12-րդ համաժողովը, որին մասնակցել են 660 բժիշկներ, բուժքույրեր և այլք՝ 10 երկրից:

ՀՀ սփյուռքի նախարարությունն ակտիվորեն համագործակցում է լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ՝ մասնավորապես աջակցելով լրագրողների համահայկական համաժողովների կազմակերպմանը: Այս ընթացքում անցկացվել է լրագրողների համահայկական

համաժողովները համակարգող մարմնի 3 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են սփյուռքի լրատվամիջոցներում համահայկական նշանակության խնդիրների, ինչպես նաև նախարարության ծրագրերի լուսաբանման վերաբերյալ հարցեր:

2017 թվականին արձանագրվել է «Սփյուռք» ամառային դպրոցի մասնակիցների թվի ավելացում: «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագիրն իրականացվել է 5 ուղղություններով՝ Երևանի պետական համալսարանի հետ համատեղ: Ամառային դպրոցին մասնակցել է 266 սփյուռքահայ աշխարհի 30 երկրից: Դասավանդման գործընթացում ներգրավվել են ԵՊՀ և այլ բուհերից, ինչպես նաև սփյուռքից հրավիրված մասնագետներ և մշակութային ճանաչված գործիչներ: Բոլոր ուղղություններում ուսուցանվել է ազգային երգ ու պար:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել սիրիահայերի ինտեգրման ուղղությամբ: Նախարարությունն օգնել է նրանց կեցության, առողջապահության, սոցիալական խնդիրների լուծմանը, ինչպես նաև գործարարության մեջ ներգրավմանը: Հայաստանի Հանրապետությունում բնակվում է շուրջ 20 հազար սիրիահայ:

Կրթություն

Կրթության բնագավառում ՀՀ կառավարության գերակա խնդիրներն ուղղված են եղել կրթության որակի և մատչելիության բարելավմանը՝ համակարգի բովանդակային և մեթոդների արդիականացման, իրավական դաշտի ամրապնդման ու կառավարման արդյունավետության բարձրացման ճանապարհով:

Կրթության բովանդակային բարեփոխման նպատակով վերանայվել են կրթական ծրագրերը՝ դրանցում ներառելով ձեռնարկատիրության և ֆինանսական կրթության տարրեր: Այս գործընթացի շրջանակներում 2017 թվականի սեպտեմբեր ամսից 13 դպրոցներում ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցում ֆինանսական կրթության տարրերի ներառմամբ: Վերապատրաստվել է 13 դպրոցների 46 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 1600 սովորող: Ձեռնարկատիրական կրթության ներդրման նպատակով նաև 1247 դպրոցների մեկական 2-րդ և 3-րդ դասարաններում փորձնական ներդրվել է «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցում՝ ձեռնարկատիրական տարրերի ներառմամբ: Վերապատրաստվել է 1247 դպրոցների 1356 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 62900 սովորող: 227 դպրոցների մեկական 10-րդ դասարաններում ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Ձեռնարկատիրություն» առարկայի ուսուցմամբ: Վերապատրաստվել է 227 դպրոցների 227 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 6300 սովորող: Մշակվել է Ձեռնարկատիրական կրթության զարգացման հայեցակարգի նախագիծը:

Ազգային կրթակարգի ձևավորման նպատակով, «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում հանրակրթական առարկաների չափորոշիչների և ծրագրերի վերանայումն ապահովելու համար «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ-ի կողմից մշակվել և Համաշխարհային բանկ վերջնական համաձայնեցման է ուղարկվել համապատասխան տեխնիկական առաջադրանքի նախագիծ, որը հաստատվել է Համաշխարհային բանկի կողմից:

«Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) կրթական ծրագիրը ստացել է միջազգային ճանաչում: Մեծ Բրիտանիայի ճանաչման ազգային գործակալության (UK NARIC) զեկույցը հաստատել է ԱԲ-ն որպես միջազգային լավագույն դպրոցական ծրագրերին (UK A-levels, US AP) համազոր ծրագիր: Այն ներառվել է Մեծ Բրիտանիայի բուհական ընդունելության միասնական համակարգում՝ UCAS-ում, որպես միջազգային որակավորումներին (European Baccalaureate, International Baccalaureate) համազոր հանրակրթական ծրագիր ՀՀ-ից, և ճանաչվել է միջազգայնորեն առաջատար մի շարք բուհերի կողմից: Մեկնարկել է ԱԲ ծրագրում դպրոցների ներգրավման գործընթացը. ՀՀ մարզերի և Արցախի 21 դպրոց ներառվել է ԱԲ-ի դպրոցների թեկնածության փուլում: Մեկնարկել է ԱԲ ծրագրում ուսուցիչների ներգրավման գործընթացը. ընտրական փուլերը հաղթահարել և մասնագիտական զարգացման ծրագրում ներառվել է ՀՀ մարզերի և Արցախի շուրջ 110 ուսուցիչ:

Մշակվել է Միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններ) կրեդիտային համակարգի ներդրման փորձնական ծրագրի նախագիծը:

ՀՀ ԿԳՆ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը հանդիպումներ է կազմակերպել ինստիտուցիոնալ հավատարմագրված բուհերի ուսումնական գծով պրոռեկտորների և որակի ապահովման պատասխանատուների հետ՝ քննարկելու ծրագրային պարտադիր հավատարմագրման վերաբերյալ խնդիրները: Քննարկումների արդյունքում դասակարգվել են բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտները և ենթաոլորտները, որոնց հիմքով նախատեսվում է իրականացնել կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացը: Միաժամանակ մշակվել են «Իրավագիտություն», «Գյուղատնտեսություն», «Շինարարություն», «Ֆիզիկա» և «Կրթություն» որակավորումների ոլորտային շրջանակները՝ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան:

Գյուղական դպրոցների զարգացման հայեցակարգի շրջանակում, հեռահաղորդակցային կապի միջոցով 2017 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ընտրված մենթոր դպրոցները փորձնական ծրագրի շրջանակներում իրականացրել են հեռավար դասեր՝ գործընկեր դպրոցների մասնակցությամբ:

Եվրոպական Իթվինինգ և «Դպրոցների համագործակցության վիրտուալ համայնքի» ծրագրերի շրջանակներում 2017 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին շարունակվել են «Դպրոցների

համագործակցության վիրտուալ համայնքի» ընդլայնման աշխատանքները: 2017 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ծրագրի մասնակից 211 դպրոցներին և 942 ուսուցիչներին միացել են 22 նոր դպրոց և 150 ուսուցիչ: Վերապատրաստվել են Լոռու, Տավուշի, Շիրակի, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի ավելի քան 350 ուսուցիչ՝ մասնակից բոլոր դպրոցներից: Նշված ժամանակահատվածում հայաստանցի ուսուցիչների մասնակցությամբ սկսվել է 53 միջազգային նախագիծ, որոնցից 11 նախագծերում ծրագրի մասնակից այլ երկրների ներկայացուցիչների հետ միասին հայաստանցի ուսուցիչները հանդես են եկել որպես համահեղինակ: Նախատեսվում է նաև Իթվինինգի հարթակի միջոցով իրականացնել մենթոր դպրոցների ծրագիրը: Ներկայումս 25 դպրոց գրանցվել են մենթոր, իսկ 12 դպրոց՝ գործընկեր դառնալու համար: «Հայկական կրթական միջավայրի» «Հեռավար ուսուցում» համակարգում (http://learning.armedu.am/) ստեղծվել և անցկացվել են 12 հեռավար դասընթաց: Հեռավար ուսուցման հմտություններ ունեցող ուսուցիչները մշակել և անցկացրել են տարբեր ուսումնական առարկաներին առնչվող 9 հեռավար դասընթաց:

Հեռավար դասերի անցկացման նպատակն է ակտիվացնել միջդպրոցական համագործակցությունը, լրացնել մանկավարժական կադրերի բացը սահմանամերձ կամ փոքր դպրոցներում, աջակցել ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը և ապահովել հավասարապես որակյալ կրթություն բոլոր աշակերտների համար:

Քայլեր են ձեռնարկվել նաև նախադպրոցական ծառայությունների մատչելիության ու հասանելիության բարձրացման նպատակովմշակվել է Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման ծրագրի նախագիծը: Վերանայվել է «ՀՀ պետական համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ ԿԳ նախարարի հրամանը: Միաժամանակ հանրային քննարկումների է ներկայացվել «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նոր խմբագրությունը:

«Կրթության բարելավում» վարկային նոր ծրագրի շրջանակներում 2017 թվականին ՀՀ Արագածոտնի, Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում հիմնվել է 23 նախակրթարան, որից 18-ը՝ գյուղական, 5-ը քաղաքային համայնքներում՝ ընդհանուր առմամբ 1200 երեխայի ընդգրկմամբ:

Հաստատված ժամանակացույցի համաձայն 2017 թվականին ընդլայնվել է համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ ընդգրկելով նաև ՀՀ Լոռու և Տավուշի մարզերը, որի արդյունքում՝

- Լոռու մարզում ձևավորվել են 3՝ Ստեփանավանի, Վանաձորի և Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, ինչպես նաև Վանաձորի կենտրոնի մասնաճյուղը՝ Ալավերդի քաղաքում,
- իրականացվել են վերապատրաստումներ ներառական կրթության, երեխաների գնահատման գործիքակազմի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի վերաբերյալ՝ հանրակրթական դպրոցների, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների և ուսուցչի օգնականների համար,
- հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիք,
- կիրառվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,
- իրականացվել է վերակազմակերպված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից աշակերտների տեղափոխումը հանրակրթական դպրոց:

Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման մեխանիզմների մշակման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախորդ տարիներին, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ, իրականացրել է ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա մշակվել է «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Ընդլայնվել է «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագիրը՝ 2017 թվականին ծրագրում ներառվել է ՀՀ Տավուշի մարզը: 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՀ Տավուշի մարզի 75 հանրակրթական դպրոցների նախակրթարանների, 1-4-րդ դասարանների և ներառական կրթության համակարգում ընդգրկված 6523 սովորողներ ստանում են անվճար սնունդ: Շարունակվել է ծրագրի իրականացումը մինչ այդ մեկնարկած՝ Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում: Միաժամանակ շարունակվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվող դպրոցական սննդի ծրագիրը, որում Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարունիքի, Արմավիրի մարզերում ընդգրկված է շուրջ 60 հազար սովորող:

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներին և գործիքակազմին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Միաժամանակ

սոցիալական աջակցություն ստացող 39 համայնքների 49 դպրոցների 1-12-րդ դասարանների բոլոր սովորողներն ապահովվել են անվճար դասագրքերով:

Շարունակվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացը: 2017 թվականին վերապատրաստվել է շուրջ 7000, ատեստավորման արդյունքում առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել շուրջ 500 ուսուցչի, իսկ 2-րդ աստիճանի տարակարգ՝ շուրջ 30 ուսուցչի:

Քայլեր են ձեռնարկվել նաև համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հանրակրթական դպրոցների օպտիմալացման շրջանակներում թվով 13 դպրոց վերակազմակերպվել է:

Մշակվել է «Հայաստանի տեխնոլոգիական համալսարանի հիմնման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Կրթության տարբեր մակարդակներում իրականացվող բարեփոխումների գործընթացներին իրենց մասնակցությունն են ունեցել նաև տարբեր միջազգային և հասարակական կազմակերպություններ: Մասնավորապես՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը՝ «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում աջակցում է հատուկ հանրակրթական դպրոցների վերակազմակերպման և համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացներին: Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային նոր ծրագիրն աջակցություն է ցույց տալիս նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրման, հանրակրթության ոլորտի բովանդակային բարեփոխումների (այդ թվում՝ ազգային կրթակարգի ներդրման) և բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր համակարգերի ներդրման ուղղությամբ: «Հույսի կամուրջ» ՀԿ-ն աջակցում է համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացում:

Միաժամանակ շարունակվել են ջանքերը կրթության ոլորտում ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ֆինանսավորման նոր՝ առավել արդյունավետ մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Մասնավորապես՝ միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակման նպատակով մշակվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

Սահմանված կարգով շրջանառվել է «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում բազմահամակազմ դասարանների (ուսումնական խմբերի) կազմավորման և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման կարգը և բազմահամակազմ դասարանների (ուսումնական խմբերի) կազմավորման մոդելները հաստատելու մասին» ՀՀ ԿԳ նախարարի հրամանի նախագիծը: Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման առաջարկվող բանաձևը ապահովելու է թերհամալրված դպրոցների բավարար ֆինանսավորում և միասնական քաղաքականություն ուսուցիչների վարձատրության հարցում:

Դպրոցների գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով ստեղծվել է «Դպրոցական կայքեր» անվանմամբ կայքէջը՝ http://schoolsite.am/ միջավայրում, որտեղ առանձին էջերով տեղադրված են ուսումնական հաստատությունների կայքերի հղումների ցանկերը: Պարբերաբար մշտադիտարկվում են բոլոր դպրոցների կայքէջերը՝ գործընթացը տեսադաշտում պահելու և անհրաժեշտ տեղեկատվությունների հանրային հասանելիությունը ապահովելու համար:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով մշակվել են 3 /երեք/ մոդելներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել նոր մեխանիզմների գծով ծախսերը:

Մոդելներում բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվելիք պետական հիմնական միջոցները բաշխվել են՝

կրթաթոշակային ծրագրեր կրթության 1-ին և 2-րդ աստիճանում. (առաջադիմության, կարիքավորության, գերակա մասնագիտությունների վրա հիմնված կրթաթոշակային և կեցության նպաստների ծրագրեր),

ԲՈՒՀ-երի բազային ֆինանսավորման ծրագիր (որի շրջանակներում ենթադրվում է, որ ԲՈՒՀ-երը կստանան բազային ֆինանսավորում՝ անկախ կրթաթոշակային ծրագրերով ներգրավված ուսանողների թվաքանակից),

ԲՈՒՀ-երի զարգացման ծրագրերի ֆինանսավորման ծրագիր (որի շրջանակներում ենթադրվում է, որ ԲՈՒՀ-երը իրենց զարգացման ծրագրերը իրականացնելու համար մրցութային հիմունքներով ֆինանսավորում կստանան):

2017 թվականին ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել նաև «Ուսանողների ֆինանսական աջակցության և կրթաթոշակների տրամադրման նոր սկզբունքների վերաբերյալ» տեղեկանքը:

Իննամյա կրթությունից պարտադիր 12-ամյա կրթության անցման (ներառյալ մասնագիտական) շրջանակներում ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի թիվ 749-Ն որոշմամբ

փոփոխություն է կատարվել «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգի» մեջ: Նշված իրավական ակտով կապահովվի ՀՀ կառավարության հաստատած տեղերի քանակին, սույն ընդունելության կարգերին համապատասխան՝ մրցույթի արդյունքներով նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն մինչև 19 տարին լրանալը ընդունված ուսանողների անվճար ուսուցման կազմակերպումը և փոխատեղման ընթացակարգի հստակեցումը: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարտադիր 12-ամյա միջնակարգ կրթությամբ պայմանավորված 2017-2018 ուսումնական տարում անվճար ուսուցմամբ ընդունվածների թիվը աճել է շուրջ 1000-ով:

Կրթության ոլորտի զարգացման հետագա ուղղությունները նախանշելու նպատակով, մշակվել է «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Մշակվել է «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2017-2021 թվականների բարեփոխումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև փոխադարձ կապը խթանելու, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզերի զարգացման ուղղություններին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու, ՄԿՈՒ ուսանողներին և շրջանավարտներին մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ տրամադրելու նպատակով ՀՀ-ում գործող թվով 95 ՆՄԿՈՒ ուսումնական հաստատություններից 75-ում ներդրվել են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման համակարգ:

Բարձրագույն կրթության ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը: Ներկայումս սկսված է բարձրագույն կրթության զարգացման ռազմավարության մշակման աշխատանքները:

Ինչպես նաև մշակվել է «ՀՀ ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման հայեցակարգի» նախագիծը, որում ներկայացված են բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական ու գիտահետազոտական կազմակերպությունների մասնակցությամբ՝ ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման

կարգն ու պայմանները, սահմանված են դրանց գործունեության հիմնական ուղենիշները, ֆինանսավորման սկզբունքները և աղբյուրները:

Գիտության ոլորտ

2017 թվականի ընթացքում հնարավորինս իրականացվել են 2017 թվականի պետական բյուջեի ուղերձով նախանշված ծրագրերը՝ մասնավորապես գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը, ֆինանսավորման ծավալների ավելացումը, գիտական ներուժի վերարտադրության արդյունավետության բարձրացումը, գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման ապահովումը:

ՀՀ կառավարության 2017 թվականի բյուջետային ուղերձում նշված որոշ միջոցառումներ, մասնավորապես՝ գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը, գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումները, հնարավոր չի եղել իրագործել՝ պայմանավորված համապատասխան իրավական հիմնավորումների բացակայությամբ, ինչի ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի* իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ Նախագահի աշխատակազմի «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին՝ 1 ծրագիր.
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում գործող 35 գիտական կազմակերպություններին՝ 41 ծրագիր.
- ՀՀ առողջապահության նախարարության կառավարման ոլորտում գործող 8 գիտական կազմակերպություններին՝ 8 ծրագիր.
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող 4 գիտական կազմակերպություններին՝ 4 ծրագիր.
- ՀՀ մշակույթի նախարարության կառավարման ոլորտում գործող 4 գիտական կազմակերպություններին՝ 4 ծրագիր.
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին՝ 1 ծրագիր.
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող 15 գիտական կազմակերպությունների (այդ թվում՝ բուհերին)՝ 108 ծրագիր.

- ՀՀ Երևանի քաղաքապետարանի «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին՝ 1 ծրագիր.
- Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագրին.
- Գիտական կենտրոնների ստեղծմանը և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրին.
- Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցության ծրագրին.
- Միջազգային գիտական կառույցներին անդամակցության ծրագրին.
- Համակարգի գիտական գործուղումների իրականացման ծրագրին.
- Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպմանն աջակցության ծրագրին.
- Գիտական միջոցառումների կազմակերպմանն աջակցության ծրագրին:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից *«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագրի* իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 3 գիտական կազմակերպությունների.
- ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին.
- Երևանի պետական համալսարանին:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ»* ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- 2015 թվականի մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված հետազոտություններին (169 թեմա).
- Երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողների հետազոտություններին (37 թեմա).
- Հայաստանի երիտասարդական հիմնադրամին՝ «Երիտասարդ գիտնականների աջակցության» ծրագրի շրջանակներում.
- Արցախի հետ համագործակցության ծրագրին (6 թեմա).
- «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի «AREAL» գծային արագացուցչի վրա հետազոտությունների իրականացման ծրագրին (5 թեմա).
- Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտություններին (5 թեմա).

- մինչև 2017 թվականի ապրիլ ամիսը ներառյալ շարունակվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի արդյունքներով շահառու հանդիսացող 25 առավել բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողների ֆինանսավորումը, ինչպես նաև 2017 թվականի հուլիսի 1-ից 12 ամիս ժամկետով սկսվել է նոր մրցույթի արդյունքներով շահառու հանդիսացող 20 առավել բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողների ֆինանսավորումը՝ յուրաքանչյուրին տրամադրելով ամսական 75000 ՀՀ դրամ.
- մինչև 2017 թվականի օգոստոս ամիսը ներառյալ շարունակվել է 2016 թվականին գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի արդյունքներով շահառու հանդիսացող 97 առավել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների ֆինանսավորումը՝ յուրաքանչյուրին տրամադրելով ամսական 135000 ՀՀ դրամ.
- 2017 թվականին գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաների աջակցության 4 ծրագիր:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի* իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ կառավարության աշխատակազմի «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին.
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 6 գիտական կազմակերպությունների.
- ՀՀ մշակույթի նախարարության կառավարման ոլորտում գործող 2 գիտական կազմակերպությունների.
- ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին և 3 բուհերի.

- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտին:

Առողջապահություն

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման բնագավառում:

2017 թվականին շարունակվել են ոլորտի կառավարելիության, մատուցվող ծառայությունների որակի ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, գործընթացը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի մշակման ու գործադրման, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման համաճարակաբանական հսկողության, ռիսկի կառավարման, արագ արձագանքման, լաբորատոր գործունեության զարգացման, ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման աշխատանքները:

Կազմակերպվել է վարակիչ հիվանդությունների առումով տեղաճարակային (էնդեմիկ) և անապահով երկրներից ժամանած անձանց նկատմամբ բժշկական հսկողության իրականացումը:

2017 թվականին շարունակականորեն՝ օրական/շաբաթական կտրվածքով իրականացվել է վարակիչ հիվանդություններին, սննդային և քիմիական թունավորումներին առնչվող տվյալների մոնիտորինգ:

«Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների ներդրման միջոցառումների» շրջանակներում մշակվել են կրթական և բնակչության տարբեր թիրախ խմբերի համար նախատեսված տեղեկատվական նյութեր, կազմակերպվել է մամուլի ասուլիս և ազգային խորհրդակցություն՝ ԱՀԿ փորձագետների մասնակցությամբ: ՀՀ առողջապահության նախարարության կայքում ստեղծվել է առանձին դարան՝ «Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների» թեմայով լուսաբանումների համար: Կազմակերպվել են դասընթացներ և խորհրդակցություններ իմունականխարգելման գործընթացում ընդգրկված բուժաշխատողների համար: Կազմակերպվել են խորհրդակցություններ հանրակրթական դպրոցներում ուսուցիչների շրջանում: ՄՊՎ-ի դեմ պատվաստումները ներառվել են Պատվաստումների ազգային օրացույցում: 2017 թվականի դեկտեմբերի 11-ից հանրապետության բժշկական կազմակերպություններում

իրականացվում են ՄՊՎ-ի դեմ պատվաստումներ 2004 թվականի հուլիսի 1-ից հետո ծնված և 13 տարին լրացած աղջիկների շրջանում: 2017 թվականին պահպանվել է հանրապետությունում կարմրուկի և կարմրախտի վիրուսների տեղական փոխանցման բացակայությունը, ինչպես նաև «պոլիոմիելիտից ազատ» երկրի կարգավիճակը: Բնակչության շրջանում կազմակերպվել են կանխարգելիչ պատվաստումներ:

Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված գործառույթների առավել համակարգված և արդյունավետ իրականացման, հանրային առողջության պահպանման ռեսուրսների կենտրոնացման, շահագործման, սպասարկման և աշխատանքի վարձատրության ծախսերի նվազեցման, ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան ծառայություններ տրամադրելու նպատակով 2017 թվականի ընթացքում իրականացվել են ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» (ՀՎԿԱԿ) ՊՈԱԿ-ի կազմակերպական և կառուցվածքային բարեփոխումներ:

ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ ԱՆ «Ա.Բ. Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծաբանության գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվել և միացվել է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Վերջինիս կազմում ինստիտուտի հետագա գործունեության ծավալումը կապահովի ապացուցողական հիմք կանխարգելիչ և հակահամաճարակային գործնական միջոցառումների կազմակերպման և իրականացման համար՝ հանգեցնելով հանրային առողջության ոլորտում դրական տեղաշարժերի՝ ի նպաստ ազգաբնակչության կենսաբանական և սանիտարահամաճարակային անվտանգության: Կարողությունների նման ուղղվածությամբ զարգացման արդյունքում կունենանք համաճարակաբանության ոլորտի հզոր գիտագործնական կենտրոն:

Նախաձեռնվել և իրականացվել են միջոցառումներ լաբորատոր համակարգի զարգացման ուղղությամբ: 2017 թվականին արդիականացվել, միջազգային չափանիշներին համապատասխան հիմնանորոգվել, սարքավորումներով վերազինվել և շահագործվել են ՀՎԿ ազգային կենտրոնի Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի մարզային լաբորատորիաները:

Միջազգային պահանջներին համահունչ՝ փուլային ներդրվում են լաբորատոր որակի կառավարման, կենսանվտանգության համակարգերը, ներդրվել են միջազգային չափանիշներին համապատասխան գործելակարգեր, նոր մեթոդներ. մասնավորապես՝ 2008 թվականից ի վեր ներդրվել են նախկինում չիրականացվող 20-ից ավելի հիվանդության ախտորոշման,

հակամանրէային դեղերի նկատմամբ մանրէների կայունության որոշման, նաև՝ ախտածինների առավել անվտանգ պահպանման՝ կիրոպրեզերվացման մեթոդներ: Ներդրվել է նաև ախտածինների հավաքածուի հսկողության PACS համակարգը: Ամբողջությամբ վերազինվել է քիմիական լաբորատոր համակարգը՝ ապահովելով քիմիական լաբորատոր հետազոտությունների ժամանակակից մեթոդների ներդնումը (մասքրոմատոգրաֆիա, ատոմային աբսորբցիայի և այլն): Ձևավորվել է լաբորատորիաներում սարքերի կառավարման համակարգի մոդելը, որն ապահովող գործընթացն ամրագրվել է «Լաբորատոր սարքերի որակի ապահովման» ձեռնարկում, մշակվել է համակարգի ներդրման մեթոդական ուղեցույց, հաստատվել են ստանդարտ գրանցամատյանները և ձևաթղթերը: Հանրային առողջապահական թվով 15 լաբորատորիայում իրականացվել է սարքերի գործառնական գույքագրում:

Իրականացվել են շարունակական դիտարկումներ վարակիչ հիվանդությունների փոխանցողների պոպուլյացիաների նկատմամբ, Հայաստանում տարածված 6 ցեղի մոծակների, 2 ցեղի մլակների և 9 ցեղի տզերի տարածագոտիները քարտեզագրվել են, ինչի արդյունքում հնարավոր է ժամանակին և նպատակային իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ: Հաջողվել է պահպանել Հայաստանի Հանրապետության՝ մալարիայից ազատ տարածքի կարգավիճակը, թեև արձանագրվել են մալարիայի բերովի դեպքեր: Բնակչության իրազեկման բարձրացման շնորհիվ լեյշմանիոզի դեպքերը վաղ հայտնաբերվում և ախտորոշվում են, ինչը հնարավորություն է տալիս խուսափել բարդություններից և մահվան դեպքերից: Առողջապահության և գյուղատնտեսության համակարգի մասնագետների ներուժով կազմակերպվել են լաբորատոր հետազոտություններ երեխաների և շների շրջանում՝ կոնկրետ բնակավայրերում համալիր միջոցառումներ իրականացնելու համար: Ներդրվել է Լայմի հիվանդության համաճարակաբանական հսկողության համակարգը, ինչի շնորհիվ հայտնաբերվել է 18 լաբորատոր հաստատված դեպք:

2017 թվականին շարունակվել են Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր (ինտեգրացված) համակարգի (ՀՀԷՀՀ) ներդրման աշխատանքները՝ տեղադրվել է լրացուցիչ 50 աշխատանքային կայան (համակարգիչ), ուսուցանվել է 185 մասնագետ (ազգային դասավանդողներ, օգտագործողներ, ադմինիստրատորներ): Մշակվել է ՀՀԷՀՀ տեղեկատվական անվտանգության փաստաթուղթը, համակարգը պատրաստ է շահագործման:

Երևանի դպրոցների 1200 դպրոցական և 34 առողջ ապրելակերպ դասավանդող ուսուցիչ ուսուցանվել են առողջ ապրելակերպի խթանման հարցերով: ՀՀ դպրոցներում իրականացված ֆիզիկական դաստիարակության պայմանների ուսումնասիրության արդյունքները ներառվել են Բակային սպորտի զարգացման հայեցակարգում:

Կենսանվտանգության ոլորտում միջազգային մոտեցումների պահանջներին համաձայն վերանայվել են գործող իրավական ակտերը, իրականացվել է բացերի վերլուծություն, որի հիման վրա վերջիններս վերանայվել են, և մշակվել են նորերը: Մասնագետների գիտելիքների շարունակական կատարելագործման նպատակով կազմակերպվել են դասընթացներ, աշխատաժողովներ՝ ինչպես թեմատիկ, այնպես էլ գործնական դաշտում: Բնակչության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով՝ օգտագործելով լրատվամիջոցները, հրատարակելով համապատասխան տեղեկատվական նյութեր, իրականացվել են վարակիչ հիվանդությունների հարցերին վերաբերող մի շարք միջացառումներ:

2017 թվականի մայիսի 29-ին մեկնարկել է Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության պլանային ախտորոշիչ համաճարակաբանական հսկողության մեխանիզմների ապացուցման նպատակով հետազոտությունը (Proof of Principle, այսուհետ՝ PoP Հետազոտություն): Միջազգային կազմակերպությունների կողմից հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպություններին տրամադրվել է մեթոդա-տեխնիկական աջակցություն:

ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ռեֆերենս լաբորատորիայի կարողությունների զարգացման նպատակով 2017 թվականի սեպտեմբերի 25-29-ին կազմակերպվել է ԱՀԿ փորձագետի աջակցող այց, որի շրջանակներում թվով 27 լաբորանտներ և Որակի մենեջերներ վերապատրաստվել են «Որակի կառավարման համակարգի» միջազգային ISO 15189:2012 չափորոշիչների ներդրման հարցերով: Միաժամանակ, գործադրվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված մանրէաբանական հետազոտման միջազգային EUCAST մեթոդաբանությունը, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի ռեֆերենս մասնաճյուղը և 10 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մանրէաբանական լաբորատորիաները մասնակցել են Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի համացանցի կողմից իրականացվող որակի արտաքին փորձնական գնահատմանը:

2017 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողնման (ներառյալ էլեկտրոնային եղանակով) կարգը, դեղատոմսերի ձևերը, ինչպես նաև դեղերի և դեղանյութերի հաշվառման կարգը:

2017 թվականի մայիս ամսին Երևան քաղաքի 5 հիվանդանոցներում իրականացվել են հակամանրէային դեղերի նշանակման օրինաչափությունների ուսումնասիրություններ՝ առկա բացերի և բարելավում պահանջող ուղղությունների հայտնաբերման նպատակով:

ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տեխնիկական աջակցությամբ Հայաստանում PoP հետազոտության մեջ ներգրավված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կլինիկական և ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի 4 համաճարակաբաններ

հունիսի 20-25-ին Ժնևում մասնակցել են Վարակի կանխարգելման և հսկողության միջազգային գիտաժողովին:

Շարունակվել է հակամանրէային դեղերի ռեգիստրի վարումը՝ ընդգրկելով 2011-2016թթ. ընթացքում առևտրային և հումանիտար օգնության ճանապարհով ներկրված և Հայաստանում արտադրված ու սպառված հակամանրէային դեղերի վերաբերյալ տվյալները:

Բնակչության առողջության առաջնային պահպանում

Աղքատության հաղթահարման և անհավասարության մեղմման ու կայուն զարգացման տեսանկյունից բնակչության առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) օղակի զարգացումը կարևոր դերակատարություն ունի: Այն հնարավորություն է ընձեռում ապահովելու մատչելի և որակյալ բուժօգնություն ու, դրանով պայմանավորված, սոցիալական արդարության ու հավասարության սկզբունքներ բնակչության բոլոր խմբերի համար:

ԱԱՊ օղակում ՀՀ պետական քաղաքականությունը 2017 թվականին ուղղված է եղել առողջապահության համակարգի ֆինանսավորման ներկա մակարդակի պայմաններում անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության կազմակերպմանը՝ ԱԱՊ օղակում սահմանված տեսակների և ծավալների շրջանակներում:

2017 թվականին շարունակվել է շեշտը դրվել ԱԱՊ օղակում կանխարգելիչ ուղղվածության ուժեղացման, բնակչության համար բուժօգնության այդ մակարդակում բժշկական օգնություն ստանալու մատչելիության ապահովման վրա: Մասնավորապես, առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ՈՎՀ) վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով 2017 թվականին շարունակվել է 2015 թվականից մեկնարկած «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակում իրականացվող ՈՎՀ սքրինինգային ծրագիրը, որի շրջանակում 35-ից 68 տարեկան ՀՀ բոլոր քաղաքացիները հնարավորություն են ունեցել անվճար հետազոտվելու սպասարկող ԱԱՊ բժշկական հաստատություններում՝ զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման և ախտորոշման, իսկ 30-ից 60 տարեկան բոլոր կանայք՝ արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով:

Առավել տարածված ՈՎՀ-ների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման նպատակով 2017 թվականին շարունակվել է 2015 թվականից սկսած սոցիալական փաթեթի շահառուների պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում տարեկան պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունների իրականացումը պոլիկլինիկական բժշկական հաստատություններում:

2017 թվականին հանրապետությունում գործել են ընտանեկան բժշկության անհատական և խմբային անկախ 6 պրակտիկաներ, որոնք մատուցել են ԱԱՊ ծառայություններ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Բնակչության շտապ բժշկական օգնության ծառայություններ

2017 թվականին ՀՀ տարածքում ամբողջ բնակչության համար ապահովվել է շտապ և անհետաձգելի բժշկական օգնության իրականացումը շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով:

ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության շտապ բժշկական օգնության և սպասարկման 2016-2020 թվականների ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի» շրջանակներում 2017 թվականին իրականացվել են միջոցառումներ, այդ թվում՝ կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում շտապ բժշկական օգնության ծառայության կողմից ցուցաբերվող շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման կանոնակարգման նպատակով հաստատվել և ներդրվել են անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող վիճակների կազմակերպման թվով 19 ընթացակարգեր:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված գումարով (150 միլիոն ՀՀ դրամ) 2017 թվականին ձեռք է բերվել 10 շտապ բժշկական օգնության մեքենա և տրամադրվել շուրջ 351,000 բնակչություն ունեցող 8 համայնքները սպասարկող մարզային բժշկական կազմակերպություններին: Նոր մեքենաները նախատեսված են հիմնականում լեռնային բնակավայրերի համար, ունեն բարձր անցանելիություն, հագեցված են շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ծառայության համար նախատեսված ժամանակակից և նորագույն սարքավորումներով ու պարագաներով, այդ թվում՝ շարժական արհեստական շնչառության սարքավորումով և դեֆիբրիլյատորով, ինչը հնարավորություն է տալիս ինչպես տանը, այնպես էլ տեղափոխման ընթացքում ցուցաբերել անհետաձգելի բուժօգնություն:

ՀՀ կառավարության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության կառավարության միջև ստորագրված տեխնիկատնտեսական համագործակցության համաձայնագրի շրջանակներում 2017 թվականին մեկնարկել է Չինաստանի կողմից Հայաստանին շտապ բժշկական օգնության 200 մեքենա անհատույց տրամադրելու ծրագիրը:

Մոր և մանկան առողջության պահպանում

Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում իրականացված աշխատանքները կազմակերպվել են ոլորտի բուժօգնության մատչելիության և որակի բարելավմանը, կանանց և

երեխաների առողջության պահպանմանը, մայրական և մանկական մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը, երեխաների սնուցման կարգավիճակի լավացմանն ուղղված ռազմավարական և ծրագրային փաստաթղթերի շրջանակում:

Իրականացվել են մայրական/վերարտադրողական, մանկական, այդ թվում՝ նորածնային առողջության ոլորտի նորմատիվ իրավական և գերատեսչական ակտերի չափորոշիչների մշակման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի միջոցառումների ծրագրին համահունչ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են մի շարք որոշումներ, մասնավորապես՝ «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները», որն ուղղված է հղիության ընթացակարգի, այդ թվում՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդրի հաղթահարմանը, «Դեզօքսիռիբոնուկլեինաթթվի (ԴՆԹ) որոշման (ներառյալ՝ նմուշառման) իրականացման կարգը և ժամկետները», որն ուղղված է փոխնակ մորից ծնված երեխայի և կենսաբանական ծնողի գենետիկական կապի վերիֆիկացիային և այդ հարաբերությունների իրավակարգավորմանը, «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը»՝ երեխաների առողջության պահպանման ոլորտին վերաբերող հատվածով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգին անցնելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատվել են ծննդի, պերինատալ մահվան, մահվան մասին բժշկական վկայականների ձևաթղթերը և լրացման (պատրաստման) ու տրամադրման կարգը, մարզերի մարզադպրոցների սաների կանխարգելիչ բժշկական զննումների կազմակերպման կարգը:

Ծննդօգնության հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում մանկաբարձագինեկոլոգիական օգնության որակի բարելավման և ծախսարդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել են «Ծննդօգնության մարզային հիվանդանոցային հաստատությունների օրինակելի կառուցվածքը և հաստիքակազմը», ինչպես նաև «Ծննդօգնության մարզային հիվանդանոցային հաստատությունների կողմից մատուցվող բուժօգնության որակի չափանիշները», որոնք կհանդիսանան ուղեցույց ծննդօգնության ծառայության առավել արդյունավետ կազմակերպման ու իրականացման համար:

Մանկական, մայրական և վերարտադրողական առողջության պահպանման ոլորտում շարունակաբար իրագործվել են «Ծննդօգնության պետական հավաստագրի» և «Երեխաների առողջության պետական հավաստագրի» ծրագրերը:

Արագ արձագանքման արտագնա ծառայությունների միջոցով անհետաձգելի մանկաբարձագինեկոլոգիական, մանկական և նեոնատոլոգիական ծառայություններ են տրամադրվել մարզերի բժշկական կազմակերպություններին:

2017 թվականի ընթացքում շարունակվել է իրականացվել արգանդի վզիկի քաղցկեղի վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագիրը, ինչի շնորհիվ թիրախային խմբի կանանց ընդգրկվածությունը սկրինինգում բարձրացել է:

Կազմակերպվել է մարզային և Երևանի առաջատար մանկական և ծննդօգնության բուժհաստատությունների 42 բժիշկների գիտագործնական վերապատրաստում ՌԴ Սանկտ-Պետերբուրգ և Մոսկվա քաղաքներում՝ նորածինների և երեխաների ինտենսիվ բուժօգնության և ինֆեկցիոն հիվանդությունների անհետաձգելի բուժօգնության թեմաներով:

Շարունակաբար իրականացվել են նորածնային սկրինինգ ծրագրերը, մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսը հայտնաբերված բնածին հիպոթիրեոզով 10 երեխա, 4-րդ աստիճանի ծանրալսությամբ 62 երեխա և ֆենիլկետոնուրիայով 4 երեխա վերցվել են հսկողության և ստացել անվճար բուժօգնություն կամ հատուկ սնունդ (ֆենիլկետոնուրիայի պարագայում):

Նույն ժամանակահատվածում հայտնաբերված՝ անհասության ռետինոպատիա ունեցող 35 նորածին և սրտի բնածին արատով շուրջ երկու տասնյակ երեխա ստացել են համապատասխան բուժում, այն թվում՝ վիրաբուժական միջամտությամբ:

Մարզային բժշկական կազմակերպություններում ցուցաբերվող բուժօգնության որակը բարձրացնելու նպատակով Երևանում տեղակայված 3-րդ մակարդակի ծննդատները շարունակել են իրականացնել կազմակերպամեթոդական և բուժական օգնություն մարզային բժշկական կենտրոններին:

Մոր և մանկան բուժօգնության որակի բարելավմանն է ուղղվել ապացուցողական բժշկության սկզբունքներով մշակված ուղեցույցների և գործելակարգերի ներդրումը:

Շարունակվել է արդյունավետ համագործակցությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ԱՀԿ-ի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների (ԱՄՆ ՄԶԾ, Վորլդ Վիժն Հայաստան, Փրկեք երեխաներին, Հայ օգնության ֆոնդ, Հայաստանի մանուկներ հիմնադրամ և այլն) հետ, տարվա ընթացքում իրականացվել են շուրջ մեկ տասնյակ ծրագրեր և ծրագրային միջոցառումներ՝ ուղղված երեխաների և մայրերի առողջության

բարելավմանը, ոլորտում աշխատող բուժանձնակազմի գիտելիքների արդիականացմանը և բուժօգնության որակի ու մատչելիության բարելավմանը:

Իրականացված ռազմավարությունների և ծրագրային միջոցառումների շնորհիվ վերջին տարիներին մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում արձանագրվել են հետևյալ առավել նշանակալից դրական զարգացումները.

- 2017 թվականի ընթացքում հանրապետության ծննդատներում գրանցվել է մայրական մահացության ընդամենը 3 դեպք.
- Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2017 թվականին մանկական մահացության ցուցանիշը կազմել է 8.1‰՝ նախորդ տարվա 8.5‰-ի դիմաց: Նվազել է նաև մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը՝ 1000 կենդանի ծնվածի հաշվով կազմելով 9.5‰՝ նախորդ տարվա 10.1‰-ի համեմատ.
- ՀՀ առողջապահության նախարարության և Նեոնատոլոգների հայկական ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակներում մշակվել են 51 կլինիկական ուղեցույց, որոնցից 24-ը հաստատվել են ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով, մյուսները գտնվում են մասնագիտական փորձաքննության փուլում.
- Իրականացվել է վերապատրաստում 63 հաստատությունների մոտ 700 բուժաշխատողների համար հանրապետության 10 մարզերում և Երևանում.
- Մշակվել է ընտանիքակենտրոն նեոնատալ խնամքի մոդել, որը փորձարկվել է 7 հաստատությունում, վերապատրաստվել է 23 բուժքույր:
- Ավելի քան 400 ծնողների մատուցվել են հոգեբանական ծառայություններ.
- Մշակվել են ծնողների համար ուղեցույց, առողջ, անհաս և հիվանդ նորածինների խնամքի տեղեկատվական նյութեր և այլն:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրում

Որպես առաջնահերթություն 2017 թվականին շարունակվել է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման ապահովումն առողջապահական համակարգի բոլոր օղակներում, մասնավորապես, հիվանդանոցային բուժօգնության գծով՝ բժշկական օգնության ապահովումը հիվանդանոցային պայմաններում՝ ՀՀ առողջապահության համակարգի բժշկական համալիրներում, հիվանդանոցային բուժհաստատություններում, նեղ մասնագիտացված դիսպանսերների հիվանդանոցային բաժիններում՝ անկախ ախտորոշումից և տարիքից, սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային բուժման մեջ նորագույն, բարդ և թանկարժեք

միջամտություններ, միջոցներ և իմպլանտներ պահանջող բուժման կիրառումը, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների գծով՝ ամբուլատոր-պոլիկլինիկական և/կամ հիվանդանոցային պայմաններում բուժվող հիվանդների համար հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը՝ բժշկական հիմնավորված ցուցումների առկայության դեպքում:

2012 թվականից պետությունը ձեռնամուխ է եղել շուրջ 100,000 պետական ծառայողի համար ապահովել հիվանդանոցային բժշկական ծառայությունների, ինչպես նաև դժվարամատչելի և կանխարգելիչ ծառայությունների տրամադրում: 2017 թվականի ընթացքում պետության կողմից ֆինանսավորվել է 12,066 հիվանդանոցային դեպք, այդ թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայություններ: 2017 թվականի բարեփոխումների շնորհիվ այստեղ ներդրվել է ապահովագրական համակարգ, ինչի շնորհիվ երաշխավորում է առանց սահմանափակումների և հերթագրումների ծառայության ստացում ցանկացած բուժհաստատությունում: Նոր մոդելի հիմնական ձեռքբերումներից է այն, որ 2017 թվականի 4-րդ եռամսյակում հիվանդանոցային բուժօգնության 97%-ը եղել է վիրահատական միջամտություն՝ նախորդ տարիների 67%-ի փոխարեն: Այս ծրագրով տարեկան ավելի քան 90 000 անձ անցնում է բժշկական համապարփակ քննություն, ինչի արդյունքում կանխարգելվում կամ վաղ շրջանում հայտնաբերվում և բուժվում են հիվանդությունները:

Ապահովվել է սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների համար բժշկական օգնության և սպասարկման մատչելիությունը: Արդյունքում 2017 թվականի ընթացքում պետության կողմից ֆինանսավորվել է 14,648 հիվանդանոցային դեպք, այդ թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայություններ:

Սոցիալական, հատուկ նշանակություն ունեցող և առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում, վաղ հայտնաբերում ու բուժօգնության կազմակերպում

2017 թվականին շարունակվել է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը: Նեղ մասնագետների կողմից բնակչության շրջանում իրականացվել է առողջ ապրելակերպի քարոզչություն՝ ուղղված սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների, վնասվածքների, թունավորումների և

անհետաձգելի վիճակների կանխարգելմանը: Շարունակվել է ինֆեկցիոն հիվանդների հայտնաբերման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության, հիվանդանոցների հետ կապի պահպանման ապահովումը, անհրաժեշտության դեպքում, հիվանդների հոսպիտալացման հետ կապված խնդիրների լուծումը՝ ամբողջ բնակչության համար: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլյոզի դեմ պայքարի ծրագրերի իրականացման արդյունքում տուբերկուլոզով հիվանդացությունը նվազել է շուրջ 2, մահացությունը՝ շուրջ 3 անգամ: 1000-ից ավելի ՄԻԱՎ վարակ ունեցող անձինք ընդգրկվել են հակառետրովիրուսային բուժման ծրագրում, ներարկային թմրամիջոցներ օգտագործող 500 անձանց շրջանում ներդրվել է մեթադոնային փոխարինող բուժում՝ ՄԻԱՎ և այլ արյունային վարակների կանխարգելման նպատակով:

Առաջին անգամ Հայաստանի քաղաքացիների համար անվճար հիմունքներով հասանելի է դարձել հեպատիտ Ց հիվանդության բուժումը գերժամանակակից դեղորայքով: Արդյունքում, արձանագրվել են շուրջ 93% ամբողջովին բուժված դեպքեր: Ծրագրի ընթացքում հեպատիտ Ց-ով հիվանդ 1000 շահառուի անվճար տրամադրվել է Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերած 3000 տուփ «Սովալդի» դեղամիջոց:

Ապահովվել է սրտաբանական մասնագիտացված կաբինետների միջոցով սիրտանոթային համակարգի հիվանդություններով տառապող հիվանդների հայտնաբերումը, բժշկական օգնությունը և շարունակական հսկողությունը: Սրտի անհետաձգելի վիրահատությունների ծառայությունների շրջանակներում բուժօգնություն է ստացել 4192 քաղաքացի, որից 2017 թվականին՝ 1473 քաղաքացի: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ բուժօգնություն ստացած քաղաքացիների միջին տարիքը կազմում է 63 տարեկան, նրանցից 77%-ը եղել են տղամարդիկ, 23%-ը՝ կանայք: Բուժօգնություն ստացած հիվանդների 53%-ը կազմել են Երևան քաղաքի, 47%-ը՝ ՀՀ մարզերի բնակիչները: Ծրագիրն ապահովել է «Սրտամկանի սուր ինֆարկտ ST-էլևացիայով» ախտորոշման ժամանակ ոչ դեղապատ ստենտի տեղադրման ծառայությունների մատչելիությունն ամբողջ բնակչության համար:

Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ուղղությամբ ապահովվել է ուռուցքաբանական դիսպանսերներում և նեղ մասնագիտական կաբինետներում չարորակ նորագոյացություններով տառապող անձանց հայտնաբերումը, հաշվառումը, բժշկական օգնությունն ու շարունակական հսկողությունը: Ըստ պաշտոնական վիճակագրության ՀՀ բնակչության շրջանում արձանագրվել է քաղցկեղով հիվանդացության որոշակի կայունացում:

Հայաստանում ստեղծվել է տարածաշրջանային նշանակություն ունեցող՝ առաջին ոսկրածուծի փոխպատվաստման բաժանմունքը և ցողունային բջիջների լաբորատորիան՝ ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնում: Փոխպատվաստման նորաստեղծ

ծառայության գործունեության արդյունավետ մեկնարկն ապահովելու նպատակով կենտրոնի 6 արյունաբաններ մեկ ամիս տևողությամբ վերապատրաստվել են Գերմանիայի Դաշնության Համբուրգ քաղաքի Համբուրգ-Էպենդորֆ համալսարանական կլինիկայում: Ընդհանուր ներդրումները կազմել են 6.02 մլրդ ՀՀ դրամ:

Դիաբետով հիվանդների բժշկական օգնության ապահովման ուղղությամբ իրականացվել է էնդոկրինոլոգիական դիսպանսերների և մասնագիտացված կաբինետների միջոցով դիաբետով հիվանդների վաղ հայտնաբերումը, բժշկական օգնությունն ու շարունակական հսկողությունը, հիվանդանոցների հետ կապի պահպանումը:

Հեմոդիալիզային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին գրանցվել է 803 դեպք: Վերլուծության արդյունքում 2017 թվականին 2016 և 2015 թվականների նկատմամբ արձանագրվել է դեպքերի նվազում, ինչը պայմանավորված է սկրինինգային ծրագրերի արդյունավետությամբ: Գործնականում ապահովվել է ծառայության 100% բնակչության ծածկույթ:

Բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով 2017 թվականի ընթացքում օտարերկրյա առաջադեմ փորձի և ապացուցողական բժշկության հիմքերի վրա մշակվել է թվով 156 կլինիկական ուղեցույց, 126 գործելակարգ, 30 ընթացակարգ:

Սահմանամերձ համայնքներում համակարգման ենթակա հարցերի լուծման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության որակի բարելավման, բուժման շարունակականության ապահովման և մասնագիտացված բժշկական օգնության հասանելիության բարձրացման նպատակով կազմակերպվել են մասնագիտական խմբերի այցելություններ ՀՀ Արարատի, Վայոց ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի սահմանամերձ համայնքներ: Արդյունքում բժշկական օգնություն է ստացել ՀՀ Արարատի մարզի թվով 2 սահմանամերձ համայնքների 190 բնակիչ, ՀՀ Տավուշի մարզի թվով 9 սահմանամերձ համայնքների 124 բնակիչ, ՀՀ Վայոց ձորի մարզի թվով 2 սահմանամերձ համայնքների 24 բնակիչ, ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ 1 համայնքի 71 բնակիչ:

Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով եվ տեխնոլոգիաներով ապահովում

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ):

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի՝ դեղերի շրջանառության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության հիմնական սկզբունքներ են՝ դեղերի մատչելիության ապահովումը պետական համակարգի միջոցով, բնակչության առողջության բարելավումը, հիվանդությունների կանխարգելումը, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցումը, ՀՀ-ում դեղերով ապահովման պետական ամենամյա նպատակային ծրագրերի իրականացումը, հիմնական դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը, բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղերով ապահովման գործընթացին մասնակցությունը և այդ գործընթացի մշտադիտարկումը: Համաձայն «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման՝ ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծրագրի շրջանակներում 9 հիվանդությունների համար կենտրոնացված կարգով ձեռք է բերվել թվով 51 անվանում դեղ: Ծրագրի շրջանակներում 9 հիվանդությունից 7-ի դեղապահովումը կազմել է 100 տոկոս, իսկ 2 հիվանդության դեղապահովումը՝ 80-83 տոկոս: Այդ հիվանդություններն են՝ շաքարային և ոչ շաքարային դիաբետ, պարբերական հիվանդություն, քրոնիկ երիկամային անբավարարություն՝ երիկամային փոխպատվաստման և (կամ) ծրագրային հեմոդիալիզ, չարորակ նորագոյացություններ, հոգեկան հիվանդություններ, էպիլեպսիա, ֆենիլկետոնուրիա, անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշ, տուբերկուլյոզ և ՁԻԱՀ: Դեղապահովման աղբյուրներ են հանդիսանում պետական բյուջեի միջոցները և մարդասիրական օգնության ճանապարհով ստացված դեղերը:

Իրավական դաշտի կատարելագործման, բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ դեղերով և բժշկական տեխնոլոգիաներով ապահովման նպատակով՝

- 2017 թվականի փետրվարի 27-ին ընդունվել է «Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային (PIC/S) անդամակցությանն ուղղված ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանը.
- 2017 թվականի փետրվարի 10-ին «Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմա» կազմակերպության կոմիտեի նիստին ներկայացվել է ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անդամակցության հայտը.
- ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3687-Ա հրամանի՝ «ԹՈՒՖԷՆՔԺԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3686-Ա

հրամանի «ԲԻՈ-ՔԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել են պատշաճ արտադրական գործունեության համապատասխանության հավաստագրեր: «ԹՈՒՖԷՆՔԺԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ՀՀ-ում 2017 թվականի ընթացքում իրականացրել է 1.8 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, իսկ 2018 թվականին նախատեսվում է շուրջ 300 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, «ԲԻՈ-ՔԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2017 թվականի ընթացքում իրականացրել է 100 մլն ՀՀ դրամի ներդրում.

- Մշակվել և ընդունվել են ընդհանուր թվով 13 ՀՀ կառավարության որոշման նախագծեր և ՀՀ առողջապահության նախարարի թվով 8 հրամաններ, որոնցից ընդունվել են ՀՀ-ում դեղերի շրջանառության ոլորտը կանոնակարգող ՀՀ կառավարության թվով 6 որոշում և ՀՀ առողջապահության նախարարի թվով 5 հրաման.
- Ընդունվել են ՀՀ-ում բժշկական նշանակության սարքերի, սարքավորումների և պարագաների շրջանառության կարգավորմանն ուղղված՝ ՀՀ առողջապահության նախարարի թվով 3 հրամաններ:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

2017 թվականն առանձնացավ սոցիալական պաշտպանության բնագավառում կատարված աշխատանքների և՛ ծավալի ու ընդգրկվածության, և՛ բովանդակային առումով: Ստեղծված համակարգերի մի մասը մտավ բնականոն գործարկման փուլ, մեկնարկեցին նոր նախաձեռնություններ:

Գոհացուցիչ արդյունքներ արձանագրվեցին սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված համագործակցային միջավայրի ստեղծման, պետություն-ոչ պետական համագործակցության զարգացման ու ինստիտուցիոնալացման ուղղությամբ:

Շոշափելի քայլեր ձեռնարկվեցին մատուցվող ծառայությունների հասցեականության, որակի ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Աշխատանք և զբաղվածություն

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների պարզեցումը, աշխատանքային հարաբերությունների ձևավորման, փոփոխման և դադարման նոր ճկուն հիմքերի ապահովումը (հատկապես գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատուների համար): Կամավորի

ինստիտուտի ձևավորման, կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի լիարժեք օրենսդրական կարգավորման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը, որի հիման վրա մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել համապատասխան օրենքների նախագծերի փաթեթը:

Սահմանվել և ամբողջականացվել են պետական ծառայության մի տեսակից պետական ծառայության մեկ այլ տեսակի անցման դեպքում հիմնական աշխատավարձի որոշման սկզբունքները: Համապատասխան իրավական ակտով սահմանվել է նաև մեկօրյա ժամկետով (աշխատանքի հիմնական վայրից 30 կմ ավելի հեռավորությամբ) գործուղման մեկնող աշխատողների համար օրապահիկի իրավունքը: Սոցփաթեթի շահառուներին հնարավորություն է տրվել սոցփաթեթի միջոցներն ուղղել նաև պետական այլ ծրագրերով տրամադրված հիփոթեքային վարկի մարմանը, միաժամանակ ամբողջականացվել է ռոտացիայի հիման վրա օտարերկրյա պետություններում գործող մարմիններում ծառայող դիվանագետների՝ սոցիալական փաթեթից օգտվելու կարգավորումը:

Կառավարության համապատասխան որոշմամբ հստակեցվել են կատարողականի հիման վրա պարգևատրվողների շրջանակը և պարգևատրման աղբյուրները, ինչպես նաև տարանջատվել են կառավարման լիազորություններ չունեցողների անձնային հմտությունների գնահատման չափանիշները: Գործող Հանրապետական եռակողմ հանձնաժողովի շրջանակներում ապահովվել է համագործակցությունը սոցիալական գործընկերների հետ:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ՝ նպատակ ունենալով բարձրացնել զբաղվածության պետական ծրագրերի արդյունավետությունը՝ սահմանափակ ռեսուրսներով ավելի մեծ քանակությամբ շահառուների զբաղվածության ապահովման համար, ինչպես նաև պարզեցնել զբաղվածության պետական ծրագրերի իրականացման բիզնես գործընթացները և ծրագրերն իրականացնել մասնագիտացված պետական կառույցների հետ համատեղ: Բացի այդ, հաստատվել է աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերին աշխատանքային ունակությունների ու կարողությունների ձեռքբերման հնարավորությունների ընձեռման նպատակով գործատուի մոտ մինչև վեց ամիս տևողությամբ մասնագիտական ուսուցման (աշկերտություն) կազմակերպման ծրագրի իրականացման կարգը:

Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող երիտասարդ մայրերի համար՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության իրավունքի սահմանման

նպատակով մշակվել է ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 6-ին): Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել նշված օրենքի մեկ այլ փոփոխության նախագիծ, որով նախատեսվում է քվոտայի համակարգի առավել նպատակային և արդյունավետ ներդրման ու գործարկման համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված մեխանիզմների, քվոտավորման ենթակա կազմակերպությունների շրջանակի հստակեցում, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվի փոխարեն հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման նորմատիվի սահմանում:

Կենսաթոշակային ապահովություն

2017 թվականի ընթացքում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել կենսաթոշակային ապահովության ոլորտում առցանց մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը՝ կենսաթոշակների, նպաստների նշանակման և վճարման գործընթացում առկա ռիսկերը նվազեցնելու, ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման գործընթացի վարչարարության պարզեցմանը: Այս նպատակով իրականացված օրենսդրական փոփոխությունների և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի կատարելագործման արդյունքում 2018 թվականից ապահովվել է.

- երեխայի ծննդյան միանվագ նպաստ (այդ թվում՝ 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում), խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելու դիմումն առցանց ներկայացնելը.
- ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգի ներդրումը և դրա կիրառմամբ ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին էլեկտրոնային հարցում կատարելը, անհրաժեշտ տվյալներ ստանալը, այդ տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառելը և դրանց հիման վրա որոշումներ կայացնելը (երեխայի ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև թաղման նպաստ նշանակելը կամ մերժելը).
- զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով կենսաթոշակ և պարգևավճար նշանակելը (վերահաշվարկելը) և վճարելը:

2018 թվականի մարտի 1-ից գործարկվել է գործատուի մասին տեղեկատվությունը հաշվառելու և աշխատանքային ստաժը հաշվարկելու ընթացակարգերը կատարելագործելու նպատակով

համապատասխան ծրագրային ապահովության մշակման, պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի («Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգ) լրամշակման և տեղեկատվական ենթահամակարգը:

Գործարկվում է աշխատանքային գրքույկների հաշվառումը և աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու համար էլեկտրոնային լուսապատճենների ստեղծումն ապահովող տեղեկատվական ենթահամակարգը:

Պետական կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացի արդյունավետությունը մեծացնելու, վարչարարությունը պարզեցնելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (ընդունվել են ՀՀ Ազգային Ժողովի 2017 թվականի դեկտեմբերի 6-ին), որով միասնական սկզբունքների ներքո սահմանվել են կենսաթոշակները և նպաստներն անկանխիկ եղանակով վճարելու համար նախատեսված հատուկ բանկային (սոցիալական) հաշիվ բացելուն և վարելուն, այդ հաշվից օգտվելուն, հաշվին առկա միջոցները տնօրինելուն առնչվող առանձնահատկությունները:

Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման և վճարման ընթացակարգերը հստակեցնելու, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդի ժամանակահատվածի սկիզբը կամ վերջը եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգ մուտքագրելու կապակցությամբ գործատուների կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հնարավորությունները սահմանափակելու նպատակով մշակվել են «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը (ընդունվել են ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 21-ին):

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված է 520617 կենսաթոշակառու և նպաստառու (ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնողի դեպքում նպաստներ ստացող), որից 455609-ը՝ աշխատանքային կենսաթոշակառու (կենսաթոշակի միջին չափը՝ 40296 դրամ), 63024-ը՝ նպաստառու (նպաստի միջին չափը՝ 17824 դրամ), 1984-ը՝ շարքային կազմի զինծառայության հետ կապված կենսաթոշակ ստացող (կենսաթոշակի միջին չափը՝ 24562 դրամ),

601-ը՝ պետական պաշտոն զբաղեցրած անձինք (կենսաթոշակի միջին չափը՝ 349597 դրամ): 2017 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում մայրության նպաստ է նշանակվել 26335 անձի, իսկ երեխայի ծննդյան միանվագ նպաստ՝ 38537 անձի: Խնամքի նպաստ ստանալու իրավունք ունեցողների թվաքանակը նույն ժամանակահատվածում կազմում է 11821 անձ:

Սոցիալական աջակցություն

Պետական նպաստներ

2017 թվականին պետական նպաստների բնագավառում կատարված փոփոխությունները նպատակ են ունեցել մեծացնել ծրագրերի հասցեականությունը՝ պահպանելով սոցիալական աջակցության տրամադրման սկզբունքները:

Սոցիալապես անապահով ընտանիքների համար ինքնուրույնաբար կայուն եկամտի ձևավորման իրական հնարավորությունների ստեղծման և դեպի պետական նպաստն առկա ձգտումների առավելագույն ապախթանման նպատակով արմատապես վերանայվել է ընտանիքների անապահովության գնահատման կարգը: Նոր կարգում հնարավորինս ներառվել են տնտեսապես ակտիվ անձանց՝ աշխատանքի շուկայում ունեցած վարքագծի գնահատականները՝ դրանով խթանելով աշխատանքային գործունեություն ծավալելու իրենց ցանկությունը, ինչպես նաև ավելացել է երեխա ունեցող ընտանիքների անապահովության գնահատման հարցում երեխաների առկայության հանգամանքի կշիռը՝ դիտարկելով նման ընտանիքներին աղքատության տեսանկյունից ավելի ռիսկային:

Շարունակվել են պետական նպաստների, այդ թվում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առցանց եղանակով ստացվող տվյալների շրջանակի ընդլայնմանն ուղղված աշխատանքները: Նշվածն արտացոլվել է այդ համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, ինչպես նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում:

2017 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված շուրջ 125000 ընտանիքներից ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացել են ամսական միջինում 103723-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների շուրջ 83%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն՝ միջինում 5321 ընտանիք կամ ընդհանուր հաշվառվածների 4.3%-ը, նպաստի միջին չափը կազմել է 31350 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել. երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 4900 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 10489 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 153 ընտանիքի:

Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում է տրվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված՝ 3597, ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից՝ 393, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ ՀՀ սահմանամերձ համայնքներում բնակչության պետական ռեգիստրում 2014թ. օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված՝ 4414 ավանդատուի:

Ինտեգրված սոցիալական ծառայություններ

2017 թվականի ընթացքում իրականացվել են սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացմանն ուղղված աշխատանքներ՝ այցելություններ հանրապետության բոլոր մարզեր, հանդիպումներին մասնակցել են միջգերատեսչական համագործակցության կողմերը, աջակցող ցանցի անդամները: Քննարկվել են սոցիալական դեպքի վարման մեթոդաբանական հարցեր՝ կոնկրետ դեպքերի օրինակներով: Շարունակվել են հանրապետությունում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) համար շենք-շինությունների ընտրության և տրամադրման աշխատանքները, մշակվել են ՀՍԾՏԿ շինվերանորոգման էսքիզային նախագծերը և տարածքային կենտրոնների կառուցման կամ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը: Մեկ պատուհանի սկզբունքով գործարկվում են 19 ՀՍԾՏԿ-ներ, որոնք տեղակայված են վերանորոգված, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներով զինված շենքերում:

Հաշմանդամների և փարեցների հիմնահարցեր

Հաշմանդամության ոլորտի պետական քաղաքականությունն ու նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը:

Լրամշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Հետևողական աշխատանքներ են իրականացվում բժշկասոցիալական փորձաքննության համակարգում արմատական բարեփոխումներ կատարելու ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել է ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի փաթեթ՝ որպես հիմանական խնդիր դիտարկելով հիվանդություն ունեցող անձի կարիքների բազմակողմանի գնահատումն ու դրա արդյունքներով

վերականգնողական բժշկական օգնությունը կազմակերպելը՝ կանխարգելելով հիվանդության ծանրացումն ու զարգացումը, հետևաբար՝ նաև հաշմանդամության առաջացումը կամ խորացումը:

Առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած անձանց կարիքներն Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքներով գնահատելու և բազմակողմանի գնահատման արդյունքում վերականգնողական ծառայությունների կազմակերպման նպատակով իրականացվել է փորձնական ծրագիր: 193 անձ «Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ» պետական նպատակային ծրագրի շրջանակներում վերականգնողական անհատական ծրագրերի հիման վրա ստացել է վերականգնողական բուժօգնություն:

2017 թվականին իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլ վերականգնողական պարագաներ:

Լրամշակվել են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տեխնիկական բնութագրերը, դրանցում ներառվել են դրույթներ տրամադրվող պարագաների օգտագործման, պահպանման և անվտանգության կանոնների, պարագաների որակի՝ միջազգային կամ միջպետական ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ, միաժամանակ փոխվել է հաշմանդամի սայլակների և լսողական սարքերի տրամադրման ընթացակարգը:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմել է 193302, որից 8231-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխա: Հաշմանդամություն ունեցող անձանց թվի նվազումը նախորդ տարվա համեմատ (10455 անձով) պայմանավորված է 2017 թվականին հաշմանդամության սահմանման չափորոշիչների կիրառման մեթոդական ուղեցույցի լրամշակմամբ և հստակեցմամբ՝ «հիվանդություն ունեցող անձ» և «հաշմանդամություն ունեցող անձ» հասկացությունների տարանջատումով: 2017 թվականի ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 18438 անձ (նախորդ տարվա համեմատ աճել է 393-ով), վերափորձաքննվել է 50374 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 3158-ով):

2017 թվականին ընդունվել է «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագիրը»:

Համապատասխան իրավական ակտերով հստակեցվել են բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվողների խնամքի տրամադրման, ինչպես նաև հաստատություններ քաղաքացիների ուղեգրման գործընթացները:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր

2017 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները՝ ուղղված երեխաների իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավմանը և սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովմանը, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացմանը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Այդ նպատակով մշակվել են մի շարք նախագծեր, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը», որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից, «Երեխայի իրավունքների մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Շարունակվել է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների վերակազմակերպման գործընթացը:

Երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունում (մանկատներում) խնամվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 620 երեխա, այդ թվում՝ շուրջ 460 երեխա խնամվել է երեք հատուկ (մասնագիտացված) հաստատությունում: Երեխաների խնամքի 6 գիշերօթիկ հաստատությունում խնամվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 420 երեխա: «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ցերեկային խնամք է ստացել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 150 երեխա: Երեխաների սոցիալական հոգածության ցերեկային 3 կենտրոնները ծառայություններ են տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, 6-18 տարեկան շուրջ 270 երեխայի և նրանց ընտանիքներին: «Հույսի կամուրջ» ՀԿ-ի՝ երեխաների 4 ցերեկային կենտրոնում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված առնվազն 250 երեխայի: «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան շուրջ 17 երեխայի տրամադրել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք: Առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 25 երեխա խնամվել է 21 խնամատար ընտանիքում:

Հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) միջոցառման շրջանակում ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում 2017

թվականին կենսաբանական ընտանիք է վերադարձել 40 երեխա, և կանխարգելվել է 60 երեխայի մուտքը հաստատություններ:

Պետական աջակցությամբ՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ մտավոր և ֆիզիկական զարգացման ծանր խանգարումներ ունեցող մինչև 6 տարեկան միջինը 24 երեխայի մատուցվում են բազմամասնագիտական ծառայություններ:

Իրականացվել են նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման, թրաֆիքինգի կանխարգելման և դրա զոհերին աջակցելու աշխատանքներ:

Ժողովրդագրության բնագավառ

ՀՀ ժողովրդագրական իրավիճակը բնութագրող ցուցանիշները շարունակում են մնալ մտահոգիչ և խնդրահարույց: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, տարեսկզբի համեմատ, հանրապետության մշտական բնակչությունը նվազել է 13200-ով՝ կազմելով 2972.9 հազար: 2017 թվականին նախորդ տարվա համեմատ ժողովրդագրական զարգացման հիմնական ցուցանիշները դրսևորել են տարբեր միտումներ: Այսպես, նշված ժամանակահատվածում գրանցվել է 37699 ծնունդ (նվազում 2893-ով), արձանագրվել է մահացության 27367 դեպք (նվազում 859-ով), ամուսնության 15214 դեպք (նվազում 1080-ով), ամուսնալուծության 3940 դեպք (աճ 292-ով):

Բազմազավակ ընտանիքի սահմանման և դրանից բխող խնդիրների կարգավորման նպատակով մշակվել է «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Միաժամանակ, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որի հետագա քննարկումների արդյունքում մշակված ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման երկարաժամկետ տեսլականի նախագիծը ներկայացվել է ՀՀ Նախագահի մոտ նոյեմբերի 8-ին կայացած խորհրդակցության ժամանակ: Խորհրդակցության արդյունքում ՀՀ Նախագահի կողմից ՀՀ կառավարությանը տրված հանձնարարականի համաձայն, հիմք ընդունելով Հայաստանի բնակչությունը 4 միլիոնի հասցնելու համազգային նպատակը, 2018 թվականին մշակվել են ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման՝ մինչև 2040թ. ռազմավարական հիմնադրույթները՝ դրանք արտացոլելով Հայաստանի՝ մինչև 2030թ. զարգացման ռազմավարության մեջ՝ ըստ բաղադրիչների և հնգամյա թիրախների:

Մշակույթի ոլորտ

2017 թվականին մշակույթի ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունը նպատակաուղղվել է ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախանշված հիմնական խնդիրների լուծմանը, մասնավորապես՝

- միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրում,
- թանգարաններում հուշանվերային նոր արտադրանքի ստեղծում,
- թանգարաններում վիրտուալ տեղեկատվական համակարգերի ստեղծում՝ տարբեր տարիքային խմբերի համար, նոր մոտեցումներով,
- ցուցադրական հարթակների ստեղծում,
- գրադարաններում մտավոր ժամանցի նոր ծառայությունների ներդրում,
- հուշարձանների տարածքներում տեղեկատվական ցուցանակների նմուշի օրինակելի ձևի հաստատման գործընթացի մեկնարկ,
- մշակութային ժառանգության մատչելիության ապահովում՝ թվայանացման գործընթացի շարունակական իրականացմամբ,
- հայերենի գործածության խթանմանը և տարածմանն ուղղված ծրագրերի մշակման մեկնարկ,
- թատերահամերգային նախագծերի իրականացում,
- ՀՀ զինված ուժերի զորամասերում կինոցուցադրությունների, համերգային ծրագրերի իրականացում, մշակույթի անվանի գործիչների մասնակցությամբ հանդիպումների կազմակերպում,
- ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի հանրահռչակման փառատոների կազմակերպում,
- հնագիտական վայրերի ամրակայման, թանգարանացման աշխատանքների մեկնարկ,
- հնագիտական արգելոց-թանգարանի նոր՝ մշտական ցուցադրության ձևավորում,
- հյուսիս-հարավ զբոսաշրջային երթուղում ընդգրկված հուշարձանների կատալոգի հրատարակում,
- անվանի արվեստագետների վերանորոգված տուն-թանգարանների վերաբացում՝ նոր մշտական ցուցադրություններով,
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների վերաբերյալ կատալոգների տպագրում,
- դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող քարտեզի հրատարակում,
- գրավաճառ ցանցի ընդլայնում՝ նոր գրախանութների ստեղծմամբ և շարժական գրախանութների (գրաբուսների) գործարկմամբ,

- պատմության և մշակույթի հուշարձաններում ու դրանց հարակից տարածքներում ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերի մշակում և իրականացում,
- հայ մշակույթի ներկայացում օտարերկրյա պետություններում՝ մշակույթի օրերի կազմակերպմամբ, միջազգային փառատոներին, մրցույթներին մասնակցության ապահովմամբ,
- Հայաստանում օտարերկրյա պետությունների մշակույթի ներկայացում՝ միջազգային բնույթի լայնամասշտաբ միջոցառումների անցկացմամբ,
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակներում շարունակական գործընթացի ապահովում՝ մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում աշխատանքների իրականացմամբ,
- ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի (ՀՀՄՀ) հետ համագործակցության շրջանակում շարունակական գործընթացի ապահովում:

2017 թվականի ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են համարվել.

- մշակութային ժառանգության պահպանությունը և ազգային ավանդույթների վերարտադրումը,
- ազգային հենքի վրա ժամանակակից արվեստի զարգացումը, մշակութային արտադրանքի տարածումը, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտումը և ստեղծագործական գործընթացների խթանումը,
- գրահրատարակչության, տեղեկատվության ձեռքբերման և մամուլի աջակցումը,
- մշակութային կրթության շարունակականությունը, համակարգի կատարելագործումը, գեղարվեստական կրթության համակարգի զարգացումը, մանուկների և պատանիների գեղագիտական դաստիարակության ապահովումն ու խթանումը,
- մշակութային ծառայությունների ապակենտրոնացումը և համաչափության ապահովումը,
- միջազգային համագործակցության ընդլայնումը, արտերկրում հայկական մշակույթի տեղորոշումը և հանրահռչակումը,
- ազգային փոքրամասնությունների մշակույթի և էթնիկ ինքնության պահպանումը:

Շարունակվել են մշակութային ժառանգության պահպանության աշխատանքները՝ ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, ՀՀ մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանմանը, վերականգնմանն ու սերունդներին փոխանցմանը, դրանց նպատակային օգտագործմանն ու հանրահռչակմանը:

Թանգարանների ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղվել են թանգարանային ցուցադրությունների արդիականացմանը, պետություն-մասնավոր համագործակցության շարունակականությանը, թանգարանային հավաքածուների պահպանությանը և համալրման անընդհատության ապահովմանը, մշտադիտարկումների իրականացմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացմանը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, գիտական ուսումնասիրությանը և հանրահռչակմանը, թանգարանային մասնագետների վերապատրաստմանը և միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Գրադարանների ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղվել են գրադարանային հավաքածուների պահպանությանը և համալրման անընդհատության ապահովմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության թվայնացմանը և տեղեկատվական շտեմարանների շարունակական համալրմանը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովմանը, համայնքային գրադարանների զարգացմանը, ոլորտի մասնագետների վերապատրաստմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, մատենագիտական, վիճակագրական տվյալների, տեղեկատվական այլ ցանկերի կազմմանն ու հրապարակմանը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Հուշարձանների պահպանության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղվել են պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը, պահպանությանը (այդ թվում՝ պատմական միջավայրի), ուսումնասիրմանը (այդ թվում՝ դիտանցում, պեղում), վերականգնմանը և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը, մշակութային զբոսաշրջության խթանմանը:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղվել են ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը (ուսումնասիրում, ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների, մշակութային տարածքների ցանկերի համալրում, անտիպ նյութերի տպագրում), պաշտպանությանը (ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացում, կրողներից սերունդներին փոխանցման համար նպաստավոր պայմանների ստեղծում), հանրահռչակմանը (ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկերի համալրում, ցանկերում ընդգրկված հայկական տարրերի հանրահռչակում, գիտաճանաչողական ֆիլմերի, հեռուստառադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում, կայքերի ստեղծում, փառատոների, համերգների կազմակերպում, միջազգային ասպարեզում ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի համագործակցության ընդլայնում):

Ժամանակակից արվեստի ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղվել են ազգային հենքի վրա հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կինոարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, քաղաքացիական կիրթ հասարակության ձևավորմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը, մշակութային արտադրանքի ձեռքբերմանը և ազգային նկարագրով անհատների ու երևույթների արժևորմանը և հանրայնացմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների ու հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը:

Գրահրատարակչության ոլորտում իրականացվող ծրագրերի նպատակներն են՝ տպագիր արտադրանքի տեսքով պահպանել, տարածել և հանրահռչակել ազգային և համաշխարհային հոգևոր-մշակութային ժառանգությունը ներկայացնող գրքերը և էլեկտրոնային կրիչները, նպաստել ազգաբնակչության իրազեկվածությանը՝ հանրագիտարանային, գիտական, ճանաչողական և տեղեկատվական արժեք ունեցող գրականության հրատարակման միջոցով, աջակցել ժամանակակից թարգմանիչներին և ստեղծագործողներին, նոր ուսումնասիրություններին ու ստեղծագործություններին, համատեղ հրատարակությունների և հատուկ կարևորության գրականության հրատարակմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին՝ պահպանելու իրենց ազգային լեզուն և գրականությունը, ապահովել գրական, մշակութային, մարզային և այլ բնույթի մամուլի շարունակականությունը:

Մշակութային կրթության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղվել են կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, ներառյալ սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների ապակենտրոնացման և համաչափության ապահովման նպատակով իրականացվող ծրագրերն ուղղվել են Երևանի և ՀՀ մարզերի միջև գոյություն ունեցող մշակութային ծառայությունների քանակական և որակական տարբերությունների վերացմանը, մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը, միջմարզային կապերի

ամրապնդմանը, մշակութային գործընթացներում տեղի ազգաբնակչության ներգրավմանը, մշակութային ծառայություններից օգտվելուն և մշակութային գործունեության իրականացմանը:

Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցությունը միտված է եղել արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, դրանց ներդաշնակ համադրմանը, արտերկրում մշակույթի նպատակաուղղված քարոզչության իրագործմանը, համաշխարհային մշակույթը Հայաստանի հանրության լայն շերտերի համար մատչելի դարձնելու գործընթացների ապահովմանը, համատեղ և համաֆինանսավորվող ծրագրերի ավելացմանը, միջազգային ծրագրերին հայաստանյան կազմակերպությունների ներգրավվածության աճի ապահովմանը, հայաստանյան հասարակությանն աշխարհի ժողովուրդների մշակույթին հաղորդակից դարձնելու գործընթացի ապահովմանը:

Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման ու մշակութային համագործակցության խորացման նպատակով շարունակվել է սփյուռքում գործող կազմակերպությունների և մշակութային միությունների հետ համագործակցության ծրագրերի իրականացումը, խրախուսվելու են հայրենիքում ու արտերկրում ստեղծագործող հայ արվեստագետները:

Ազգային փոքրամասնությունների մշակույթի և էթնիկ ինքնության պահպանման նպատակով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային փոքրամասնությունների համայնքների ինքնադրսևորման և ժամանակակից գործընթացներին ներգրավվածության ապահովմանը, Հայաստանի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, պատմամշակութային ժառանգության պահպանության ապահովմանը:

Ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդության բնագավառ

Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում ՀՀ կառավարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնախնդիրների լուծում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների, փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցությանն աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին ծանոթացնելու նպատակով սեմինար-

խորհրդակցությունների անցկացում, ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

Պետական աջակցության ծրագրում ընդգրկված 32 մարզական ազգային ֆեդերացիաները 2017 թվականի ընթացքում պետական աջակցության գումարներով կազմակերպել են 126 ուսումնամարզական հավաք, 95 Հայաստանի Հանրապետության առաջնություններ (մեծահասակների, երիտասարդների, պատանիների), մասնակցել են 176 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների:

2017 թվականին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկները 15 մարզաձևերից աշխարհի և Եվրոպայի առաջնություններում նվաճել են 61 ոսկե, 49 արծաթե և 91 բրոնզե մեդալ, ընդհանուր հաշվարկով՝ 201 մեդալ:

Հաշվի առնելով հրաձգություն և մարմնամարզություն մարզաձևերով պարապողների քանակի կտրուկ ավելացումը, մարզական բարձր նվաճումները, 2016 թվականին Եվրոպայի, աշխարհի առաջնություններում, Ռիո դե Ժանեյրոյի 31-րդ ամառային օլիմպիական խաղերում ցուցաբերած բարձր արդյունքները՝ 2017 թվականին ավելացել է պետական աջակցությունը շախմատ, հրաձգություն և մարմամարզություն մարզաձևերին հատկացվող տարեկան գումարը, վերջինիս դեպքում՝ նաև 2020 թվականի օլիմպիական խաղերին թիմային պայքարում լավագույնս նախապատրաստվելու և մասնակցելու նպատակով:

Սպորտի բարձրագույն նվաճումների բնագավառում կառավարության քաղաքականությունն ուղղված է եղել սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը, օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցմանը, մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը, միջազգային, (այդ թվում՝ սփյուռքի հետ) կապերի ամրապնդմանը, մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը, միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

2016 թվականին ցուցաբերած մարզական բարձր արդյունքների համար ՀՀ հավաքական թիմերի 206 մարզիկներին և նրանց մարզիչներին (այդ թվում՝ 87 մարզիկի և 119 մարզչի) 2017 թվականին հատկացվել է ՀՀ Նախագահի անվանական թոշակ: Եթե ծրագրի իրականացման առաջին տարում՝ 2009 թվականին, անվանական թոշակ ստացել են 102 մարզիկ և մարզիչ 11 մարզաձևերից, ապա 2017 թվականին նրանց թիվը կազմել է 206՝ 13 մարզաձևերից:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում իրականացված քաղաքականությունն ուղղված է եղել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը, մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը, հասարակության լիարժեք անդամ հաշմանդամ մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը: Մասսայական սպորտի ոլորտում իրականացվող ծրագրերը բխում են ՀՀ Նախագահի սահմանած մրցանակների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզման, սպորտի Եվրոպական խարտիայի պահանջների կատարումն ապահովելու, Եվրոպայի խորհրդի սպորտի զարգացման կոմիտեի որոշումները կատարելու, նախադպրոցական և ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությունն ապահովելու անհրաժեշտությունից: Ծրագրի հիմքում դրված է ոլորտի գերակայություններ հանդիսացող տարիքային ու սոցիալական տարբեր խմբերի, անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացման, ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, առողջ ապրելակերպի արմատավորման, անհատի ներդաշնակ զարգացման, հայրենիքի պաշտպանության գործին ֆիզիկապես կոփված երիտասարդների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը: 2017 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են բակային սպորտի զարգացման 2018-2022թթ. հայեցակարգը, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը, Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգը, սպորտային տուրիզմի զարգացման հայեցակարգի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Մասսայական սպորտի ոլորտում իրականացված նոր ծրագրերից են տարեցների հանրապետական խաղերի անցկացումը (շուրջ 1500 մարդ), ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացումը (շուրջ 5000 մարդ), ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադայի անցկացումը (շուրջ 30000 դպրոցականներ), հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացումը (շուրջ 3000 մարդ):

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է ցուցաբերվում «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպություն», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» ՀԿ-ներին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր

խանգարումներով մարդկանց ինքնադրսևորվելուն և հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելուն: Ծրագրի նպատակն է՝ հաշմանդամային սպորտի զարգացման խթանումը, հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ինտեգրման գործընթացի խթանումը, բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը և այլն: Ծրագրի շրջանակում իրականացվել է 8 միջոցառում, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող 443 անձ: Հուլիսի 18-30-ը Թուրքիայի Սամսուն քաղաքում կայացել են 23-րդ ամառային սուրդլիմպիկ խաղերը, որին Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության տասը մարզիկով: Ձյուդո մարզաձևում հանդես եկող Ռոբերտ Գևորգյանը 60 կգ քաշային կարգում գրավել է 2-րդ տեղը՝ նվաճելով արծաթե մեդալ: Հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտ մարզաձևերում հանդես եկող 4 մարզիկներ գրավել են 3-րդ տեղ: Մարտի 14-25-ը Ավստրիայի Գրաց քաղաքում տեղի են ունեցել հատուկ օլիմպիադաների աշխարհի ձմեռային խաղերը: Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության 1 մարզիկով: Դահուկավազք (500 մ) մարզաձևում հանդես եկող Սիփան Ծաղկյանը գրավել է երկրորդ տեղը՝ նվաճելով արծաթե մեդալ:

Պետական երիտասարդական քաղաքականության ոլորտի ռազմավարական ուղղվածությունը հանգել է հետևյալ նպատակների իրականացմանը՝

- զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),
- բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը,
- նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը,
- ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները,
- հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին,
- նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը,
- ակտիվացնել և զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ,

- ստեղծել պայմաններ երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար
- ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում՝ ««Պետական երիտասարդական քաղաքականությունը ՀՀ մարզերում» այցելություն-խորհրդակցությունների կազմակերպում ՀՀ մարզերում, երիտասարդական պորտալի պահպանում, ՀՀ–ում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասանկացության խթանմանն ուղղված ծրագրեր, «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում», համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների (փառատոներ, համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ, կրթական, հոգևոր-մշակութային, սպորտային) կազմակերպում, միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում ու իրականացում և այլն:

Առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով հասարակական կազմակերպություններին տրամադրվել է 33 դրամաշնորհ: Վճարվել է Եվրոպայի խորհրդի «Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդության շարժունակություն» ընդլայնված մասնակի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարը, տրամադրվել է 21 ուղևորության դրամաշնորհ:

Բնապահպանության ոլորտ

2017 թվականին բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության և ՀՀ կառավարության կողմից հաստատված ռազմավարական նշանակության ծրագրերով նախատեսված՝ բնապահպանության ոլորտի գծով գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ապահովմանը:

Կենսառեսուրսների պահպանություն և կառավարում

Կենսառեսուրսների պահպանության և կառավարման բնագավառ: 2017 թվականին ընդունվել են «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները:

ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ԳԱԱ Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի միջև կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում համատեղ ուժերով աստղադիտարանին պատկանող 38 հա այգու տարածքում կստեղծվի ծառաբանական զբոսայգի (դենդրոպարկ): Բնության հատուկ պահպանվող տարածքներում 2017 թվականի ընթացքում իրականացվել են անտառավերականգնման աշխատանքներ՝ 23.98 հա, տնկարանի հիմնում և խնամք՝ 8հա, տնկանյութի աճեցման աշխատանքներ, այդ թվում սերմնաբուսակներ՝ 3300 հատ և տնկիներ՝ 58700 հատ:

Հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրութունների և անտառտնտեսական աշխատանքների շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովման, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության աշխատանքներ:

Բնության հուշարձաններ

<u>Բնության հուշարձաններ:</u> Բնության հուշարձանների ընդհանուր քանակը 232 է, անձնագրավորված հուշարձանների քանակը՝ 31: 2017 թվականին հաստատվել են ՀՀ Կոտայքի մարզի ևս երկու բնության հուշարձանների՝ «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ» և «Անանուն քարայր» սյունաձև բազալտներում» անձնագրերը: «Անդրսահմանային միացյալ քարտուղարություն (փուլ III)» ծրագրի շրջանակներում մշակվել և 2018 թվականին հաստատվել է «Շաքիի ջրվեժ» բնության հուշարձանի անձնագրի նախագիծը:

Էկոտուրիզմ

<u>Էկոտուրիզմի զարգացում:</u> 2017 թվականի ընթացքում բնության հատուկ պահպանվող տարածքներ այցելել է 549128 զբոսաշրջիկ (2016 թվականի 492244-ի համեմատ), որի արդյունքում ստացված եկամուտը կազմել է 226.77 մլն դրամ (2016 թվականին՝ 179.4 մլն դրամ):

Ջրային ռեսուրսների պահպանություն և կառավարում

Ջրային ռեսուրսների պահպանության և կառավարման բնագավառ: Սևանա լճի մակարդակը 31.12.2017թ. դրությամբ կազմել է 1900.42 մ, ինչը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ (1900.46 մ) նվազել է 0.04 մ-ով: 2017 թվականի համար Սևանա լճից ոռոգման նպատակով սահմանվել է մինչև 270 մլն մ^3 չափաքանակ: Բացթողնված ջրաքանակը կազմել է 266.757 մլն մ^3, ինչը 99.622 մլն մ^3-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: Սևանա լճից Արծվանիստի, Զոլաքարի, Աստղաձորի, Մարտունու և Երանոսի պոմպակայաններով ընդհանուր ջրառը կազմել է 3074.0 հազ. մ^3: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լիճ Արփա-Սևան ջրատարով տարեսկզբից մուտք է գործել շուրջ 110.471 մլն մ^3 ջրաքանակ, ինչը 10.328 մլն մ^3-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Սևանա լճի թափանցիկությունը 13 մ է:

«Սևան» ազգային պարկի ջրածածկ անտառտնկարկներով տարածքներից 2017 թվականին մաքրվել է 78.1 հա տարածք, որից 64 հա-ը ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից, 14.1 հա՝ ֆիզիկական անձանց կողմից՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքված ջրածածկ անտառների մաքրման պայմանագրերի շրջանակներում: Ընդհանուր առմամբ «Սևան» ազգային պարկի ջրածածկ 5000 հա տարածքներից 2005-2017 թվականների ընթացքում մաքրվել է 2164.17 հա, որից 1840.23 հա՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով, 323.94 հա՝ ֆիզիկական անձանց կողմից:

2017 թվականի ընթացքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցներով պարկի տարածքում իրականացվել են 8.48 հա անտառավերականգնման աշխատանքներ: Ընդհանուր հաշվառված 4729 ապօրինի շինություններից 2006 թվականից ապամոնտաժվել է ընդամենը 831 շինություն, որից միայն 2017 թվականին ապամոնտաժվել են թվով 186-ը: 2017 թվականին Մարտունի համայնքի միջոցներով և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աջակցությամբ՝ Մարտունի համայնքին հարակից հատվածում ստեղծվել է հանրային լողափ՝ մոտ 2.0 հա տարածքով: «Սևան» ազգային պարկի տարածքում առանձնացված է 11 հանրային լողափ՝ շուրջ 31.16 հա մակերեսով: 2017 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Սևան» ազգային պարկի բարեփոխումների և զարգացման հայեցակարգը»: 2017 թվականին մշակվել է «Սևան» ազգային պարկի բարեփոխումների և զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2018-2028 թվականների միջոցառումների ծրագիրը:

«Սևան» ազգային պարկի զարգացման հեռանկարներն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները՝ զբոսաշրջություն, այլընտրանքային էներգիա, արդյունագործական ձկնորսություն և խեցգետնի որս, գյուղատնտեսություն (ջերմատներ, օրգանիկ, ինտենսիվ այգիներ):

2017 թվականի սեպտեմբերի 25-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է Արարատյան դաշտի 239 ձկնաբուծական տնտեսությունների 584 խորքային հորերի փաստացի վիճակի ուսումնասիրություն, այդ թվում՝ ջրաչափում, փականային ռեժիմի բերում և կապարակնքում: Նշված ձկնաբուծական տնտեսություններից գործում է 124-ը, 160 ձկնաբուծական տնտեսություն ունի ջրօգտագործման թույլտվություն: Ձկնաբուծական նպատակով օգտագործվող փաստացի ջրաքանակը շուրջ 21041 լ/վ է, ինչը տարեկան կազմում է մոտ 664 մլն մ^3 ջրաքանակ: 2017 թվականին Արարատյան դաշտում լուծարվել է 1, կոնսերվացվել՝ 16 և փականային ռեժիմի է բերվել 150 հորատանցք, ինչի արդյունքում խնայված ջրաքանակը կազմել է շուրջ 4952 լ/վ, որը տարեկան կազմում է շուրջ 156 մլն մ^3: Մշտադիտարկումների արդյունքում նկատվում է Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի մակարդակի կայունացում և որոշ հատվածներում բարձրացման միտում:

Ներկայումս ջրօգտագործման թույլտվությունների (ՋԹ) տրամադրման համար սահմանվել է 50 աշխատանքային օր, նախկինում գործող՝ մինչև 180 աշխատանքային օր ժամկետի փոխարեն: 2017 թվականին մուտքագրվել է ՋԹ 224 հայտ, ձևակերպվել է 224 նոր ՋԹ, երկարաձգվել են նախկինում տրված 189 ՋԹ-ների ժամկետները:

Ընդերքի և հողերի պահպանության բնագավառ

Ռեկուլտիվացիայի խնդիրներ: Հաշվետու տարում շարունակվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (ընդհանուր գումարն առ 01.01.2018թ.՝ 1431.6 մլն դրամ) և օգտակար հանածոների արդյունահանված տարածքների մշտադիտարկումների (ընդհանուր գումարն առ 01.01.2018թ.՝ 110.53 մլն դրամ) իրականացման գործընթացը, իրականացվել են օրենսդրական փոփոխություններ:

Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման բնագավառ: 2017 թվականի ընթացքում այս բնագավառում մատուցված ծառայությունների շրջանակներում համաձայնեցվել է թափոնների 408 անձնագիր, տրամադրվել է բարդ ընթացակարգով 2 լիցենզիա: Պետական հաշվառում ունեցող կազմակերպությունների քանակը կազմում է 1348 (2016թ.՝ 1159):

2017 թվականին տրամադրված Օզոնային շերտը քայքայող նյութերի (ՕՔՆ) ընդհանուր չափաքանակը կազմում է 114.02 տոննա, հայտատուներին տրամադրված ՕՔՆ անհատական չափաքանակը (քվոտան)՝ 106.9 տոննա, փաստացի ներկրվել է 32.64 տոննա, տրամադրվել են ՕՔՆ մեկանգամյա ներմուծման 7 լիցենզիա:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական վերլուծական ծառայության բնագավառ: ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգն իրականացվել է 43 գետում՝ 103 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 17 դիտակետից

ընդամենը՝ 42296 անալիզ, այդ թվում՝ իրականացվել է Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգ՝ 2016 ցուցանիշ:

Մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «գերազանց» և «լավ» է (1-ին և 2-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացվել է 11 քաղաքներում՝ 490652 անալիզ: Մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքների համաձայն Երևան քաղաքում ընդհանուր փոշու միջին ամսական պարունակությունը գտնվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) սահմանում: Ընդհանուր փոշով աղտոտվածությունը բարձր է Գյումրի, Արարատ և Ալավերդի քաղաքներում՝ Գյումրիում ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.3-4.8 անգամ, Ալավերդիում՝ 1.2-2.8 անգամ, Արարատում՝ 1.2-2.0 անգամ: Ալավերդի քաղաքում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.7-2.9 անգամ, Վանաձոր քաղաքում՝ 1.2-1.3 անգամ: Մնացած աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են 6 ջրավազանային կառավարման տարածքի 128 ստորերկրյա ջրաղբյուրներում, որոնք ներառում են 27 շատրվանող հորատանցք, 37 չշատրվանող հորատանցք և 64 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Որակական դիտարկումներ իրականացվել են ազգային ցանցում ընդգրկված 50 ստորերկրյա ջրաղբյուրներում: Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների արդյունքով բացահայտված է, որ բոլոր ջրավազանային կառավարման տարածքների գետավազանների լեռնային մասերում ստորերկրյա ջրաղբյուրների որակական և քանակական փոփոխությունները կատարվում են բնական գործոնների ազդեցության տակ:

<u>Միջազգային համագործակցություն:</u> Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է բնապահպանական ոլորտի 22 միջազգային կոնվենցիաների ու արձանագրությունների, որոնց դրույթների կատարման ուղղությամբ ՀՀ բնապահպանության նախարարությունը ծավալում է զգալի աշխատանք:

Շարունակվում է բնապահպանական ոլորտում համագործակցությունը գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների, այդ թվում՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի

(UNEP), ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP), Համաշխարհային բանկի (WB), Գլոբալ բնապահպանական հիմնադրամի (GEF), Տարածաշրջանային միացյալ քարտուղարության (TJS), Կովկասի բնության հիմնադրամի (WWF), ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (UNIDO), ԱՄՆ Միջազգային Զարգազման Գործակալության հայաստանյան գրասենյակի (USAID), Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (GIZ) և այլ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների հետ, ինչպես նաև միջազգային բնապահպանական կոնվենցիաների և նախաձեռնությունների շրջանակներում: 2017 թվականին ՀՀ շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող օրենսդրական դաշտը գտնվել է ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցման գործընթացում:

Բյուջեների կազմման բնագավառ

2017 թվականին շարունակվել են ծրագրային բյուջետավորման գործընթացին անցնելու ուղղությամբ աշխատանքները՝ նպատակ ունենալով բարձրացնել բյուջետային ծրագրեր իրականացնող պետական մարմինների և ընդհանրապես կառավարության հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը պետական ֆինանսների արդյունավետ և նպատակային օգտագործման համար:

Ստեղծվել են ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման համար իրավական և մեթոդաբանական հիմքերը, մասնավորապես՝ մշակվել և ԱԺ կողմից ընդունվել են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և լրացումներն ապահովում են անհրաժեշտ իրավական հիմքերը ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման համար: Մասնավորապես՝ ծրագրային դասակարգումը սահմանվել է որպես բյուջետային հատկացումների հիմնական դասակարգում, սահմանվել են նաև ծրագրային բյուջետավորման կիրառության առանձնահատկությունները բյուջետային գործընթացի բոլոր փուլերում (բյուջեի պլանավորում, կատարում, հաշվետվողականություն):

«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները իրավական դաշտում հնարավորություն են ստեղծել ՀՈԱԿ-ների, պետական և տեղական ինքնակառավարման համակարգում գործող հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների հաշիվները, անհրաժեշտության դեպքում, գանձապետարանում բացելու համար:

Մշակվել և ՀՀ պետական մարմիններին են տրամադրվել ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունը սահմանող ձեռնարկների և ուղեցույցների փաթեթը, ինչպես նաև ՀՀ 2019-2021

թվականների ՄԺԾԾ և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման մեթոդական ցուցումները:

Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ

Հարկային ոլորտ

Ամբողջական ծավալով աշխատանքներ են իրականացվել 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտների ապահովման ուղղությամբ: Աշխատանքներ են տարվել թիրախային հարկային հսկողության իրականացման, վերլուծական գործիքակազմի կիրառության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես՝

- Բարձրացել է հարկային հսկողության արդյունավետությունը՝ ռիսկային տնտեսավարող սուբյեկտների թիրախավորման և դրանց նկատմամբ համապատասխան հսկողական գործիքակազմի կիրառման միջոցով: Գործարկվել է մոնիտորինգային կենտրոնը՝ վերլուծական և ռիսկերի բացահայտման գործընթացների բարելավման, ինչպես նաև հարկ վճարողների գործունեության նկատմամբ իրականացվող տեսչական ընթացիկ հսկողությունն էլեկտրոնային հսկողության հարթակ տեղափոխելու նպատակով: Կենտրոնում գործարկված ինքնաշխատ համակարգն իրականացրել է ՀԴՄ և հաշվարկային այլ փաստաթղթերով՝ հարկային հաշիվներով ու հաշիվ-ապրանքագրերով, իրականացվող գործարքների մոնիտորինգ՝ վեր հանելով ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին: Կենտրոնի կողմից 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ իրականացված մոնիթորինգի արդյունքով հարկ վճարողներին ուղարկվել է 6098 ծանուցում, որի վերաբերյալ պարզաբանում է ներկայացրել ծանուցված հարկ վճարողների 15%-ը, իսկ 85%-ը առարկություններ չի ներկայացրել.
- Ստուգումների կազմակերպման գործընթացի հասցեականությունն ապահովելու նպատակով վերանայվել են ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրոնային ավտոմատ կառավարման համակարգի ռիսկային չափանիշները, որոնք հիմք են ընդունվել 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերու-թյունների ճշտության ստուգումների ցանկը կազմելու համար: Միևնույն ժամանակ, 2017 թվականի ընթացքում թեմատիկ ստուգումների քանակը կրճատվել է 25%-ով:

Տրվել են անհրաժեշտ ընթացակարգային և ծրագրային կարգավորումները՝ մեկ միասնական գանձապետական հաշվի համակարգի գործարկման համար, համակարգը գործարկվել է:

Շարունակվել են ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված՝ օրենքների և այլ իրավական ակտերի ընդունման աշխատանքները: Մասնավորապես. ՀՀ հարկային օրենսգրքի կիրառության ապահովման նպատակով 2017 թվականին՝

- մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են 61 օրենքների նախագծեր,
- մշակվել են ՀՀ կառավարության 81 որոշումների նախագծեր, որոնցից 76-ն ընդունվել են,
- մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից հաստատվել են 52 նորմատիվ հրամանների նախագծեր:

2017 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ընդլայնման և որակի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես.

- «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունների ընդլայնմանն ուղղված աշխատանքների արդյունքում 2017 թվականի ընթացքում հարկ վճարողների շուրջ 97%-ը հաշվարկները հարկային մարմին ներկայացրել է էլեկտրոնային եղանակով.
- 2017 թվականի 4-րդ եռամսյակի համար բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունների՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորություն է ընձեռվել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում.
- 2017 թվականի ընթացքում հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազանգերի կենտրոնն ընդունել է 156767 հարցադիմում հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրության և վարչարարության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, կենտրոնում 2017 թվականի ապրիլ ամսից գործարկվել է «Հետադարձ կապի համակարգ» ծառայությունը, որը հնարավորություն է ընձեռել հարկ վճարողին՝ վերջինիս կողմից կատարված հեռախոսազանգից հետո գնահատել տվյալ հարցման արդյունքում կենտրոնի աշխատակցի տրամադրած պատասխանի որակը: Հարցմանը մասնակցած հարկ վճարողների 73.5%-ը դրական են գնահատել կենտրոնի աշխատանքը:

Շարունակվել են մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործման աշխատանքները՝ անձնակազմի վերապատրաստման, մասնագիտական կարողությունների ընդլայնման շեշտադրմամբ: 2017 թվականի ընթացքում հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների բարելավման նպատակով շուրջ 90 թիրախային խմբերի համար կազմակերպվել են 1510 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել և թեստավորվել է 1850 հարկային և մաքսային ծառայող:

Հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նոր կառուցվածքը, մասնավորապես՝ լուծարվել են հարկային (տարածքային) տեսչությունները, ստեղծվել են թվով 3 վարչություններ, որոնք ներառվել են կոմիտեի

աշխատակազմի ստորաբաժանումների կազմում՝ որպես վերադաս հարկային մարմնի ստորաբաժանումներ (դրանք են՝ հարկ վճարողների սպասարկման վարչությունը, փոքր հարկ վճարողների, խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչությունները): Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կրճատվել են թվով 4 մաքսատներ և լուծարվել բոլոր մաքսատները՝ վերջիններիս փոխարեն ստեղծվելով թվով 5 մաքսատուն-վարչություններ, և դրանք՝ որպես վերադաս մաքսային մարմնի վարչություններ, ներառվել են կոմիտեի աշխատակազմի կառուցվածքում:

Մաքսային ոլորտ

Աշխատանքներ են տարվել արդիականացված սահմանային անցակետերի գործարկման ուղղությամբ: ՀՀ հյուսիսային սահմանում բացվել են Բագրատաշենի և Գոգավանի սահմանային անցումային կետերը: Անցումային կետերն ամբողջությամբ համապատասխանում են սահմանային, այդ թվում՝ մաքսային հսկողության և ձևակերպումների ժամանակակից պահանջներին: 2017 թվականի հոկտեմբերին բացվել է Բավրայի սահմանային նոր անցակետը:

Ընդլայնվել է մաքսային արժեքի որոշման ժամանակ գործարքի գնի մեթոդի կիրառությունը, որի տեսակարար կշիռը կազմել է 68%:

Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում ներդրվել է Էլեկտրոնային տարբերակով մաքսային հայտարարագրերի ներկայացման, մշակման և բացթողնման «կանաչ ուղու» ավտոմատ բացթողման հնարավորություն:

«ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» հարթակում (trade.gov.am) գործարկվել են նոր համակարգեր, մասնավորապես՝

- 2016 թվականի դեկտեմբերի 1-ից գործում է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգը՝ ապահովելով հայտարարատուի ժամանակի խնայողություն, մաքսային մարմնի պաշտոնատար անձանց և հայտարարատուների միջև շփման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում.
- ներդրվել են մաքսային մուտքի անդորրագրերի մշակման և ապրանքի էլեկտրոնային հայտարարագրման համակարգերը, որոնցով մաքսային ձևակերպումներն իրականացվում են առավելապես տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ.
- ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտը, չունենալով մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում, կարող է իր գրասենյակից էլեկտրոնային եղանակով ինքնուրույն իրականացնել մաքսային հայտարարագրում, եթե ստացել է մաքսային մարմնի համակարգ մուտքի հնարավորություն,

- փոխադրողի կամ ստացողի կողմից մաքսային մարմիններին նախնական տեղեկատվության ներկայացման համակարգն ընդունված է շահագործման:

Ներդրվել է վճարումների կենտրոնացված հաշվառման համակարգը, ինչն ապահովում է մաքսային մարմինների կողմից հավաքագրվող բոլոր վճարների կենտրոնացված հաշվառում և հսկողություն:

Արդեն իսկ ներդրված փոստային առաքանիների հաշվառման համակարգին ինտեգրվել են բոլոր սուրհանդակ ծառայությունները: Համակարգը հնարավորություն է ընձեռում վարել առաքանիների ամբողջական հաշվառում, իրականացնել դրանց նկատմամբ վերահսկողություն և գանձվող վճարների կանխատեսում: Համակարգի միջոցով քաղաքացիները, առանց մաքսային մարմին ներկայանալու, կարողանում են կատարել նախատեսված վճարումները:

Հաշվապահության, աուդիտի և ոչ ֆինանսական կարգավորման ոլորտներ

ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 463-Ն հրամանով հաստատված՝ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցին համապատասխան՝ հանրային հատվածի թվով 25 կազմակերպություններ և նրանց ենթակա ՊՈԱԿ-ները 2017 թվականի հունվարի 1-ից անցում են կատարել հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հանրային հատվածի նոր համակարգին: Միաժամանակ ուսումնասիրվել են 2016 թվականի հունվարի 1-ից անցում կատարած կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման հետևանքով առաջ եկած խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ, առնվազն եռամսյակային հաճախականությամբ, հանրային հատվածի կազմակերպություններին տրամադրվել է «Մասնագիտական տեղեկատու» պարբերականը: 2018 թվականի հունվարի 1-ից հանրային հատվածի թվով 21 կազմակերպություններ, քաղաքային և գյուղական համայնքները և նրանց ենթակա ՊՈԱԿ-ները և ՀՈԱԿ-ները նույնպես անցում են կատարել հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հանրային հատվածի նոր համակարգին:

Պետական գույքի կառավարում

Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով 2017 թվականի ընթացքում շարունակվել են պետական գույքի կառավարման ոլորտում մեթոդական բնույթի օրենսդրական փոփոխությունները, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել,

հստակեցնել կառավարման գործառույթները և լրացնել այն բացերը, որոնք առաջանում են նոր իրավական ակտերի կիրառման արդյունքում:

2017 թվականի մարտի 1-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-68-Ն), որով փոփոխության է ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 52-րդ գլուխը՝ հավատարմագրային կառավարմանը վերաբերող դրույթները:

2017 թվականի հունիսի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-95-Ն):

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի նոյեմբերի 30-ին ընդունվել է «Պետական գույքի կառավարման 2018-2020 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1566 որոշումը:

ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվել է պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու, գործունեության արդյունավետությունը որոշելու, կառավարման ոլորտում կատարված աշխատանքները գնահատելու ու առաջարկություններ ներկայացնելու կարգը:

ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի փետրվարի 9-ին ընդունվել է նախորդ տարվա ընթացքում մշակված կանոնադրական կապիտալում հիսուն տոկոսից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (բաժնեմաս) ունեցող առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի (բաժնեմասի) ամբողջությամբ կամ մասնակի մասնավորեցման գործընթացը կանոնակարգելու մասին որոշումը:

Հաշվետու տարում մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի ապրիլի 6-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ դրամային պարտավորությունների մասով իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելուց ձեռնպահ մնալու մասին» N 348-Ն որոշումը:

2017 թվականին ՀՀ կառավարության որդեգրած՝ պետական գույքի կառավարման քաղաքականության հիմնական շեշտադրումն է եղել պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գույքի կառավարման քաղաքականության առանձին բնագավառներում իրականացվել են արմատական բարեփոխումներ, մասնավորապես՝

պետական գույքի կառավարման և մասնավորեցման ծրագրային գործընթացը շարունակելու, պետական գույքի մասնավորեցման, լուծարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության տրամադրման ընթացակարգերը պարզեցնելու և վարչարարությունը նվազագույնի հասցնելու, պետական գույքի օտարման բնագավառում վաճառքի նոր ձևեր և մոտեցումներ կիրառելու, հանրակացարանային տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացն արմատապես բարեփոխելու և ավարտին հասցնելու, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական մոնիտորինգի համակարգը բարելավելու, այդ կազմակերպությունների տնտեսական արդյունավետության որոշման կարգ մշակելու, ցուցանիշներ սահմանելու, գործադիր տնօրենների աշխատանքը գնահատելու և խրախուսման նոր գործիքակազմ կիրառելու համար մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են մի շարք իրավական ակտեր:

Ընդհանուր առմամբ մշակվել և գործում է պետական գույքի կառավարման նոր մոտեցումների ամբողջ տիրույթի օրենսդրական և մեթոդական դաշտ, որի հիմնական նպատակն է կանոնակարգել, հստակեցնել կառավարման գործառույթները և լրացնել այն բացերը, որոնք առաջանում են նոր իրավական ակտերի կիրառման արդյունքում:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարումը

Հաշվետու տարում 2016 թվականի տարեկան արդյունքների հիման վրա իրականացվել է պետական կառավարման մարմինների ենթակայության՝ 189 և 2017 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով՝ 195 առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վերլուծություն: Վերլուծության արդյունքում, այն առևտրային կազմակերպությունների համար, որոնց զուտ ակտիվները (սեփական կապիտալը) հաշվետու տարում բացասական մեծություններ են կամ կուտակած վնասները հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ կազմել են 50%-ից ավելի, հետագա գործունեության վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ: Պետական կառավարման 11 մարմինների և մարզպետարանների, ինչպես նաև վնաս ձևավորած ընկերությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվել են համատեղ խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆինանսատնտեսական վիճակի վատթարացման պատճառները և դրանց գործունեության բարելավման ուղղությամբ ձեռնարկվող համարժեք միջոցները:

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի ցանկերում ընդգրկված ընկերություններից 23-ը նախորդ ծրագրում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերություններ են, իսկ 23-ը՝ մասնավորեցման ծրագրում նոր ընդգրկված ընկերություններ և 1 միավոր գույք:

Հաշվետու ժամանակահատվածում 8 ընկերության համար ընդունվել են մասնավորեցման մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ, 3 ընկերության համար նախապատրաստվել են մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծեր (ընդ որում, դրանցից 2-ի բաժնետոմսերը գնորդ չլինելու պատճառով չեն մասնավորեցվել և մասնավորեցման են ներկայացվում 2-րդ անգամ), 24 ընկերության և 1 գույքի մասնավորեցման նպատակով ներկայացվել են գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթներ, 2 ընկերությունում իրականացվել է կանոնադրության փոփոխություն, 1 ընկերության անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականում իրականացվել է անճշտությունների ուղղում, հրավիրվել է տնօրենների խորհրդի 2 նիստ, անցկացվել են թվով 28 տարեկան և արտահերթ ժողովներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացվել են գործարար ծրագրեր: Իրականացվել են պետական կառավարման մարմինների կողմից տրամադրած՝ իրենց ենթակայության առևտրային կազմակերպությունների շահութաբաժինների ավելացման ուղղությամբ առաջարկների, տնօրենների գնահատման չափորոշիչների ուսումնասիրությունների ամփոփման աշխատանքներ:

Կազմակերպությունների լուծարման գործընթացը

2017 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից ընդունվել են 20 կազմակերպության լուծարման մասին որոշումներ: Հաշվետու ժամանակաշրջանում 34 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է, իսկ 3 կազմակերպություն ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի կողմից ճանաչվել են սնանկ: 01.01.2018թ. դրությամբ լուծարման գործընթացում է գտնվում 11 կազմակերպություն:

Հաշվետու ժամանակահատվածում լուծարվող կազմակերպություններում մարվել է շուրջ 293930.0 հազար դրամ կրեդիտորական պարտք, որից ՀՀ պետական բյուջեին՝ 70331.0 հազար դրամ, համայնքային բյուջեներին՝ 1129.0 հազար դրամ, աշխատավարձի գծով՝ 187392.0 հազար դրամ և այլ կրեդիտորական պարտքեր՝ 35078.0 հազար դրամ:

Լուծարումից հետո մնացած դրամական միջոցներից 78 095.0 հազար դրամը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե, իսկ 13197.0 հազար դրամը՝ ՀՀ կառավարության որոշման համաձայն, որպես կամավոր գույքային ներդրում, փոխանցվել է «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին:

Պետական գույքի մասնավորեցումը և օտարումը

Պետական գույքի մասնավորեցման՝ ներկայումս վարվող քաղաքականության հիմնական նպատակներն են՝

- առևտրային կազմակերպությունների՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասի) մասնավորեցման միջոցով դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը և երկրում մրցակցային միջավայրի բարելավմանը նպաստելը,
- պետական գույքի մասնավորեցման այն ձևերի լայնորեն կիրառումը, որոնք նպաստում են մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ներգրավմանն ու աշխատատեղերի պահպանմանը կամ ավելացմանը:

2017 թվականի ընթացքում մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է պետական գույքը մասնավորեցնելու մասին ՀՀ կառավարության 8 որոշում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքի ցանկերում ընդգրկված 8 ընկերության համար, որոնցից 3-ը ներկայացվել են աճուրդի, 2-ը մասնավորեցվել են: 3 ընկերության համար նախապատրաստվել են մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծեր, ընդ որում, դրանցից 2-ի բաժնետոմսերը գնորդ չլինելու պատճառով չեն մասնավորեցվել և մասնավորեցման են ներկայացվում 2-րդ անգամ:

2017 թվականի ընթացքում մշակվել է պետական անշարժ և շարժական գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշման 15 նախագիծ, որոնցից 14-ն ընդունվել է: Նշված նախագծերով օտարման է ներկայացվել 48 միավոր անշարժ գույք և 1 միավոր շարժական գույք:

2016-2017 թվականներին ընդունված ՀՀ կառավարության 16 որոշումների համաձայն օտարվել է 45 անվանում անշարժ գույք և 1 միավոր շարժական գույք: Նշված 45 անվանում անշարժ գույքի վաճառքի գինը կազմել է 2,674,943.5 հազ. դրամ: Վաճառքի արդյունքում անշարժ գույքի նկատմամբ գնորդների կողմից ստանձնած պարտավորությունների գումարը կազմում է 580,905.0 հազ. դրամ և 8,001.0 հազ. դոլարին համարժեք դրամ: 1 անվանում անշարժ գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով գույքի վաճառքի գինը կազմում է 83,057.0 հազ. դրամ: Ուղղակի վաճառքի ձևով օտարման ներկայացված գույքի գնորդը կստանձնի 50,000.0 հազ. դրամի ներդրման պարտավորություն:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի կողմից հաստատվել է 3 հրաման: Նշված հրամաններով օտարման է ներկայացվել 21 անվանում անշարժ գույք: Օտարման ներկայացված անշարժ գույքից վաճառվել է 5 անվանում անշարժ գույք, որոնց վաճառքի գինը կազմել է 22,853.1 հազ. դրամ: Մրցույթով օտարման ներկայացված գույքի գնորդը ստանձնել է 500.0 հազ. դրամի ներդրման պարտավորություն:

Մշակվել և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի կողմից հաստատվել է շարժական գույքի աճուրդով օտարման վերաբերյալ 40 հրաման: Նշված հրամաններով օտարման է ներկայացվել 224 միավոր տրանսպորտային միջոց, 1168 անվանում այլ շարժական գույք:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ քաղաքացիներին իրենց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները նվիրելու (սեփականաշնորհելու) մասին 7 որոշման նախագիծ (90 ընտանիքի (249 անձ) վերաբերյալ, 91 սենյակ):

2017 թվականի ընթացքում աճուրդներում վաճառքի է ներկայացվել 3429 լոտ, որից 27-ը՝ անշարժ գույք, 467-ը՝ տրանսպորտային միջոց, 2915-ը՝ այլ շարժական գույք, 17-ը՝ լուծարման ընթացքում գտնվող ընկերությունների գույք, 3-ը՝ մասնավորեցման ենթակա գույք: Վաճառքի ներկայացված լոտերից վաճառվել է 1603-ը, այդ թվում 12-ը՝ անշարժ գույք, 391-ը՝ տրանսպորտային միջոց, 1197-ը՝ այլ շարժական գույք, իսկ 3-ը՝ լուծարման ընթացքում գտնվող ընկերությունների գույք: Արձանագրվել է ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշների աճ: Աճուրդի ներկայացված ընդհանուր լոտերի քանակն աճել է երեք անգամ և ավելի, ընդ որում՝ աճուրդի ներկայացված տրանսպորտային միջոցների քանակն աճել է 50%-ով: Վաճառված տրանսպորտային միջոցների կատարման տոկոսը նախորդ տարվա համեմատ աճել է 28.5%-ով և կազմում է 87.3%: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ գույքը, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցները, միջինը վաճառվել են գրեթե գնահատված շուկայական արժեքով և բարձր մրցակցային պայմաններում:

Հաշվետու ժամանակահատվածում՝ կազմակերպվել է նաև վարձակալության տրամադրման 243 աճուրդ, վաճառքի է ներկայացվել 391 լոտ, որից վաճառվել է 213-ը:

Պետական գույքի օտարման պայմանագրերով պարտավորություններ են ստանձնել 14 գնորդ, որից 11 գնորդի կողմից ստանձնած ներդրումային պարտավորություններն ընդհանուր առմամբ կազմում են 32,230.0 հազ. դրամ: 8 գնորդի կողմից պարտավորությունները կատարվել են, նախատեսված 11,580.0 հազ. դրամի փոխարեն՝ 13,597.7 հազ. դրամի չափով:

Անհատույց օգտագործման իրավունքի պայմանագրերով պարտավորություններ են ստանձնել 33 փոխառու, որից՝ 9 փոխառու ստանձնել են 255,334.5 հազ. դրամի ներդրումային պարտավորություններ: 6 գնորդի կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունները կատարվել են 204,657.4 հազ. դրամի չափով՝ նախատեսված 149,381.8 հազ. դրամի փոխարեն:

24 փոխառու ստանձնել են գործարար ծրագրերով նախատեսված պարտավորություններ, որոնք կատարվում են:

Նվիրաբերության պայմանագրերով պարտավորություններ են ստանձնել 7 նվիրառու, որից 3 նվիրառու ստանձնել են 268,800.0 հազ. դրամի ներդրումային պարտավորություններ: 1 նվիրառուի կողմից 44,800.0 հազ. դրամի փոխարեն կատարվել է 133,784.8 հազ. դրամի ներդրում:

7 պայմանագրերով պարտավորությունները կատարվել են ժամկետից շուտ, որից 5-ը՝ օտարման պայմանագրերով, և նախատեսված 11,350.0 հազ. դրամի ներդրման փոխարեն կատարվել է 11,960.1 հազ. դրամի ներդրում, իսկ 1 գնորդի կողմից ստանձնած 706.6 հազ. ԱՄՆ դոլարի ներդրման փոխարեն կատարվել է 710.6 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում:

Նվիրաբերության մեկ պայմանագրով նախատեսված 9,130.5 հազ. դրամի ներդրման փոխարեն կատարվել է 27,220.7 հազ. դրամի ներդրում:

Անշարժ գույքի կադաստր

2017 թվականին անշարժ գույքի կադաստրի բնագավառում իրականացվել են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության առցանց տրամադրման՝ ներկայումս գործող համակարգի կատարելագործմանն ուղղված հետևյալ աշխատանքները.

- Իրականացվել են «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» (ARPIS) սուբյեկտների վերաբերյալ տվյալների ճշգրտման և ամբողջականացման, էլեկտրոնային արխիվի ամբողջականացման, անորակ տեսաներածված փաստաթղթերի վերատեսաներածման աշխատանքներ.
- Ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով, տեղեկատվության տրամադրման ծառայությունը.
- ARPIS էլեկտրոնային ծրագրում հաշվետվությունների լրամշակում և զարգացում, նոր տեսակի հաշվետվությունների մշակում և ներդնում.
- Ներդրվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոպորտալը.
- Տրամադրվել է դիմումների ընթացքի վերաբերյալ պաշտոնական էլեկտրոնային կայքում (e-cadastre.am) ամբողջական տեղեկատվության, դիմումի քննարկման ընթացքի ավարտման վերաբերյալ կարճ հաղորդագրությամբ ծանուցում, ինչպես նաև սեփականատերերին կամ գրավառուներին կոնկրետ անշարժ գույքերի նկատմամբ ներկայացված դիմումների վերաբերյալ ծանուցում:

Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում 2017 թվականին իրականացվել են ՀՀ տարածքում քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքները, որոնք կնպաստեն գեոդեզիական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Քարտեզագրության ոլորտում ստեղծվել են Սպիտակ (744.51 հա) և Սևան (1160 հա) քաղաքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերը, իսկ Վանաձոր քաղաքում ստեղծվել է բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքը, ինչը կնպաստի քաղաքի տնտեսական ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման համար:

Թեմատիկ քարտեզագրության ոլորտում իրականացվել են ՀՀ ազգային ատլասի անգլերեն և ռուսերեն տարբերակների (80 էջ) նախապատրաստման աշխատանքները, ինչպես նաև նախապատրաստվել են հրատարակման 5 անվանում ուսումնական և զբոսաշրջային թեմատիկայով քարտեզներ:

Աշխարհագրական անվանումների ոլորտում շարունակվել են ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները: Ստեղծվել են ՀՀ ջրագրական և Եվրոպայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարանները: Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիների ընթացքում շատացել է հայալեզու հրատարակչական արտադրանքը, ստեղծվել են նոր հեռուստա- և ռադիոընկերություններ, գրահրատարակչություններ, թերթեր և ամսագրեր, որոնց կողմից ներկայացվող նյութերում տեղ են գտնում բազմաթիվ աշխարհագրական անվանումներ:

Հողաշինարարության և Հայաստանի Հանրապետության հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման ոլորտում 2017 թվականի ընթացքում իրականացվել են.

- ՀՀ 16 խոշորացված համայնքների 1:10 000 կամ 1:25 000 մասշտաբի կադաստրային և հողաշինարարական հատակագծերի կազմման աշխատանքներ,
- ՀՀ 16 խոշորացված համայնքների հողային հաշվեկշիռների կազմման աշխատանքներ,
- Վերհանվել են ՀՀ 16 խոշորացված համայնքներում հողօգտագործման բնագավառում առկա խնդիրները և առաջադրվել են դրանց լուծման տարբերակներ,
- Խոշորոցված համայնքների ծրագրի իրականացման շրջանակներում կազմվել են ՀՀ 52 խոշորացված համայնքների վարչական սահմանների սխեմաները և դրանց նկարագրերը:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսվել է գույքահարկով հարկման մեխանիզմների վերանայում՝ նպատակ ունենալով խթանել պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծմանը, իսկ ՀՀ կառավարության 2017-2022 թվականների միջոցառումների ծրագրով անշարժ գույքի կադաստրային գնահատման ոլորտում առկա վիճակի բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսել է 2018-2019 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում սահմանել միասնական տարածագնահատման նոր գոտևորում: Սույն գործառույթների շրջանակներում 2017 թվականի ընթացքում իրականացվել են անշարժ գույքի կադաստրային գնահատման կարգերի կատարելագործմանն ուղղված համապատասխան նախապատրաստական աշխատանքներ, իսկ անշարժ գույքի միասնական հարկման համակարգի ներդրման նպատակով, պարբերաբար իրականացված անշարժ գույքի համակարգված դիտարկումների և գնային վերլուծությունների տվյալների հիման վրա, անշարժ գույքի շուկայի ներկայիս իրավիճակին համահունչ մշակվել է «Անշարժ գույքի շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հասարակական կարգի պահպանություն

2017 թվականին ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում իրականացվել են ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ծրագրերով, այլ հայեցակարգային փաստաթղթերով, աշխատանքային պլաններով, ինչպես նաև դրանցից դուրս, սակայն ժամանակի պահանջ դարձած միջոցառումներ:

ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի շրջանակներում մշակվել է «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից: Օրենքով ամրագրվել է իրավախախտումների բացահայտման ընթացքում քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից ու կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու՝ ոստիկանության լիազորությունը, ինչպես նաև հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս, անձանց գույքը պահպանելիս, իրավախախտումները կանխելիս, խափանելիս, իրավախախտման դեպքը, իրավախախտում կատարած անձանց, իրավախախտման գործիքներն ու առարկաները հայտնաբերելիս ոստիկանության ծառայողներին իրավունք վերապահել օգտագործելու տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ, միաժամանակ սահմանվել են պարտադիր նախազգուշացման եղանակները, տեսանյութերը կամ լուսանկարները պահելու առավելագույն ժամկետները, ինչպես նաև նախատեսվել է տեսանյութերը կամ

լուսանկարները, իրավախախտումների քննությունից բացի, այլ նպատակներով օգտագործելու արգելք:

ՀՀ կառավարության կողմից 23.11.2017թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1495-Ն որոշումը, որով կանոնակարգվում են ոստիկանության կողմից հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և ընթացք տալու հետ կապված հարաբերությունները, իրավական հիմքեր են ստեղծվում 2020 թվականից հաղորդումներն էլեկտրոնային տարբերակով գրառելու համար, քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվում իրավախախտումների և պատահարների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու նաև էլեկտրոնային եղանակով, նախատեսվում են նաև քաղաքացիների իրավական իրազեկմանը նպաստող մեխանիզմներ:

Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնման նպատակով 2017 թվականին շահագործման է հանձնվել համայնքային ոստիկանության 3 հենակետ Երևան քաղաքի Աջափնյակ և Շենգավիթ համայնքներում և Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում: Տավուշի մարզում հաշվառման քննական ստորաբաժանման նոր վարչական շենքի և քննական ավտոդրոմի կառուցմանն ուղղված աշխատանքներն ընթացքի մեջ են գտնվել:

2017 թվականի ընթացքում օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հանրապետությունում վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, պահպանվել է կայուն հասարակական կարգն ու անվտանգությունը:

Հաշվետու տարում հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է 8.1%-ով կամ 1520 դեպքով (2016թ.՝ 18764, 2017թ.՝ 20284 դեպք), ինչը հիմնականում պայմանավորված է ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվի աճով, որը հանցագործությունների հայտնաբերման և հաշվառման աշխատանքների բարելավման արդյունք է: Միևնույն ժամանակ, 34-ով կամ 17.2%-ով նվազել է առանձնապես ծանր (2016թ.՝ 198, 2017թ.՝ 164) և 352-ով կամ 11.4%-ով՝ ծանր հանցագործությունների (2016թ.՝ 3081, 2017թ.՝ 2729) թիվը, ինչը հիմնականում պայմանավորված է սպանությունների, սպանության փորձերի և բնակարանային գողությունների թվի նվազմամբ:

Հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների նվազման պարագայում աճել է զենքի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման թիվը՝ 129-ով կամ 17.7%-ով:

Ոստիկանության մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում առգրավվել և բացատրական աշխատանքների շնորհիվ կամավոր հանձնվել է 673 միավոր հրազեն և 40 միավոր գազային ու օդամղիչ ատրճանակ, 89314 հատ տարբեր տրամաչափի փամփուշտ և տարբեր քանակության այլ զինամթերք ու սառը զենք:

Անդրադառնալով բացահայտման ուղղությամբ ոստիկանության մարմինների կողմից կատարված աշխատանքներին՝ պետք է նշել, որ հանցագործությունների բացահայտման արդյունավետությունն աճել է 5.3%-ով (76.8%-ից 82.1%), ծանր հանցագործությունների գծով՝ 5,8%-ով (54.2%-ից 60.0%):

Նկատելիորեն աճել է նախկին տարիներին կասեցված քրեական գործերով հանցագործությունների բացահայտման աշխատանքների արդյունավետությունը: Բացահայտված հանցագործությունների թիվն աճել է 119-ով՝ կազմելով 976: Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ 57-ով կամ 53.8%-ով աճել է հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու պատճառաբանությամբ կասեցված քրեական գործերով բացահայտված հանցագործությունների թիվը, որը կազմել է 163:

Հաշվետու տարում 175-ով կամ 18.2%-ով աճել է առավել լատենտային համարվող թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման թիվը (1138), իսկ բացահայտման արդյունավետությունն աճել է 0.4%-ով (81.0%-ից 81.4%): Դրան զուգընթաց, հայտնաբերվել են 85-ով կամ 16.1%-ով ավել թմրամիջոցների իրացման դեպքեր (612), իսկ դրանց բացահայտումն աճել է 0.6%-ով (65.7%-ից 66.3%):

Գրանցվել է մարդկանց թրաֆիքինգի 5 դեպք:

2017 թվականի ընթացքում հայտնաբերվել է կոռուպցիոն բնույթի 634 հանցագործության դեպք, ինչը 48.1%-ով ավել է նախորդ տարվա համեմատ (2016թ.՝ 428):

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում Ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները:

Մշակվել և ներդրվել է անձի հանրային ծառայության համարանիշի հիման վրա աշխատող՝ Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումների կամավոր (այլընտրանքային) ծանուցման բջջային հավելվածը (iOS և Android օպերացիոն համակարգերի համար), ինչպես նաև ստեղծվել է հնարավորություն www.police.am կայքում գրանցվելու և Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական տույժ նշանակելու որոշումների մասին ծանուցումները նաև բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով ստանալու համար:

Մշակվել և ներդրվել է տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված իրավախախտումների գործերով կայացված՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումներն էլեկտրոնային եղանակով փոստի տեղական բաժանմունքներ առաքելու մեխանիզմների համակարգ: Համակարգը հնարավորություն է տալիս ՀՀ-ում գործող բոլոր փոստային բաժանմունքներում, ներկայացնելով տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը, տեղեկանալ նշված տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտումների համար կայացված որոշումների մասին:

Նշված լուծումներով ստեղծվել է եռակի ծանուցման համակարգ:

Ընդլայնվել են «Թեժ գիծ» ծառայության հնարավորությունները, 1-77 հեռախոսահամարը գրառվել է Ճանապարհային ոստիկանության բոլոր պարեկային տրանսպորտային միջոցների վրա:

Պիլոտային կարգով ներդրվել է ճանապարհապարեկային 10 ավտոմեքենաներում էլեկտրոնային եղանակով վարչական իրավախախտման արձանագրություններ կազմելու համակարգ, որը թույլ է տալիս կրճատել արձանագրություն կազմելու ժամանակը, վարորդին տեղում տրամադրվում է արձանագրության օրինակը և տուգանքի վճարման կտրոնը, որի հիման վրա վարորդի ցանկությամբ տեղում իրականացվում է վճարում:

Ճանապարհային ոստիկանության Երևան քաղաքի տարածքը սպասարկող առաջին սպայական գումարտակի կազմում ստեղծվել է հատուկ ստորաբաժանում, որն իրականացնում է հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման գործառույթ:

Վարչաիրավական ոլորտ

Ընդունվել է Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչելու մասին համապատասխան օրենքը, որով վերացվել է տուգանքի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հիմքով նրա նկատմամբ 25 կամ 50 տոկոսի չափով ավելացումների ինստիտուտը:

Մշակվել է Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որով նախատեսվում է վերացնել նյութական վնասով ՃՏՊ-ների համար սահմանված վարչական պատասխանատվությունը:

Ընդունվել է ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Կարմիր, կապույտ, դեղին (նարնջագույն), լուսնասպիտակ առկայծող փարոսիկներով կահավորման ենթակա տրանսպորտային միջոցների ցանկը հաստատելու մասին» թիվ 2329-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով

բարձրացել է նշված տրանսպորտային միջոցների նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը:

Մշակվել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով նախատեսվում է մոպեդների պետական գրանցման ինստիտուտի ներդրում:

Օրենսդրական փոփոխությունները նպատակաուղղված են եղել վարչարարության պարզեցմանը, քաղաքացիների նկատմամբ կիրառվող ավելորդ վարչական տույժերի վերացմանը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ճանապարհային երթևեկության կանոնակարգման և կարգավորման ոլորտ

Ստեղծվել է Ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի կողմից Երևան քաղաքի խաչմերուկներում տեղադրված տեսանկարահանող սարքերով հսկողության հնարավորություն:

Ներդրվել է ՃՏՊ-ի մասնակից՝ վնասված տրանսպորտային միջոցները պատահարի վայրից տարհանելու միասնական համակարգ, տարհանման ծառայությունը գնելու եղանակով:

Երևան քաղաքում տեղադրված լրացուցիչ սեկցիա ունեցող լուսացույցների եզրերը նշվել են մշտապես վառված վիճակում գտնվող լույսերով:

Մայրաքաղաքի խաչմերուկներում վերանայվել է երթևեկության կազմակերպման կարգը, որպեսզի խաչմերուկ մուտք գործող երթևեկության գոտիների քանակը չգերազանցի դուրս եկող գոտիների քանակին:

Մայրաքաղաքի երթևեկությունը կազմակերպվել է այնպես, որ ձախ շրջադարձը և հետադարձը կատարվի միջանկյալ գոտուց՝ չխոչընդոտելով ուղիղ երթևեկող տրանսպորտային միջոցներին:

Մայրաքաղաքի շրջանաձև երթևեկությամբ բոլոր խաչմերուկներում երթևեկությունը կազմակերպվել է այնպես, որ նման խաչմերուկում գտնվող տրանսպորտային միջոցների վարորդներն ունենան երթևեկության առավելություն խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցների նկատմամբ:

Մայրաքաղաքի ցածր ինտենսիվությամբ երթևեկություն ունեցող խաչմերուկներում լուսացույցների փոխարեն բոլոր կողմերից տեղադրվել են «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» ճանապարհային նշաններ, ինչը հնարավորություն է տալիս հատող ճանապարհներով

այլ տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում առանց լուսացուցային կարգավորման հատել խաչմերուկը:

Երևան քաղաքի խաչմերուկների լրացուցիչ սեկցիա ունեցող թվով 25 լուսացույցներ փոխարինվել են Տ.2 տիպի՝ երթևեկության ուղղությունը ցույց տվող սլաքներով լուսացույցներով:

Երևան քաղաքի խաչմերուկներում միևնույն ուղղության 3 և ավելի գոտի ունեցող ճանապարհներին տեղադրված 147 լուսացույցներ տեղափոխվել կամ ուղղակի տեղադրվել են երթևեկելի մասի վերևում:

Մայրաքաղաքի ճանապարհների վրա առկա 10 չկարգավորվող հետիոտնային անցում ապամոնտաժվել է, իսկ 16 չկարգավորվող հետիոտնային անցման հատվածում երթևեկելի մասը բարձրացվել է 10 սմ-ով՝ կահավորվելով անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

Նշված փոփոխությունները հնարավորություն են տալիս վերահսկել վթարայնության վիճակը, էականորեն նվազեցնել, իսկ որոշ դեպքերում՝ բացառել նախկինում առաջացող խցանումներն ու կուտակումները, ինչպես նաև ապահովել հետիոտների անվտանգությունը:

Իրավաստեղծ աշխատանքների ոլորտ

Իրավաստեղծ աշխատանքների արդյունքում ոստիկանության գործունեությունը կարգավորող հիմնարար իրավական ակտերը համապատասխանեցվում են Սահմանադրական փոփոխություններին:

Ստեղծվել են պատշաճ իրավական հիմքեր Ոստիկանությունում ԴՆԹ նմուշների համապետական քրեագիտական հաշվառում իրականացնելու համար, որով, փաստորեն, մատնադրոշմային նույնականացման համակարգն աստիճանաբար իր տեղը կզիջի նոր՝ ժամանակակից համակարգին:

Թմրամիջոցների չափերը կսահմանվեն ոչ թե օրենքով, այլ ՀՀ կառավարության որոշմամբ, որի շնորհիվ ոստիկանությունն ավելի արագ կարձագանքի նոր տեսակի թմրամիջոցների հանցավոր շրջանառությանը: Թմրամիջոցների չափերը սահմանելիս, հաշվի առնելով միջազգային փորձը, հիմք կընդունվի չափահաս, առողջ մարդու օրգանիզմի վրա դրանց հոգեներգործության աստիճանը, ինչը լիովին բխում է իրավական որոշակիության սահմանադրական պահանջի ապահովման անհրաժեշտությունից:

Օրենսդրական և վարչարարական բարեփոխումների արդյունքում արդեն իսկ ապահովվել են ոստիկանության միասնական համակարգի արդիականացման և հետագա զարգացման կարևորագույն նախադրյալներ:

Պետական գնումների ոլորտ

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել և 2017 թվականի ապրիլի 25-ից ուժի մեջ է մտել «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը, որով պարզեցվել և հստակեցվել են գնման ընթացակարգերը և դրանց կազմակերպման պայմանները, ձևավորվել է անկախ և գործունակ բողոքարկման արտադատական համակարգ, բացառվել է ձևական պահանջների չպահպանման արդյունքում հայտերի մերժման հնարավորությունը, էականորեն բարձրացել է համակարգի թափանցիկության և հրապարակայնության աստիճանը, ներդրվել են հակակոռուպցիոն մեխանիզմներ, որոնք ուղղված են մասնակիցների՝ միմյանց փոխկապակցվածությունը և որոշումներ կայացնող անձանց հետ շահերի բախումը բացառելու, ինչպես նաև մասնակիցների իրական սեփականատերերին բացահայտելու համար:

Վերոհիշյալ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության թվով 6 որոշումներով ու ՀՀ ֆինանսների նախարարի թվով 25 հրամաններով հաստատվել են գնումների ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը, այդ թվում՝ գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

Ընդլայնվել է էլեկտրոնային գնումների համակարգը օգտագործող պատվիրատուների շրջանակը և էլեկտրոնային գնումների համակարգով իրականացվող գնումների ծավալը: Մասնավորապես՝ 2016 թվականին նշված համակարգն օգտագործում էին թվով 110, իսկ 2017 թվականին՝ թվով 301 պատվիրատու: Այդ պատվիրատուների թվին են դասվում բոլոր պետական կառավարման մարմինները, քաղաքային համայնքները, պետության կողմից ստեղծված առևտրային կազմակերպությունները, հիմնադրամները: Ընդ որում, համակարգի միջոցով են կազմակերպվում բոլոր մրցակցային և հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումները:

Միաժամանակ, Համաշխարհային Բանկի համաձայնությամբ, վերջինիս կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում, գնանշման հարցումները և բաց ազգային մրցույթի ընթացակարգերը ևս կազմակերպվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

2017 թվականին էլեկտրոնային գնումների համակարգում կատարված ծրագրային փոփոխությունների արդյունքում հնարավոր է դարձել էլեկտրոնային եղանակով իրականացնել պայմանագրերի արդյունքների հանձնման-ընդունման գործընթացները, հայտերը բացելուց հետո ինտերնետ միջավայրում ավտոմատ եղանակով հասանելի դարձնել մասնակիցների հայտերում ներառված բոլոր փաստաթղթերը, էլեկտրոնային աճուրդի համակարգի ներդրման նպատակով Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) փորձագետների հետ մշակվել է այդ համակարգի ծրագրային ապահովման ծառայությունների գնման տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված

կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր: Նշված պայմանագրի շրջանակում մշակվել է էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումը, որի ներդրումը սկսվել է 2018 թվականին:

2017 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է գնումների նոր՝ www.procurement.am ինտերնետային կայքը, որի կառուցվածքը շահագործման տեսանկյունից պարզեցվել և կանոնակարգվել է: Նշված կայքն ինտեգրվել է նաև էլեկտրոնային գնումների Armeps համակարգին, որը պատվիրատուներին հնարավորություն է տալիս մեկ գործողության միջոցով ապահովել գնման հայտարարությունների ու հրավերների, դրանցում կատարված փոփոխությունների ու այդ հրավերների վերաբերյալ տրամադրված պարզաբանումների հրապարակումը՝ գնումների գործընթացը դարձնելով ավելի թափանցիկ և հասարակության համար ավելի վերահսկելի:

Պետական ներքին ֆինանսական հսկողություն

2017 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) և Նիդեռլանդների Թագավորության ֆինանսների նախարարության «Պետական ֆինանսների կառավարում» ակադեմիայի աջակցության շրջանակներում մեկնարկել են ՀՀ հանրային հատվածի ներքին հսկողության համակարգի բացերի վերլուծության աշխատանքները՝ ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտին առնչվող փաստաթղթերի նախագծերը վերանայելու նպատակով: Այս աշխատանքների շրջանակում նախատեսված է, որ ներգրավված փորձագետները պետք է իրականացնեն նաև ֆինանսական կառավարման և հսկողության համակարգը կարգավորող հիմնական իրավական ակտերի նախագծերի («Ֆինանսական կառավարման և հսկողության մասին» օրենքի, ՖԿՀ ձեռնարկի, ռիսկերի կառավարման ուղեցույցի և այլն) վերանայման աշխատանքները՝ հաշվի առնելով նաև ներկայումս ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրմամբ պայմանավորված համակարգում փոփոխությունների առաձնահատկությունները: Աշխատանքները նախատեսվում է ավարտվել 2018 թվականի ընթացքում, որից հետո կսկսվեն ՀՀ հանրային հատվածի առնվազն երկու կազմակերպություններում դրանց պիլոտավորման և վերջնականացման աշխատանքները:

2017 թվականի ընթացքում ներքին աուդիտի կարգավորման և համակարգման ոլորտում մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 2018 թվականին:

Ամփոփվել, կազմվել և հրապարակվել է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2016 թվականի հաշվետվությունը:

Ներքին աուդիտի միջազգային լավագույն փորձին համապատասխան համակարգահեն աուդիտ իրականացնելու և ներքին աուդիտի ստանդարտները գործնականում կիրառելու նպատակով ԳՄՀԸ կազմակերպության աջակցությամբ մշակվել և փորձարկվել է համակարգահեն աուդիտի ձեռնարկը:

Ապահովվել է ներքին աուդիտորների որակավորման համակարգի աշխատանքը, ինչպես նաև կազմակերպվել է որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման գործընթացը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ

2017 թվականի տարեկան տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության՝ տարեսկզբին արձանագրած զարգացման դրական միտումները տարեվերջին արագանալով՝ հանգեցրեցին մակրոտնտեսական իրավիճակի զգալի բարելավման: Արդյունքում գրանցվեց հետճգնաժամային շրջանում աննախադեպ բարձր տնտեսական աճ՝ պայմանավորված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների բարենպաստ զարգացումներով: Այդ գործոններն էին՝ գործընկեր երկրների տնտեսական աճի տեմպերի արագացումը, մետաղների միջազգային գների աճը, ներհոսող դրամական փոխանցումների ավելացումը, վարկավորման ծավալների աճը, բնակչության և տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումները, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունը, մասնավորապես՝ ներդրումների ներգրավման և արտահանման ուղղությամբ:

Արտաքին պահանջարկի աճով և մրցունակության բարձրացմամբ պայմանավորված՝ նախորդ տարվա արտահանման երկնիշ աճի միտումը շարունակվել է նաև 2017 թվականին, իսկ տնտեսություն ներհոսող դրամական փոխանցումների ծավալները նախորդ երեք տարիների նվազումից հետո 2017 թվականին աճել են: Ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 3.5%-ը՝ աստիճանաբար մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:

Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ը պահպանել է դրամավարկային քաղաքականության խթանող ուղղությունը, արդյունքում՝ ներքին պահանջարկի և միջազգային շուկաներում ապրանքների գների վերականգնմանը զուգահեռ գնանկումային միջավայրը փոխվել է գնաճայինի, և միջին գնաճը կազմել է 1%: Ավանդների և վարկերի տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել, իսկ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2017 թվականին շարունակել են աճել բարձր տեմպերով:

Տնտեսության վերականգնման բարձր տեմպերի պայմաններում հարկաբյուջետային և պետական պարտքի կայունության պահպանման նպատակով նպատակադրվել և իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն: Արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների 5.7% անվանական աճ, ծախսերի՝ 3.8% աճ: Արդյունքում պետական բուջեի պակասուրդը նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 4.8%-ը, իսկ տնտեսական զարգացումներին հարկաբյուջետային քաղաքականության արձագանքն արտացոլող պակասուրդը՝ ՀՆԱ-ի 3.2%-ը[1]:

[1] Վերջինս չի ներառում «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի գումարը, որը կազմել է ՀՆԱ-ի 1.6%-ը:

Համախառն առաջարկ

2017 թվականին տնտեսության զարգացումն ընթացել է նախորդ տարվա համեմատ ավելի արագ տեմպերով՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և արդյունաբերության բարձր աճով: Գրանցվել է ՀՆԱ-ի 7.5% աճ, ինչը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 7.3 տոկոսային կետով: Ընդ որում՝ ՀՆԱ-ի աճին դրական են նպաստել ծառայությունների (5.1 տոկոսային կետ), արդյունաբերության (1.8 տոկոսային կետ) և շինարարության (0.2 տոկոսային կետ) ճյուղերը, իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է բացասական ազդեցություն (0.6 տոկոսային կետ):

Գծապատկեր 1. 2016-2017 թվականներին տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ





2017 թվականին արդյունաբերությունն[2] աճել է՝ պայմանավորված հիմնականում մշակող և հանքագործական արդյունաբերությամբ: Արդյունաբերության մյուս ենթաճյուղերը նույնպես դրսևորել են աճի միտումներ: Արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալի 12.6% աճ: Ընդ որում՝ մշակող արդյունաբերությունն աճել է 15.7%-ով, իսկ հանքագործական արդյունաբերությունը՝ 13.9%ով:

Մշակող արդյունաբերության աճը պայմանավորված է եղել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճով: Մշակող արդյունաբերության 15.7% աճը պայմանավորված է եղել հիմնականում խմիչքների (34%), ծխախոտային արտադրատեսակների (18.7%) և ոսկերչական արտադրատեսակների (35.7%) թողարկման ծավալների աճով: Խմիչքների, ծխախոտային և ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճը պայմանավորված է եղել հիմնականում

[2] Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

արտադրատեսակների արտահանման ծավալների աճով: Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (30.7%), հիմնային մետաղների արտադրութան (7.2%) և էլեկտրական սարքավորանքի արտադրության (130%) աճը նույնպես դրական է նպաստել մշակող արդյունաբերությանը: Ընդ որում՝ հիմնային մետաղների արտադրության աճը պայմանավորված է եղել արտաքին պահանջարկի աճով:

Էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ճյուղերն աճի ցուցանիշներ են արձանագրել: Էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ճյուղերում արձանագրվել է համապատասխանաբար 1.2% և 8.1% աճ:

Հատկանշական է, որ էլեկտրաէներգիայի աճն ապահովվել է էլեկտրաէներգիայի արտադրության և հաղորդման համապատասխանաբար 11.0% և 6.5% աճով: Էլեկտրաէներգիայի և ջերմաէներգիայի արտադրության աճը պայմանավորված է եղել հիմնականում ՋԷԿ-երի կողմից և ՀԱԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի համապատասխանաբար 11.2% և 10% աճով: Էլեկտրաէներգիայի աճին հիմնականում նպաստել է էլեկտարէներգիայի արտահանման աճը: Միևնույն ժամանակ, ՀԷԿ-երի արտադրության ծավալները նվազել են 3.5%-ով:

Գյուղատնտեսությունը նվազել է՝ պայմանավորված բուսաբուծության նվազմամբ: 2017 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքն իրական արտահայտությամբ նվազել է 2.9%-ով, ընդ որում՝ բուսաբուծության անկումը կազմել է 7.2%: Բուսաբուծության նվազման վրա ամենամեծ ազդեցությունն է ունեցել հացահատիկի, բանջարեղենի, կարտոֆիլի և բոստանի՝ համապատասխանաբար 49.9%, 11.1%, 9.7% և 8.6% նվազումը:

Միևնույն ժամանակ, անասնաբուծությունը և ձկնորսությունը դրական են նպաստել գյուղատնտեսությանը՝ աճելով համապատասխանաբար 2.2%-ով և 0.8%-ով: Անասնաբուծության ճյուղի աճը պայմանավորված է եղել հիմնականում մսի արտադրության 2.9% (ինչն ուղեկցվել է նաև մսամթերքի արտադրության արտահանման աճով) և կաթի արտադրության 0.5% աճով: Ձվի արտադրությունը նվազել է 1.7%-ով:

Տնտեսությունում իրականացված շինարարության ծավալները սկսել են վերականգնվել՝ դրսևորելով աճի միտում: 2017 թվականի տարեսկզբին շինարարությունը շարունակել է նվազել, սակայն երրորդ եռամսյակից սկսած նվազման տեմպերը դանդաղել են, և տարեկան տվյալներով նախորդ տարվա նկատմամբ շինարարությունն իրական արտահայտությամբ աճել է 2.2%-ով: Շինարարության ծավալների աճը հիմնականում պայմանավորված է եղել միջազգային վարկային միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (20.5%): Շինարարության ծավալների աճին հիմնականում հակազդել է կազմակերպությունների (1.8%) և համայնքների միջոցներով (26.1%) իրականացված շինարարության ծավալների նվազումը:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարության ծավալների աճը հիմնականում պայմանավորված է եղել հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման (140%), կացության և հանրային սննդի կազմակերպման (180%) և կրթության (57.8%) ոլորտներում իրականացված շինարարության ծավալների աճով: Շինարարության աճին հիմնականում հակազդել է մշակույթի, զվարճությունների և հանգստի (40.1%), ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման (62%), պետական կառավարման, պաշտպանության և պարտադիր սոցիալական ապահովության (64.3%), առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման (52.6%) ոլորտներում իրականացված շինարարության ծավալների նվազումը:

Ծառայությունների և առևտրի ճյուղերում արձանագրվել է երկնիշ աճ: 2017 թվականին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 14.4%-ով, ինչին հիմնականում նպաստել է մշակույթի, զվարճությունների և հանգստի (22.3%), ֆինանսական և ապահովագրական (20.6%), տրանսպորտի (14.7%) (հատկապես՝ ցամաքային տրանսպորտի (11.1%)), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման (19.4%) ոլորտների աճը:

2017 թվականին առևտրի շրջանառությունը նախորդ տարվա համեմատ աճել է 14%-ով: Առևտրի աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ և մանրածախ առևտրի աճով (համապատասխանաբար՝ 25.8% և 5.5%): Ավտոմեքենաների առևտրի աճը (15.0%) ևս նպաստել է առևտրի շրջանառության աճին:

Առևտրի և ծառայությունների աճի հիմնական գործոնն է եղել բնակչության տնօրինվող եկամուտների և վարկավորման ծավալների աճը:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը՝ կտրուկ աճել, իսկ ուղևորափոխադրումների ծավալը նվազել է:

2016 թվականի համեմատ արձանագրվել է բեռնափոխադրումների ծավալի 36.9% աճ, ինչը պայմանավորված է եղել ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների 45.2% աճով, որն իր հերթին՝ ներհանրապետական բեռնափոխադրումների 46.8% աճով: Մայրուղային խողովակաշարային և երկաթուղային բեռնափոխադրումների ծավալների (համապատասխանաբար՝ 11.3% և 1.1%) աճը նույնպես նպաստել է բեռնափոխադրումների աճին:

Ուղևորափոխադրումների ծավալը նվազել է 2.8%-ով՝ պայմանավորված հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով իրականացված ուղևորափոխադրումների 3.8% նվազմամբ: Օդային, երկաթուղային, ինչպես նաև էլեկտրական տրանսպորտով ուղևորափոխադրումներն աճել են՝ համապատասխանաբար 20.6%-ով, 4.2%-ով և 3.1%-ով:

Կապի ծառայությունները նվազման միտում են դրսևորել: 2017 թվականին կապի ծառայություններից ստացված հասույթի 4.1% նվազումը հիմնականում պայմանավորված է եղել հեռահաղորդակցման ծառայությունների 4.9%-ով կրճատմամբ, ինչի պատճառ է հանդիսացել բջջային հեռահաղորդակցման ծառայությունների նվազումը (23.7%): Նույն ժամանակահատվածում հեռահաղորդակցության նվազմանն էականորեն հակազդել է ինտերնետ հասանելիության զգալի աճը (40.0%):

Համախառն պահանջարկ

2017 թվականի տնտեսական աճի շարժիչ ուժերն են եղել ներքին պահանջարկի և արտահանման աճերը:

Վերջնական սպառումն աճել է՝ պայմանավորված հիմնականում մասնավոր սպառման աճով: Սպառումը նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 8%-ով՝ նպաստելով տնտեսական աճին 7.3 տոկոսային կետով: Բնակչության տնօրինվող եկամտի և վարկավորման ծավալների աճի պայմաններում մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ աճել է 7.6%-ով: Նույն ժամանակահատվածում պետական սպառման աճը կազմել է 9.2%:

Կապիտալ ներդրումների աճը պայմանավորված է եղել մասնավոր ներդրումների բարձր աճի տեմպով: 2017 թվականին կապիտալ ներդրումները նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել են 13.5%-ով՝ նպաստելով տնտեսական աճին 2.5 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է եղել մասնավոր ներդրումների 19.1% աճով: 2017 թվականին իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն, ինչի արդյունքում 2017 թվականին պետական ներդրումներն իրական արտահայտությամբ նվազել են 14.9%-ով:

Ներդրումների աճի վրա դրական է ազդել հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործման, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ճյուղերում կատարված ներդրումների բարձր աճը, իսկ բացասական ազդեցություն է ունեցել ծառայությունների ճյուղում կատարված ներդրումների նվազումը[3]:

Զուտ արտահանումը վատթարացել է՝ հիմնականում պայմանավորված արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճով: 2017 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 19.7%-ով (նպաստումը տնտեսական աճին՝ 6.5 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված արտաքին պահանջարկի բարելավմամբ և միջազգային շուկայում մետաղների գների աճով:

[3] Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների կապիտալ շինարարությանն ուղղվող մասին: Ավելի մանրամասն տե՛ս Շինարարություն հատվածում:

Ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ աճել է 26.8%-ով (նպաստումը տնտեսական աճին՝ 11.4 տոկոսային կետ), ինչը պայմանավորված է եղել ներքին պահանջարկի աճով և տնտեսական բարձր ակտիվությամբ:

Աշխատանքի շուկա

Իրական և անվանական աշխատավարձերն աճել են: 2017 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2016 թվականի նկատմամբ աճել է 3.3%-ով՝ կազմելով 195,074 դրամ[4]: Ցուցանիշը պետական և ոչ պետական հատվածներում աճել է համապատասխանաբար 0.8%-ով և 4.1%-ով՝ կազմելով 164,368 դրամ և 231,777 դրամ: Իրական աշխատավարձը 2016 թվականի համեմատ աճել է 2.3%-ով, իսկ աշխատուժի արտադրողականությունն իրական արտահայտությամբ՝ 6.9%-ով:

Գործազրկության մակարդակը 2017 թվականին նվազման միտում է ցուցաբերել՝ նվազելով 0.2 տոկոսային կետով, և կազմել է 17.8%: Գործազրկության մակարդակի նվազումն ուղեկցվել է զբաղվածների թվի 0.6% ավելացմամբ:

Գներ և սակագներ

2017 թվականին գնաճը վերականգնվեց՝ մոտենալով թիրախային միջակայքի ստորին սահմանին՝ կազմելով 2.6%: Գնաճի վերականգնմանը հիմնականում նպաստեցին ներքին պահանջարկի արագ վերականգնումը, միջազգային ապրանքային շուկաներում որոշ ապրանքների գծով ձևավորված գների բարձր մակարդակը, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի կողմից 2016 և 2017 թվականներին իրականացված ընդլայնող դրամավարկային քաղաքականությունը:

2017 թվականի առաջին եռամսյակում դեռևս պահպանվում էր 2016 թվականից փոխանցված գնանկումային միջավայրը, սակայն ապրիլից, ներքին պահանջարկի վերականգնմանը զուգահեռ, այն արդեն վերափոխվեց գնաճայինի:

[4] Ցուցանիշը նախնական է: Ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները:

Գծապատկեր 2. 2016-2017 թվականներին 12-ամսյա գնաճի նպաստումները 3 խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ





ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 2.6% 12-ամսյա գնաճին առավելապես նպաստել է պարենային ապրանքների գների աճը: 12-ամսյա գնաճը պայմանավորվել է պարենային (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտ) ապրանքախմբում արձանագրված 5.3% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 2.4 տոկոսային կետ) և ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրված 1.7% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.4 տոկոսային կետ), իսկ բնակչությանը մատուցված ծառայությունների գծով արձանագրվել է սակագների 0.5% նվազում (բացասական նպաստումը գնաճին՝ 0.2 տոկոսային կետ):

Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ը պահպանել է դրամավարկային քաղաքականության խթանող ուղղությունը՝ 2017 թվականի փետրվարին իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով և սահմանելով 6%:

Արտաքին հատված

2017 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ խորացել է՝ ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 3.5% և աստիճանաբար մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին: Ընթացիկ հաշվի խորացումը հիմնականում պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների ներմուծման առաջանցիկ աճով, որին զուգընթաց արձանագրվել է ապրանքների

և ծառայությունների արտահանման, ինչպես նաև սկզբնական և երկրորդային եկամուտների նշանակալի աճ:

Ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ-ի 13.4%-ը՝ նախորդ տարվա համեմատ վատթարանալով 3.8 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է եղել արտահանման համեմատ ներմուծման առաջանցիկ աճով (համապատասխանաբար՝ 22.1% և 28.8%): Վերջին երեք տարիների նվազումից հետո տնտեսություն ներհոսող դրամական փոխանցումների ծավալները 2017 թվականին աճել են 15.2%-ով՝ մեղմելով առևտրային հաշվեկշռի բացասական ազդեցությունը: Նշված զարգացումների արդյունքում 2017 թվականին նախորդ տարվա համեմատ ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է ՀՆԱ-ի 1.2 տոկոսային կետի չափով:

Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի և դրա բաղադրատարրերի դինամիկան, % ՀՆԱ-ի նկատմամբ



Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2017 թվականին բարելավվել է 3.9 տոկոսային կետով՝ կազմելով 37%: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման մասնաբաժինն ավելացել է 7.6 տոկոսային կետով և կազմել է ՀՆԱ-ի 50.3%-ը: Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը տարվա արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 9.9%-ը՝ նախորդ տարվա 9.4%-ի դիմաց:

Դոլարային արտահայտությամբ ներմուծման և արտահանման զգալի աճով պայմանավորված՝ 2017 թվականին ավելացել են արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրային հաշվեկշռի

բացասական մնացորդը[5]: Ապրանքների արտաքին առևտրի բացասական մնացորդը (1939.8 մլն ԱՄՆ դոլար) նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 30.9%-ով՝ պայմանավորված ներմուծման աճով:

Գծապատկեր 4. Առևտրային հաշվեկշռի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին ապրանքաշրջանառությունը (6425.5 մլն ԱՄՆ դոլար) նախորդ տարվա համեմատ աճել է 26.9%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների զգալի աճ. արտահանումն աճել է 25.2%-ով՝ կազմելով 2242.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 27.8%-ով՝ կազմելով 4182.7 մլն ԱՄՆ դոլար:

Հիմնականում ներքին պահանջարկի և տնտեսական ակտիվության բարձր աճի ազդեցությամբ պայմանավորված՝ արձանագրվել է ներմուծման ծավալների բարձր աճ: Ներմուծման 27.8% աճի 5.2 տոկոսային կետը պայմանավորվել է ներդրումային բնույթի՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբով: Ներմուծման աճին զգալի են նպաստել նաև «Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.8, 2.6, 2.4, 2.3 և 2 տոկոսային կետերով):

2017 թվականի արտահանման երկնիշ աճը պայմանավորվել է արտաքին պահանջարկի աճով (հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացման դրական միտումներով) և

[5]Այսուհետ ներկայացված է արտաքին առևտրի վիճակագրությունն ըստ բեռնամաքսային հայտարարագրերի (ներմուծում՝ ՍԻՖ գներով):

մրցունակության բարձրացմամբ (իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկման միտում): Արտահանման աճին 12.3 և 3.1 տոկոսային կետով դրական են նպաստել «Հանքահումքային արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերը, ինչը հիմնականում պայմանավորվել է միջազգային շուկաներում մետաղների գների աճով: Արտահանման աճին դրական նպաստում է ունեցել նաև «Պատրաստի սննդի արտադրանք» (6.4 տոկոսային կետ) ապրանքախումբը: Զգալի է եղել նաև «Մանածագործական իրեր» ապրանքախմբի դրական նպաստումը (1.9 տոկոսային կետ), որը վերջին տարիներին դրսևորում է արտահանվող ծավալների կայուն աճի միտում և, ըստ գնահատականների, արտաքին շուկաներում ունի բացահայտված հարաբերական առավելություն:

Արտահանման աճը զսպել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»[6] (2.7 տոկոսային կետ) և «Բուսական ծագման արտադրանք» (1.1 տոկոսային կետ) ապրանքախմբերը:

Ներմուծման ծածկման գործակիցը վերջին երեք տարիներին գտնվում է պատմական բարձր մակարդակում, այնուհանդերձ, պայմանավորված ներմուծման առաջանցիկ աճով, 2017 թվականին նախորդ տարվա նկատմամբ գործակիցը նվազել է 4.1 տոկոսային կետով, որի արդյունքում ապրանքների և ծառայությունների ներմուծման 73.5%-ն է ֆինանսավորվել համապատասխան արտահանման հաշվին:

Գծապատկեր 5. Ներմուծման ծածկման գործակիցը, տոկոսներով



[6] Հիմնականում պայմանավորվել է խմբում ներառված՝ «Այլ արտադրատեսակներ թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք մետաղներով երեսապատված մետաղներից» ապրանքատեսակի նախորդ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում մեծ ծավալներով արտահանման մեկանգամյա բազային ազդեցությամբ:

2017 թվականին ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը նախորդ տարվա համամեմատ գրեթե չի փոփոխվել: 2017 թվականի արտաքին առևտրաշրջանառության 30%-ը բաժին է ընկել ԱՊՀ (որից 27.5%-ը՝ ԵԱՏՄ), 24.3%-ը՝ ԵՄ և 45.7%-ը՝ այլ երկրներին: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 26.9% աճին ամենամեծ դրական նպաստումն են ունեցել այլ երկրները՝ 12.2 տոկոսային կետով (հիմնականում այդ երկրներից ներմուծման հաշվին):

2017 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկերների շրջանակում ընդգրկված էին. ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (առևտրաշրջանառության 26.7%, նախորդ տարվա 26.8%-ի դիմաց) և Ուկրաինան (համապատասխանաբար՝ 2% և 2.2%): Իսկ ԵՄ և այլ երկրներից. Չինաստանը (առևտրաշրջանառության 9.4%, նախորդ տարվա 9%-ի դիմաց), Շվեյցարիան (5.7% և 2.4%), Գերմանիան (5.3% և 6.4%), Բուլղարիան (5.1% և 3.7%), Իրանը (4.1% և 4.7%), Վրաստանը (3.9% և 4.8%), Թուրքիան (3.6% և 3.2%), ԱՄՆ-ն (3.2% և 2.4%), ԱՄԷ (3.2% և 2.4%), Իտալիան (3.1% և 3.2%):

Երկկողմանի փոխարժեքներ: ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ հարաբերական կայուն միտում է դրսևորել: 2017 թվականին միջին փոխարժեքը կազմել է 482.7 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա (480.5) նկատմամբ արժեզրկվելով 0.5%-ով:

Տարեսկզբից նկատվող Եվրոյի դիմաց ՀՀ դրամի արժևորման միտումը 2017 թվականի իններորդ ամսից սկսած փոխարինվեց արժեզրկմամբ. նախորդ տարվա համեմատությամբ միջին արժեքով ՀՀ դրամը Եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 2.5%-ով:

2017 թվականին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ նախորդ տարվա համեմատությամբ արժեզրկվել է 15.2%-ով, ընդ որում՝ տարեսկզբից տեղի է ունեցել ՌԴ ռուբլու դիմաց ՀՀ դրամի արժեզրկման տեմպի աստիճանական դանդաղման միտում (2016 թվականին ՀՀ դրամը ռուբլու նկատմամբ արժևորվել էր 8.9%-ով):

Դրամավարկային հատված և ֆինանսական շուկա

2017 թվականին փողի բազան նվազել է՝ պայմանավորված ՀՀ ԿԲ զուտ արտաքին ակտիվների նվազմամբ: 2017 թվականի տարեվերջին փողի բազան կազմել է շուրջ 1032 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատ նվազելով 1%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 1.6%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները գրեթե չեն փոփոխվել (աճել են 0.05%-ով):

Փողի բազայի նվազմանը հիմնականում նպաստել է ՀՀ ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշիվների նվազումը: Այսպես, փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 13.3%-ով (նպաստումը փողի բազայի աճին կազմել է 5.8 տոկոսային կետ), իսկ պարտադիր պահուստները դրամով և

արտարժույթով նվազել են համապատասխանաբար 1.1%-ով և 30.9%-ով (նպաստումը փողի բազայի փոփոխությանը կազմել է համապատասխանաբար -0.3 և 7.6 տոկոսային կետ):

Փողի զանգվածի աճն արագացման միտում է ցուցաբերել: 2017 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 2582.8 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 18.5%-ով, նախորդ տարվա 17.5%-ի համեմատ: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվների աճը կազմել է 77.3%, իսկ զուտ ներքին ակտիվներինը՝ 11%:

Փողի զանգվածի աճը պայմանավորվել է հիմնականում դրամային ավանդների աճով: Փողի զանգվածի աճին բանկային համակարգից դուրս կանխիկը նպաստել է 2.5 տոկոսային կետով, իսկ դրամային և արտարժույթով ավանդները՝ համապատասխանաբար 11.7 և 4.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. 2017 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճին նպաստումները, տոկոսային կետ



2017 թվականի ընթացքում դոլարայնացման մակարդակը նվազել է: Ռեզիդենտների արտարժութային ավանդներ/փողի զանգված հարաբերակցությունը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ նվազել է 3.4 տոկոսային կետով՝ կազմելով 45.8%: Վարկավորման ընդհանուր կառուցվածքում ռեզիդնետներին տրամադրված արտարժույթով վարկերի կշիռը 2016 թվականի համեմատ նվազել է 3.5 տոկոսային կետով՝ կազմելով 61.2%:

2017 թվականին ռեզիդենտների ավանդների և վարկերի ծավալների աճն արագացել է նախորդ տարվա համեմատ: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից ներգրավված

ավանդները 2017 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 19.5%-ով, որին 13.3 տոկոսային կետով նպաստել է դրամային ավանդների աճը, 6.2 տոկոսային կետով՝ արտարժութային ավանդներինը:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2017 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 17.1%[7]-ով՝ 2016 թվականի 5.6% դիմաց: Վարկերի աճին 10.2 տոկոսային կետով նպաստել են դրամային վարկերի և շուրջ 7 տոկոսային կետով՝ արտարժութային վարկերի աճերը: Վարկերի աճին հիմնականում դրական է նպաստել առևտրի, սպառողական վարկերի, արդյունաբերության, շինարարության, հիպոթեքային, սպասարկման ոլորտի վարկերի աճը, իսկ տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության ոլորտներին տրամադրված վարկերը նվազել են՝ բացասաբար ազդելով վարկերի աճի վրա:

Գծապատկեր 7. 2016-2017 թվականներին ռեզիդենտների վարկերի և ավանդների ծավալների աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %)





Ֆինանսական շուկայում արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույքների սպրեդը 2017 թվականին աճել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 4.6 տոկոսային կետ: Ընդ որում, դրամով վարկերի և ավանդների տոկոսադրուքների սպրեդը նվազել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 5.4, իսկ արտարժույթով սպրեդն աճել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 4.1 տոկոսային կետ:

[7] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Ավանդների և վարկերի տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել: 2017 թվականին ՀՀ դրամային ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 9%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.6 տոկոսային կետով: ՀՀ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 14.4%՝ նվազելով 3 տոկոսային կետով:

Արտարժույթով ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը 2017 թվականին կազմել է 3.9%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.4 տոկոսային կետով: Արտարժույթով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 8%՝ նվազելով 1 տոկոսային կետով:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է ՊՊ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերության նվազում: Նվազումը պայմանավորված է եղել ՀՀ ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազմամբ, բանկային համակարգում առկա իրացվելիությամբ, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական շուկայի տոկոսադրույքների նվազման միտումներով: 2017 թվականի ընթացքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է միջին կշռված եկամտաբերության նվազում (շուրջ 1.2 տոկոսային կետով): Այսպես, եթե 2016 թվականին տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 11.1%, ապա 2017 թվականին այն կազմել է 9.9%: 2017 թվականին տեղաբաշխված պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 180.3 մլրդ դրամ՝ 2016 թվականի 317.3 մլրդ դրամի դիմաց, իսկ միջին ժամկետայնությունը՝ 3478 օր, 2016 թվականի 2077-ի համեմատ:

2017 թվականին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 2.23 անգամ (2016թ.՝ 2.38), իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.97 (2016թ.՝ 0.98):

ՀՀ եվրոպարտատոմսերի երկրորդային շուկայում ևս նկատվել է միջին կշռված եկամտաբերության նվազում: Միջազգային կապիտալի շուկայում 2013 թվականին 6.25% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2017 թվականի տարեվերջին կազմել է 3.57%, 2016 թվականի տարեվերջին արձանագրված 4.85%-ի դիմաց: Իսկ 2015 թվականին 7.5% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2017 թվականի տարեվերջին կազմել է 4.79%, 2016 թվականի տարեվերջին արձանագրված 6.26%-ի դիմաց:

Հարկաբյուջետային հատված

2017 թվականին տնտեսության վերականգնման բարձր տեմպերի պայմաններում հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով նպատակադրվել և իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն: 2017 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.2%-ը՝ նախորդ տարվա 23.1%-ի դիմաց, իսկ հարկեր և տուրքերը՝ ՀՆԱ-ի 20.8%-ը, նախորդ տարվա 21.3%-ի դիմաց: Ճշգրտված հարկերը (առանց ԱԱՀ վերադարձի հարկեր) կազմել են 20.5%՝ նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.2 տոկոսային կետով: 2017 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 5.7%, հարկային եկամուտների և տուրքերի անվանական աճը՝ 7.3%, իսկ ճշգրտված հարկերի աճը՝ 10.7%: Հատկանշական է, որ հարկերի և տուրքերի ցուցանիշը գերազանցել է «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ծրագրավորված ցուցանիշը (14 մլրդ դրամով[8]):

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է, իսկ կապիտալ ծախսերի կշիռը՝ բարելավվել: 2017 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 27%-ը՝ նախորդ տարվա 28.5%-ի դիմաց, որից կապիտալ ծախսերը նշված ժամանակահատվածում կազմել են ՀՆԱ-ի 4.3%-ը՝ նախորդ տարվա 3.4%-ի դիմաց (ընդ որում՝ ցուցանիշները ներառում են «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի հաշվարկային գումարները, որոնք կազմել են 2016 թվականին ՀՆԱ-ի 0.5%-ը, իսկ 2017 թվականին՝ ՀՆԱ-ի 1.6%-ը):

Արդյունքում, զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում, պետական բյուջեի պակասուրդը նվազել է: 2017 թվականին պետական բուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 4.8%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.7 տոկոսային կետով, իսկ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն արտացոլող պակասուրդը (առանց «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի) ավելի մեծ չափով է նվազել՝ նախորդ տարվա 5%-ի նկատմամբ կազմելով ՀՆԱ-ի 3.2%-ը:

Պակասուրդի ֆինանսավորման 73.6%-ը կատարվել է արտաքին աղբյուրների միջոցների ներգրավմամբ, որով պայմանավորված՝ 2017 թվականին ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 42.5%՝ նախորդ տարվա 41%-ի համեմատ աճելով 1.5 տոկոսային

[8] Պետական բյուջեով սահմանված հարկերի ու տուրքերի և փաստացի հարկերի ու տուրքերի տարբերությունը (ընդ որում փաստացի ցուցանիշում ներառված չեն արտաբյուջետային միջոցները և պետական մարմինների հարկային պարտավորությունների կատարման համար պետական բյուջեից առանց սահմանափակման տրամադրվող միջոցները):

կետով: Արդյունքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 53.6%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 1.8 տոկոսային կետով:

Հարկաբյուջետային ազդակը: Հարկաբյուջետային քաղաքականությունը 2017 թվականին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է 2.2 զսպող ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների (-0.1), և՛ ծախսերի (-2.0) զսպող ազդեցություններով (ընդ որում՝ հարկաբյուջետային ազդակի հաշվարկներում ներառված չեն «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի գումարները):

Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը 2010 թվականից տարեկան կտրվածքով



ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով, ելնելով 3.2% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ 1210.0 մլրդ դրամ եկամուտներ (որից 1179.1 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից, 30.9 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով), որի նկատմամբ համադրելի փաստացի ցուցանիշը կազմել է 1195.4 մլրդ դրամ կամ 98.8%: Օրենսդրության պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը (35 մլրդ դրամ), դրոշմանիշային վճարների գումարները (6 մլրդ դրամ), ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները (0.7 մլրդ դրամ): Բացի այդ, 2017 թվականը, մասնավորապես տարվա սկիզբը, առանձնացել է նրանով, որ տնտեսության զարգացման, պետական բյուջեի եկամուտների հավաքագրման դինամիկան դրական ազդակներ ու սպասումներ են առաջացրել պետական բյուջեի ցուցանիշների՝ ծրագրավորվածից ավելի բարենպաստ միջավայրում ձևավորվելու հնարավորության տեսանկյունից: Այս պայմաններում, կառավարությունը ճշգրտել է հարկաբյուջետային քաղաքականությունը և ի լրումն օրենքի պահանջով եկամուտների ցուցանիշների վերոնշյալ փոփոխության, նաև իր լիազորությունների շրջանակում էականորեն վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը (69 մլրդ դրամ), ինչպես նաև երկարաժամկետ տնտեսական աճի խթանման նպատակադրմամբ՝ պետական պարտքի կայունությունը չխաթարող առավելագույն չափով, ենթակառուցվածքային ծրագրերի համար հիմնականում կապիտալ ծախսեր է նախատեսել, որին մանրամասն անդրադարձ կարվի հաշվետվության ծախսերի բաժնում: Արդյունքում, ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում զգալիորեն՝ 110.8 մլրդ դրամով (9.2%-ով) ավելացվել է ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրը՝ կազմելով շուրջ 1320.9 մլրդ դրամ: Նշված գումարից 1285.7 մլրդ դրամը կազմել է ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 35.1 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների ծրագիրը: 2017 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1237.8 մլրդ դրամ, որոնցից հարաբերականորեն համադրելի պատկեր ստանալու նպատակով արտաբյուջետային միջոցները, դրոշմանիշային վճարները և առանց սահմանափակման ծախսերի հաշվին ձևակերպվող եկամուտները հաշվի առնելու դեպքում կստացվի, որ օրենքով ծրագրված եկամուտների ցուցանիշն ապահովվել է 1195.4 մլրդ դրամով կամ արձանագրվել է 98.8% կատարողական: Հարկ է նկատել, որ Օրենքով միայն ներքին ռեսուրսների հաշվին ծրագրված (առանց արտաքին աղբյուրներից ծրագրված դրամաշնորհային միջոցների) պետական բյուջեի եկամուտների համադրելի կատարողականը

կազմում է 100.2%: Իսկ պետական բյուջեի ընդամենը եկամուտների կառավարության կողմից ճշտված ծրագրի կատարողականը կազմել է 93.7%: Ընդ որում, վերոնշյալ գործոնները հաշվի առնելով, Օրենքով ծրագրված հարկային եկամուտներ և պետական տուրքեր ցուցանիշի հարաբերականորեն համադրելի փաստացի ցուցանիշը կազմել է 1149.0 մլրդ դրամ կամ կատարողականը կազմել է 101.2%, իսկ կառավարության կողմից ճշտված ծրագիրը կատարվել է 96.1%-ով: Ինչ վերաբերում է այլ եկամուտների ճշտված ծրագրին, ապա այն կատարվել է 80.4%-ով: Ինչպես արդեն նշվել է պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 34.9 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 99.1%-ը: Իսկ, ընդհանուր առմամբ, բյուջեի եկամուտներից 1223.1 մլրդ դրամը ստացվել է ներքին աղբյուրներից, ավելի քան 14.6 մլրդ դրամը կազմել են արտաքին աղբյուրներից ստացված պաշտոնական դրամաշնորհները, որոնց ճշտված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 95.1%-ով և 41.7%-ով:

Գծապատկեր 10. ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի եկամուտները



2017 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 22.2%, որը 0.2 տոկոսային կետով զիջել է կանխատեսված ցուցանիշը: Առանց ԱԱՀ-ի վերադարձված գումարների՝ բյուջեի եկամուտներ / ՀՆԱ ցուցանիշը կազմել է 21.9%՝ 0.2 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա համադրելի ցուցանիշը, որը պայմանավորված է ՀՆԱ-ի առավել բարձր անվանական աճով:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները 5.7%-ով կամ շուրջ 66.7 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: Եթե հաշվի առնենք, որ 2017 թվականի պետական բյուջեով արտահանողներին ավելացված արժեքի հարկի վերադարձը բյուջեի ծախսերում

նախատեսված էր միայն առաջին եռամսյակում, որն իրականացվել է ամբողջ ծավալով, իսկ երկրորդ եռամսյակից սկսած այն հիմնականում իրականացվել է եկամուտների նվազեցման եղանակով, 2016 և 2017 թվականների համադրելի (ԱԱՀ-ի վերադարձված գումարների չափով նվազեցված) ցուցանիշների համեմատության դեպքում պետական բյուջեի եկամուտների աճը կկազմի 8.8% կամ 98.7 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 10.7%-ով (110.3 մլրդ դրամով) և 8.6%-ով (5.2 մլրդ դրամով), իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 53.4%-ով (16.8 մլրդ դրամով):

Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը, 2016=100%
(առանց ԱԱՀ-ի վերադարձի)



Արդյունքում 2016 թվականի համեմատ 2017 թվականի պետական բյուջեի եկամուտներում 1.6 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների (ներառյալ պետական տուրքերը) տեսակարար կշիռը, և նույնքան նվազել պաշտոնական դրամաշնորհների գծով նույն ցուցանիշը: Այլ եկամուտների տեսակարար կշիռը մնացել է անփոփոխ:

Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը (առանց ԱԱՀ-ի վերադարձի)



Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

«Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանվել էր 1135.0 մլրդ դրամ հարկերի ու տուրքերի ստացում: Փաստացի պետական բյուջե են մուտքագրվել 1,158.0 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են օրենքով հաստատված ծրագրային ցուցանիշի 102%-ը: Ընդ որում, փաստացի ցուցանիշում ներառված չեն արտահանողներին վերադարձված 45.9 մլրդ դրամ ԱԱՀ-ի և հիպոթեքային վարկի տոկոսների գծով փոխհատուցված 2.4 մլրդ դրամ եկամտային հարկի գումարները: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով նաև վերը նշված վերադարձները, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի հարկերը և տուրքերը կազմել են 1,206.3 մլրդ դրամ, որը 11.7%-ով կամ 126.6 մլրդ դրամով գերազանցել է 2016 թվականի համադրելի ցուցանիշը (1,079.8 մլրդ դրամ):

Հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին է ապահովվել ՀՀ պետական բյուջեի եկամուտների 93.6%-ը:

2017 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 20.8%՝ 0.2 տոկոսային կետով զիջելով կանխատեսված ցուցանիշը՝ պայմանավորված ՀՆԱ-ի կանխատեսված մակարդակը զգալիորեն գերազանցող փաստացի ցուցանիշով:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով արտահանողներին վերադարձված ԱԱՀ-ի և հիպոթեքային վարկի տոկոսների գծով փոխհատուցված գումարները, հարկային եկամուտներ և պետական տուրքեր / ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2017 թվականին կազմել է 21.6%՝ 2016 թվականի 21.3%-ի դիմաց: Առանց ԱԱՀ-ի վերադարձված և հիպոթեքային վարկի տոկոսների գծով

փոխհատուցված գումարների՝ նշված ցուցանիշը կազմել է 20.5%, որը 0.2 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա համադրելի ցուցանիշը:

Հարկային սահունության գործակիցը 2017 թվականին կազմել է 1.1՝ 2016 թվականի 0.8-ի դիմաց (առանց ԱԱՀ-ի վերադարձված և հիպոթեքային վարկի տոկոսների գծով փոխհատուցված գումարների):

2016 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 7.3%-ով կամ 78.3 մլրդ դրամով: Առանց արտահանողներին ԱԱՀ-ի վերադարձված գումարների՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը կազմում է 10.7% կամ 110.3 մլրդ դրամ: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակատվածի համեմատ բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է աճ, բացառությամբ շահութահարկի: Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքի, բնապահպանական և բնօգտագործման վճարների ու եկամտային հարկի գծով մուտքերի աճով: Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվել է նոր պարտադիր վճար՝ դրոշմանիշային վճարը, որի գծով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 6.6 մլրդ դրամ:

Գծապատկեր 14. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների (ներառյալ պետական տուրքերը) կառուցվածքը, 2016-2017թթ. (առանց ԱԱՀ-ի վերադարձի)



2017 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 35.1%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին, որը կազմել է շուրջ 406.6 մլրդ դրամ: Նշված գումարից 203.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, շուրջ 203.3 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից, որից շուրջ 84.6 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: ԱԱՀ-ի

մուտքերը (առանց արտահանողներին վերադարձված գումարների) 2016 թվականի համադրելի ցուցանիշի համեմատ աճել են 13.9%-ով կամ 47.5 մլրդ դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել և՛ մաքսային սահմանին (20.9%-ով կամ 35.1 մլրդ դրամով), և՛ ներքին շրջանառությունից գանձված մուտքերում (7.1%-ով կամ 12.3 մլրդ դրամով): Նշենք, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար գանձված մուտքերն աճել են 28.3%-ով (18.6 մլրդ դրամով):

ԱԱՀ-ի աճը հիմնականում բացատրվում է մակրոտնտեսական միջավայրով: 2017 թվականին անվանական ՀՆԱ-ն կանխատեսվել էր 5,405.0 մլրդ դրամ, այնինչ փաստացի արդյունքներով արձանագրվել է ՀՆԱ-ի շուրջ 5,580.1 մլրդ դրամ մակարդակ, որի վրա ազդեցություն է ունեցել նաև ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորի մակարդակը, որը կանխատեսված 101.7 տոկոսի փոխարեն կազմել է 102.2 տոկոս: ՀՆԱ-ի կանխատեսված և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 175.1 մլրդ դրամ: Վերջինս, այլ հավասար պայմաններում, համարժեք է 11.5 մլրդ դրամ ԱԱՀ-ի՝ հաշվի առնելով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի հիմքում դրված 6.56% ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցությունը (175.1*6.56%):

Ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա դրական ազդեցություն է գործել նաև ներմուծման ծավալների աճը, ներմուծման ծավալներն աճել են 437.6 մլրդ դրամի չափով կամ 27.7%-ով, իսկ ՀՀ սահմանին հարկման ենթակա ապրանքների ծավալներն աճել են 259.2 մլրդ դրամով կամ 29.6%-ով, որից, այլ հավասար պայմաններում, հաշվարկվել է 51.8 մլրդ դրամ ԱԱՀ (259.2*20%):

Ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա ազդեցություն են գործել նաև ներմուծվող ապրանքների որոշ տեսակների (կվարցային ավազ, կավիճ, կարբոնատներ, պոլիէթիլեն, վինիլացետատ, վառարաններ, կռունկներ, բուլդոզերներ և այլն) գծով ԱԱՀ-ի հետաձգումը («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի և ՀՀ կառավարության անհատական որոշումների համաձայն հետաձգվել է մոտ 17,036 մլն դրամ ԱԱՀ-ի վճարում՝ նախորդ տարվա 12,911 մլն դրամի փոխարեն, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ ավել ԱԱՀ է հետաձգվել շուրջ 4,125 մլն դրամի չափով), ինչպես նաև կատարված օրենսդրական փոփոխությունները: Մասնավորապես.

2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-186-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ 2017 թվականի հունվարի 1-ից բոլոր ԱԱՀ վճարողները ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար նույն օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքերում՝ ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով

հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կարող են հաշվանցել նաև առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու:

2016 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն ՀՀ օրենքի 444-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 37-րդ կետը, որի համաձայն ԱԱՀ-ից ազատվում են օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվան հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵՏՄ պետություններ):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «զ» ենթակետը՝ ածանցյալ ֆինանսական գործիքների մասով, որի համաձայն ԱԱՀ-ից ազատվում են բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումը, բացառությամբ այն վճարումների, որոնք իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումն Օրենսգրքի համաձայն ենթակա է ԱԱՀ-ով հարկման:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 9.5%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով 109.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 13.6%-ով կամ 17.3 մլրդ դրամով: Շահութահարկի նվազման հիմնական պատճառ է հանդիսացել, մասնավորապես, 1 կազմակերպության մասով գույքի վաճառքից գոյացած շահույթից 2016 թվականին վճարված ռեզիդենտի շահութահարկը, ինչպես նաև թվով 3 ընկերությունների կողմից մեկանգամյա գործարքներով պայմանավորված՝ 2016 թվականին վճարված ոչ ռեզիդենտի շահութահարկը, որոնց գումարը կազմել է շուրջ 26.4 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ վերոնշյալ 4 կազմակերպությունների շահութահարկի գծով մուտքերը բացառելու պարագայում շահութահարկի մուտքերի գծով արձանագրվել է աճ՝ հիմնականում պայմանավորված ընդհանուր տնտեսական վիճակի կայունացմամբ: Շահութահարկի վրա նվազեցնող ազդեցություն է գործել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված շահութահարկի կանխավճարների այլընտրանքային եղանակի գործարկումը, որի

հետևանքով 2017 թվականին ՀՀ պետական բյուջե վճարված կանխավճարները նվազել են շուրջ 3.4 մլրդ դրամով:

2016 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն ՀՀ օրենքի 444-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ հարկային օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակը, որի համաձայն ռեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար շահութահարկի կանխավճարները կատարում են նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսի չափով, եթե մինչև ընթացիկ հարկային տարվա մարտի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացրել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ: Միաժամանակ, նշյալ մասով սահմանվել է, որ նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների մեծությունը որոշվում է նախորդ եռամսյակում ներառված ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազայի հանրագումարի չափով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 341.5 մլրդ դրամ *եկամտային հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 29.5%-ը: Եկամտային հարկից մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 2.6%-ով կամ 8.8 մլրդ դրամով, որը գրանցվել է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ եկամուտների գծով: Եկամտային հարկի աճը հիմնականում պայմանավորված է միջին ամսական աշխատավարձի աճով, որը նախորդ տարվա համեմատ կազմել է 3.3%: Միաժամանակ, հարկ է նշել, որ մնացած եկամտատեսակներից գանձվող եկամտային հարկի մուտքերը նույնպես աճել են, որոնց աճը հիմնականում պայմանավորված է ընդհանուր տնտեսական վիճակի կայունացմամբ:

2016 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-250-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով նվազեցվող եկամուտներ են համարվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը

պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա շահառուներին վճարվող հատուցման գումարները:

2016 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն ՀՀ օրենքի 444-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն օրենսգրքի 150-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ստացած շահաբաժինների՝ եկամտային հարկով (եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով) հարկմանը վերաբերող դրույթն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո հայտարարված շահաբաժինների վրա՝ անկախ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներից:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.1%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով 82.3 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 45.1 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ շուրջ 37.2 մլրդ դրամ: 2016 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 37.8%-ով կամ 22.6 մլրդ դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել և՛ տեղական արտադրության (54.6%-ով կամ 13.1 մլրդ դրամով), և՛ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների (26.5%-ով կամ 9.4 մլրդ դրամով) գծով մուտքերում: ՀՀ տարածքում արտադրվող ապրանքների գծով մուտքերի աճը հիմնականում ապահովվել է ծխախոտի արտադրանքից ստացված մուտքերի աճի և 2016 թվականի մայիսի 1-ից սեղմված բնական գազը ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում ներառելու արդյունքում: Հաշվետու տարում ծխախոտի արտադրանքի իրացումից ստացված մուտքերը կազմել են 25.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 69.4%-ով կամ 10.3 մլրդ դրամով, իսկ ավտոգազալիցքավորման ճնշակայանում սեղմված բնական գազի սպառումից ստացված մուտքերը կազմել են 3.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 69.1%-ով կամ 1.5 մլրդ դրամով: ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերի աճը պայմանավորված է ծխախոտի, օղու, դիզելային վառելիքի և բենզինի արտադրանքի ներմուծումից ստացված մուտքերի աճով: Մասնավորապես՝ ՀՀ ներմուծված ծխախոտային արտադրանքի և օղու իրացման համար վճարված ակցիզային հարկի գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 23%-ով (3.6 մլրդ դրամով) և 53%-ով (2.6 մլրդ դրամով)՝ կազմելով 19.1 մլրդ դրամ և 7.6 մլրդ դրամ, իսկ ՀՀ ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի համար վճարված ակցիզային հարկի գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 65.7%-ով (կամ 2.2 մլրդ դրամով) և 47.1%-ով (կամ 2 մլրդ դրամով)՝ կազմելով 5.5 մլրդ դրամ և 6.3 մլրդ դրամ:

Ակցիզային հարկի գծով մուտքերի աճը պայմանավորված է հիմնականում 2015 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-116-Ն ՀՀ օրենքի գործողությամբ, որի համաձայն 2016 թվականի մայիսի 1-ից սեղմված բնական գազը (բացառությամբ սեղմված չհամարվող բնական գազի) ներառվել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում, և 1մ^3 բնական գազի համար սահմանվել է ակցիզային հարկի 8330 դրամ դրույքաչափ: Ընդ որում, օրենքի իմաստով սեղմված բնական գազ է համարվում ԱՏԳ ԱԱ 2711 21 ապրանքային դիրքին դասվող բնական գազը, որը ստացվում է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող անձանց կողմից մի քանի փուլով (խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում) գազի մշակման արդյունքում՝ առանց բնական գազի բաղադրության փոփոխության: Ակցիզային հարկ վճարող են համարվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող իրավաբանական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված օտարերկրյա իրավաբանական անձանց ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) և ֆիզիկական անձինք: Նշենք, որ ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից սեղմված բնական գազի օտարումից վճարված ակցիզային հարկը հաշվետու տարում կազմել է 2.2 մլրդ դրամ: Վերոհիշյալ օրենքի համաձայն 2016 թվականի մայիսի 1-ից նաև բարձրացվել են ծխախոտի արտադրանքի և սպիրտային խմիչքների (ԱՏԳ ԱԱ 2208, 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012, 2402 90 00012, 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402 20 90012, 2402 20 10012, 2402 90 00014, 2710, 2711 ծածկագրերին դասվող ապրանքների) ակցիզային հարկի դրույքաչափերը, իսկ բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 120000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում սահմանվել է, որ ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 120000 ՀՀ դրամի (112000 դրամի փոխարեն):

2016 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ԱՏԳԱԱ 2208 ծածկագրին (բացառությամբ ԱՏԳԱԱ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40) դասվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվել է 63%, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 630 դրամ, ԱՏԳԱԱ 2208 30, 2208 40 ծածկագրերին դասվող ապրանքների համար՝ 57%, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 3450 դրամ, ԱՏԳԱԱ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90

480 0 ծածկագրերին դասվող ապրանքների համար՝ 55%, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 550 դրամ, ԱՏԳԱԱ 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402 20 90012, 2402 20 10012 և 2402 90 00014 ծածկագրերին դասվող ապրանքների համար՝ 15%, բայց ոչ պակաս, քան 1000 լիտրի համար 6325 դրամ, իսկ ԱՏԳԱԱ 2208 20 ծածկագրին դասվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվել է մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող՝ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով:

Հաշվետու տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.3%-ն ապահովվել է *մաքսատուրքի* հաշվին՝ կազմելով 72.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 30.9%-ով կամ 17.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ինչպես ԵՏՄ անդամ երկրներին համամասնորեն տրվող մաքսատուրքի գումարների աճով, այնպես էլ երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ մաքսատուրքով հարկվող ապրանքների ծավալների աճով: 2017 թվականին ԵՏՄ-ից փոխանցված մաքսատուրքը կազմել է 68,585.9 մլն դրամ (այդ թվում՝ հատուկ, հակադեմպինգային, փոխհատուցման տուրքը կազմել է 631.3 մլն դրամ)՝ 2016 թվականի նույն ժամանակահատվածում վճարված 52,981.6 մլն դրամի փոխարեն՝ աճելով 29.5%-ով կամ 15,604.3 մլն դրամով, ընդ որում՝ ԵՏՄ երկրներից ավել եկած մաքսատուրքը (ԵՏՄ երկրներից բաշխված և ԵՏՄ երկրների միջև բաշխվող մաքսատուրքերի տարբերությունը) աճել է 5,213.7 մլն դրամով: Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների արժեքից գանձվող մաքսատուրքն աճել է 1,617.2 մլն դրամով կամ 68.9%-ով: 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված ներմուծման մաքսատուրքի գումարներից ԵԱՏՄ պետությունների միջև բաշխվել է 43,766.5 մլն դրամ, և փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 534 մլն դրամ, Ռուսաստանի Դաշնություն՝ 37,317.5 մլն դրամ, Ղազախստանի Հանրապետություն՝ 3087.7 մլն դրամ, Բելառուսի Հանրապետություն՝ 1,995.8 մլն դրամ, Ղրղզստանի Հանրապետություն՝ 831.6 մլն դրամ: 2017 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված հատուկ, հակադեմպինգային, փոխհատուցման տուրքի գումարներից ԵԱՏՄ պետությունների միջև բաշխվել է 449.6 մլն դրամ, և փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 5 մլն դրամ, Ռուսաստանի

Դաշնություն՝ 383.6 մլն դրամ, Ղազախստանի Հանրապետություն՝ 32 մլն դրամ, Բելառուսի Հանրապետություն՝ 20.5 մլն դրամ, Ղրղզստանի Հանրապետություն՝ 8.5 մլն դրամ:

2017 թվականին *շրջանառության հարկի* գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 18.2 մլրդ դրամ՝ կազմելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 1.6%-ը, որը 19.4%-ով կամ շուրջ 3 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված առևտրական (առք ու վաճառքի) և այլ գործունեությունից գանձված եկամուտների աճով: Շրջանառության հարկի գումարից շուրջ 9.9 մլրդ դրամը մուտքագրվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից (նախորդ տարվա համեմատ աճել է 20.2%-ով կամ 1.7 մլրդ դրամով), 1.6 մլրդ դրամը՝ արտադրական գործունեությունից (աճը՝ 10.2% կամ 144.7 մլն դրամ), 896.2 մլն դրամը՝ ռեզիդենտների կողմից ստացվող պասիվ եկամուտներից (աճը՝ 12.7% կամ 101.2 մլն դրամ), շուրջ 286 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից (աճը՝ 21.7% կամ 51 մլն դրամ) և 5.6 մլրդ դրամը՝ գործունեության այլ տեսակներից (աճը՝ 21.7% կամ 1 մլրդ դրամ):

2017 թվականին պետական բյուջե են մուտքագրվել 3.6 մլրդ դրամ *հաստատագրված վճարներ*՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 0.3%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 12.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային գործունեության իրականացման և վիճակախաղերի կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարի մուտքերի աճով: Հաշվետու ժամանակաշրջանում նշված մուտքերը կազմել են համապատասխանաբար 2.7 մլրդ դրամ և 631 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.5%-ով (337.4 մլն դրամով) և 39.7%-ով (179.3 մլն դրամով):

2017 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 42.2 մլրդ դրամ *բնապահպանական և բնօգտագործման վճարներ*՝ կազմելով հարկերի և տուրքերի 3.6%-ը: Նշված գումարից 9.8 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 32.4 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները, որից 30.3 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական և բնօգտագործման վճարներն աճել են 54.2%-ով կամ 14.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի 65.6%-ով կամ 12 մլրդ դրամով աճով: Վերջինս հիմնականում պայմանավորված է Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա հայտարարված հիմնական արտադրատեսակներ համարվող պղնձի և մոլիբդենի տարեկան միջին գների աճով, ինչպես նաև մետաղական հանքաքարի թողարկման ծավալների աճով: Մասնավորապես՝ պղնձի 2017 թվականի տարեկան միջին գինը 2016 թվականի համեմատ աճել է 26.7%-ով, իսկ մոլիբդենինը՝ 10.2%-ով, մյուս կողմից, 2017 թվականին մետաղական հանքաքարի

թողարկման ծավալների աճը կազմել է 36.7%: Միաժամանակ, նվազում է արձանագրվել այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող բնապահպանական վճարների գծով՝ 2017 թվականին կազմելով 736.8 մլն դրամ: Նշված մուտքերը նվազել են 44.9%-ով կամ 599.6 մլն դրամով, ինչը պայմանավորված է հիմնականում ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված՝ ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ սահմանը հատող այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարների գանձման մեխանիզմների փոփոխությամբ: Նվազում է արձանագրվել նաև ՀՀ-ում արտադրվող ու իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների և կենսապաշարների օգտագործման համար գանձվող վճարների գծով, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 53.6%-ով (540 մլն դրամով) և 30.8%-ով (37.3 մլն դրամով)՝ 2017 թվականին կազմելով համապատասխանաբար 467.2 մլն դրամ և 83.9 մլն դրամ: Նշված վճարատեսակների գծով մուտքերի նվազումը պայմանավորված է համապատասխանաբար մարված պաշարների և կենսապաշարների ծավալների, ինչպես նաև ՀՀ-ում արտադրվող և իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և իրացման ծավալների նվազմամբ: Մնացած վճարատեսակների գծով արձանագրվել է աճ, որը հիմնականում պայմանավորված է թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալների աճով: Մասնավորապես՝ 71.3%-ով կամ 2.7 մլրդ դրամով աճ է արձանագրվել ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մուտքերի գծով, որոնք կազմել են 6.4 մլրդ դրամ:

2017 թվականի մարտի 1-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-78-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 15-ից) սահմանվել է, որ վճար վճարողներն ազատվում են սահմանված կարգով հասույթի վերահաշվարկման արդյունքում՝ մինչև 2016 թվականը ներառյալ ընդգրկող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող ռոյալթիների գծով հաշվարկված տույժերից և տուգանքներից:

Հաշվետու ժամանակահատվածում 15.8 մլրդ դրամ են կազմել *նպատակային սոցիալական վճարները,* որոնք կազմել են հարկերի և տուրքերի 1.4%-ը: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 18.3%-ով կամ 2.4 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է ինչպես վճարողների քանակի, այնպես էլ միջին ամսական աշխատավարձի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 28.2 մլրդ դրամ *այլ հարկեր*՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.4%-ը: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 34.2%-ով կամ 7.2 մլրդ դրամով: Այլ հարկերում շուրջ 7.1 մլրդ դրամ են կազմել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները՝ նախորդ տարվա

համեմատ աճելով 10.6%-ով կամ 676.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է 1 կազմակերպության (Վիվասել ՄՏՍ) կողմից 2017 թվականի 4-րդ եռամսյակի ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մի մասը 2018 թվականի փոխարեն 2017 թվականի 4-րդ եռամսյակում վճարելու հանգամանքով:

2017 թվականին ավելի քան 5.9 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 5.4%-ով կամ 337.9 մլն դրամով: Ընդ որում, արտոնագրային վճարով հարկվող գործունեության գրեթե բոլոր տեսակների համար վճարված արտոնագրային վճարների գծով արձանագրվել է նվազում: Նվազումը հիմնականում պայմանավորված է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության (նվազել է 4%-ով կամ 133.3 մլն դրամով), ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության (նվազել է 7.6%-ով կամ 55 մլն դրամով) և ատամնաբուժական գործունեության (նվազել է 3.4%-ով կամ 31 մլն դրամով) համար վճարված արտոնագրային վճարների գծով մուտքերի նվազմամբ, ինչպես նաև նրանով, որ 2017 թվականին գործունեության այլ տեսակներից արտոնագրային վճարներ չեն գանձվել՝ պայմանավորված օրենսդրական փոփոխություններով: Մասնավորապես՝ «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (12.16.2016թ. ՀՕ-261-Ն) տրվել է արտոնություն: Նշված օրենքի N1 հավելվածով սահմանված գործունեության տեսակների մասով ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի համար սահմանվել են հարկային արտոնություններ, և ներկայացված դիմումի հիման վրա ֆիզիկական անձին հարկային մարմինը տրամադրում է հարկերից ազատման արտոնագիր: Նշված արտոնության արդյունքում արտոնագրային վճարի մուտքերը նվազել են 60.9 մլն դրամով: Բացի վերը նշվածը, արտոնագրային վճարի մուտքերի վրա իր ազդեցությունն է թողել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (24.11.2015թ. ՀՕ-141-Ն), որի հիման վրա ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ներառված Բերդ և Ճամբարակ քաղաքային համայնքներում իրականացվող՝ արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների մասով կիրառվում է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ արտոնագրային վճարից ազատման արտոնություն: Նշենք, որ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար վճարված արտոնագրային վճարների գծով մուտքերի նվազման հիմնական պատճառ է հանդիսացել սպառման կրճատմամբ պայմանավորված արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների կրճատումը:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 1 մլրդ դրամ են կազմել հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները՝ 31.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Շուրջ 1.7 մլրդ դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հարկային մուտքերը՝ 20%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է հարկային ընթացակարգով հայտնաբերվող խախտումների ծավալի աճով:

Հաշվետու տարում 791 մլն դրամ է մուտքագրվել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով՝ 3.3%-ով կամ 25.3 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

303.9 մլն դրամ են կազմել դրոշմապիտակների իրացումից մուտքերը, որոնք 36.1%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված պիտակավորման ենթակա ապրանքների ծավալի նվազմամբ:

Հաշվետու տարում 311.9 մլն դրամ են կազմել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարները, որոնք նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են 44.6%-ով կամ շուրջ 96.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ տարածք ներմուծվող փոստածրարների քանակի աճով:

2017 թվականին ավելի քան 205.9 մլն դրամ են կազմել ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման վճարները՝ մոտ 6.5 անգամ կամ 174.2 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2017 թվականին Վիվասել ՄՏՍ-ը վճարել է 203 մլն դրամ՝ նախորդ տարվա 17.5 մլն դրամի դիմաց:

2016 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք վճարում են դրոշմանիշային վճար 1000 դրամ գումարի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ 12000 դրամ գումարի չափով: Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 6.6 մլրդ դրամ դրոշմանիշային վճար:

2016 թվականի մայիսի 12-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-69-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 18-ից) սահմանվել է, որ հարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների սեփական կարիքների բավարարման համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող՝ ֆիզիկական անձ

ինքնավար էներգաարտադրողների արտադրած էլեկտրական էներգիայի հանձնումն էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին, այդ թվում՝ դրա դիմաց ստացվող հատկացումները, եթե էլեկտրական էներգիա արտադրող իրենց տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում էլեկտրական էներգիայի տեղակայված իրենց սպառիչների ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլովատը:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքով ՀՕ-261-Ն (ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարող և բացառապես նույն օրենքի անբաժանելի մասը համարվող 1-ին հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող ինքնազբաղված անձինք ազատվում են այդ գործունեության տեսակների մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա հարկերից, բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածք այդ անձանց կողմից ապրանքների ներմուծման համար մաքսային կամ հարկային մարմիններին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի: Ինքնազբաղված անձինք Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման համար մաքսային կամ հարկային մարմիններին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

2017 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 37.1 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ 21.5%-ով կամ շուրջ 6.6 մլրդ դրամով գերազանցելով ՀՀ կառավարության տարեկան ծրագրով կանխատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու, օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու պետական գրանցման համար վճարվող տուրքերի ծրագրի գերազանցմամբ: Հիմնականում նշված հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերի 11.4%-ով կամ շուրջ 3.8 մլրդ դրամով աճը:

2016 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել շուրջ 1.9 մլրդ դրամ (որից 204.1 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ 5.1%-ով զիջելով կանխատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 27.5%-ով կամ 710.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների կողմից վճարվող և պետական բյուջեից փոխհատուցվող գումարների նվազմամբ:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-243-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.3 հոդվածով նախատեսված դեպքերում խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 110.6 մլն դրամ՝ 64%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը և 39.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, ինչը պայմանավորված է ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման համար դիմած քաղաքացիների թվի աճով:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել 1.9 մլրդ դրամ՝ 8.4%-ով (175.9 մլն դրամով) զիջելով կանխատեսված ցուցանիշը և 4.6%-ով (92.3 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մուտքերի նվազման հիմնական պատճառ է հանդիսանում այն, որ հաշվետու տարում ավելի փոքր թվով քաղաքացիներ են դիմել հյուպատոսական ծառայություններ ստանալու համար, որը վերաբերում է առավելապես անձնագրային ոլորտի ծառայություններին: Անձնագրային ոլորտի ծառայությունների տեսակարար կշիռը հյուպատոսական ծառայությունների ընդհանուր թվում կազմում է 65-70%:

Պետական տուրքերի 12.3%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 4.6 մլրդ դրամ, որը 23.6%-ով գերազանցել է ծրագրային ցուցանիշը և 21.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, ինչը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձված տուրքերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 1.6 մլրդ դրամ է ստացվել ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար, որը 41.8%-ով գերազանցել է ծրագրված մուտքերը և 29.6%-ով նախորդ տարվա ցուցանիշը: 814.2 մլն դրամ է ստացվել ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար, որը 40.4%-ով գերազանցել է ծրագրված

մուտքերը և 30.1%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Վերջիններիս աճը պայմանավորված է 2017 թվականին ՀՀ տարածք ներմուծած տրանսպորտային միջոցների շուրջ 31% աճով:

Հաշվետու տարում 1.1 մլրդ դրամ են կազմել լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքերը, որոնք 21%-ով գերազանցել են ծրագրված մուտքերը և 15.6%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը:

863.4 մլն դրամ է ստացվել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմաց, որը կազմել է ծրագրված մուտքերի 98%-ը և 10.1%-ով գերազանցել նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է գործարքների թվի աճով:

Հաշվետու տարում շուրջ 161.2 մլն դրամ են կազմել ՀՀ պետական ռեգիստրում պետական գրանցման համար գանձված տուրքերը, որոնք 6.7%-ով գերազանցել են ծրագրված մուտքերը և 12.8%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է գործարքների թվի աճով:

2016 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-167-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 14-ից) փոփոխվել են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար պետական տուրքի դրույքաչափերը, մասնավորապես՝

1) ՀՀ կառավարության սահմանած ցանկերում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափը սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 50 տոկոսի չափով՝ նախկինում գործող 30 տոկոսի փոխարեն,

2) սահմանվել է, որ անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ տարբեր հիմքով, ինչպես նաև անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ մեկից ավելի իրավունքների պետական գրանցման դեպքում կիրառվելու է դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը, իսկ պետական տուրքի դրույքաչափերը հավասար լինելու դեպքում՝ մեկ պետական տուրք:

2016 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-208-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 17-ից)՝

1) պետական ռեգիստրում գրանցման ենթակա օտարերկրյա իրավաբանական անձանց՝ ՀՀ-ում ռեդոմիցիլացման նախնական գրանցման համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի տասնապատիկի չափով,

2) պետական ռեգիստրում գրանցման ենթակա իրավաբանական անձանց՝ ՀՀ-ից այլ պետություն ռեդոմիցիլացման համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի քսանապատիկի չափով:

2016 թվականի մայիսի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-88-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 15-ից) հանվել է դեղագործական արտադրանքի, բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի և տեխնիկայի պետական գրանցման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքը, ինչպես նաև դեղերի պետական գրանցման համար մի շարք դեպքերում սահմանվել է պետական տուրք:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2017 թվականին պետական բյուջե է վճարվել 673 հազար դրամ, որը 10.3%-ով զիջել է նախատեսվածը և 13.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: 2017 թվականին մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակը կազմել է 134՝ նախատեսված 150-ի և 2016 թվականի 155-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել 414.1 մլն դրամ պետական տուրք, որը համապատասխանաբար 12.6%-ով և 18.8%-ով զիջել է կանխատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է հայտատուների թվաքանակի նվազմամբ:

2016 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-156-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 5-ից)՝

1) ապրանքային նշանների պետական գրանցամատյանից քաղվածքներ տալու համար պետական տուրք է սահմանվել բազային տուրքի կրկնապատիկի չափով,

2) սահմանվել է, որ գյուտի, օգտակար մոդելի արտոնագիր տալու, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանների գրանցման և վկայագիր տալու, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների գրանցման և (կամ) օգտագործման վկայագիր տալու, երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման տալու համար պետական տուրքերը՝ այդ մասին լիազորված պետական կառավարման մարմնի որոշումը ստանալու օրվանից եռամսյա ժամկետի ավարտից հետո

վճարվելու դեպքում ապրանքային նշանների գրանցման և վկայագիր տալու համար տուրքերի չափերն ավելացվում են ոչ թե 50 տոկոսով, այլ 20 տոկոսով,

3) սահմանվել է, որ ապրանքային նշանի գրանցման գործողության, ինչպես նաև աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը երկարաձգելու համար պետական տուրքը գործողության տասներորդ տարվա ավարտից հետո վճարվելու դեպքում ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար տուրքի չափն ավելացվում է ոչ թե 50 տոկոսով, այլ 20 տոկոսով,

4) սահմանվել է, որ ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար՝ մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար լրացուցիչ տուրքը ֆիզիկական անձինք, ինչպես նաև մինչև 25 աշխատող ունեցող իրավաբանական անձինք վճարում են 75 տոկոս զեղչով, իսկ 25-ից 100 աշխատող ունեցող իրավաբանական անձինք՝ 50 տոկոս զեղչով:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2017 թվականին գանձվել է ավելի քան 2.7 մլրդ դրամ (պետական տուրքի մուտքերի 7.4%-ը)՝ 17.7%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նույնականացման քարտ ստացողների՝ նախատեսվածից ավել քանակով, որը կապված է սոցիալական փաթեթի ծառայություններից (այդ թվում՝ առողջապահական փաթեթի ծառայություններից) օգտվելու համար նույնականացման քարտի առկայության պարտադիր պայմանի ապահովման հետ: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 29.1%-ով կամ 1.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է մի շարք երկրներից, հատկապես Իրանի Իսլամական Հանրապետությունից, օտարերկրյա քաղաքացիների՝ ՀՀ տարածք առանց վիզայի ռեժիմի մուտք գործելու հանգամանքով:

2015 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-195-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 30-ից) փախստականի կենսաչափական տվյալներ պարունակող կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ և փախստականի նույնականացման քարտ տալու համար սահմանվել է պետական տուրք՝ համապատասխանաբար բազային տուրքի 25-ապատիկի և 3-ապատիկի չափով:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 30.8%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար: Նշված տուրքերի գծով պետական բյուջե է մուտքագրվել 11.4 մլրդ դրամ՝ 37.9%-ով գերազանցելով կանխատեսված և 36%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառում գանձված տուրքերի ծրագրված մուտքերը և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները գերազանցելու

հանգամանքով: Հաշվետու տարում նշված տուրքերը կազմել են շուրջ 9 մլրդ դրամ՝ 54.9%-ով (3.2 մլրդ դրամով) գերազանցելով ծրագրված մուտքերը և 50.9%-ով (3 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Մուտքերի աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, ինչպես նաև 2017 թվականի հոկտեմբեր ամսին վիճակախաղերի կազմակերպման մեկ լիցենզիայի պետական տուրքի գծով տույժի վճարմամբ: 2016 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-218-Ն օրենքը, և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում կատարվել է համապատասխան փոփոխություն, որի համաձայն 2017 թվականի հունվարի 1-ից վիճակախաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար տարեկան պետական տուրքը սահմանվել է բազային տուրքի 500000-ապատիկի չափով՝ նախկինում գործող բազային տուրքի 100000-ապատիկի փոխարեն: Նշենք, որ վերոնշյալ հանգամանքը բացառելու պարագայում վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառում գանձված տուրքերի գծով մուտքերը ոչ թե կաճեին, այլ կնվազեին: Վերջինս պայմանավորված է նրանով, որ 2017 թվականի ապրիլ ամսին ուժը կորցրած են ճանաչվել թվով 2 խաղատան կազմակերպման լիցենզիաներ, իսկ 2017 թվականի փետրվար և մայիս ամիսներին՝ թվով 2 ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիաներ, արդյունքում նվազել է լիցենզավորված անձանց թվաքանակը:

Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառի լիցենզավորման գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 556.8 մլն դրամ՝ 5.9%-ով զիջելով ծրագիրը, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տրված թույլտվությունների քանակի նվազմամբ՝ որոշ կազմակերպությունների իրավունքների դադարեցմամբ և հրաժարմամբ, ինչպես նաև ընկերությունների կողմից դեռևս չվճարված տուրքերով: Նշված մուտքերը 5%-ով կամ 26.6 մլն դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տնտեսավարող սուբյեկտների և ընդերքօգտագործողների նոր իրավունքների աճով՝ տրվել են երկրաբանական ուսումնասիրության և հանքավայրերի շահագործման իրավունքներ:

Հաշվետու տարում 440.2 մլն դրամ ստացվել է տրանսպորտի բնագավառի լիցենզավորման գծով՝ 18.3%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է մարդատար տաքսի ավտոմեքենաներով ուղևորափոխադրումների տրամադրման համար լիցենզառուների թվաքանակի զգալի աճով: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 5.1%-ով, որը պայմանավորված է տրանսպորտի ոլորտում տրամադրվող տարբեր լիցենզառուների թվաքանակի աճով:

Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գծով մուտքերը կազմել են 343.3 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 92.3%-ը, ինչը պայմանավորված է նրանով, որ շինարարության որակի տեխնիկական հսկողության, շենքերի և շենք-շինությունների տեխնիկական վիճակի հետազննության հաշվետվությունները չներկայացնելու, որոշումներին չհամապատասխանեցնելու, ինչպես նաև հաշվետվությունները խեղաթյուրված կամ թերի ներկայացնելու, ինչպես նաև տարեկան պետական տուրքը չվճարելու պատճառով կասեցվել կամ դադարեցվել են մի շարք կազմակերպությունների լիցենզիաները: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 5.8%-ով:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է 299.6 մլն դրամ, որը 12.7%-ով գերազանցել է նախատեսված ցուցանիշը՝ պայմանավորված էներգետիկայի բնագավառում լիցենզիաների՝ նախատեսվածից ավելի տրամադրմամբ և որոշ չիրականացված գործարքների գծով վճարված տուրքերով: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 1.8%-ով:

Առողջապահության բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է շուրջ 186 մլն դրամ, որը 13.2%-ով զիջել է նախատեսված և 2.6%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ պայմանավորված լիցենզավորվող կազմակերպությունների թվաքանակի նվազմամբ:

Բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների բնագավառում լիցենզավորման գծով ստացվել է 163 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 101.3%ը և 0.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման գծով ստացվել է 155.7 մլն դրամ՝ 25.4%-ով զիջելով նախատեսված և 31%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է նրանով, որ 2017 թվականի հունվար ամսվա պետական տուրքի գծով գումարների մի մասը վճարվել է նախապես՝ 2016 թվականի դեկտեմբեր ամսին: Նշենք, որ գրեթե յուրաքանչյուր տարի թվային հեռարձակում իրականացնող որոշ ընկերություններ պետական տուրքի գծով գումարների վճարումները տվյալ տարվա հունվար ամսվա փոխարեն կատարում են նախորդ տարվա դեկտեմբեր ամսին: Սակայն 2017 թվականի դեկտեմբեր 21-ին ընդունվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-265-Ն օրենքը, որի համաձայն 2018 թվականի հունվարի 1-ից զգալիորեն նվազեցվել են հեռուստահաղորդումների թվային հեռարձակման համար սահմանված դրույքաչափերը: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ ընկերությունները պետական տուրքի գծով վճարումները նախապես չեն վճարել, ի տարբերություն նախորդ տարիների:

Լիցենզավորումից ստացված մուտքերի վրա ազդեցություն են գործել նաև հետևյալ օրենսդրական փոփոխությունները:

2016 թվականի մայիսի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-88-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 15-ից) դեղերի մեծածախ իրացման համար սահմանվել է տարեկան պետական տուրք բազային տուրքի 100-ապատիկի չափով:

2015 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-114-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի մայիսի 4-ից) շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ստանալու համար սահմանվել է պետական տուրք ավագ բուժաշխատողի համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, իսկ միջին բուժաշխատողի համար՝ բազային տուրքի չափով:

2016 թվականի մայիսի 12-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 18-ից) վանակատի (օբսիդիանի) յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը բազային տուրքի 10000-ապատիկի փոխարեն սահմանվել է բազային տուրքի 100-ապատիկի չափով:

2016 թվականի մայիսի 12-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-79-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 18-ից) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ երրորդ երկրներից ներմուծելու և (կամ) երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար պետական տուրք է սահմանվել բազային տուրքի չափով, եթե «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով այլ դրույքաչափ նախատեսված չէ:

2015 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-20-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հուլիսի 20-ից) ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով:

2016 թվականի հունիսի 29-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու

մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-123-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի օգոստոսի 6-ից)՝

1) ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար պետական տուրք է սահմանվել ֆիզիկական անձանց համար՝ բազային տուրքի չափով, իսկ իրավաբանական անձանց համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով,

2) երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության ու մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական թույլտվություն տալու համար պետական տուրքի դրույքաչափը բազային տուրքի 20-ապատիկի փոխարեն սահմանվել է բազային տուրքի 30-ապատիկի չափով,

3) երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական և ընդհանուր թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակը տալու համար պետական տուրք է սահմանվել բազային տուրքի 5-ապատիկի չափով:

2017 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-171-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի նոյեմբերի 25-ից) ուժը կորցրած են ճանաչվել մաքսային բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը սահմանող դրույթները:

2017 թվականին պետական տուրքերի 37.9%-ը բյուջե է վճարվել օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների դիմաց՝ կազմելով շուրջ 14.1 մլրդ դրամ, որը 20.9%-ով գերազանցել է ծրագրային ցուցանիշը և 16.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Կանխատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշների գերազանցումը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ ՀՀ-ից օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի աճով: Հաշվետու տարում նշված մուտքերը կազմել են ավելի քան 11 մլրդ դրամ՝ 23.4%-ով (կամ շուրջ 2.1 մլրդ դրամով) գերազանցելով կանխատեսված և 16.6%-ով ով (կամ 1.6 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է մեկնած ուղևորների քանակի աճով:

Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված պետական տուրքի գումարներից 998.6 մլն դրամը ստացվել է վարորդական իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար՝ 15.6%-ով գերազանցելով կանխատեսված և

8.9%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է դիմողների քանակի աճով:

Հաշվետու տարում օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական բյուջե է մուտքագրվել 892.1 մլն դրամ պետական տուրք՝ 91.5%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 9.3%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռքբերողների՝ նախատեսվածից պակաս քանակով, որը, սակայն, աճել է նախորդ տարվա համեմատ:

2016 թվականի փետրվարի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-30-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի մարտի 20-ից) խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով՝ նախկինում գործող տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի փոխարեն:

Գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի արտահանման համար գանձված պետական տուրքերը կազմել են 449.6 մլն դրամ՝ 82.7%-ով գերազանցելով կանխատեսված և 57.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է արտահանման ծավալների աճով:

Պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունը ընդունելու համար գանձված տուրքերը կազմել են 292.2 մլն դրամ՝ 15.6%-ով գերազանցելով կանխատեսված և 6.4%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Ծրագրի գերազանցումը և նախորդ տարվա համեմատ նշված մուտքերի աճը պայմանավորված է դիմողների քանակի աճով:

«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի 1961 թվականի հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված փաստաթղթերի վրա ապոստիլ (հավաստող մակագրություն) դնելու կամ այդ փաստաթղթերը օրինականացնելու համար գանձված տուրքերը կազմել են 180.1 մլն դրամ՝ 13.1%-ով գերազանցելով կանխատեսված և 11.1%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է դիմողների քանակի աճով:

«Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար գանձված տուրքերը կազմել են շուրջ 94.5 մլն դրամ՝ 94.5%-ով ապահովելով կանխատեսված

ցուցանիշը և 5.9%-ով զիջելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է թույլտվությունների փաստացի քանակով:

2016 թվականի մայիսի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-88-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 15-ից)՝

1) պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր տալու համար, պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր տալու համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 30-ապատիկի չափով,

2) դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-19-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի փետրվարի 24-ից)՝

- դեպի Վրաստան միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների 9-17 նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 15-ապատիկի չափով, իսկ 17-ից ավելի նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 50-ապատիկի չափով,
- դեպի այլ պետություններ միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների 9-17 նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 50-ապատիկի չափով, իսկ 17-ից ավելի նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 150-ապատիկի չափով,
- Հայաստանի Հանրապետության հետ տրանսպորտի բնագավառը կանոնակարգող միջազգային համաձայնագրեր չունեցող պետությունից դեպի Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ այլ պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցներով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների 9-17 նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 100-ապատիկի չափով, իսկ 17-ից ավելի նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 200-ապատիկի չափով:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու

մասին» ՀՕ-33-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի փետրվարի 4-ից) սահմանվել է, որ կազմակերպությունն ազատվում է իր կանոնադրության փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման կամ իր առանձնացված ստորաբաժանման կանոնադրության փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրության հաշվառման համար պետական տուրքի վճարումից, եթե պետական գրանցումը կամ հաշվառումը պայմանավորված է պետական ռեգիստրում գրանցումից կամ հաշվառումից հետո ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտին կանոնադրությունը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Պաշտոնական դրամաշնորհներ

2017 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են ավելի քան 14.6 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 41.7%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 20.5 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 11.0մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 42.1%-ը: Նշված գումարից 764.6 մլն դրամը ստացվել է ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում՝ 5.7%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծրագրվածից ավել ստացված միջոցներով, որոնք նախատեսված 17.5 մլն դրամի փոխարեն կազմել են 84.6 մլն դրամ: Արտաբյուջետային միջոցներից 201.7 մլն դրամը (100%) ստացվել է «Հորիզոն-2020 հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը հատկացվել է եվրոպական կառույցների կողմից համաֆինանսավորման սկզբունքով ՀՀ անդամակցության անդամավճարների վճարմանն օժանդակելու համար: 111.5 մլն դրամը (99.9%) հատկացվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից սոցիալական ոլորտի բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը տրամադրվել է «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին «Այ Բի Էմ» սոցիալական ծառայությունների «Կուրամ» համակարգի ներդրման նպատակով:

Ոչ արտաբյուջետային նպատակային ծրագրերի շրջանակներում ստացվել է կանխատեսված միջոցների 40.3%-ը՝ ավելի քան 10.2 մլրդ դրամ: Նշված գումարց 3.0 մլրդ դրամ (նախատեսվածի 86.8%-ը) հատկացվել է Ռուսաստանի Դաշնության, 1.6 մլրդ դրամ (նախատեսվածի 58.3%-ը)՝

Համաշխարհային բանկի, 1.5 մլրդ դրամ (նախատեսվածի 125.6%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 1.3 մլրդ դրամ (նախատեսվածի 84.0%-ը)՝ ԱՄՆ-ի, 994.1 մլն դրամ (նախատեսվածի 49.2%-ը)՝ Գլոբալ հիմնադրամի, 808.2 մլն դրամ (նախատեսվածի 85%-ը)՝ Եվրոպական ներդրումային բանկի, 507.0 մլն դրամ (նախատեսվածի 63.5%-ը)՝ Դանիական Թագավորության, 323.3 մլն դրամ (նախատեսվածի 26.3%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 295.1 մլն դրամ (նախատեսվածի 124.2%-ը)՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և 19.5 մլն դրամ (նախատեսվածի 73.0%-ը)՝ Նիդերլանդների կառավարության կողմից: Նշենք նաև, որ 2017 թվականին Եվրոպական միության, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի, ինչպես նաև Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսված դրամաշնորհները՝ համապատասխանաբար 7.6 մլրդ, 2.2 մլրդ, 1.5 մլրդ և 47.5 մլն դրամի չափով, չեն ստացվել:

Եվրամիության կողմից բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակներում 2017 թվականին տրամադրվել է շուրջ 3.7 մլրդ դրամ (7 մլն եվրո)՝ կազմելով ծրագրվածի 40.5%-ը:Դրամաշնորհը տրամադրվել էգյուղատնտեսության և գյուղի զարգացմանն աջակցության ծրագրի շրջանակներում՝ նախատեսված չափով: «Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցիացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին» և «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակներում նախատեսվել էր համապատասխանաբար 4.1 մլրդ դրամ (7.8 մլն եվրո) և 1.3 մլրդ դրամ (2.5 մլն եվրո) դրամաշնորհների ստացում, որոնք չեն տրամադրվել: «Լրացում 1 - Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը - փուլ II» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի 4-րդ փոփոխական տրանշի համապատասխան գումարի տրամադրումը հետաձգվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրանշի ներքո ամրագրված նախապայմաններից երեքի համար հայկական կողմը պաշտոնապես դիմել է կատարման ժամկետների երկարաձգման խնդրանքով: «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի 1-ին փոփոխական տրանշի նախապայմանների իրականացման՝ ԵՄ առաքելության կողմից գնահատման արդյունքում եվրոպական կողմը հետաձգել է համապատասխան գումարի տրամադրումը՝ տրանշի շրջանակներում նախատեսված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքն այդ ժամանակ դեռևս ընդունված չլինելու պատճառով:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 53.4%-ով կամ 16.8 մլրդ դրամով:

Այլ եկամուտներ

2017 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 65.2 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 5.3%-ը՝ նախորդ տարվա 5.1%-ի դիմաց: Այլ եկամուտների՝ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշն ապահովվել է 80.4%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի կատարողականով, որը կազմել է համապատասխանաբար 11.4% և 79.1%:Այլ եկամուտներից 32.5 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մուտքերը, որոնք ստացվել են 99.2%-ով: 2016 թվականի համեմատ այլ եկամուտներն աճել են 8.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից և պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտների աճով:

2017 թվականին *ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից* ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 19.3 մլն դրամ, որը ծրագրով նախատեսված չէր: Նախորդ տարի նշված աղբյուրից մուտքեր չէին ստացվել:

2017 թվականին պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 2 մլրդ դրամ *պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության* դիմաց, որը գերազանցել է կանխատեսված մուտքերը 5.2%-ով՝ հիմնականում պայմանավորված վարձակալությամբ տրամադրված տարածքներով: Նշված եկամուտները նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են ավելի քան 4.3 անգամ, որը հիմնականում պայմանավորված է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ «Վեոլիա Օ կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերությանը փոխանցելու հանգամանքով: 2017 թվականին վարձակալության պայմանագրի համաձայն «Վեոլիա Օ կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 1713.0 մլն դրամ:

Հաշվետու տարվա ընթացքում *բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից* ստացվել են 6.1 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 133.1%-ով գերազանցելով ծրագիրը: 2017 թվականին ՀՀ կենտրոնական

բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 130 ավանդային պայմանագիր՝ 804 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Նախորդ տարի կնքվել է 136 ավանդային պայմանագիր՝ 726.5 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Հաշվետու ժամանակահատվածում ներդրված ավանդների միջին մեծությունը կազմել է 6.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատավանդի միջին մեծությունն աճել է 841 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2017 թվականի ընթացքում պետական բյուջեի ծախսերի եռամսյակային ծրագրային ցուցանիշների համեմատաբար ցածր կատարողականով, որի պայմաններում առաջացել են լրացուցիչ ժամանակավոր ազատ դրամական միջոցներ, ինչպես նաև գանձապետական միասնական հաշվի միջոցների մնացորդն ավելի ցածր, բայց վճարումների անխափան իրականացման համար բավարար մակարդակում պահելու հանգամանքով: Ներդրվող ավանդների մեծությամբ է պայմանավորված թե՛ 2017 թվականի ընթացքում բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և ավանդներից ստացված տոկոսագումարների ծրագրավորված ցուցանիշի գերազանցումը (շուրջ 3 մլրդ դրամով), և թե՛ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանց աճը, որը կազմել է 18.4% (946.7 մլրդ դրամ): 2017 թվականի ընթացքում ներդրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 5.6%՝ նախորդ տարվա 7.6%-ի դիմաց:

Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են ավելի քան 1.1 մլրդ դրամ շահութաբաժիններ՝ կազմելով տարեկան ծրագրով նախատեսված մուտքերի 57.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտները նվազել են 35.3%-ով կամ 613.3 մլն դրամով: Մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2016 թվականին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համակարգի «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի գործունեության արդյունքներով ունեցած բաձր շահույթի արդյունքում ՀՀ պետական բյուջե էր վճարվել 915.1 մլն դրամ:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարները կազմել են ավելի քան 12.3մլրդ դրամ՝ 96.3%-ով ապահովելով ծրագիրը, որից 12.2 մլրդ դրամը ստացվել է ռեզիդենտներին, 158.8 մլն դրամը՝ ոչ ռեզիդենտներին (Վրաստանին) տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներն ապահովել են ծրագրային ցուցանիշը 96.3%-ով, իսկ ոչ ռեզիդենտների վճարումները՝ 100%-ով: Նախորդ տարվա համեմատ տոկոսավճարներից մուտքերը նվազել են 6.1%-ով կամ 797.0 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռեզիդենտներից ստացված տոկոսավճարների նվազմամբ:

2017 թվականի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 665.0 մլն դրամ *ոչ պաշտոնական դրամաշնորհներ*՝ ամբողջությամբ ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Միջոցները մուտքագրվել են ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային հաշին: Նախորդ տարվա համեմատ ոչ պաշտոնական դրամաշնորհներից մուտքերնաճել են 49.8%-ով կամ 221.0 մլն դրամով:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ՀՀ պետական բյուջե է գանձվել շուրջ 13.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 79.1%-ը: Մասնավորապես՝ ծրագրի նկատմամբ զգալի շեղում է արձանագրվել ՀՀ ճանապարհային ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից կիրառված պատժամիջոցների արդյունքում ստացված մուտքերի գծով, որոնք կազմել են համապատասխանաբար 8.2 մլրդ դրամ (կանխատեսված ցուցանիշի 75.3%-ը) և 1.1 մլրդ դրամ (կանխատեսված ցուցանիշի 52.5%-ը): 2016 թվականի համեմատ իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերն աճել են 0.5%-ով կամ 69.4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից արձանագրված իրավախախտումների համար գանձված գումարների աճով:

Հաշվետու տարում *ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից* ստացված եկամուտները կազմել են 27.2 մլրդ դրամ՝ 109.1%-ով ապահովելով ծրագիրը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային մուտքերով, որոնք կազմել են 23.1 մլրդ դրամ և 12.3%-ով գերազանցել ծրագրային ցուցանիշը: Մասնավորապես՝ 7.2 մլրդ դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից ՀՀ անունից պայմանագրային հիմունքներով հասարակական կարգի պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների մատուցումից եկամուտները, 4.0 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի՝ պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում ստացված վճարները, 3.4 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայությունների դիմաց ստացված միջոցները, 3.6 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի՝ մաքսավճարների գծով մուտքերը:

Նախորդ տարվա համեմատ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն աճել են 26.1%-ով կամ շուրջ 5.6 մլրդ դրամով, ինչը

հիմնականում պայմանավորված է պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում ստացված միջոցների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի արտաբյուջետային եկամուտների աճով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել 2.2 մլրդ դրամ՝ 11.4.%-ով ապահովելով ծրագիրը և 46.6%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը:

ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր տարեկան 1,360.1 մլրդ դրամ ծախսերի կատարում: Ելնելով օրենսդրության պահանջներից՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 1,561.0 մլրդ դրամ: Նշենք, որ ծախսերի ավելացումը կատարվել է՝ հաշվի առնելով բյուջեի եկամուտների հավաքագրման միտումները և ելնելով ՀՀ կառավարության ծրագրում ամրագրված առաջնահերթություններից, շեշտը դնելով ենթակառուցվածքներին ուղղվող կապիտալ ծախսերի ավելացման վրա ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին: Պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,504.8 մլրդ դրամ, տարեկան ծրագիրը կատարվել է 96.4%-ով: Շեղումների ընդհանուր գումարի 47.8%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 52.2%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Ըստ ֆինանսավորման աղբյուրների պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է բյուջեի ծախսերի 88.3%-ը կամ 1,328.6 մլրդ դրամը, որոնց ծրագիրը կատարվել է 98%-ով: Բյուջեի ծախսերի 11.7%-ը՝ 176.5 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է ծրագրի 85.8%-ը: Հարկ է նշել, որ չնայած բյուջետային ծախսերի համեմատաբար ցածր կատարողականին՝ հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ժամանակին կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 3.8%-ով կամ 55.7 մլրդ դրամով: Ինչպես նշվել է, 2017 թվականի պետական բյուջեով արտահանողներին ավելացված արժեքի հարկի վերադարձը բյուջեի ծախսերում նախատեսված էր միայն առաջին եռամսյակում, որն իրականացվել է ամբողջ ծավալով, իսկ երկրորդ եռամսյակից սկսած այն հիմնականում իրականացվել է եկամուտների նվազեցման եղանակով: Առանց ԱԱՀ-ի վերադարձված գումարների՝ 2016 թվականի համեմատ պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 6.3%-ով՝ շուրջ 87.8 մլրդ դրամով աճ, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ձեռք բերման, պահպանման և հիմնանորոգման ու պարտքի սպասարկման ծախսերի աճով:

2017 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 9.8% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 6.3%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի

նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը. այն կազմել է 26.7%՝ 2016 թվականի 27.6%-ի դիմաց: Ավելացված արժեքի հարկի վերադարձված գումարները հաշվի առած՝ պետական բյուջեի ծախսեր / ՀՆԱ ցուցանիշը կազմել է 27%՝ կանխատեսված 25.2%-ի դիմաց:

Տնտեսագիտական դասակարգում

<u>Ընթացիկ ծախսեր</u>

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 1,267.4 մլրդ դրամ, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 97.9%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով կամ 14.3 մլրդ դրամով: Առանց ԱԱՀ-ի վերադարձի՝ ընթացիկ ծախսերն աճել են 1.4%-ով: Աճը հիմնականում ձևավորվել է կենսաթոշակների, դրամաշնորհների ու պարտքի սպասարկման ծախսերի աճի և ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման, սուբսիդիաների և այլ ծախսերի նվազման արդյունքում:

Ընթացիկ ծախսերի 11.5%-ը՝ շուրջ 145.3 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 2%-ով:

2017 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 154.3 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 12.2%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 95.9%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը նվազել են 4.9%-ով կամ 7.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված նյութերի և ընթացիկ նորոգման ու պահպանման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 122.1 մլրդ դրամ ուղղվել է կառավարության պարտքի և մուրհակների սպասարկմանը՝ կազմելով ծրագրի 99.6%-ը: Մասնավորապես՝ ներքին տոկոսավճարները կազմել են շուրջ 58.2 մլրդ դրամ (99.9%), արտաքին տոկոսավճարները՝ 63.9 մլրդ դրամ (99.3%): Պարտքի սպասարկման ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 24.3%-ով կամ 23.8 մլրդ դրամով: Մասնավորապես՝ ներքին պարտքի սպասարկման ծախսերն աճել են 38.4%-ով կամ 16.1 մլրդ դրամով, իսկ արտաքին պարտքի սպասարկման ծախսերը՝ 13.7%-ով կամ 7.7 մլրդ դրամով[9]:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 112.8 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով ծրագրի 99.3%-ը: Նշված գումարից շուրջ 110 մլրդ դրամը տրամադրվել է

[9] ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի մանրամասն վերլուծությունը ներկայացված է պետական բյուջեի գործառական դասակարգմամբ ծախսերի վերլուծության բաժնում (էջ 195-198):

պետական կազմակերպություններին, 2.9 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից, ըստ բյուջետային գործառական դասակարգման բաժինների, 87.8 մլրդ դրամը տրամադրվել է կրթության, 10.5 մլրդ դրամը՝ հանգստի, մշակույթի և կրոնի, շուրջ 7 մլրդ դրամը՝ տնտեսական հարաբերությունների, 5.7 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության, 1.6 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, 97.1 մլն դրամը՝ շրջակա միջավայրի պաշտպանության, 58 մլն դրամը՝ հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառների կազմակերպություններին, և ևս 28.5 մլն դրամ տրամադրվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուբսիդիաների գծով ծախսերը նվազել են 6.6%-ով կամ 8 մլրդ դրամով: Սուբսիդիաների նվազումը հիմնականում պայմանավորված է 2016 թվականին խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորմանը 3.5 մլրդ դրամի հատկացմամբ, որն ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված չէ, ինչպես նաև հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության և հանրակրթության ոլորտի սուբսիդավորման նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 10.5%-ը կամ 133 մլրդ դրամ տրամադրվել է դրամաշնորհներին՝ ապահովելով 98.6% կատարողական: Նշված գումարից 129.1 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, որից 48 մլրդ դրամը՝ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: 3.9 մլրդ դրամ է տրամադրվել միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության համար՝ կազմելով ծրագրի 97.8%-ը: 9.2 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին, որից 9 մլրդ դրամը կազմել են ընթացիկ սուբվենցիաները, որոնք կատարվել են 100%-ով, 215 մլն դրամը՝ կապիտալ սուբվենցիաները, որոնց կատարողականը կազմել է 92.6%: 2016 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները նվազել են 15.8%-ով: Առանց ԱԱՀ-ի վերադարձված գումարների՝ դրամաշնորհների ծախսերում արձանագրվել է 6.4% (7 մլրդ դրամով) աճ՝ հիմնականում պայմանավորված Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին կատարված փոխանցումներով և համայնքներին տրամադրված սուբվենցիաների աճով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 32.4%-ը՝ 411.1 մլրդ դրամ են կազմել սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 99.3%-ով: Նշված հատկացումներից 130.8 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 280.3 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 98.1%-ով և 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 1.5%-ով կամ 6 մլրդ դրամով: Մասնավորապես՝ նպաստների 0.5%-ով աճը հիմնականում

պայմանավորված է բյուջեից տրամադրվող մայրության նպաստների աճով: Կենսաթոշակների գծով ծախսերը հաշվետու տարում աճել են 1.9%-ով՝ հիմնականում պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման գծով ծախսերի աճով:

2017 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 14.9%-ը կամ 188.8 մլրդ դրամը կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 93.5%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով՝ հիմնականում պայմանավորված գյուղատնտեսության, պաշտպանության և ջրամատակարարման բնագավառներին հատկացված գումարների նվազմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2017 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են շուրջ 237.4 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 15.8%-ը և տարեկան ծրագրի 89%-ը: 2016 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է 41.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի աճով:

2017 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 238.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 89.3%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերից 176.2 մլրդ դրամը կատարվել է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնք կատարվել են 87.1%-ով և 34.2%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերից 127.8 մլրդ դրամը՝ նախատեսվածի 87.7%-ը, օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 108.3 մլրդ դրամը կամ նախատեսվածի 91.8%-ը՝ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 2.2 մլրդ դրամը կամ նախատեսվածի 68.1%-ը՝ այլ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով: 2016 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 36.1%-ով կամ 63.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում ավելի քան 1 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախատեսված 262.8 մլն դրամի դիմաց: Նշված գումարից 377.4 մլն դրամը ստացվել է հողի, 643 մլն դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

Գործառական դասակարգում

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից 274.7 մլրդ դրամ տրամադրվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերին՝ ապահովելով ծրագրի 97.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի, ինչպես նաև հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերի կատարողականով: 2016 թվականի համեմատ ոլորտի ծախսերը համադրելի դասակարգմամբ (առանց ԱԱՀ-ի վերադարձի) աճել են 6%-ով կամ 14.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով: Պետական բյուջեի ընդհանուր ծախսերում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների բաժնի ծախսերի տեսակարար կշիռը կազմել է 17.3%՝ նախորդ տարվա 17.4%-ի դիմաց:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 21.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 7.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) և վարչական օբյեկտների հիմնանորոգման ծրագրերին հատկացված միջոցների կրճատմամբ:

2017 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցները գրեթե ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 4.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 7.8%-ով: Սահմանադրական բարեփոխումներով պայմանավորված՝ Ազգային ժողովի վեցերորդ գումարման պատգամավորների թիվը կրճատվել է՝ 131-ից 105, հետևաբար կրճատվել է նաև պատգամավորների օգնականների թիվը:

Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է 883.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.2%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 5.6%-ով՝ պայմանավորված գործուղումների ծախսերի նվազմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 10.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 93.4%-ը, որը տնտեսումների արդյունք է: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերի, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության աշխատակազմը 2017 թվականին կատարել է ՀՀ ուսումնական հաստատությունների, հանրապետական գործադիր մարմինների, ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների, Երևան քաղաքի, մարզպետարանների և այլ պետական մարմինների միջգերատեսչական ցանցի և համացանցի կենտրոնացված գնում:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 96.3%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 7.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ քաղաքաշինության նախարարության վերակազմակերպմամբ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի, ինչի արդյունքում ստեղծվել է «ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, որի պահպանման ծախսերը ներառվել են բնակարանային շինարարության ծախսերում:

ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ արդարադատության և ՀՀ սփյուռքի նախարարությունների աշխատակազմերի պահպանման ծախսերը 2017 թվականին կազմել են 2 մլրդ դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: Նշված ծրագրում առկա են տնտեսումներ, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 29.3%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2017 թվականին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը, որոնք նախորդ տարի ներառված էին տվյալ դասում, 2017 թվականին ներառվել են փրկարար ծառայության դասի ծախսերում:

Վարչական օբյեկտների հիմնանորոգման համար օգտագործվել է 68.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.1%-ը: Հատկացված միջոցներով 2017 թվականի ընթացքում իրականացվել են ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքները: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ:

Հաշվետու տարում շուրջ 1.1 մլրդ դրամ սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանին՝ աշխատակազմի պահպանման նպատակով, որն ամբողջությամբ օգտագործվել է և 1.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 18 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ նվազել 4.3%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 114.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 76.7%-ը: Հատկացված միջոցներով ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության և ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության աշխատակազմերի համար ձեռք են բերվել վարչական սարքավորումներ՝ համակարգչային տեխնիկա, կենցաղային տեխնիկա և տնտեսական գույք: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է որոշ գնումների գծով գնման գործընթացի չկայացմամբ:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների ծախսերը, որոնք կազմել են 123.3 մլն դրամ և պահպանվել նախորդ տարվա մակարդակին: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) 4 հետազոտություն (եռամսյակը մեկ անգամ), կյանքի որակի (Quality of Life Index) 1 հետազոտություն, համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment) 3 հետազոտություն, որոնց արդյունքները հրապարակվել են ՀՀ կառավարության կայք-էջում: Այս հետազոտությունները հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության աշխատակազմի բարեփոխումների ռազմավարության մշակման համար և տալիս են օբյեկտիվ ու ճգրիտ տեղեկատվություն ոլորտների զարգացման մասին:

ՀՀ արդարադատության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով 2017 թվականին տրամադրվել է 20.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 94.4%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը էական փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հինմադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը տրամադրվել է 91.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 294-ն որոշմամբ դադարեցվել է Հայաստանի Հանրապետության «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը, և հիմնադրվել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամը, որի գործունեության հիմնական նպատակը ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատմանը, ինչպես նաև

հստակեցմանը և պարզեցմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումը, նոր կարգավորող օրենսդրական նորմերի ուսումնասիրությունը, դրանց սահմանման նպատակահարմարության վերլուծությունը և ազդեցության գնահատումն է: Վերակազմակերպումից հետո հիմնադրամի 2016 թվականի պահպանման ծախսերը ֆինանսավորվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ 71.5 մլն դրամի չափով: Ընդհանուր առմամբ 2016 թվականին այս ուղղությամբ պետական բյուջեից տրամադրվել էր 93.7 մլն դրամ:

ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության պահպանմանը տրամադրվել է 22.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 38.6%-ով՝ պայմավորված հաստիքային միավորների ավելացմամբ և թափուր հաստիքների համալրմամբ:

Պետության կողմից ծառայությունների էլեկտրոնային մատուցման համալիր ծրագրի ապահովմանը տրամադրվել է 3.2 մլն դրամ (100%): Ծրագիրը գործում է 2017 թվականից: Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հիմնական միջոցներից է արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորումը, որի նպատակով կարևորվում է նաև հանրային կառավարման համակարգի շարունակական արդիականացումը: Այդ պատճառով նախատեսվում է պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ ծառայությունները դեռևս էլեկտրոնային եղանակով չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագրի մշակում և իրականացում:

ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին նախարարության պահպանման նպատակով իրականացվել են 341.5 մլն դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 94.3%-ը: Տվյալ միջոցները գոյանում են իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ապոստիլ դնելու և շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման վճարովի ծառայությունների մատուցումից: Արձանագրվել են տնտեսումներ որոշ ապրանքատեսակների ձեռքբերման ծախսերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 66.8%-ով՝ հիմնականում պայմանավորված տվյալ արտաբյուջետային միջոցների հաշվին պարգևատրումների աճով:

ՀՀ արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև 2016 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված N AAG-111-G-13-001 Զարգացման համագործակցության համաձայնագրի ներքո իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է նախատեսված միջոցների 99.9%-ը՝ 43.8 մլն դրամ: Ծրագրի իրականացման նպատակով 2016 թվականին ստեղծվել է «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը:

«Օժանդակություն Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 50.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ և նպատակ ունի օժանդակել ՀՀ կառավարությանը՝ իրականացնելու 2015-2018թթ. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը: Համաձայնագրով ՀՀ կառավարության աշխատակազմին տրամադրվել է 14 ամսվա համար ֆինանսական օժանդակություն՝ փորձագիտական հանձնախումբ ձևավորելու և տեխնիկական կարողություններ ձեռք բերելու համար:

2017 թվականի հուլիսի 31-ին ՀՀ արդարադատության նախարարության ու Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև կնքվել է «Աջակցություն Հայաստանի կառավարությանը՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցով բարելավելու օրենսդրական և կարգավորիչ դաշտը՝ աջակցելու ազդարարների արդյունավետ պաշտպանության համակարգի ստեղծմանը» դրամաշնորհային ծրագրի իրականացման մասին փոխըմբռման հուշագիր: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործում, մասնավորապես, ազդարարների պաշտպանության մասով՝ ազդարարներին հնարավորություն ընձեռելով հաղորդել կոռուպցիոն ռիսկերի մասին պաշտպանված եղանակով, և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում՝ հանրային իրազեկմանն ուղղված գործունեությանը, ընդգրկելով նաև ազդարարների պաշտպանության համակարգը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին օգտագործվել է 18.8 մլն դրամ կամ նախատեսվածի 74.5%-ը:

Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունը ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները դիմորդների կողմից ստանալու և փորձագետներին տալու նպատակով ստեղծված արտաբյուջետային հաշվի միջոցներից 2017 թվականին տրամադրվել է 2 մլն դրամ կամ նախատեսվածի 98%-ը: 2016 թվականին այս նպատակով միջոցներ չէին օգտագործվել:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին 2017 թվականին տրամադրվել է 39.4 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՌԴ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ-ի անդամակցության շրջանակներում ՀՀ-ին տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրի ու հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերի

կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը (առանց ԱԱՀ-ի վերադարձի) նվազել են 19%-ով կամ 5.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2016 թվականին Չինական Արտահանման-ներմուծման բանկի աջակցությամբ ՀՀ մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման ծրագրի իրականացմամբ, ինչպես նաև դրոշմապիտակների ձեռքբերման ծախսերով, որոնք 2017 թվականին չեն նախատեսվել:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրին տրամադրվել է 9.5 մլրդ դրամ, որն օգտագործվել է 99.7%-ով: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահպանմանը: Իսկ նախարարությունների աշխատակազմերի մասով պահպանման ծախսերին տրամադրվել է 2.9 մլրդ դրամ, որն օգտագործվել է 99.4%-ով և ուղղվել ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 47.5%-ով, որը պայմանավորված է ակցիզային դրոշմանիշերի տպագրական աշխատանքների թանկացմամբ և պահեստավորված մնացորդի բացակայությամբ:

Հաշվետու տարում ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային սպասարկումն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 140.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 29.9%-ով՝ պայմանավորված է նոր ծրագրային մոդուլների ձեռքբերմամբ:

Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են ավելացված արժեքի հարկի վերադարձի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 16.6 մլրդ դրամ: Վերջինս հանդիսանում է տարվա առաջին հինգ ամիսների ընթացքում հատկացված գումարը, որից հետո ավելացված արժեքի հարկի վերադարձը կատարվել է եկամուտների նվազեցման եղանակով: Դրանով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 65.8%-ով:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով նախատեսված շուրջ 47.5 մլն դրամն օգտագործվել է 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.7%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարի գումար էր հատկացվել էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի թարգմանության համար:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարողությունների զարգացմանը հատկացվել է 331.8 մլն դրամ, որն օգտագործվել է 99.6%-ով:

Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման վճարը կազմել է 32.4 մլն դրամ կամ նախատեսվածի 96.1%-ը՝ պայմանավորված պետական բյուջեի կանխատեսումների հիմքում դրված փոխարժեքի նկատմամբ փաստացի ցածր փոխարժեքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3%-ով:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով շուրջ 1.3 մլրդ դրամ:

Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 103.1%-ով՝ կազմելով շուրջ 1.6 մլրդ դրամ[10]:

Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 5.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 86.6%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 32.7%-ով: Վերջինս պայմանավորված է 2017 թվականին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքային փոփոխությամբ: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի տարածքային ստորաբաժանումները կառուցվածքային փոփոխության արդյունքում վերակազմավորվել են որպես ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի վերադաս մարմնի ստորաբաժանում, ուստի աշխատակիցների դրույքաչափը բարձրացել է: Բացի այդ, ՀՀ կառավարության 29.05.2017թ թիվ 494-Ն որոշմամբ կրճատվել են 483 աշխատակիցներ, որոնց տրամադրվել է վերջնահաշվարկ, ինչն իր հերթին նույնպես նպաստել է ծախսերի ավելացմանը: Ի տարբերության 2016 թվականի, միջոցներ են տրամադրվել նաև շենքերի և շինությունների կառուցման և տրանսպորտային սարքավորումների ձեռքբերման նպատակով:

ՌԴ կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ անդամակցության շրջանակներում ՀՀ տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 1.1 մլրդ դրամի փոխարեն օգտագործվել է 26.3 մլն դրամ: 2017 թվականի միջոցառումները թերակատարվել են՝ գնման ընթացակարգերի կազմակերպման տևողության և տեխնիկական միջոցների ներմուծման խնդիրներով պայմանավորված: Արդյունքում կնքվել են մի շարք շարունակական պայմանագրեր, որոնց վերջնաժամկետները նախատեսված են 2018 թվականին: 2018 թվականի պետական բյուջեով նախատեսվել են միջոցներ վճարումներ իրականացնելու համար:

[10] «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագիրն իրականացվում է ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակի կողմից:

Հաշվետու տարում 14.9 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 99%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2016 թվականի համեմատ աճել են 1.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների ներկայացուցչությունների պահպանման և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների դասում ավելի քան 9.6 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին և 710.9 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Հատկացումները ծախսվել են արտերկիր գործուղված դիվանագետների աշխատավարձերի, ամսական փոխհատուցման, բնակարանների վարձակալության, ինչպես նաև ծառայողական շենքերի վարձակալության, պահպանման և դեսպանության մյուս ծախսերի համար: Օտարերկրյա պետություններում գործում է 58 դիվանագիտական ներկայացուցչություն: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի հաշվին կատարված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել: Արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք գոյանում են նվիրատվություններից և հանգանակություններից, ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերն աճել են 59.4%-ով:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության ծախսերը կազմել են շուրջ 2.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.2%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունների բյուջեի նվազմամբ, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամավճարների չափերի փոփոխությամբ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 107 միջազգային կազմակերպությունների և ԱՊՀ կառույցների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3%-ով, ինչը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 183.2 մլն դրամ և 564.4 մլն դրամ, որոնց ճշտված ծրագրերը կատարվել են 91.9%-ով և 99.5%-ով: Նախորդ տարվա համեմատ պատվիրակությունների ընդունելությունների ծախսերը նվազել են 47.1%-ով, իսկ արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերն՝ աճել 37.2%-ով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը տրամադրվել է 154.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.4%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: 2016 թվականին առկա տնտեսումներով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.6%-ով:

2017 թվականին արտաքին հարաբերությունների դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարության ու ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության աշխատակազմերի պահպանման նպատակով տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով:

Նախատեսված ծավալով իրականացվել են դեսպանությունների շենքերի գնման ծախսերը, որոնք կազմել են 33.9 մլն դրամ: Գումարն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով՝ ըստ պայմանագրի 2017 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2016 թվականի համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 97.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.4% կատարողական: Ծրագիրը նախատեսված է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ արդյունավետ համագործակցության իրագործման համար: Ծրագրի նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներքին ու արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի կայուն, հուսալի և ոչ ռիսկային ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.1%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ:

ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շենքի վերակառուցման աշխատանքների ծախսերի փոխհատուցման ՀՀ մասնաբաժինը կազմել է 11.2 մլն դրամ (100%): ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելությունը տեղակայված է Բրյուսելում: ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շահագործումից հետո Գործընկերների համար հատկացված մասնաշենքում տարածքների վարձակալության վերաբերյալ ՆԱՏՕ-ն որոշում է կայացրել, որ ծախսերի հիմնական մասը կիրականացվի իր կողմից՝ պայմանով, որ դրանք վարձակալների կողմից սկսեն մարվել 2016 թվականից սկսած: Այդ գումարները պետք է վճարեն գործընկերներ-երկրները՝ ըստ իրենց զբաղեցրած տարածքների: Հայաստանի մասնաբաժինը կազմում է 154970 եվրո, որից 11171.9 եվրոն նախատեսված է ներքին հարդարման լրացուցիչ աշխատանքների համար և վճարվել է 2017 թվականին:

Հաշվետու տարում 736.4 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 96.9%-ը: 2016 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 3.3%-ով՝ հիմնականում պայմանավորված

քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերի աճով, որոնք կազմել են 113.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը և 28.9%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողների քանակի աճով: 2017 թվականին քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվել է 447 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 138-ի դիմաց:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 307.9 մլն դրամ կամ նախատեսվածի 94.6%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական բյուջեով գնման ենթակա ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 314.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98%-ը՝ կապված տնտեսումների հետ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 2.7 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 4.9%-ով՝ հիմնականում պայմանավորված պետական բյուջեից «2015 թվականի Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ կամ ծրագրի 99.2%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով, ինչը պայմանավորված է աշխատավարձի և քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդի ծախսերի նվազմամբ, 2017 թվականի հունվարի 1-ից որոշ վարձակալական պայմանագրերի լուծմամբ, էներգետիկ և կապի ծառայությունների ծախսերի կրճատմամբ:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 670.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.1%-ը: Ծրագրի շրջանակում իրականացվել են «Հացահատիկի բերքահավաքի որակի հետազոտություն», «Տնային տնտեսությունների կենսապայմանների

ամբողջացված հետազոտություն», «Աշխատուժի հետազոտություն», «Կազմակերպությունների ֆինանսական ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի վերաբերյալ (ըստ տնտեսության հատվածների բաշխվածության) հետազոտություն» և սոցիալ-տնտեսական բնույթի այլ սկզբնական տեղեկատվության հավաքագրում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 8.3%-ով, ինչը պայմանավորված է աշխատավարձի, էներգետիկ և մասնագիտական ծառայությունների ծախսերի կրճատմամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի խթանման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 92.9 մլն դրամ կամ նախատեսվածի 94.2%-ը և 1.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրով նախատեսված գնումների համար անհրաժեշտություն էր առաջացել հստակեցնել գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, ուստի որոշ գնման մրցույթներ չեն կայացել, իսկ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համակարգող ստորաբաժանումը համապատասխան կադրերով ուշ է համալրվել, այդ իսկ պատճառով աշխատավարձի ծախսերի գծով առաջացել է տնտեսում:

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագրին տրամադրվել է 149.6 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: 2016 թվականի համեմատ ծախսերը նվազել են 1.9%-ով: Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոններն իրենց գործունեությունը ծավալում են երեք հիմնական ուղղություններով՝ մասնագիտական կարողությունների զարգացում, բիզնես զարգացում ու աքսելերացիա և կառավարվող աշխատանքային տարածքների պահպանություն:

ՀՀ պետական մարմիններին լիցենզիոն ծրագրային փաթեթներով ապահովման ծրագրի շրջանակներում 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 560.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագիրն իրականացվում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից: Գումարը հատկացվել է «Հայաստանի ՏՏ-ի ոլորտի մրցունակության բարձրացում, Հայաստանի վարկանիշի ձևավորում՝ որպես ՏՏ-ի տարածաշրջանային կենտրոն» ծրագրի շրջանակներում, որն ընդգրկում է ՀՀ պետական կառավարման մարմինների համար «Մայքրոսոֆթ» ընկերության լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերման և բաշխման գործընթացը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

2019 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման շրջանակներում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 95.8 մլն դրամ անդամավճար, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով:

Եվրասիական տնտեսական միության հետ տեղեկատվական հոսքերի ապահովման նպատակով ինտեգրացված համակարգի ազգային սեգմենտի պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 48.3 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագիրն իրականացնում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն: «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 217-Ա որոշմամբ ճանաչվել է որպես Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում ստեղծված՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի ինտեգրացիոն շլյուզ (պետական բաղադրիչի օպերատոր): Ծրագրի նպատակն է Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի պահպանումը, արդիականացումը և զարգացումը: Վերջինիս համար ապահովվում է ինտեգրացիոն շլյուզի սարքավորման սպասարկումն ու գործունակությունը: Ծրագիրը գործում է 2017 թվականից:

«2015 թվականի Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն» ծրագրի շրջանակներում պետական բյուջեից տրամադրվել է 49.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնակչության, առողջության և սնուցման վերաբերյալ հավաքագրված տվյալների ամփոփումը, հրապարակումը, տարածումը և համապատասխան հաշվետվողականության ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 79.6%-ով՝ պայմանավորված աշխատանքների կրճատմամբ և ծրագրի ավարտով:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը: Մասնավորապես՝ 765 մլն դրամ տրամադրվել է տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններին, 4.7 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 98.2% և 95.8%: Նախորդ տարվա համեմատ նշված առաջին ծրագրի ծախսերն աճել են 28.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 340-Ն որոշմամբ, որի համաձայն կառավարական N 2 և 3 շենքերը հանվել են ՀՀ կառավարության աշխատակազմի հաշվեկշռից և ամրացվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսերը նվազել են 4.3%-ով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 69.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 55.9%-ով, ինչը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 382-Ն որոշմամբ կազմակերպության լուծարմամբ:

Հաշվետու տարում պետական աջակցությունը «Սպասարկում» ՊՈԱԿ-ին կազմել է 258.7 մլն դրամ կամ ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.7%-ով: Վերջինս պայմանավորված է կառավարական N 2 և 3 շենքերը ՀՀ կառավարության աշխատակազմի հաշվեկշռից հանելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն ամրացնելու հանգամանքով, որոնց սպասարկումը 2016 թվականի առաջին եռամսյակում իրականացվել էր «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կողմից:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրվել է 8.6 մլն դրամ՝ վարչական սարքավորումների և գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով: Միջոցներն օգտագործվել են 93.1%-ով: Նախորդ տարի այս նպատակով պետական բյուջեից գումար չէր տրամադրվել:

2016 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն աճել են 5.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի ավելացմամբ:

2017 թվականին *«Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք»* դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 10.7 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.7%-ով՝ պայմանավորված գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների գծով ծախսերի նվազմամբ:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 738.6 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 92% կատարողական և 17.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը պայմանավորված է հիմնականում թեմատիկ մրցույթների հետաձգմամբ, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերի անկումը՝ նաև թեմաներում ընդգրկված գիտաշխատողների քանակի նվազմամբ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 14.4 մլն դրամ տրամադրվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին պատվիրվել են սփյուռքին վերաբերող թվով 12 գիտական հետազոտություններ: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են շուրջ 8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Միջոցներն ուղղվել են բազային ֆինանսավորում ստացող գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.6%-ով:

«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և գիտական ներուժի արդիականացման ծախսերը կազմել են 755.3 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 898.7 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված են Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և ՀՀ ԳԱԱ մի շարք կազմակերպություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.5%-ով՝ հիմնականում պայմանավորված Մատենադարանի պահպանման և սպասարկման ծախսերի ավելացմամբ: Մասնավորապես՝ 17 մլն դրամ տրամադրվել է «Գանձասար» մասնաճյուղի ստեղծմանը:

Ամբողջությամբ օգտագործվել են նաև ««ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 294.8 մլն դրամ: «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամում ԱՐԵԱԼ գծային արագացուցչի ծրագրի շնորհիվ հնարավորություն ստեղծվեց հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ իրականացնել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, նյութագիտության, նանոէլեկտրոնիկայի և այլ բնագավառներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.5%-ով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների դասի ծախսերը 2017 թվականին կազմել են ավելի քան 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 11.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 1.5 մլրդ դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.7%-ով: Նախորդ տարվա համեմատ պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերն աճել են 13.7%-ով՝ պայմանավորված ֆինանսավորվող 9 նոր թեմաների ավելացմամբ: 2017 թվականի ընթացքում ֆինանսավորվել են ընդհանուր առմամբ 271 գիտական թեմաներ, որոնցից 178-ը՝ 2015 թվականից սկսված թեմաներն են, որոնցից 161-ն

ավարտվել են 2017 թվականին, 84-ը՝ 2016 թվականից սկսված թեմաները, որոնցից 28-ն ավարտվել են 2017 թվականին, և 9-ը՝ 2017 թվականից սկսված թեմաները:

Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների ծախսերն իրականացվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 206.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 13.5 մլրդ դրամ կամ ծրագրի 84.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային ու դրամաշնորհային ծրագրերի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերն աճել են 3.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2017 թվականին ՀՀ Ազգային ժողովի և Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրությունների անցկացմամբ ու «Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով:

Հաշվետու տարվա ընթացքում 1 մլրդ դրամ է տրամադրվել այս դասում ընգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 96.6%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7%-ով՝ պայմանավորված աշխատավարձի բնականոն աճով:

2017 թվականին ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպման նպատակով տրամադրվել է շուրջ 2.5 մլրդ դրամ կազմելով ծրագրի 99.9%-ը:

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման նպատակով օգտագործվել է 478.1 մլն դրամ՝ ապահովելով 93.6% կատարողական: Նշենք, որ նախորդ տարի այս նպատակով օգտագործվել էր շուրջ 1.4 մլրդ դրամ՝ պայմանավորված 2016 թվականին ավելի մեծ թվով համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունների անցկացմամբ:

Փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրվել է 551.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.2%-ով՝ հիմնականում պայմանավորված փորձաքննությունների քանակի աճով:

Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներն իրականացնելու համար պետական բյուջեից տրամադրվել է 33 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: 2017 թվականին իրականացվել են թվով 435 պետական գույքի՝ աճուրդով վաճառքի կազմակերպում և անցկացում, նախորդ տարվա 430-ի փոխարեն:

Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը հաշվետու տարում կազմել են 271.5 մլն դրամ, որոնք նույնպես նախատեսված ծավալով իրականացվել են և նախորդ տարվա համեմատ աճել 7 անգամ: 2017 թվականին աշխատանքներում ներառվել են նաև Կառավարական թիվ 2 և 3 շենքերի սպասարկման ծառայությունները (60344 քառ.մ տարածքի սպասարկում): Ծրագրի շրջանակներում իրականացվել են պետական գույքի հաշվառման, գույքագրման և ուսումնասիրությունների անցկացման, գնահատման և շենքերի սպասարկման աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 36.4 մլն դրամ կամ նախատեսվածի 92.7%-ը, որը խնայողության արդյունք է: Ծրագրի նպատակն է՝ կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի ու արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,
- Հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,
- Կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,
- Ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2017 թվականին ծրագրի շահառուների, Համաշխահային Բանկի և ՀՀ ՖՆ ԱՖԾԿԿ-ի մասնագետների կողմից մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ՝ մասնավորապես, իրականացվել են հետևյալ խորհրդատվական ծառայությունները. «Պլանավորման և քաղաքականության ձևավորման վերաբերյալ նոր հիմունքների և հիմնարար սկզբունքների պիլոտային ներդրում» և «Ծրագրի ձեռքբերումների լուսաբանում», ինչպես նաև իրականացվել է

ծրագրի աուդիտը: Ծրագիրն ավարտվել է 2017 թվականի հունվարի 31-ին, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը հաշվետու տարում տրամադրվել է 796 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը և 1.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված համակարգի օպտիմալացման շրջանակներում հաստիքների կրճատմամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ կամ ծրագրի 85.5%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով, որը պայմանավորված է կոմիտեի եկամուտների աճով:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 37.6 մլն դրամ կամ նախատեսվածի 32.9%-ը: Ծրագրի ընդհանուր նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով: ՀՄՀ-Հայաստան ծրագրի փակման պլանի համաձայն, ծրագրի կառավարման խմբի միջոցով իրականացվում է ծրագրի շարունակության կառավարումը և վերահսկումը: 2017 թվականին ծրագրով նախատեսված աշխատանքները կատարված են, և ծրագրից շեղումը հանդիսանում է ծախսերի խնայողություն:

Տվյալ դասում ընդգրկված՝ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 2.7 մլն դրամ կամ նախատեսվածի 86.3%-ը, որը պայմանավորված է նախատեսվածից ցածր գներով ապրանքների ձեռքբերմամբ: Ծրագրի շրջանակներում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համար ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա և գրասենյակային կահույք:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է շուրջ 415.1 մլն դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքների կատարման համար պայմանագրերի՝ ավելի ցածր արժեքով կնքման հանգամանքով: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 4.5%-ով՝ հիմնականում պայմանավորված գեոդեզիական աշխատանքների ծավալների նվազմամբ:

2017 թվականին Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրությունների կազմակերպմանը ՀՀ պետական բյուջեից հատկացված 675.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի իրականացման համար ծախսվել է 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 51%-ը: Ծրագրի նպատակն է՝ օժանդակել Հայաստանի եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՏՀՏ ենթակառուցվածքում կարևոր ներդրումները, որպեսզի հնարավորություն ընձեռվի արդիականացնել բիզնես գործընթացները, ընդլայնվի էլեկտրոնային կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարության ներդրումը՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,
- Գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,
- ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրի ցածր կատարողականի պատճառներն են՝

- «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի (ՄՌԿՏՀ)» համար պատվիրված ծրագրային ապահովման մատակարարման և տեղադրման նպատակով մրցույթի պահանջներին համապատասխանող հայտերի բացակայության պատճառով մրցույթը չեղյալ է հայտարարվել, որը կրկին վերահայտարարվել և չեղարկվել է 2017 թվականի հոկտեմբերին, քանի որ ՀՀ կառավարությունը նախատեսում է ստեղծել պետական համընդանուր ՄՌԿՏՀ-ի պլատֆորմ.
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ենթակառուցվածքային փոփոխությունների պատճառով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ենթակառուցվածքներում ներքին ցանցի վերազինման մրցույթը չեղյալ է հայտարարվել համապատասխան հայտի բացակայության պատճառով.
- «Ինտեգրված եկամուտների կառավարման համակարգի հինգ ինտեգրված մոդուլների համար ծրագրային ապահովման մատակարարում և տեղադրում» մրցույթը հայտարարվել է 2017 թվականի հուլիսի վերջին, պայմանագիրը ստորագրվել է նոյեմբերի 16-ին, որի հետևանքով գնումը տեղափոխվել է 2018 թվական.
- Չի կայացել «Հարկային ստուգումների գործերի կառավարման համակարգի (TACMS)» ստեղծման մրցույթը, որը նույնպես չեղյալ է հայտարարվել հայտի բացակայության պատճառով:

2017 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- հզորացվել են տվյալների մշակման կենտրոնները՝ ապահովելով տվյալների պահպանման պահոցի անհրաժեշտ ծավալները և արագագործությունը.
- մշակվել է հարկ վճարողների էլեկտրոնային անձնական հաշվի քարտը՝ հաշվի առնելով Հարկային օրենսգրքով նախատեսված բոլոր փոփոխությունները, ինչպես նաև անցումը մեկ միասնական հարկային հաշվին.
- ներդրվել է «Բնական մորթուց հագուստի, հագուստի պարագաների և այլ արտադրանքի» ապրանքային դիրքերի մասով ապրանքների հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման համակարգը.
- ձեռք են բերվել լրացուցիչ հովացման համակարգեր տվյալների մշակման կենտրոնների համար.
- մեկնարկել են «Հարկատու 3» համակարգի 5 մոդուլների (գանձապետարանից ստացվող տվյալների ավտոմատ հաշվառում, երրորդ անձանցից ստացվող տեղեկատվության ավտոմատացում, ազգային էլ-պորտալի ծրագրային ապահովում, իրավական վարույթների կառավարման էլեկտրոնային համակարգ, կամերալ ուսումնասիրությունների իրականացման ավտոմատ համակարգ) մշակման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 31.9 մլն դրամ՝ նախատեսված 388 մլն դրամի դիմաց: Ծրագրի նպատակն է՝ հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում,
- Ներդրումների և արտահանման խթանում,
- Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

Ծրագրի ցածր կատարողականի պատճառը վարկային ծրագրի գնումների պլանի վերանայումն է, որի պատճառով որևէ տեխնիկական առաջադրանք չի ներկայացվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում ծախսվել է 343.3 մլն դրամ կամ նախատեսվածի 66.1%-ը: Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր,

- Ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման լուծումներ,
- Կարողությունների զարգացում և կարողությունների ստեղծման փոքր միջամտություններ,
- Ծրագրի կառավարում:

2017 թվականին կնքվել են և իրականացման փուլում են գտնվում հետևյալ պայմանագրերը՝ Էլեկտրոնային կառավարման կազմակերպման և ղեկավարման քաղաքական և ինստիտուցիոնալ կառուցվածքի հզորացում, Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի մոնիթորինգ և գնահատում, Էլեկտրոնային հյուպատոսության համակարգի (մոդուլների) և SS սարքավորումների մատակարարում և տեղադրում:

Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ պետական կառավարման ներքին համակարգերի արդիականացման և ինտեգրման նպատակով հայտարարված մցույթը չի կայացել: Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարությանը «Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի» ներդրման ողջ գործընթացին տեխնիկական օժանդակություն ցուցաբերելու նպատակով նախատեսված անհատ խորհրդատուի մրցույթը գնումների պլանի վերանայման պատճառով 2017 թվականին չի հայտարարվել: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական համակարգի զարգացման համար ազգային ռազմավարական դրամաշնորհային համաձայնագիրը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2017 թվականի ապրիլի 28-ին: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2017 թվականի հուլիսի 5-ին: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2021 թվականի հունիսի 30-ը: Ծրագրի նպատակը Հայաստանի ազգային վիճակագրական համակարգում կարողությունների և ՀՀ ԱՎԾ-ի աշխատակազմի մասնագիտական կարողությունների հետագա բարելավումն է՝ միջազգային չափանիշներին համահունչ վիճակագրությունը ժամանակին ստանալու և տարածելու համար: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ,
- Տվյալների հավաքագրում և տվյալների նախապատրաստում,
- Տվյալների տարածում և իրազեկում,
- Սարքավորումների, ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի արդիականացում,
- Ծրագրի կառավարում:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեով ծրագրի իրականացման համար նախատեսված 129.5 մլն դրամի դիմաց օգտագործվել է 4 մլն դրամ: Ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ դրամաշնորհային համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. հուլիսի 5-ից, իսկ

ծրագրի գնումների պլանը հավանության է արժանացել ՀԲ-ի կողմից և հաստատվել է Կառավարման խորհրդի կողմից 2017 թվականի հոկտեմբերին: Այդ իսկ պատճառով 2017 թվականին իրականացվել է միայն ծրագրի իրականացման թիմի ձևավորումը, իսկ ծրագրով նախատեսված գնումների գործընթացը տեղափոխվել է 2018 թվական:

«Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում» արտաբյուջետային ծրագրի շրջանակներում 2017 թվականին նախատեսված 1.8 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Մասնավորապես՝ 885.5 մլն դրամ հատկացվել է Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագրին՝ ՀՀ-ում ընտրական գործընթացներին աջակցության ծրագիրը Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից համակարգելու համար: Մնացած 960.7 մլն դրամն ուղղվել է ընտրական գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով տեսահսկողության համակարգի ձեռքբերմանը:

Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավորը մինչև 5 մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպման ծախսերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին կազմել են շուրջ 19 մլն դրամ կամ նախատեսվածի 87%-ը: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքագրվել է 33.9 մլն դրամ՝ նախատեսված 7.7 մլն դրամի փոխարեն: Արդյունքում ծրագրի ծախսերի ցուցանիշը կազմել է -14.9 մլն դրամ՝ նախատեսված 14.1 մլն դրամի դիմաց:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրապարակման աշխատանքներին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 13.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 37.5%-ը: Վերջինս պայմանավորված է գործուղումների, ինչպես նաև ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերի տնտեսմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ԿԱՀ) ընդլայնման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 120.5 մլն դրամ կամ նախատեսվածի 96.9%-ը: Ծրագրի նպատակն է՝ հզորացնել Հայաստանում կենսապայմանների մշտադիտարկումը՝ տնային տնտեսությունների և անհատական հետազոտական տվյալների բարելավման միջոցով, որը հավաքագրվում է ՀՀ ԱՎԾ միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- ԿԱՀ ընտրանքի ընդլայնում,
- Ծրագրի կառավարում:

2017 թվականին կնքվել են պայմանագրեր ընտրված Ծրագրի համակարգողի և Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ)՝ թվով 72 հարցազրուցավարների հետ, որոնք Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում մեկ տարվա կտրվածքով աշխատանքներ են իրականացրել Հայաստանի կենսապայմանների ամբողջացված ընդլայնված ընտրանքով հետազոտության շրջանակում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության ենթակառուցվածքի զարգացման (ՏՏԵԶ) դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 273.5 մլն դրամ կամ նախատեսվածի 89.6%-ը: Ծրագրի նպատակն է՝ զարգացնել նորաստեղծ՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ) կարողությունները զբոսաշրջության խթանման և զարգացման ծրագրերի նախագծման և ՏՏԵԶ վարկային ծրագրի նախապատրաստման ուղղությամբ:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- ՀԶՀ-ի Զբոսաշրջության բաժնի կարողությունների զարգացում,
- Առաջնահերթ գերակայության ներդրումների տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և մանրամասն/աշխատանքային նախագծեր,
- Բնապահպանական և սոցիալական փաստաթղթեր,
- Ֆինանսական աուդիտ:

Կնքված պայմանագրերով հիմնական աշխատանքները կատարվել են 2017 թվականին՝ համաձայն ժամանակացույցի: Ծրագրված ցուցանիշից շեղման պատճառներից հիմնականն այն է, որ չեն իրականացվել ծրագրով նախատեսված՝ մշակութային ժառանգության խորհրդատվական ծառայությունները (UNESCO): Գնումների գործընթացի արդյունքում առկա են նաև որոշակի խնայողություններ:

2017 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 99.6%-ով և կազմել 119.8 մլրդ դրամ: Բացի այդ, պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման համար ևս 2.4 մլրդ դրամ հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, որը բացատրվում է այն հանգամանքով, որ 2016 թվականին պետական (գանձապետական) պարտատոմսերի հաշվին պակասուրդի փաստացի ֆինանսավորումը գերազանցել էր ծրագրային ցուցանիշը, ինչը չէր նախատեսվել ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով պետական (գանձապետական) պարտատոմսերի սպասարկման ծախսերի հաշվարկներում: Վերջինս հաշվի առած՝ 2016 թվականի համեմատ պետական պարտքի գծով գործառնությունների գծով ծախսերն աճել են 24.2%-ով կամ 23.8 մլրդ դրամով: Արդյունքում պարտքի սպասարկման ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում աճել է 1.3 տոկոսային կետով և 2017 թվականին

կազմել 8.1%: ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է եղել նախ և առաջ 2017 թվականի ընթացքում պարտքի ծավալի 13.6% աճով: Աճին նպաստել են նաև.

- պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի աճը 41.4 մլրդ դրամով և դրանց կառուցվածքում երկարաժամկետ պարտատոմսերի մասնաբաժնի աճը 9.2 տոկոսային կետով, որը հանգեցրել է պարտքի սպասարկման ծախսերի ավելացմանը: Պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման ծախսերն ընդհանուր առմամբ աճել են 16.2 մլրդ դրամով, իսկ ընդամենը սպասարկման ծախսերում վերջինիս տեսակարար կշիռն աճել է 4.8 տոկոսային կետով,
- ՀՀ կառավարության կողմից արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման միջին տոկոսադրույքի աճը՝ 1.8%-ից 2.1%,
- արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությունը (մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 473.4-ից աճել է մինչև 475.36՝ 0.4%-ով):

Հաշվետու ժամանակահատվածում 58.2 մլրդ դրամ տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որից 2.4 մլրդ դրամը, ինչպես նշվեց, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին: Առանց պահուստային ֆոնդից հատկացված գումարի՝ նշված ծախսերի կատարողականը կազմել է 99.9%: Նախորդ տարվա համեմատ գանձապետական պարտատոմսերի սպասարկման ծախսերն աճել են 38.4%-ով, ինչը պայմանավորված է շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի աճով (8.1%-ով): Սպասարկման ծախսերի աճը որոշակի չափով զսպվել է՝ պայմանավորված նախորդ տարվա համեմատ հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված գանձապետական պարտատոմսերի միջին կշռված եկամատաբերության նվազմամբ 1.14 տոկոսային կետով՝ 11.07%-ից հասնելով 9.93%-ի:

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 32.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով.

- արտաքին վարկերի գծով պարտքի բացարձակ մեծության աճով՝ 19%-ով,
- ՀՀ կառավարության կողմից արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման միջին տոկոսադրույքի աճով՝ 1.8%-ից մինչև 2.1%: Դրա պատճառներն են.

- լողացող տոկոսադրույքով տրամադրվող վարկերի սպասարկման ծախսերի հաշվարկման հիմքում ընկած LIBOR դրույքաչափի բարձրացումը: Նշենք, որ 2016 թվականին 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR դրույքաչափի միջին ցուցանիշը կազմել էր 1.06%, իսկ 2017 թվականին՝

1.48%, ընդ որում հիշյալ տոկոսադրույքի հիման վրա է իրականացվում արտաքին վարկերի շուրջ 20%-ի սպասարկումը,

- Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) արտոնյալ վարկերի գծով տոկոսադրույքների բարձրացումը՝ պայմանավորված միջին եկամուտ ունեցող երկրների շարքին դասվելու հանգամանքով: Այսպես, 2016 թվականի տարեվերջի դրությամբ ԱԶԲ-ի արտոնյալ վարկերի միջին տոկոսադրույքը կազմել էր 1.36%, իսկ 2017 թվականի տարեվերջի դրությամբ այն արդեն կազմում էր 2.75%: Նշենք, որ 2017 թվականի տարեվերջի դրությամբ ԱԶԲ-ի արտոնյալ վարկերի կշիռն արտաքին վարկերի կառուցվածքում կազմում էր 9.2%:

- արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությամբ, մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 473.4-ից աճել է 475.36-ի՝ 0.4%-ով:

Պայմանավորված արտաքին վարկերի կառուցվածքով՝ սպասարկման ծախսերի 85.9%-ը կազմել են միջազգային կազմակերպություններին վճարված տոկոսավճարները, որոնց տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ աճել է 0.9 տոկոսային կետով կամ բացարձակ մեծությամբ աճել են 13.9 մլն ԱՄՆ դոլարով: Փաստացի տոկոսավճարների 32.6%-ը կազմել են Զարգացման Միջազգային Ընկերակցության վարկերի սպասարկման ծախսերը, որոնց մասնաբաժինը նվազել է 10.9 տոկոսային կետով՝ պայմանավորված նշված վարկերի մայր գումարների մարումների հետևանքով վարկերի մնացորդային գումարների նվազմամբ և պարտքի կառուցվածքում մյուս վարկատուների պարտքի ծավալների և տեսակարար կշիռների աճով: Միևնույն ժամանակ, աճել են Ասիական Զարգացման Բանկի (5.8 տոկոսային կետով), Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (5.6 տոկոսային կետով) և Եվրասիական Զարգացման Բանկի (2.2 տոկոսային կետով) մասնաբաժինները:

Օտարերկրյա պետություններին վճարված տոկոսավճարների ծավալն աճել է 1.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ դրանց մասնաբաժինը նվազել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 13.7%, քանի որ միջազգային կազմակերպություններին վճարված տոկոսավճարներն աճել են 13.9 մլն ԱՄՆ դոլարով: 1.2 տոկոսային կետով նվազել է գերմանական վարկերի սպասարկման ծախսերի կշիռը և 0.6 տոկոսային կետով՝ ճապոնական վարկերինը: Ավելացել են Ռուսաստանի Դաշնության վարկերի սպասարկման ծախսերը, որոնց կշիռն ավելացել է 1.6 տոկոսային կետով (1.2 մլն ԱՄՆ դոլարով):

Վճարված տոկոսավճարների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի գծով վճարված տոկոսավճարների տեսակարար կշիռը կազմել է 20.8% և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել 5.8 տոկոսային կետով:

Մուրհակների սպասարկմանը հաշվետու տարում տրամադրվել է 171.7 հազ դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը:

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը կազմել են 31.3 մլրդ դրամ (100%), որոնք նախորդ տարվա համեմատ էական փոփոխության չեն ենթարկվել:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների* ծախսերը կատարվել են 99.6%-ով՝ կազմելով 48.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով: Նշված գումարից 48.1 մլրդ դրամը տրամադրվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով և 2%-ով գերազանցել նախորդ տարվա հատկացումը:

Պետական աջակցությունը սահմանամերձ համայնքներին կազմել է 712.2 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 76.7%-ը: Նշված կատարողականը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից պակաս փաստացի պահանջով: Ծրագիրը նախատեսվել էր ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի բնակիչների գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման, բնակիչների բնական գազի և էլեկտրաէներգիայի ծախսերի մասնակի փոխհատուցման և 22 սահմանամերձ համայնքներում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց տվյալ տարում գանձվող վարձավճարների 50 տոկոսի փոխհատուցման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 8.4%-ով աճը հիմնականում պայմանավորված է աջակցությունից օգտվող սահմանամերձ համայնքների թվի ավելացմամբ:

Պաշտպանություն

2017 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 294.4 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 30.4%-ով՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարում 286.4 մլրդ դրամ ուղղվել է *ռազմական պաշտպանության* ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 99.3%-ը: Նշված գումարից 198.1 մլրդ դրամը հատկացվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմել է ծրագրի 99.3%-ը և 3.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը տրամադրվել է 374.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.1%-ը: ՀԱՊԿ-ում ՀՀ զինված ուժերի ներկայացուցչի պահպանման

ծախսերը կազմել են 46.4 մլն դրամ կամ ծրագրի 96.9%-ը: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություններում ՀՀ առաքելությունում ՀՀ ռազմական ներկայացուցչի պահպանմանը տրամադրվել է 47.8 մլն դրամ կամ ծրագրի 100%-ը: Ռազմական նշանակության համակարգերի պահպանման ծախսերը կազմել են 1.3 մլրդ դրամ կամ ծրագրի 74.5%-ը: Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորումը կազմել է 86.6 մլրդ դրամ կամ ծրագրի 100%-ը: Հիմնականում նշված հանգամանքով պայմանավորված՝ 2016 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերն ավելացել են 31.4%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում *արտաքին ռազմական օգնությանը* տրամադրվել է 162.8 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 100%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում պաշտպանության հարցերով պետական խորհրդականի պահպանման ծախսերը կազմել են 54.2 մլն դրամ: 45.6 մլն դրամ է տրամադրվել ՆԱՏՕ-ում (ռազմավարական հրամանատարությունների) ռազմական համագործակցության վարչությունում Հայաստանի Հանրապետության փոխգործակցության սպայի պահպանման նպատակով: ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչի պահպանման համար օգտագործվել է 53.3 մլն դրամ: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի տարածքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ արտաքին ռազմական օգնության ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 96.6% կատարողական և նախորդ տարվա համեմատ նվազելով 2.4%-ով:

Պաշտպանության՝ *այլ դասերին չպատկանող ծախսերը* կազմել են 6.3 մլրդ դրամ կամ ծրագրվածի 99.7%-ը, որից 50 մլն դրամը (ծրագրվածի 98.6%-ը) տրամադրվել է այլընտրանքային ծառայության ապահովմանը, 44.8 մլն դրամը (ծրագրվածի 88.9%-ը)՝ զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրամադրմանը և քննությունների ընդունմանը, 236 մլն դրամը (ծրագրվածի 94.6%-ը)՝ հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպմանը և 5.6 մլրդ դրամը (ծրագրվածի 100%-ը)՝ պաշտպանության բնագավառի այլ ծախսերին: Այլ ծախսերի գծով արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 367.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են

3.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է «Այլ ծախսեր» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 122.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով կամ 2.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված փրկարար ծառայության և դատարանների դասերի ծախսերի աճով:

Բաժնի ծախսերի 67.7%-ը կամ 83 մլրդ դրամ կազմել են *հասարակական կարգի և անվտանգության* խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 98.4%-ով: Նշված գումարից 60.6 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 19.7 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության դասի ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 98.3%-ով և 98.6%-ով:

2016 թվականի համեմատ *ոստիկանության* դասի ծախսերը նվազել են 2.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հասարակական կարգի պահպանության ապահովման ծախսերի կրճատմամբ:

ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը կազմել են 693.4 մլն դրամ կամ ծրագրով նախատեսվածի 87%-ը: Շեղումը պայմանավորված է բյուջեով նախատեսված 40 հազ. հատ կենսաչափական անձնագրերի փոխարեն 20 հազ. հատ ձեռք բերելու հանգամանքով:

2017 թվականին հասարակական կարգի պահպանության ապահովման նպատակով 35.5 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը՝ ապահովելով 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.6%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2016 թվականին ՀՀ քաղաքացու անձնագրերի, կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի տպագրության համար ՀՀ կառավարության կողմից 3.1 մլրդ դրամ լրացուցիչ միջոցներ էին հատկացվել տվյալ ծրագրի շրջանակներում:

Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության ծախսերը կատարվել են 99.8%-ով՝ կազմելով 3.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն

աճել են 2.4%-ով՝ պայմանավորված ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկը համալրելու հանգամանքով:

ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին՝ կենցաղային տեխնիկայի ձեռքբերմանն աջակցելու նպատակով տրամադրվող սպառողական վարկերի տոկոսագումարների 2 կամ 3 տոկոսային կետով համաֆինանսավորման ծախսերը կազմել են 12.5 մլն դրամ կամ նախատեսվածի 44.3%-ը՝ պայմանավորված շահառուների փաստացի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.5%-ով:

2017 թվականին շուրջ 7.2 մլրդ դրամ ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 96.6%-ը՝ պայմանավորված գնումների մրցույթների արդյունքում առաջացած տնտեսման և տարվա ընթացքում որոշ մրցույթների չկայացման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.3%-ով:

Ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցների հաշվին կատարված ծախսերը կազմել են 12.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.8%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 8.2%-ով:

Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 10 մլն դրամ կամ նախատեսվածի 91%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերում արձանագրվել է 66.3% աճ՝ պայմանավորված հոսպիտալի հիվանդասենյակների ընթացիկ նորոգման աշխատանքները հաշվետու տարում կատարելու հանգամանքով:

ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 85.3%-ով՝ կազմելով 534.3 մլն դրամ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ ևս նշված ծախսերը նվազել են՝ 27.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումների, առանձին գնման առարկաների ձեռքբերման մրցույթների չկայացման, ինչպես նաև շուրջ 2.2%-ով վճարովի ծառայության մատուցումից ստացվող եկամուտների թերակատարման հանգամանքներով: Վերջինս բացատրվում է 2016 թվականի տարվա կեսից կատարված օրենսդրական փոփոխությամբ, որով ՀՀ քաղաքացիներին մինչև 2019

թվականն իրավունք տրվեց անձնագրավորվելու ինչպես կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող փաստաթղթերով (նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր), այնպես էլ նախկին նմուշի անձնագրերով: Նախկին նմուշի անձնագրերի տրամադրման ժամկետը դիմելու 5-րդ աշխատանքային օրն է, իսկ կենսաչափական փաստաթղթերինը՝ 15-րդը: Քաղաքացիները օրենսդրական փոփոխությունից հետո հիմնականում սկսեցին դիմել նախկին նմուշի անձնագրեր ստանալու համար, ինչով պայմանավորված՝ էականորեն կրճատվեց կենսաչափական փաստաթղթերն արագացված ստանալու համար դիմողների թիվը:

2017 թվականի ընթացքում *Ազգային անվտանգության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 19.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ազգային անվտանգության ապահովման ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերի կատարողականով: 2016 թվականի համեմատ Ազգային անվտանգության դասի ծախսերն աճել են 6.9%-ով կամ 1.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Ազգային անվտանգության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2017 թվականին 19.6 մլրդ դրամ տրամադրվել է Ազգային անվտանգության ապահովման ծրագրին, որը կատարվել է 98.6%-ով՝ պայմանավորված խնայողություններով: 2016 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 8.8%-ով՝ հիմնականում պայմանավորված կապիտալ ծախսերի իրականացմամբ:

ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 100.6 մլն դրամ ծախսեր, որոնք ապահովել են ծրագրի 97.4% կատարողական և 74.1%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական պահպանության ապահովման նպատակով օգտագործվել է 2.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հայաստանի *փրկարար ծառայության* համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է շուրջ 8.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2017 թվականին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը, որոնք նախորդ տարի ներառված էին «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերում, 2017 թվականին ներառվել են փրկարար ծառայության դասում:

Տվյալ դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ

իրավիճակների նախարարությանը տրամադրվել է 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 7.4 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

Դպրարանների դասի ծրագրերին ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 11.9 մլրդ դրամ՝ 96.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 13.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված 2017 թվականից ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը պետական բյուջեում ներառելու հանգամանքով: Նշված միջոցներից հաշվետու տարում օգտագործվել է 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87.1%-ը: Տնտեսումը պայմանավորված է որոշ ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ավելի ցածր գներով ձեռքբերմամբ, ինչպես նաև աշխատողների պարգևատրման համար նախատեսված գումարների տնտեսմամբ:

8.3 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատարանների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: 568.2 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական դատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.3%-ը: Տվյալ ծրագրերում արձանագրվել են որոշակի խնայողություններ, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվետու տարում ավելի քան 1.3 մլրդ դրամ են կազմել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 98.3%-ով և 1.3%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 11.2 մլն դրամ և 168.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.6%-ը և 99.7%-ը:

Հաշվետու տարում պետական բյուջեից 709.8 մլն դրամ է տրամադրվել *իրավական պաշտպանության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 98.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով՝ հիմնականում պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում երեք նոր ծրագրերի մեկնարկով և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերի աճով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2017 թվականին կազմել են 257 մլն դրամ կամ նախատեսվածի 97.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է խնայողություններով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են

7.9%-ով՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունման արդյունքում աշխատակազմի կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված հաստիքների ավելացման հետևանքով:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 377.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք չեն փոփոխվել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով նախատեսված 1.9 մլն դրամն օգտագործվել է 85.5%-ով, որով ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա, գրասենյակային գույք և սարքավորումներ: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում ապրանքների ցածր գնով ձեռքբերմամբ:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 24.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Նշենք, որ 2017 թվականին այս նպատակով միջոցներ են հատկացվել նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, որոնք կազմել են 4.2 մլն դրամ և որոնք հաշվի առած՝ 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 19.8%-ով՝ պայմանավորված ձեռք բերված ծառայությունների ծավալով:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 14.7 մլն դրամ կամ նախատեսվածի 98%-ը և 88.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ավարտված գործերի փաստացի քանակով. նախատեսված 500-ի և նախորդ տարվա փաստացի 260-ի դիմաց այն կազմել է 490:

Երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերին արձագանքելու համար ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագրի ծախսերը կազմել են 21.7 մլն դրամ կամ նախատեսվածի 78.5%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Պատրաստվել է Երեխաների իրավունքների պաշտպանությանը նվիրված զեկույց, մշակվել և հրապարակվել է Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերաբերյալ զեկույց.
- Ուսումնասիրվել է Սերբիայի հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում, կատարվել է այցելություն Բելգրադ.
- Մշակվել և հրապարակվել է «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում» իրավական վերլուծությունը.

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների բարձրացման նպատակով ՄԻՊ աշխատակազմի աշխատակիցների համար կազմակերպվել են երեք վերապատրաստման դասընթացներ՝ երեխաների իրավունքներին վերաբերող թեմաներով.
- Երեխաներին վերաբերող տվյալների ներկայացմանն ուղղված ուղեցույցի պատրաստում լրագրողների համար: Կազմակերպվել է քննարկում լրագրողների հետ և ուղեցույցի նախագիծը ներկայացվել է լրագրողներին.
- ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի 2013թ. եզրափակիչ դիտարկումների իրականացման մոնիտորինգի նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ներկայացրել է համապատասխան զեկույցի նախագիծ.
- Երեխաների իրավունքների մոնիտորինգի նպատակով իրականացվել են այցելություններ Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ:

Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագրի ծախսերը կազմել են 9 մլն դրամ կամ նախատեսվածի 96.5%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Կազմակերպվել է երկու աշխատաժողով, որոնց մասնակցել են ՄԻՊ աշխատակազմի, ինչպես նաև նաև ոլորտում գործող պետական մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ.
- Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում փախստականների, ապաստան հայցողների և տեղահանված այլ անձանց իրավունքների պաշտպանության իրավիճակը, ոլորտի օրենսդրական կարգավորումները և դրանց գործնական կիրարկումը.
- Իրավիճակի ուսումնասիրության և վերլուծության, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով այցելություններ են իրականացվել ազատությունից զրկման վայրեր, որտեղ պահվում են փախստականներ և ապաստան հայցող անձինք, ինչպես նաև ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղակայված հատուկ կացարաններ և «Հատուկ կացարան» ՊՈԱԿ, որտեղ բնակվում են ապաստան հայցողներ: Ուսումնասիրվել են նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության որոշումները՝ նպատակ հետապնդելով վերլուծելու դրանց հիմնավորվածությունը և ապաստանի ընթացակարգի շրջանակներում ապաստան հայցողների իրավունքների ապահովումը.
- Հիմք ընդունելով վերը նշված ուսումնասիրությունների վերլուծությունը կազմվել և հրապարակվել է «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող

անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը հայերեն և անգլերեն լեզուներով.

- Տպագրվել են տեղեկատվական թռուցիկներ, որոնք պարունակում են անհրաժեշտ տեղեկատվություն փախստականների իրավունքների և պարտականությունների, անհրաժեշտ կոնտակտային հաստատությունների և պաշտպանին դիմելու իրավունքի վերաբերյալ.
- Ծրագրի շրջանակներում տպագրվել են նաև Հայաստանում ապաստանի ընթացակարգին առնչվող 5 տեղեկատվական պաստառներ և տեղադրվել Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում:

«Կայուն զարգացման նպատակների իրականացման աջակցություն, ջրի և սանիտարական պայմանների առկայությունը որպես մարդու իրավունք» արտաբյուջետային ծրագրի ծախսերը կազմել են 4.2 մլն դրամ կամ նախատեսվածի 88.7%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի իրականացումն ուղղված է երկու հիմնական նպատակների՝

- զարգացնել մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունները ջրի և սանիտարական պայմանների միջազգային չափանիշների, ինչպես նաև ջրի հասանելիության և սանիտարական բավարար պայմանների վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելիս,
- իրականացնել ջրի հասանելիության և սանիտարական բավարար պայմանների վերաբերյալ մշտադիտարկում նախադպրոցական կրթական հաստատություններում, հանրակրթական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում:

2017 թվականին 3.7 մլրդ դրամ է տրամադրվել *դատախազության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը և 0.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Հատկացված միջոցներից 3.6 մլրդ դրամը (նախատեսվածի 99.9%-ը) տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել: ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.2%-ով՝ կազմելով 78.8 մլն դրամ:

Հաշվետու տարում քրեակատարողական համակարգի պահպանության ծախսերը կազմել են 8.2 մլրդ դրամ կամ 96.4%: Շեղումը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ և պետական գնումների գործընթացի արդյունքում առաջացած խնայողություններով: 2016 թվականի համեմատ դրանց 3.1%-ով նվազումը հիմնականում պայմանավորված է 2016 թվականին ՀՀ կառավարության N 757-Ն որոշմամբ ՔԿ վարչության այլընտրանքային պատիժների իրականացման բաժնի վերակազմավորմամբ, և 77 միավոր հաստիքները ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ տեղափոխելու հանգամանքով:

«Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումների փորձարկում քրեակատարողական հիմնարկների պիլոտային ստորաբաժանումներում» դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են 98.3%-ով՝ կազմելով 19.9 մլն դրամ: Ծրագրի նպատակն է՝ փորձարկել էլեկտրոնային մոնիտորինգի տեխնոլոգիաների կիրառումը իրավախախտների և դատավարության սպասող ամբաստանյալների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

2017 թվականին 6.4 մլրդ դրամ տրամադրվել է *նախաքննության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 98.6%-ը: Հատկացված միջոցների գերակշիռ մասը՝ 5.6 մլրդ դրամը (նախատեսվածի 98.4%-ը) տրամադրվել է ՀՀ քննչական կոմիտեի պահպանմանը: Կատարողականի ցուցանիշը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գործող օրենսդրության համաձայն քննիչների դասային աստիճանի և ստաժի համար տրվող հավելավճարների ամենամյա աճով, ինչպես նաև կոմիտեի պետական ծառայողների աշխատավարձերի ամենամյա վերահաշվարկներով:

ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով՝ կազմելով 94.1 մլն դրամ:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 621.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով: Ծառայության պահուստային ֆոնդի միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 12.5 մլն դրամ:

ՀՀ քննչական կոմիտեի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 53.2 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Միջոցներն ուղղվել են վարչական սարքավորումների ձեռքբերմանը:

Տնտեսական հարաբերություններ

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի ծախսերի 8.6%-ը տրամադրվել է *տնտեսական հարաբերությունների* բաժնին՝ կազմելով 129.5 մլրդ դրամ և 85.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի, այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև վառելիքի և էներգետիկայի բնագավառներում նախատեսված՝ արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի կատարողականով: Հատկացված ֆինանսական միջոցների հիմնական մասն ուղղվել է տրանսպորտի (55.4%) և գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության ու որսորդության (29.3%) բնագավառների ծրագրերի իրականացմանը: 2016 թվականի համեմատ տնտեսական հարաբերությունների բաժնի ծախսերը նվազել են 1.2%-ով, ինչը հիմնականում ձևավորվել է գյուղատնտեսության ու վառելիքի այլ տեսակների բնագավառների ծախսերի նվազման

և ճանապարհային տրանսպորտի, ոռոգման ու այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների բնագավառների ծախսերի աճի արդյունքում:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են շուրջ 3.9 մլրդ դրամ՝ 97.6%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին նախարարության պահպանման, «Հայաստանի զարգացման հիմնադրամի» կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության և ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծախսերի համապատասխանաբար 91.7%, 94.3% և 95.9% կատարողականով:

Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասի ծախսերը 2.5%-ով գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Դա պայմանավորված է նրանով, որ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով իրականացված մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության ծախսերը, որոնք 2016 թվականի պետական բյուջեում ընդգրկված են եղել այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների դասում, 2017 թվականի պետական բյուջեում միավորվել են հիդրոօդերևութաբանության ծառայությունների ձեռք բերման ծախսերին: Նշվածը հաշվի առած՝ 2017 թվականին նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 4.8%-ով կամ 196.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2016 թվականին որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որը 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված չէ, ինչպես նաև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերի նվազմամբ:

Դասում ընդգրկված են 15 ծրագրեր, որոնցից հետևյալ վեցի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Հիդրոօդերևութաբանության ծառայությունների ձեռք բերման ծախսերը կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ, որն օգտագործվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպման միջոցով միացել է «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին՝ վերանվանվելով «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի: Նախորդ տարվա համեմատ հիդրոօդերևութաբանության

ծառայությունների ձեռք բերման ծախսերը՝ ներառյալ 2016 թվականի պետական բյուջեով իրականացված մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության ծախսերը, որոնք (ներառված էին այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների ոլորտում) կազմել էին 291.4 մլն դրամ, նվազել են 1.4%-ով կամ 16.5 մլն դրամով:

2017 թվականին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության շրջանակներում տրամադրվել է 152.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.7%-ով կամ 9.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ հաշվետու տարում ծրագիրն իրականացվել է տարեսկզբից, մինչդեռ նախորդ տարի նախատեսված միջոցառումները մասնակիորեն էին իրականացվել՝ պայմանավորված ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ու Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի միջև համապատասխան պայմանագիրը հունիսի 30-ին կնքելու հանգամանքով: Պետական բյուջեից հատկացված միջոցներն ուղղվել են ծրագիրն իրականացնող հիմնական կառույցի՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի անձնակազմի և փորձագետների վարձատրությանը: 2017 թվականին Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել շուրջ 4700 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտի՝ բավարարելով 11487 աջակցության հայտ, ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 3.3%-ը գործում են Երևան քաղաքում, 96.7%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես՝ հեռավոր և սահմանամերձ համայնքներում:

ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխման և հավաքագրման ազգային մարմնի ստեղծման ծրագրի շրջանակներում պետական աջակցության ծախսերը կազմել են 13.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում կատարվել են Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանն ուղղված աշխատանքներ:

ՀՀ կառավարության աշխատակազմի ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցության ծախսերը 2017 թվականին կազմել են 15 մլն դրամ, որը հատկացվել է տեսչական բարեփոխումների քարտուղարության աշխատակիցների վարձատրությանը: Ծրագրի նպատակն է նախանշել Հայաստանում տեսչական բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնց իրականացումը կնպաստի տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում հիմնական աշխատանքներն իրականացվել են տեսչական համակարգի օպտիմալացման, նոր տեսչական մարմինների ստեղծման, տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործման ուղղություններով: Տեսչական բարեփոխումների խմբի կողմից իրականացված

քարտեզագրման աշխատանքների արդյունքում հստակեցվել են վերահսկողական վեց հիմնական ուղղություններ, որոնց հիման վրա 2017 թվականին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ստեղծվել են երեք տեսչական մարմիններ՝ առողջապահական, բնապահպանության և ընդերքի, կրթության: Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործման շրջանակներում վերանայվել կամ մշակվել են տեսչությունների/տեսչական մարմինների կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը: Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման և ՎԶԵԲ գործարարության աջակցման գրասենյակի հետ համատեղ մշակվել է տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման կողմից իրականացվող կատարողականի գնահատման մեթոդաբանությունը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 22%-ով կամ 2.7 մլն դրամով, ինչը պայմանավորված է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարությունը 2016 թվականի հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության աշխատակազմ տեղափոխելու հանգամանքով:

Հաշվետու տարում Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 21 մլն դրամ: Ծրագիրը սկսել է գործել 2015 թվականից: Այն եռամյա ծրագիր է և ավարտվել է 2017 թվականին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության ամփոփման աշխատանքները, նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ, կատարվել է ներդրումային խթանների միջազգային և ազգային փորձի ուսումնասիրություն, մշակվել է համապատասխան զեկույց, տրամադրվել են առաջարկություններ ՀՀ-ում ներդրումային խթանների կիրառման մասով, մշակվել և հրապարակվել է ՀՀ կառավարության կողմից առաջարկվող արտոնությունների շտեմարանը, մշակվել և հրապարակվել է պանրի արտադրության և արտահանման շղթայի զեկույցը:

Տնտեսական հետազոտությունների կենտրոնի ստեղծման ծախսերը կազմել են 27.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացվել են արդյունաբերության և ներդրումների, արտահանման և ներմուծման վերաբերյալ խորքային հետազոտական և վերլուծական աշխատանքներ, ամսական պարբերականությամբ մշակվել են արտահանման և ներմուծման վերաբերյալ տեղեկանքներ և զեկույցներ, իրականացվել են արտահանման և ներմուծման կառուցվածքների մշտադիտարկում, արտահանման կանխատեսումներ և միտումների գնահատում, ինչպես նաև գնահատվել է որոշ ներդրումային ծրագրերի իրատեսականության աստիճանը: Կատարվել են նաև առևտրաշրջանառության մաքսային վիճակագրական տվյալների բազայի կատարելագործման և պարբերական թարմացման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 1.1%-ով:

Հաշվետու տարում 99.4% կատարողական են ապահովել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը՝ կազմելով 310.6 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 0.9%-ով կամ 2.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործուղումների ծախսերի նվազմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են 715.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.3%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.3%-ով կամ 40.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է հաստիքների կրճատմամբ, ինչպես նաև Զբոսաշրջության պետական կոմիտեի աշխատակիցների աշխատավարձի ֆոնդը Զբոսաշրջության զարգացման ծրագրում ներառելու հանգամանքով:

Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով շուրջ 372.3 մլն դրամ օգտագործվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 91.7%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված որոշ ծախսերի կատարման անհրաժեշտությունը վերացել է, բացի դրանից՝ գնումների գործընթացով նախատեսված որոշ մրցույթներ չեն կայացել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.9%-ով կամ շուրջ 117.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ 2016 թվականին միջոցներ էին հատկացվել ընթացիկ դրամաշնորհների գծով:

Հաշվետու տարում ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 14.1 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ազգային ստանդարտների մշակման, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և ստանդարտների ազգային ֆոնդի վարման ու տեղեկատվական սպասարկման աշխատանքներ:

2017 թվականին շուրջ 150 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 95.8%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40.6%-ով կամ 43.3 մլն դրամով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2017 թվականի ապրիլ ամսից Չինաստանի

Ժողովրդական Հանրապետությունում նշանակվել է առևտրային ներկայացուցիչ: Հատկացված միջոցներն ուղղվել են Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև), Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական ներկայացուցչի (նստավայրը՝ Բելգիայի Թագավորություն, Բրյուսել) և ՉԺՀ (նստավայրը՝ Պեկին) պահպանմանը:

2017 թվականին ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 455.6 մլն դրամ՝ ապահովելով 95.9% կատարողական, ինչը պայմանավորված է նրանով, որ վարկերի սուբսիդավորման համար տնտեսավարողների կողմից ներկայացվել են նախատեսվածից պակաս թվով հայտեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.8%-ով կամ շուրջ 37 մլն դրամով, որը պայմանավորված է կազմակերպված ցուցահանդեսների և աշխատանքների իրականացմանը մասնակցությունների թվով: Ծրագիրն ուղղված է արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին կազմակերպվել է ֆրանսիական «Բետրանկուր» ընկերության ներկայացուցիչների այցը Հայաստան, բանակցություններ են ընթանում թեթև արդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող հայկական ընկերությունների հետ համատեղ արտադրություն հիմնելու նպատակով: Ֆրանսահայ գործարարի և մեկ հայկական ընկերության միջև համագործակցության արդյունքում ստեղծվել է գործված հագուստի արտադրություն՝ 1.6 մլն ԱՄՆ դոլարի ներդրմամբ և 60 աշխատատեղերի ստեղծմամբ:

Ծխախոտի արտադրության ոլորտում թուրքմենական կողմի և հայկական ընկերության միջև ավարտվել են աշխատանքներն արտադրանքի պահանջարկի ձևավորման ուղղությամբ, ներկայումս հայկական ընկերության արտադրանքն արտահանվում է Թուրքմենիա:

ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի մրցունակության բարձրացում արդիականացման և շուկան մատչելի դարձնելու միջոցով» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում 2017 թվականի ընթացքում շահառու 7 ընկերությունների կողմից կնքվել են 1.2 մլն ԱՄՆ դոլարի արտահանման պայմանագրեր ռուսական ցանցերի հետ:

Ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող ապրանքների մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ վճարման ժամկետների հետաձգման գործիքի ներքո հավանության են արժանացել 27 ընկերության ներդրումային ծրագրեր, որոնց շրջանակներում նախատեսվում է իրականացնել 220.6 մլրդ ՀՀ դրամի ներդրում՝ ստեղծելով շուրջ 1440 նոր աշխատատեղ: Ընդ որում՝ սարքավորումների համար նախատեսված գումարը կազմում է 48.7 մլրդ ՀՀ դրամ, իսկ հետաձգված ԱԱՀ-ի գումարը՝ 9.7 մլրդ ՀՀ դրամ:

Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվել, կազմակերպվել ու ապահովվել է արտերկրում և Հայաստանում անցկացված գործարար համաժողովներին հայկական կողմի մասնակցությունը, որոնց շրջանակներում կնքվել է 11 հուշագիր, 1 էքսկլյուզիվ պայմանագիր և ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ: Ապահովվել է հայկական 93 ընկերության մասնակցություն արտերկրում կայացած 10 միջազգային ցուցահանդեսի, որոնց արդյունքում կնքվել են շուրջ 100 արտահանման պայմանագրեր՝ մոտ 5.4 մլրդ ՀՀ դրամի չափով: Ծրագրի շրջանակներում արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում է տրամադրվել թվով 10 կազմակերպության (տրված վարկերի գումարը կազմել է 887 մլն դրամ): Կազմակերպվել են թվով 15 գործարար համաժողովներ, իրականցվել է արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման թվով 5 միջոցառում, Հայաստան են այցելել արտահանմանն օժանդակող կառույցների թվով 65 ներկայացուցիչներ և դիստրիբյուտերներ:

2017 թվականին «Հայաստանի զարգացման հիմնադրամի» կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են ավելի քան 348.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 94.3%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են Հայաստանի զարգացման հիմնադրամի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.7%-ով կամ 46.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի նվազմամբ:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պահպանման ծախսերը կազմել են 125.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 95.3%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 78.4%-ով կամ 55.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ շուկայի վերահսկողության տեսչական մարմինն իր բնականոն գործունեությունը սկսել է 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսներից:

Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի գծով ծախսերը կազմել են 2.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 48.5%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ոչ պարենային արտադրանքի փորձարկման լաբորատորիաների ընտրության հայտարարված մրցույթները չեն կայացել՝ հայտեր չներկայացվելու պատճառով: Նախորդ տարի նշված ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չէին օգտագործվել: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով: Ծրագրի շրջանակներում միջոցներն ուղղվել են փորձանմուշների ձեռքբերման, փորձարկման և շարժական լաբորատորիայի անհրաժեշտ ծախսերին:

2017 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 37.9 մլրդ դրամ կամ ծրագրվածի 95.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով:

2017 թվականին 10.5 մլրդ դրամ է տրամադրվել *գյուղատնտեսության* դասին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 87.9%-ը, որը, ինչպես նշվեց, պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերը նվազել են 61.2%-ով կամ շուրջ 16.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված նշված ծրագրերի շրջանակներում օգտագործված միջոցների նվազմամբ:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 20 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 3 վարկային և 2 դրամաշնորհային ծրագրեր:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.4 մլրդ դրամ՝ապահովելով 98.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի նպատակն է՝ բարելավել ջրամատակարարման և ոռոգման համակարգերը հանրապետության 7 մարզերի՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի գյուղական համայնքներում՝առաջնահերթություն տալով աղքատության ամենաբարձր ցուցանիշ ունեցող տարածքներին: Ջրամատակարարման և ոռոգման համակարգերն ընտրվում են մանրամասն տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների հիման

վրա, հաստատվում են միայն ներդրումային այն առաջարկները, որոնք ունեն հստակ տնտեսական արդյունավետություն, իսկ ջրամատակարարման դեպքում՝ ուղղված են խոցելի համայնքներին, որոնց ջրամատակարարումը չի գերազանցում 6 ժամը: Ջրամատակարարման ծրագրերի ընտրության ժամանակ դիտարկվում են նաև անասնապահության զարգացման հնարավորությունները և տնամերձ հողատարածքների արտադրողականության բարձրացումը: Ոռոգման ծրագրերի ընտրության հիմքում ընկած են մանրամասն տեխնիկատնտեսական հիմնավորումները, որոնք դիտարկում են ենթակառուցվածքների զարգացման տեխնիկական լուծումները և առաջարկվող ներդրումների հետգնելիությունը և տնտեսական արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին ավարտվել են շինարարական աշխատանքները 37 օբյեկտներում, այդ թվում՝ ջրամատակարարման գծով՝ 29 օբյեկտներում և ոռոգման ցանցերի վերակառուցման գծով՝ 8 օբյեկտներում: Ծրագրի իրականացման արդյունքում կօգտվեն շուրջ 75141 գյուղաբնակներ: 2018 թվականին նախատեսված են շինարարական աշխատանքներ թվով 4 համայնքներում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի միջոցների 67.7%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ հայտարարված մի շարք մրցույթներ չեն կայացել՝ բավարար քանակությամբ հայտեր ներկայացված չլինելու պատճառով: Արդյունքում մրցույթները տեղափոխվել են 2018 թվական: Ծրագրի իրականացման ժամկետը հինգ տարի է: Ծրագիրը սկսել է գործել 2015 թվականին, ավարտման ժամկետն է 2020 թվականի մայիսի 31-ը: Ծրագրի նպատակներն են արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականության և կայունության բարելավումը թիրախային համայնքներում, ինչպես նաև անասնապահության ոլորտում, և ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը: Նշված նպատակների իրագործմանն են ուղղված հետևյալ միջոցառումները՝ բարձրադիր տարածքների թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականության և կայունության բարելավմանն ուղղված կառավարման պլանների մշակումը և ներդրումը՝ հիմնական շեշտադրումը կատարելով ընտրված անասնապահական արտադրանքի (կաթ և միս) և բարձրարժեք արտադրանքի (միրգ և բանջարեղեն) վրա, շուկայի հետ արտադրողների և վերամշակողների կապի ապահովումը և վերոհիշյալ ապրանքատեսակների շուկայահանման ծավալների աճի ապահովման հարցում կարևոր դեր կատարող պետական համապատասխան կառույցների զարգացմանն օժանդակությունը: Ծրագիրն իրականացվել է չորս բաղադրիչներով՝

- Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ,

- Արժեքային շղթայի զարգացում,
- Պետական կառույցների կարողությունների հզորացում,
- Ծրագրի համակարգում և կառավարում:

«Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի շրջանակներում հաստատվել են 32 համայնքի կառավարման պլանները, 10 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (51 կմ ջրագիծ, 25 հատ խմոց, ջրարբիացվել է շուրջ 14 հազար հեկտար արոտ), իսկ 8 համայնքում դրանք գտնվում են իրականացման փուլում: 14 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել են շուրջ 47 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 23 անիվավոր տրակտոր, և 24 միավոր այլ գյուղգործիքներ:

«Արժեքային շղթայի զարգացում» բաղադրիչի նպատակն է՝ ընտրված սննդամթերքի արժեշղթաներում բարձրացնել տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները՝ ներքին պահանջարկը բավարարելու և միջազգային շուկաներ մուտք գործելու համար: Նշված բաղադրիչի շրջանակներում 2017 թվականին շարունակվել է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 14 ենթածրագրերի (շահառուների կողմից ներկայացված բիզնես-հայտեր) իրականացումը, որոնք արդեն իսկ ավարտվել են և ներկայացվել անկախ գնահատող կազմակերպության գնահատմանը: Անկախ գնահատող կազմակերպության նախնական դիտարկման արդյունքում արտադրանքի իրացման ծավալները կավելանան մոտ 1000 մլն դրամով: «Արժեքային շղթայի զարգացում» բաղադրիչի շրջանակներում ընդհանուր առմամբ 26 ենթածրագրերի իրականացումը նպաստել է՝

- Գյուղատնտեսական ոլորտի ձեռնարկությունների արտադրական հզորությունների վերազինմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը և արտադրողականության բարձրացմանը առնվազն 20-25%-ով,
- Գյուղատնտեսական մթերքի արտադրման ծավալների ավելացմանը 25-35%-ով, ինչպես նաև արտադրվող գյուղմթերքի արտադրատեսակների ավելացմանը,
- Գյուղմթերքի արտահանման ծավալների ավելացմանը 30-35%-ով, ապրանքների մրցունակության բարձրացմանը, նոր շուկաների հայտնաբերմանը և դիվերսիֆիկացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը (120-140 մարդ),
- Սննդամթերքի անվտանգության պայմանների բարելավմանը և համապատասխան համակարգերի ներդրմանը, մասնավորապես ISO 22000-2005, HACCP, GMP և այլն, ինչը հատկապես կարևոր է ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած օրենսդրական պարտավորությունները կատարելու համար:

«Պետական կառույցների կարողությունների հզորացում» բաղադրիչի նպատակն է հզորացնել պետական կառույցների կարողությունները՝ առաջին և երկրորդ բաղադրիչների շրջանակներում աջակցություն ստացող արժեշղթաներում բիզնեսի զարգացումը խթանելու և շուկայի հասանելիությունն ապահովելու համար: Այս բաղադրիչն իրականացվել է «Համայնքային անասնաբուժական ծառայություններ» և «Ինստիտուցիոնալ զարգացում» ենթաբաղադրիչների միջոցով: Համայնքային անասնաբուժական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում անասնաբուժական սպասարկման կենտրոնի շինարարական աշխատանքները, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի կենտրոնի համար իրականացվել են նախագծման աշխատանքները, իրականացվել են ՀՀ Կոտայքի և ՀՀ Վայոց Ձորի մարզերի 20 անասնաբույժի ուսուցման և տեխնիկական աջակցության ծրագրի աշխատանքները, վերանորոգվել է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «մեկ պատուհան» սպասարկման սրահը, և տրամադրվել են համապատասխան գույք ու սարքավորումներ: «Ինստիտուցիոնալ զարգացում» ենթաբաղադրիչի շրջանակներում վերանորոգվել են ՀՀ ԳՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 3000մ^2 մակերեսով ապակեպատ ջերմատունն ու կաթսայատունը, ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ գիտական կենտրոնի ջերմատան համար, իրականացվել են կենտրոնի թաղանթապատ ջերմատան նախագծման աշխատանքները, ձեռք են բերվել անալիտիկ սարքավորումներ «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի համար:

«Ծրագրի համակարգում և կառավարում» բաղադրիչի շրջանակներում միջոցներն ուղղվել են ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, տարեկան աուդիտին, գործառնական ծախսերին, ինչպես նաև ծրագրի մոնիտորինգին և գնահատմանը:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 52.1%-ով՝ կազմելով 119.4 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կատարվել է ծրագրի բաղադրիչներից մեկի՝ «Ֆերմերների իրազեկում և աջակցություն» բաղադրիչի փոփոխություն: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում իրականացվել է գնումների գործընթացը, ընտրվել է տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների և ծրագրի վարկային պրոդուկտների մշակման համար խորհրդատվական կազմակերպությունը: Խորհրդատուի կողմից աշխատանքների իրականացումը սկսվել է 2017 թվականի 4-րդ եռամսյակում: Ծրագրի հիմնական նպատակն է՝ բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը ծրագրի իրականացման տարածքում՝ ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ: Շեշտը դրված է սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ ջրամատակարարման և ոռոգման

համակարգերի բարելավման, վերաֆինանսավորման և ներդրումային գործիքների տրամադրման վրա: Ծրագրի շրջանակներում ֆերմերներին կտրամադրվի ուսուցում գործարար և ֆինանսական պլանավորման, գյուղատնտեսական առաջավոր փորձի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Ծրագիրը ԳՖԿ-ի (գյուղական ֆինանսավորման կառույց) միջոցով մասնակից ֆինանսական հաստատություններին կտրամադրի ֆինանսական միջոցներ, որոնք վարկերի տեսքով կուղղվեն փոքր տնտեսություն վարողներին, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին՝ իրենց գործունեության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով: Ծրագրի շրջանակներում Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի միջոցով ներդրումների և փոխառությունների, ինչպես նաև տարբեր տեսակի կառավարման և տեխնիկական աջակցության տեսքով աջակցություն կտրամադրվի աղքատ գյուղական արտադրողների հետ ամուր կապեր ունեցող, գյուղատնտեսական արժեշղթայի շրջանակներում գործող փոքր և միջին մասնավոր ընկերություններին:

Վերոհիշյալ վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 57 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ դոնոր կազմակերպության կողմից ծրագրի իրականացումը հաստատվել է նախատեսված ժամկետից ուշ՝ 2017 թվականի երրորդ եռամսյակում, որից հետո աշխատանքների հիմնական մասի իրականացումը տեղափոխվել է 2018 թվական: Ծրագրի շրջանակներում նախատեսված է մշակել և իրականացնել պիլոտային ծրագրեր՝ վերականգնված ոռոգման ենթակառուցվածքներից օգտվող ֆերմերների և ֆերմերային տնտեսությունների կողմից գյուղատնտեսական հողատեսքերի հողօգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կայուն գյուղատնտեսական համակարգերի ներդրման միջոցով: Պիլոտային ծրագրերը կազմվելու են մանրամասն ուսումնասիրությունների արդյունքում՝ հիմք ընդունելով տվյալ ծրագրային տարածքի կարիքները և զարգացման հնարավորությունները: Այս համատեքստում կարող են մշակվել սառնարանային տնտեսություններ, փոքրածավալ վերամշակող հզորություններ և գյուղատնտեսական արժեշղթայի զարգացմանն ուղղված այլ պիլոտային ծրագրեր: Ծրագրի շրջանակներում ընտրվել է նախագծային կազմակերպություն՝ սառնարանների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակելու նպատակով: Նախագծող կազմակերպությունը սկսել է աշխատանքները 2017 թվականի չորրորդ եռամսյակում, սակայն վճարման հաշիվ և կատարողական չներկայացնելու պատճառով վճարում չի իրականացվել:

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 40.9 մլն դրամ՝ 15.1%-ով ապահովելով նախատեսված

ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 2017 թվականին խորհրդատուի ընտրության գնումների գործընթացն իրականացվել է նախատեսված ժամկետից ուշ, խորհրդատուն սկսել է աշխատանքների իրականացումը 2017 թվականի երկրորդ եռամսյակից: Ներկայացվել են ընտրված հողատարածքներում իրականացվելիք աշխատանքների բնույթը և ծավալները, որոնք ուղարկվել են դոնոր կազմակերպություն հաստատելու նպատակով: 2018 թվականին խորհրդատուի կողմից ներկայացված հաշվետվությունը հաստատվել է դոնոր կազմակերպության կողմից, մրցույթի անցկացումից հետո կիրականացվեն համապատասխան աշխատանքներն ընտրված հողատարածքներում: Ծրագրի շրջանակներում հողերի կայուն կառավարման բաղադրիչի շրջանակներում կվերականգնվեն համայնքային սեփականության ներքո գտնվող դեգրադացված հողերը՝ կներդրվի հողերի կայուն կառավարման և արդյունավետ շահագործման համակարգ: Բաղադրիչը նաև ուղղված է ոռոգման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և լրացնում է ծրագրի շրջանակում իրականացվող ոռոգման երրորդային բաշխիչ համակարգերի կառուցման կամ վերականգնման աշխատանքները՝ ջրամատակարարումը բարելավելու, փոքր հողատերերի ոռոգվող հողակտորների արտադրողականությունը բարձրացնելու և ոռոգելի տարածքներն ընդլայնելու միջոցով: Կայուն գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումները, որոնք համահունչ են ՀՀ կառավարության առաջնահերթություններին՝ կապված հողերի դեգրադացման կասեցման և գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող կլիմայական ռիսկերի ազդեցության մեղմման հետ, կնպաստեն ոռոգման տարածքներում դեգրադացված հողերի վերականգմանը և դրամաշնորհների տրամադրմամբ տեղանքին բնորոշ գյուղատնտեսական արժեշղթաների զարգացմանը: Իսկ համայնքային հողերի էրոզիայի կանխարգելումը՝ բնապահպանական վերականգնողական միջոցառումների միջոցով, շահառուներին հնարավորություն կտա անմիջապես կիրառել թիրախային տարածքներում էկոհամակարգերի բարելավմանը և հողի դեգրադացման նվազեցմանը նպատակաուղղված մոտեցումներ՝ վերականգնելով էկոլոգիական ամբողջությունը, դեգրադացված անտառների և արոտավայրերի ռեսուրսները՝ ապահովելով թիրախային ագրոլանդշաֆտներում գյուղատնտեսական արտադրությանն աջակցող էկոհամակարգերի ծառայությունների զարգացումը, ինչպես նաև դիվերսիֆիկացված եկամուտների ստեղծման հնարավորությունները՝ ֆերմերների խմբերին և միավորումների տրմադրվող դրամաշնորհների և վերականգնողական միջոցառումների շնորհիվ բարելավված հավելյալ արտադրանքի հաշվին: Ծրագրի այս բաղադրիչը կզարգացնի անհատ ֆերմերների, ֆերմերային ասոցիացիաների, կոոպերատիվների, ջրօգտագործողների ընկերությունների և մյուս տեղական շահառուների՝ կայուն գյուղատնտեսական համակարգերի և տեխնոլոգիաների որդեգրման, էկոլոգիական վերականգնողական պլանների նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև կայուն արժեշղթաների զարգացման կարողությունները՝ հաշվի առնելով հողի և ջրի պահպանության, կլիմայական ռիսկերի նվազեցման հիմնահարցերը:

Ծրագրերի շրջանակներում 2017 թվականին կատարվել են վճարումներ խորհրդատվական ծառայությունների դիմաց՝ ծրագրի համակարգման համար:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 57 մլն դրամի դիմաց օգտագործվել է 10.8 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 19%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ դոնոր կազմակերպության կողմից տեխնիկական աջակցություն տրամադրող կազմակերպության պայմանագրի ժամկետը չի երկարաձգվել, քանի որ դրամաշնորհի ժամկետը լրանում էր, և դոնոր կազմակերպության կարծիքով նշված ժամկետում խորհրդատուն չէր հասցնի իրականացնել աշխատանքները: Ծրագիրը փակվել է 2017 թվականի դեկտեմբերի 31-ին: Ծրագրի նպատակն էր՝ բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագիրը նախատեսված էր շահառուներին բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով այգեգործական վարկերի տրամադրման համար, որոնց ֆինանսավորումն իրականացվում էր Գյուղական ֆինանսավորման կառույցի միջոցով, ինչպես նաև Հայաստանում Գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի ֆինանսավորումը՝ կապված ֆերմերներին տեխնիկական աջակցության տրամադրման հետ: Ծրագրի շրջանակներում 2017 թվականի ընթացքում Գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից շարունակվել է այգեգործական վարկերի տրամադրումը, ինպես նաև Հայաստանում Գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի կողմից տեխնիկական աջակցության տրամադրումը:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 5 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է շուրջ 47.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, գրանցամատյանի վարման, օրիգինատորի հաշվառման, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմման, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանների հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացման և դաշտային փորձարկումների աշխատանքներ: Լաբորատոր հետազոտությունների են ենթարկվել 12403 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր, որոնք ստացել են համապատասխան դասային գնահատում և փաստաթղթավորում: Նախորդ տարվա համեմատ 2217 տոննայով նվազել է գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի ստուգումը, որը պայմանավորված է եղել պահանջարկով: Ընդհանուր առմամբ հետազոտվել են հացահատիկային, հատիկաընդեղենային, բանջար-բոստանային, կերային, դեկորատիվ, անտառային բույսերի սերմեր և կարտոֆիլի տնկանյութ: Ընդունվել և

հետազոտվել են շուրջ 479 նմուշներ, սպասարկվել են 272 տնտեսավարող սուբյեկտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 20.3%-ով կամ 12 մլն դրամով, որը պայմանավորված է իրականացված աշխատանքների ծավալով:

2017 թվականին բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ծախսերը կազմել են 106.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: 162.5 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 13 տոննա մկնասպան միջոց: Համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների բաղադրիչի շրջանակներում ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 9078.5 կգ մկնասպան միջոց՝ շուրջ 113.5 հազար հեկտար մկնանման կրծողներով առավել վարակված գյուղատնտեսական նշանակության վարելահողերում և բազմամյա տնկարկներում նրանց դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու համար: Համայնքներին բաշխելու նպատակով միջատասպան թունանյութի ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում անհատույց հատկացվել է 188 լիտր միջատասպան միջոց, որով համայնքների միջոցով պայքար է իրականացվել մորեխներով վարակված շուրջ 1250 հեկտար վարելահողերի վրա (միջոցառումն իրականացվել է նախորդ տարվա ծրագրի շրջանակներում ձեռքբերված թունանյութերով): Նախորդ տարվա համեմատ բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ծախսերն աճել են 57.1%-ով կամ 38.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2017 թվականի բուսասանիտարական վիճակով:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 129.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ապահովվում է Հայաստանի Հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների հետազոտությունների, բույսերի պաշտպանության, ինչպես նաև պատվաստված անասնագլխաքանակի կայուն ֆոնի և գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: Աշխատանքներ են տարվել մկնանման կրծողների, մորեխների, ինչպես նաև բազմամյա տնկարկների և մշակաբույսերի հիմնական վնասատուների ու հիվանդությունների հայտնաբերման, հաշվառման, տարածման արեալների և վնասակարարության շեմերի ճշտման, պայքարի ճիշտ ժամկետների մասին ահազանգման, տարածման կանխարգելման ուղղությամբ: 2017 թվականին թվով 25 գյուղատնտեսների միջոցով գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում իրականացվել է բուսասանիտարական մոնիտորինգ 251.65հազար հեկտար տարածքների վրա: Մոնիթորինգի արդյունքում հանրապետության մարզերին բաշխվել է մկնասպան թունանյութ, բույսերի պաշտպանության միջոցներ: Նախորդ

տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.2%-ով կամ 5.6 մլն դրամով՝ պայմանավորված իրականացված աշխատանքների ծավալով:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար 2017 թվականին ծախսվել է 227.6 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների հակահամաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանությունը և անասնաբուժական տեսակետից բարձրորակ անասնապահական արտադրանքի ապահովումը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 27.1%-ով կամ 84.8 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ:

Եվրամիության փորձարկման ռեֆերենս մեթոդներով մեղրի և ձկան փորձաքննությունների ծառայություններին հաշվետու տարում ուղղվել է 30 մլն դրամ: Ծրագրի նպատակն է տեղական արտադրության մեղրի և ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության իրականացումը, ինչը կբացահայտի և կհավաստի, որ նշված կենդանական ծագում ունեցող սննդամթերքները չեն պարունակում արգելված նյութեր, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակներ կամ վերջիններիս պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված մնացորդային քանակները: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 965.4 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը և ապահովել 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 7.6%-ով կամ շուրջ 68 մլն դրամով, որը պայմանավորված է հաստիքների ավելացմամբ:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են շուրջ 483.3 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.3%-ով կամ 21.8 մլն դրամով, ինչը պայմանավորված է օպտիմալացման արդյունքում հաստիքների և ավտոմեքենաների քանակի կրճատմամբ:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 64.2 մլն դրամ՝ ապահովելով 97.1% կատարողական, որը պայմանավորված է

ագրոքիմիական քարտեզագրման և հետազոտությունների պահանջարկի քանակով: Հայաստանի Հանրապետությունում առկա է գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող 852 բնակավայր: Յուրաքանչյուր տարի ագրոքիմիական հետազոտության են ենթարկվում հանրապետության ողջ տարածքի վարելահողերը և բազմամյա տնկարկները՝ որոշելով սննդատարրերով (ազոտ, ֆոսֆոր, կալիում) ապահովվածությունը, որից հետո տրվում է ագրոքիմիական քարտեզ և բնութագրեր: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ 170 համայնքներում, հետազոտված 88286 հեկտար տարածքից վերցված 29429 հողանմուշներում կատարվել են 74455 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունը հողի մեջ, կազմվել և համայնքներին են հանձնվել 170 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, որոնցում հստակ նշվել են պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմերը՝ ըստ կուլտուրաների, պարարտացման ժամկետները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.9%-ով կամ 7.1 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների, ինչպես նաև գործուղումների ծախսերի կրճատմամբ:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են 971.9 մլն դրամ՝ ապահովելով 95.2% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծման նպատակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 5’656’897 հատ անասնահակահամաճարակային միջոցառում: Նշված աշխատանքներն իրականացվել են անասնաբույժ մասնագետների և համաճարակաբանների կողմից 915 բնակավայրերում, փաստացի իրականացվել են 5’206’138 հատ անասնահակահամաճարակային միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը նվազել են 12.3%-ով կամ 136 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված անասնահակահամաճարակային միջոցառումների և ձեռք բերված պատվաստանյութերի քանակով:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով կատարվել են 461.3 մլն դրամ ծախսեր, որոնք կազմել են ծրագրի 89.9%-ը: Շեղումը պայմանավորված է գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության պահանջարկով: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային

կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան, գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ՝ 10’965 խորհրդատվական միջոցառումներ, 509 սեմինար, 7 սեմինար-դասընթացներ, 425 դաշտային ուսուցման և 82 փորձացուցադրական աշխատանքների կազմակերպում, լրատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում, 65 ռադիոհեռուստահաղորդում, 250 անուն տեղեկատվական թերթիկների, գրքույկների տպագրում և տարածում՝ 58’655 տպաքանակով, 77 համար թերթերի թողարկում՝ 102’300 ընդհանուր տպաքանակով: Բացի այդ, ծրագրի շրջանակներում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել է 37 ծրագրային խորհրդատվություն, 224 վարկերի հավաստագրման դասընթաց, նկարահանվել է 20 տեսանյութ: Նշված ծրագրի միջոցառումների իրականացումը պայմանավորված է մարզերում գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարողների կողմից ներկայացված անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության պահանջարկով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.1%-ով կամ 64.1 մլն դրամով, որը պայմանավորված է իրականացված աշխատանքների բնույթով:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը 2017 թվականին կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 92.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է շահառուների՝ նախատեսվածից պակաս քանակով: Ծրագրի շրջանակներում առաջին փուլով գյուղատնտեսությունում տնտեսություններին հինգ բանկերի միջոցով տրամադրվել է 7.5 մլրդ դրամի 8.3 հազ. միավոր վարկ: Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագրի շրջանակներում 2017 թվականի չորրորդ եռամսյակում վերանայված մեխանիզմներով չորս ֆինանսական կառույցի կողմից տրամադրվել է 4.2 մլրդ դրամի 913 միավոր վարկ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 7.8%-ով կամ 90.5 մլն դրամով, որը պայմանավորված է վարկավորման համար դիմած շահառուների քանակի նվազմամբ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 658 մլն դրամ՝ ապահովելով 86.6% կատարողական, որը պայմանավորված է ձեռքբերված պարարտանյութերի քանակով: Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մարզերի և ԼՂՀ-ի հողօգտագործողներին փաստացի վճարունակ պահանջարկի հիման վրա բաշխվել են 28489.2 տոննա ազոտական, 504.3 տոննա ֆոսֆորական և 899.5 տոննա կալիումական պարարտանյութեր՝ գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 68.5%-ով կամ 1.4 մլրդ դրամով, որը պայմանավորված է պարարտանյութերի նկատմամբ պահանջարկով:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դեզելային վառելիքի ձեռքբերման համար պետական աջակցության ծախսերը կազմել են 105.3 մլն դրամ՝ ապահովելով 96% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել դիզելային վառելանյութ, որն ըստ հաստատված ցուցակի բաշխվել է Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 61.7%-ով կամ շուրջ 170 մլն դրամով, որը պայմանավորված է դիզելային վառելիքի պահանջարկով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 229.5 մլն դրամ՝ ապահովելով 88.4% կատարողական, որը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ֆոնդում գոյացած միջոցների 50 տոկոսն օգտագործվում է ծառայության աշխատակիցների նյութական խրախուսման, իսկ 50 տոկոսը՝ ծառայության համակարգի զարգացման և հսկիչ գնումների ֆինանսավորման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.2%-ով կամ 24.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է մասնագիտական ծառայությունների, ինչպես նաև տրանսպորտային նյութերի և վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսերի աճով:

«Ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննության վճարներ» ծրագրի ծախսերը, որոնք իրականացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 135.4 մլն դրամ՝ ապահովելով 87.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ներմուծվող սննդամթերքում ավելի փոքր է եղել լաբորատոր փորձաքննության ենթարկելու անհրաժեշտությունը՝ կապված ռիսկայնության աստիճանի հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.4%-ով կամ 19.1 մլն դրամով, որը պայմանավորված է լաբորատոր փորձաքննության պատվերների քանակի նվազմամբ, ինչի արդյունքում պակասել են եկամուտները, հետևաբար՝ նաև ծախսերը:

Հաշվետու տարում ավելի քան 1.2 մլրդ դրամ է տրամադրվել անտառային տնտեսության դասին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 1.1%-ով կամ 13.9 մլն դրամով՝ պայմանավորված անտառպահպանական ծառայությունների ծախսերի նվազմամբ: 2017 թվականին անտառային տնտեսությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել էր շուրջ 1.2 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն

տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ իր իրավասության ներքո գտնվող 344.2 հազար հեկտար տարածքների պահպանության աշխատանքների դիմաց վճարման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1%-ով կամ 12.6 մլն դրամով, ինչը պայմանավորված է իրականացված աշխատանքների ծավալով:

Անտառային պետական մոնիտորինգի իրականացման համար նախատեսված 53.3 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Հատկացված գումարների հաշվին բնության հատուկ պահպանվող յոթ տարածքների անտառներում իրականացվել են ուսումնասիրություններ և դիտարկումներ՝ անտառների պահպանության, անտառային հողերի վրա մարդածին և բնածին ազդեցությունների, անտառպաշտպանության, հատատեղերի, հակահրդեհային միջոցառումների, անտառվերականգնման ուղղություններով: Իրականացվել է փայտանյութի սպառման շուկայի, փայտանյութի մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում: Ներդրված հեռահար զոնդավորման ծրագրային համակարգի միջոցով վերծանվել են անտառածածկ տարածքների փոփոխությունների ուսումնասիրությունները: Արբանյակային պատկերների վերծանման արդյունքների գնահատման, մոնիտորինգի դաշտային աշխատանքների համադրման նպատակով, անտառների պահպանության վիճակի, պահաբաժինների գարնանային ստուգումների արդյունքների հավաստիության վերաբերյալ ուսումնասիրություններ և դիտարկումներ են իրականացվել «Հայանտառ պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 17 անտառտնտեսություն մասնաճյուղերի և բնության հատուկ պահպանվող երեք տարածքների անտառային տարածքներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով կամ 1.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է իրականացված աշխատանքներով:

2017 թվականին շուրջ 26.2 մլրդ դրամ տրամադրվել է *ոռոգման* դասի ծախսերին՝ ապահովելով 98.1% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի, Մաստարայի ջրամբարի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի, ինչպես նաև Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 10 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են 4 վարկային և 1 դրամաշնորհային ծրագրեր:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 15.6 մլրդ դրամ՝ 99.2%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության և Զարգացման Ֆրանսիական Գործակալության միջև 75 մլն եվրո արժողությամբ

վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականի հունվարի 26-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի մայիսի 12-ին: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են Վեդի և Խոսրով ջրառ հանգույցների, ջրի փոխադրման համակարգի և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքներ, որոնք նախատեսվում է ավարտել 2018 թվականի սեպտեմբերին, իսկ Վեդի պատվարի շինարարական աշխատանքները՝ 2021 թվականի մարտին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.6 մլրդ դրամ՝ 92.8%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է կնքված պայմանագրերի հիման վրա կատարված շինարարական աշխատանքների և խորհրդատվական պայմանագրերի շրջանակներում ներկայացված փաստացի կատարողականների հիման վրա կատարված վճարումներով (Գեղարդա լճի ինքնահոս համակարգի շինարարության առկա խնդիրների հետ կապված՝ կատարողականները ներկայացվել են նախատեսվածից քիչ): Ծրագրի նպատակներն են՝ կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը և բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում, բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հուսալիությունը որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Ծրագիրը բաղկացած է 3 մասերից:

1. Ոռոգման համակարգի բարելավում՝ մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի Մեղրիում, Գեղարդալճում, Բաղրամյան-Նորակերտում և Քաղցրաշենում չորս ինքնահոս համակարգերի կառուցման միջոցով: Մեխանիկական եղանակով ստացած ջուր տեղափոխող, հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում 13 ընտրված պոմպակայանների հեռացնող ջրանցքների մոտ՝ 58 կմ վերականգնման միջոցով:

2. Կառավարման տեղեկատվություն՝ տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում ոռոգման կազմակերպությունների շահագործման, պահպանման ու կապիտալ նորոգման կարիքները վերլուծելու և «Ջրառ» կազմակերպությունների ու ՋՕԸ-ների տեխնիկական աուդիտի իրականացման նպատակով, կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի (SCADA) տեղադրում շուրջ 70 դիտակետում՝ մայր ջրանցքների և ջրառների ընտրված կետերի վրա:

3. Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն՝ աջակցության տրամադրում ԾԻԳ-ին ծրագրի կառավարման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքներում՝ ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, այդ թվում՝ աուդիտի և գործառնական ծախսերի ապահովման միջոցով: Աջակցության տրամադրում ՋՕԸ-ների ղեկավարությանը, անձնակազմին և անդամներին՝ ուղղված նրանց տեխնիկական, գործառնական, ֆինանսական և

կազմակերպչական կարողությունների ու աշխատանքի բարելավման նպատակով՝ խորհրդատվական ծառայությունների և ուսուցման միջոցով:

Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում 2017 թվականին ավարտվել են Մեղրիի Մագիստրալ խողովակաշարի 8.589 կմ և Ձախ ճյուղ մագիստրալ խողովակաշարի 35.920 կմ կառուցման շինարարական աշխատանքները: Ավարտվել են Աչաջուր, Նոյեմբերյան քառաստիճան, Ջեյթուն (Հաղթանակ), Մեծամոր (Տանձուտ Ղամլու), Ղարա-Ղալայի, Արգինա, Սարալանջ և Դաշտադեմ ջրհան կայանների հեռացնող ջրանցքների վերականգնման աշխատանքները:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 743.6 մլն դրամ՝ 99.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի առաջին փուլով որոշվել է իրականացնել Կապսի ջրամբարի հիմնանորոգումը՝ 25 մլն մ^3 ընդհանուր ծավալով: 2016 թվականի ընթացքում «Շրջակա միջավայրի վրա սոցիալական ազդեցությունը գնահատող» (ՇՄՍԱԳ) խորհրդատուի և «Փորձագետների հանձնաժողովի» մասնակիցների ընտրության նպատակով անցկացվել է նախաորակավորման մրցութային գործընթաց, որից հետո ներկայացվել են նաև համապատասխան մրցութային փաստաթղթեր՝ նախաորակավորում անցած մասնակիցների միջև մրցութային գործընթաց իրականացնելու համար: Մրցույթի արդյունքում ընտրվել են փորձագետներ: 2017 թվականին շարունակվել է ՇՄՍԱԳ խորհրդատուի մրցութային գործընթացը, ավարտվել են դաշտային գեոտեխնիկական հետազոտությունների նախագծման աշխատանքները:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 252.3 մլն դրամ՝ 91.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ Եվրասիական զարգացման բանկի կողմից գնումների պլանը հաստատվել է նախատեսված ժամկետից ուշ, որի հետևանքով աշխատանքները կատարվել են նախատեսվածից պակաս ծավալներով: Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի հունիսի 10-ին: Ծրագրի ընդհանուր արժեքն է 50 մլն ԱՄՆ դոլար, որից 40 մլն ԱՄՆ դոլարը վարկային միջոցներն են: Ծրագիրը նպատակ ունի փոխարինել մեխանիկական ոռոգումը ինքնահոսով, վերականգնել մայր և երկրորդ կարգի ջրանցքների, ներտնտեսային ցանցի առավել քայքայված և վթարային հատվածները: Ծրագրի շրջանակներում ամփոփվել են 8 ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցման, մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնման աշխատանքների նախագծման և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցութային գործընթացները, կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր, ամփոփվել են Գառնիի մայր ջրանցքի և Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ի

սպասարկման տարածքում գտնվող Գառնի և Հացավան համայնքների ոռոգման համակարգերի վերականգնման մրցութային գործընթացները: 2017 թվականի հուլիսի 20-ին մեկնարկել են շինարարական աշխատանքները, որոնք կրում եմ շարունակական բնույթ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Մաստարայի ջրամբարի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 153.2 մլն դրամ՝ 50.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ գնումների պլանը հաստատվել է նախատեսված ժամկետից ուշ, որի հետևանքով ծրագիրը մեկնարկել է նախատեսված ժամկետից ուշ: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը և Միջազգային զարգացման ընկերակցությունը («Համաշխարհային բանկ»), հանդես գալով որպես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կարողությունների զարգացման բազմադոնորային հավատարմագրային հիմնադրամի դրամաշնորհային միջոցների կառավարիչ, տրամադրում են 670 հազար ԱՄՆ դոլար գումարը չգերազանցող դրամաշնորհ՝ Մաստարայի ջրամբարի ծրագրի նախապատրաստմանն աջակցելու համար, որը նախատեսվում է ֆինանսավորել Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) կողմից կառավարվող հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից: 2017 թվականին կատարվել են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները: Ծրագիրը նպատակն է՝ բարձրացնել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից ֆինանավորվող Մաստարայի ջրամբարի ծրագրի պատրաստվածության աստիճանը՝ համապատասխան ծրագրի նախապատրաստման ուսումնասիրությունների իրականացմանն օժանդակելու միջոցով, և ընդլայնել Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի՝ ծրագրերի նախապատրաստման և իրականացման կարողությունները: 2017 թվականի ընթացքում մրցութային կարգով իրականացվել են համապատասխան խորհրդատուների ընտրության աշխատանքները, մեկնարկել են տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքները:

Հաշվետու տարում ոռոգման դասում ընդգրկված հետևյալ 4 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

2017 թվականին ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին տրամադրվել է շուրջ 5.3 մլրդ դրամ աջակցություն: 2017 թվականին ծառայություններ են մատուցվել 14 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների, կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է հատկացվում պետական օժանդակությանը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՛լ ավելի են կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր

հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնաձախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 25.8%-ով կամ 1.8 մլրդ դրամով նվազումը պայմանավորված է ջրօգտագործողների ընկերությունների համար ըստ տարիների նախատեսված սուբսիդիայի կրճատման սցենարով:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների ու որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2017 թվականի պետական բյուջեից ծախսվել է 320.5 մլն դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը՝ մաքրվում և վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա: Նշված արդյունքներին հասնելու համար իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, դրանց մաքրում և նորոգում, մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: Ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել են շուրջ 182.084 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: 2017 թվականի ընթացքում իրականացվել են 189.091 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման աշխատանքներ, որի հիման վրա ջրահեռացման ծավալը կազմել է 1580 մլն խմ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.4%-ով կամ 1.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին ոռոգման բնագավառի աշխատանքների իրականացման համար հաշվետու տարում տրամադրվել է 15 մլն դրամ սուբվենցիա: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի տնամերձ հողամասերի ոռոգման աշխատանքները:

Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին 2017 թվականին տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ ֆինանսական աջակցություն: Աջակցության հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում

նրանց տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին իրականացնել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.7%-ով կամ 81.7 մլն դրամով, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի նվազմամբ:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են 9.7 մլն դրամ կամ ծրագրի 84.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշակի ծառայությունների և նյութական արժեքների ձեռքբերման ծախսերի տնտեսումներով: Հատկացված գումարն ուղղվել է հիդրոտեխնիկական կառուցվածքների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության, ինչպես նաև տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով որպես մշտապես գործող մարմին ստեղծված՝ Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի գործունեության ապահովման ծախսերի ֆինանսավորմանը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 15.2%-ով կամ 1.7 մլն դրամով, որը պայմանավորված է տնտեսումներով:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2017 թվականին կազմել են ավելի քան 10.3 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 74.6%-ը: Վերջինս հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի և վառելիքի այլ տեսակների բնագավառների ծրագրերի կատարողականով:

2017 թվականին *միջուկային վառելիքի* դասի ծախսերը կազմել են շուրջ 271.8 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 99.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.9%-ով կամ 17.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

2017 թվականին *վառելիքի այլ տեսակների* դասի ծախսերը կազմել են ավելի քան 3.6 մլրդ դրամ կամ ծրագրվածի 71.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող երեք դրամաշնորհային ծրագրեր:

Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3 մլրդ դրամ՝ ապահովելով 86.6% կատարողական, որը պայմանավորված է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի միջև կնքված պայմանագրերը ՌԴ ֆինանսների նախարարության կողմից ուշ հաստատելու հանգամանքով: Ծրագրի նպատակն է՝ երկարաձգել

Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետը: Ծրագրի առաջին փուլում նախատեսվում է իրականացնել էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր ուսումնասիրություն և շահագործման լրացուցիչ ժամկետի նախապատրաստման ծրագրի մշակում, երկրորդ փուլում՝ նախապատրաստման ծրագրի իրականացում, ներառյալ՝ հետազոտական, հաշվարկային, վերլուծական, նախագծային, կոնստրուկտորական, մոնտաժային և գործակարգաբերման աշխատանքները, և անհրաժեշտ սարքավորումների մատակարարումներ: Ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են ծրագրի իրականացման նպատակով գլխավոր կապալառուի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի կանխավճարներիև նախատեսված հարկերի ու տուրքերի դիմաց:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 441.6 մլն դրամ՝ 3.9%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ գործարքային խորհրդատվության ծառայություններ (ներդրողների տեսակետից հիմնական իրավական նորմատիվ ասպեկտների բացահայտում, համապատասխան օրենսդրական և կարգավորիչ դաշտի ուսումնասիրություն, իրավական խոչընդոտների բացահայտում) մատուցող կազմակերպության կողմից դեկտեմբեր ամսվա ընթացքում նախապես պայմանավորված պայմանագրի արժեքի 15 տոկոս աշխատանքների փոխարեն իրականացվել են 20 տոկոսին համարժեք աշխատանքներ: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը՝ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրի նախապատրաստման հարցում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստանի արևային ռեսուրսների գնահատման և քարտեզագրման, արևային ֆոտովոլտային կայանների կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման, օրենսդրության մանրամասն փորձաքննության հաշվետվության և «Մասրիկ-1» ծրագրի համաձայնագրերի նախագծերի մշակման, մրցութային գործընթացի և առաջարկներ ներկայացնելու հրավերի փաստաթղթերի մշակման, ինչպես նաև ծրագրի կառավարման աշխատանքներ:

2017 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 197.8 մլն դրամ՝ ապահովելով 16.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագրով նախատեսվել էր իրականացնել արտադրական հորատանցքի հորատման աշխատանքներ, սակայն դրամաշնորհային գումարների բավարար չլինելու պատճառով ժամանակավորապես հետաձգվեց աշխատանքների իրականացումը: Աշխատանքներ են տարվում միջազգային փորձառությամբ ներդրող կազմակերպություններ ներգրավելու ուղղությամբ: Ծրագրի նպատակն է Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Կարկառում, հետախուզական

հորատման միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսի առկայության և որակի հաստատումն ու երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում մասնավոր հատվածի ներգրավումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են երկու նեղ հորատանցքերի հորատման տեխնիկական հսկողության, կարոտաժի և փորձարկման ամփոփման, Կարկառի երկրաջերմային էլեկտրակայանի նախնական ծախսերի տնտեսական և ֆինանսական գնահատման, ինչպես նաև ծրագրի աուդիտի և կառավարման աշխատանքներ: Կարկառի երկրաջերմային տարածքում Երկրաջերմային (Օրգանական Ռանկինի ցիկլով աշխատող) էլեկտրակայան կառուցելու համար կատարվել է նախնական հաշվարկ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև Կարկառի ապագա երկրաջերմային կայանի տնտեսաֆինանսական գնահատման հաշվետվության վերանայված տարբերակի պատրաստման (ներառյալ ներդրման բուկլետի պատրաստումը) աշխատանքներ: Հաշվետվության նախագիծը և ներդրման բուկլետը արդեն ներկայացվել են Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին՝ ներդրողներ գտնելու նպատակով:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են շուրջ 6.5 մլրդ դրամ՝ ապահովելով 75.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բաելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բաելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 5 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են 4 վարկային ծրագրեր:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.1%-ը, որը պայմանավորված է արտարժույթի՝ կանխատեսվածից ցածր փոխարժեքով: Ծրագրի շրջանակներում կատարվել են վճարումներ ծրագրի իրականացման վերահսկողության խորհրդատվական ծառայությունների, շինարարական աշխատանքների, նախագծման, սարքերի ու սարքավորումների ներկրման, ինչպես նաև հարկերի և տուրքերի վճարման ուղղություններով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել 220 կՎ լարման «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանները: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 93.6%-ով՝ կազմելով ավելի քան 1 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ընտրել գլխավոր կապալառու, կնքել պայմանագիր և իրականացնել կանխավճար, որի համաձայն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վճարել սահմանված հարկերը և տուրքերը (ոչ ռեզիդենտի շահութահարկը), սակայն ընտրված կապալառուն ռեզիդենտ կազմակերպություն է, ուստի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վճարումներ չեն իրականացվել: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել կարգավարական կառավարման ավտոմատացված համակարգը (SCADA) և կառուցել Պահուստային կարգավարական կառավարման կենտրոն: 2017 թվականին կատարվել են վճարումներ աշխատանքների վերահսկողության և կառավարման խորհրդատվական ծառայությունների, կապալառուին կատարված կանխավճարի ու սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի գծով:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 858.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 47.4%-ը, ինչը պայմանավորված է խորհրդատուի և գլխավոր կապալառուի կողմից հաշիվ ապրանքագրերը նախատեսված ժամկետից ուշ ներկայացնելու հանգամանքով, թեև աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամկետներում: 2017 թվականին ծրագրի շրջանակներում կատարվել են վճարումներ ենթակայանի վերակառուցման աշխատանքների հսկողության խորհրդատվական ծառայությունների, իրականացված շինարարական աշխատանքների, նախագծման, ներկրված սարքերի ու սարքավորումների, ինչպես նաև նախատեսված հարկերի և տուրքերի գծով: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի գծով օգտագործվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ 56.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի շրջանակներում նախատեսվում էր կատարել կանխավճար ծրագրի իրականացման աջակցության և տեխնիկական հսկողության համար ընտրված խորհրդատուի կողմից կատարած աշխատանքների դիմաց, սակայն խորհրդատուի կողմից բանկային երաշխիքների փաստաթղթերը ներկայացվել են

նախատեսված ժամկետից ուշ: Շեղումը պայմանավորված է նաև գլխավոր կապալառուի կողմից հաշիվ ապրանքագրերը նախատեսված ժամկետից ուշ ներկայացնելու հանգամանքով: Սակայն հարկ է նշել, որ աշխատանքներն իրականացվել են ժամանակին: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են վճարումներ ծրագրի իրականացման աջակցող խմբի՝ անհատ խորհրդատուների կողմից իրականացված խորհրդատվական ծառայությունների, իրականացված շինարարական աշխատանքների, նախագծման, ներկրված սարքերի ու սարքավորումների, ինչպես նաև նախատեսված հարկերի ու տուրքերի դիմաց: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Երևանի ՋԷԿ-ի 220 կվ ենթակայանը:

2017 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կազմել են 671.9 մլն դրամ կամ ծրագրվածի 97.5%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 10.4%-ով կամ 77.8 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի նվազմամբ: Վերջինս պայմանավորված է «Ընդերքի պետական տեսչության» վերակազմակերպմամբ, որը ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ենթակայությունից անցել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ենթակայությանը:

Հաշվետու տարում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* խմբին պետական բյուջեից հատկացվել է շուրջ 20.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել սպառողներին ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2017 թվականին *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 71.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 85.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտի գծով ծախսերն արձանագրել են 10.4% աճ՝ հիմնականում պայմանավորված ճանապարհային տրանսպորտի ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում *ճանապարհային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են ավելի քան 67.4 մլրդ դրամ՝ ծրագրային ցուցանիշն ապահովելով 87.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 20 ծրագրեր, որոնցից տասնմեկը՝ վարկային և երկուսը՝ դրամաշնորհային ծրագրեր են:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 12 մլն դրամ կամ նախատեսվածի 3.9%-ը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ ծրագրով նախատեսված էր մարել կապալառուի կողմից կատարված աշխատանքների դիմաց ներկայացված յուրաքանչյուր միջանկյալ վճարման վկայագրերից (ՄՎՎ) պահված 5% հետերաշխիքային գումարի վերջին մասը, սակայն թերությունների ցանկով նախատեսված աշխատանքները չեն ավարտվել, ուստի չի իրականացվել նաև ավարտական աուդիտ: Աշխատանքների ավարտը և վճարումը նախատեսվում է իրականացնել 2018 թվականին երկրորդ տրանշի միջոցներից, որից հետո իրականացվելու է նաև ավարտական աուդիտ: Ծրագրի շրջանակներում մատուցվել են աուդիտորական ծառայություններ, մասնակի վճարվել են հետավարտական երաշխիքային վճարները:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 2-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է 11.1 մլրդ դրամ՝ 83.1%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների արդյունքում ձմեռային ժամանակաշրջանում շինարարական աշխատանքների դադարեցման հանգամանքով: Բացի այդ, ծրագրի կառավարման խորհրդատուի կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների դիմաց դեկտեմբեր ամսվա հաշիվը ներկայացվել է 2018 թվականի առաջին եռամսյակում: Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ համայնքի տարածքում ընթանում է հողերի օտարման և տարաբնակեցման ազդեցությունների գնահատումը, ինչպես նաև ազդակիր հողերը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու ուղղությամբ աշխատանքները՝ դրանք օտարելու նպատակով: ԱԶԲ հետ կնքված համաձայնագրի շրջանակներում իրականացվել և ընթացքի մեջ են գտնվում երկրորդ տրանշի ճանապարհահատվածի երկայնքով հաղորդակցման ուղիների տեղափոխման շրջանակում հողերի օտարման և տարաբնակեցման ազդեցությունների գնահատման և համապատասխան սոցիալական երաշխիքների փաստաթղթերի պատրաստման աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հողային, արհեստական կառուցվածքների շինարարության և պատվածքի բետոնապատման աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է 6.9 մլրդ դրամ՝ 76.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով Թալին-Լանջիկ

ճանապարհահատվածում շինարարական աշխատանքների՝ նախատեսված ժամկետից ուշ մեկնարկով: Ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի շինարարական՝ հողային (510,000 մ^3) և արհեստական կառուցվածքների (2,500 մ^3) գծով աշխատանքներ,
- թվով 9 ուղեանցեր հանձնվել են շահագործման,
- մատուցվել են տեխնիկական հսկողության ծառայություններ,
- Թալին-Գյումրի ճանապարհահատվածի հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքներ, դրանց տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ,
- Թալին-Գյումրի ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիրը: Հիմնականում ավարտվել է ԱԶԲ-ի աջակցությամբ ֆինանսավորվող հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) իրականացումը: Ավարտվել է նաև ՀՕՏԾ իրականացումը ԵՆԲ-ի աջակցությամբ ֆինանսավորվող հատվածի 1-ից 5-րդ ենթահատվածներում, որի արդյունքում օտարվել են ընդհանուր թվով 523 հողամասեր: Ավարտված ենթահատվածները հանձնվել են կապալառուին շինարարական աշխատանքների իրականացման նպատակով: Միաժամանակ, նախագծային փոփոխությունների արդյունքում փոխվել է հողերի օտարման և տարաբնակեցման ազդեցությունների պատկերը ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածի 6-րդ ենթահատվածում՝ ՀՀ Շիրակի մարզի Բենիամին և Ազատան համայնքների տարածքներում, որի արդյունքում օտարման գոտուց դուրս են եկել որոշ հողամասեր, և առաջացել է նոր հողերի օտարման անհրաժեշտություն: Նոր հողերի օտարման շրջանակում ընթացքում է գտնվում ազդեցությունների նախնական գնահատումը, միաժամանակ իրականացման ընթացքում է գտնվում 6-րդ ենթահատվածի չփոփոխված դեպքերով ՀՕՏԾ իրականացումը,
- ՀՕՏԾ արտաքին մոնիթորինգի ծառայությունները:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով 64.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է տարեսկզբին եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով շինարարական աշխատանքների՝ նախատեսված ժամկետից ուշ մեկնարկով: Ճանապարհի 6-րդ ենթահատվածում փոխվել է ծրագիծը, որի հետևանքով նոր հողերի օտարման անհրաժեշտություն է առաջացել: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի հողային և արհեստական կառուցվածքների շինարարական աշխատանքները:

Նշված վարկային ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 82.7%-ով՝ կազմելով 925.4 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ Լանջիկ-Գյումրի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողություն

իրականացնող կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվել են 2018 թվականի հունվար ամսին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի հողային աշխատանքները, մատուցվել են Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 28.1 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ ծրագրով նախատեսված էր Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի շրջանակներում Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում, սակայն ճանապարհահատվածի շինարարության իրականացման մոտեցումը փոխվեց, և որոշվեց այն իրականացնել պետական-մասնավոր համագործակցության շրջանակներում: Շուրջ 15 հետաքրքրված մասնավոր կազմակերպությունների հետ ընթանում են բանակցություններ, աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2018 թվականի ընթացքում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 278.9 մլն դրամ՝ ապահովելով 64.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության ինտենսիվության հաշվիչների ձեռքբերումը նախատեսված էր ամբողջությամբ իրականացնել 2017 թվականին, սակայն ապրանքների մատակարարման ուշացման պատճառով վճարվել է միայն կանխավճարը: Նախատեսված էր նաև իրականացնել ճանապարհային նշանների ձեռք բերում, սակայն 2017 թվականին իրականացվել է միայն գնման գործընթացը, իսկ պայմանագրի կնքումը տեղափոխվել է 2018 թվական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հողային, ջրահեռացման համակարգի վերականգնման, մայթերի, 3.1 կմ երկարությամբ ասֆալտապատման աշխատանքները, մատուցվել են աուդիտորական և սոցիալական մոնիտորինգի ծառայությունները, ամփոփվել է նախագծային աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացը, կնքվել են համապատասխան պայմանագրեր, ավարտվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության ինտենսիվության հաշվիչների ձեռքբերման միջազգային մրցութային գործընթացը, և կնքվել է պայմանագիր: Հիմնանորոգման գծով աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են, և օբյեկտը հանձնվել է շահագործման:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 6.4 մլրդ դրամ՝ ապահովելով 92.4% կատարողական, որը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: 2017 թվականին ծրագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են նախատեսված ծավալով, և հիմնանորոգված օբյեկտները

հանձնվել են շահագործման: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 45.4 կմ ճանապարհներ, այդ թվում՝ 24 կամուրջներ, նաև մատուցվել են տեխնիկական և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայություններ, իրականացվել են պահպանման ծախսեր:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային առաջին և երկրորդ վարկային ծրագրերի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 1.2 մլրդ դրամ և 8.9 մլրդ դրամ: Օգտագործված միջոցները համապատասխանաբար 97.8%-ով և 96.5%-ով ապահովել են ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և Արտաշատի խճուղու փոխհատման ճանապարհահատվածի՝ ազդեցության ենթարկված անձանց փոխհատուցման, տեխնիկական հսկողության, նախագծային աշխատանքների և աուդիտի դիմաց վճարումներ, մասնագետների խմբի պահպանման ծախսեր, պետական տուրքերի և նոտարական ծառայությունների դիմաց վճարումներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 31.8 մլն դրամ կամ բյուջեով հատկացված գումարի 6.4%-ը: Վարկային ծրագրով նախատեսվել էր կապալառուին կանխավճարի տրամադրում: Շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիրը եռակողմ է, հայկական կողմն այն ստորագրել է 2017 թվականի նոյեմբերի 2-ին, իսկ վրացական կողմը՝ 2017 թվականի դեկտեմբերի 19-ին: Հետևաբար՝ մինչև տարեվերջ ընկած կարճ ժամանակահատվածում հնարավոր չէր իրականացնել կանխավճարի վճարումը: Վարկային ծրագրի շրջանակներում նախագծման և շինարարության մրցույթն ավարտվել է, պայմանագիրը կնքվել է: Օգտագործված միջոցներն ուղղվել են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի պահպանմանը և գրասենյակային տարածքի վարձակալությանը: Նշված վարկային ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 36.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.2%-ը: Միջոցները նախատեսվել էին ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետում նոր կամրջի կառուցման ծրագրի աջակցության նպատակով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 10.6 մլրդ դրամ՝ 97.5%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրով (ՀՕՏԾ) նախատեսված գույքի օտարումները չեն իրականացվել:

Շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գծով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում նաև մատուցվել են տեխնիկական և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայություններ: 2017 թվականի նոյեմբեր ամսին մեկնարկել է և ընթացքում է գտնվում ՀՕՏԾ իրականացումը:

Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման վարկային ծրագրի գծով Ասիական զարգացման բանկի աջակցության շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.6 մլրդ դրամ՝ 73%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ երեք լոտերով նախատեսված պայմանագրերը մրցույթի արդյունքներով կնքվել են նախահաշվային արժեքից ցածր գներով, որի արդյունքում առաջացել է տնտեսում: Ծրագրի շրջանակներում կնքվել են շինարարական աշխատանքների երեք պայմանագրեր, և վճարվել են պայմանագրերով նախատեսված կանխավճարները: ՀՕՏԾ պատրաստման և իրականացման նպատակով ներգրավվել է «Սոցիալական երաշխիքների ապահովման գործընթացին աջակցության» խորհրդատուն, որի կողմից պատրաստվել է ՀՕՏԾ-ն, որը վերանայվել և հաստատվել է ԱԶԲ-ի կողմից:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 741.5 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ դեռևս նախագծանախահաշվային փաստաթղթերը 2017 թվականին գտնվել են մշակման փուլում, որոնց հիման վրա կհայտարարվի շինարարական կազմակերպության ընտրության մրցույթ: Ծրագրի շրջանակներում խորհրդատու կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, շինարարական հսկողության, ճանապարհների տեխնիկական սպասարկման պայմանագրերի պատրաստման և գնումների գործընթացի աջակցության ուղղությամբ:

Հաշվետու տարվա պետական բյուջեից ավելի քան 4 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.3%-ը, որը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 46.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ, Մ4-Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման հատվածում տեղադրվել են 5.5 կմ ընդհանուր երկարությամբ մետաղական արգելափակոցներ: Իրականացվել են նաև նախագծային ու հեղինակային հսկողության և շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության աշխատանքներ: Բացի այդ, մրցույթների արդյունքում ձևավորված տնտեսումների և կատարված վերաբաշխումների արդյունքում կատարվել են նաև հրատապ ճանաչված ճանապարհահատվածների հիմնանորոգման և անցանելիության ապահովման աշխատանքներ:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.8%-ով կամ 775.8 մլն դրամով՝ պայմանավորված հիմնանորոգման աշխատանքների ծավալների աճով:

2017 թվականին միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծախսերը կազմել են շուրջ 7.3 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 3477.1 կմ ճանապարհների՝ ձմեռային և 2935.4 կմ ճանապարհների ամառային և դրանց վրա գտնվող ու առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և պարսպող հարմարանքների (627’669 գծ.մ) պահպանման աշխատանքներ, նշագծվել է 1895.9 կմ ավտոճանապարհ: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն աճել են 18.5%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 275.7 մլն դրամ՝ 95.2%-ով՝ ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 7 տրանսպորտային օբյեկտների նորոգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը նվազել են 27.3%-ով կամ 103.3 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 995.2 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.9%-ով կամ 165.3 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների աճով:

Հաշվետու տարում ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի պահպանման և սպասարկման ծախսերը կազմել են 17.3 մլն դրամ՝ 92.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը, ինչը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի՝ կանխատեսվածից ցածր փոխարժեքով, քանի որ վճարումը կատարվում է եվրոյով: Ծրագրի շրջանակներում շարունակվում է «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» Եվրոպական համաձայնագրի պահանջներին համապատասխան ՀՀ-ում ներդրված հսկիչ սարքի (թվային տախոգրաֆի) համակարգի էլեկտրոնային կառավարումը: 2017 թվականի ընթացքում ՀՀ փոխադրողներին տրամադրվել է 106 թվային տախոգրաֆի քարտ՝ նախորդ տարվա 28-ի դիմաց: Հայաստանի Հանրապետության փոխադրողներին տրամադրվել է

մեկանգամյա 788 թույլտվություն, իսկ Տրանսպորտի Նախարարների Եվրոպական Կոնֆերանսի (ՏՆԵԿ) համաձայնագրի շրջանակներում փոխադրողներին տրամադրվել են 168 թույլտվություններ, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն իրականացնող կայաններին տրամադրվել է 4886 հատ տեխնիկական զննության կտրոն, կազմակերպվել են միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 33 մրցույթներ: 2017 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել են թվով 5904 վերահսկողական արդյունքների ամփոփման արձանագրություններ, այդ թվում՝ տաքսի փոխադրումների ոլորտում հայտնաբերված խախտումների վերաբերյալ՝ 4305, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացի նկատմամբ՝ 249, ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև ապօրինի կուտակման կետերում հայտնաբերված խախտումների վերաբերյալ՝ 1209 և 141 այլ արձանագրություններ, հաշվառվել և վերահաշվառվել են 206, հաշվառումից հանվել 6 միավոր ինքնագնաց ճանապարհաշինարարական և 6 միավոր ջրային տրանսպորտային միջոցներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2 անգամ կամ 13.2 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ հաշվետու տարում վճարումը կատարվել է ամբողջ տարվա համար, մինչդեռ նախորդ տարի, պայմանագրի համաձայն, կատարել էր միայն առաջին եռամսյակի վճարումը:

Հաշվետու տարում Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացմանը պետական աջակցության համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 97.7%-ով կամ 1.6 մլրդ դրամով, որը պայմանավորված է 2017 թվականին բյուջեով հատկացված գումարների ավելացմամբ:

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են 208.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում են ՀՀ ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրա նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի գծով ճանապարհների շինարարության ընթացքում տեխնիկական չափանիշների ստուգման և աշխատանքների արդյունքների ընդունման, ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրության, նախագծային փաստաթղթերի իրականացված փորձաքննության, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության, ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների ցանցի անձնագրավորման, ավտոմոբիլային

ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով կամ 2.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է օպտիմալացման արդյունքում ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *երկաթուղային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են 319.2 մլն դրամ և ապահովել 90.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց տրամադրված սուբսիդիայի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 10.9%-ով կամ 39.1 մլն դրամով, որը պայմանավորված է 2017 թվականին «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ի լուծարմամբ, ինչպես նաև «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին տրամադրված սուբսիդիայի նվազմամբ:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց տրամադրվել է 301.7 մլն դրամ՝ ապահովելով 93.1% կատարողական: Հայաստանի Հանրապետության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների տարեկան վնասը՝ անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Շեղումը պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի եկամուտների ցածր մակարդակով, քանի որ, պայմանագրի համաձայն, սուբսիդիայի գումարը չի կարող ավելի կամ հավասար լինել կոնցեսիոն վճարի գումարին, որը կազմում է եկամտի 2%-ը: Արդյունքում նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 3.5%-ով կամ 11.1 մլն դրամով:

Հաշվետու տարում 17.5 մլն դրամ է տրամադրվել ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով 60.2% կատարողական, որը պայմանավորված է փաստացի մատուցված ծառայությունների ծավալով: Նշենք, որ նախորդ տարի այս նպատակով միջոցները հատկացվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

2017 թվականին *օդային տրանսպորտի* գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 84.7% կատարողական՝ կազմելով ավելի քան 662.6 մլն դրամ: Շեղումն առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծախսերի գծով, որոնք 28.7%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 292.2 մլն դրամ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսվածից պակաս են կազմել անհատ անձանց և կազմակերպություններին, հիմնականում՝ մշակույթի

բնագավառի ներկայացուցիչներին բարեգործական նպատակով տրամադրվող օգնությունները, ծրագրով նախատեսված արտասահմանյան գործուղումները և ներկայացուցչական ծախսերը, ինչպես նաև նախատեսվածից քիչ միջոցներ են հատկացվել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին ուսումնավարժանքային թռիչքների համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12%-ով կամ 31.2 մլն դրամով, որը պայմանավորված է հիմնական միջոցների ձեռքբերման գծով վարչական սարքավորումների, այլ մեքենաների և սարքավորումների, ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի ու արտասահմանյան գործուղումների ծախսերի աճով:

239.2 մլն դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման ծախսերը՝ ապահովելով ծրագրի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով կամ շուրջ 8 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության և տրանսպորտային նյութերի ձեռքբերման ծախսերի նվազմամբ:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 99.9 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աէրոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 9.4 մլն դրամ՝ 6.3%-ով զիջելով նախատեսված և փաստացի ցուցանիշները: Շեղումը պայմանավորված է մատուցված ծառայությունների գների նվազմամբ: Ծրագիրը նախատեսվել է «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացման համար:

ԱՊՀ տարածքում օդային տրանսպորտով ՀՀ քաղաքացիներ հանդիսացող Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց մատուցվող ծառայությունների դիմաց չստացված եկամուտների փոխհատուցման ծախսերը կազմել են 22 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ քաղաքացիներ հանդիսացող Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և մասնակիցներին, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց զեղչ սակագներով կամ անվճար ծառայությունների մատուցում: Ծրագրի իրականացման համար 2016 թվականին միջոցները հատկացվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

2017 թվականին *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 3.4 մլրդ դրամ կամ ծրագրի 59.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է

արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող մեկական վարկային և դրամաշնորհային ծրագրեր, իսկ մեկական վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով նախատեսված միջոցները չեն օգտագործվել:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի և վերջինիս գծով Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի երկրորդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 35-ական մլն դրամ՝ ապահովելով համապատասխանաբար 5.5% և 2.6% կատարողական: Ծրագրերի կատարողականը պայմանավորված է նրանով, որ աշխատանքները նախատեսվածից դանդաղ տեմպերով են ընթացել՝ կապված գրունտի ծանր երկրաբանական պայմանների, ինչպես նաև սարքավորումների՝ հաճախակի շարքից դուրս գալու հետ: Բացի այդ, տեղի է ունեցել գերհորատանցում, որի պատճառով անհրաժեշտ է եղել շրջանցել թունելի երթուղին: Ծրագրի շրջանակներում կատարվել են դրենաժային թունելի ջրահեռացման, երկարացման և մետրոյի թունելների վերականգնողական աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 77.4 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված ծրագրի ավարտով:

Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երրորդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 316.3 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է ծրագրի երկրորդ փուլի աշխատանքների անավարտ լինելու պատճառով երրորդ փուլի մեկնարկի հետաձգմամբ:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի դասում ընդգրկված՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում Երևան քաղաքին նախատեսված 610.9 մլն դրամ սուբվենցիան ամբողջությամբ օգտագործվել է՝ 44%-ով կամ 186.6 մլն դրամով գերազանցելով 2016 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է 2017 թվականին պետական բյուջեով նախատեսված գումարների ավելացմամբ:

Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով տրամադրվել է շուրջ 2.7 մլրդ դրամ սուբսիդիա՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին *կապի* ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 309.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել հեռահաղորդակցության ու կապի կանոնակարգման

ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիտորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության անցկացման, էլեկտրամագնիսական համատեղելիության, կոորդինացման համար նախատեսված, հեռարձակման գոտիների, խանգարումներից զերծ մնալու ծրագրային հաշվարկներ իրականացնելու, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման, ինչպես նաև ՀՀ և միջազգային ստանդարտներին, ոլորտը կարգավորող իրավական և տեխնիկական նորմատիվ ակտերին համապատասխանության գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 17.3%-ով կամ 64.6 մլն դրամով՝ պայմանավորված օպտիմալացման արդյունքում ծախսերի կրճատմամբ:

2017 թվականի ընթացքում *«Այլ բնագավառներ»* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 84.4 մլն դրամ՝ ապահովելով 84.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են զբոսաշրջության զարգացման ծրագրի ֆինանսավորմանը: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունը դարձնել միջազգային շուկայում հաճախելի երկրներից մեկը: Ծրագրի շրջանակներում զբոսաշրջության ոլորտի իրավական դաշտի բարե-լավման նպատակով մշակվել է «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի փաթեթը, Հայաստանի զբոսաշրջության գրավչությունները ներկայացվել են թվով 5 միջազգային ցուցահանդեսներին, ինչպես նաև Profi.travel առցանց ցուցահանդեսին, պետական աջակցություն է ցուցաբերվել 8 փառատոնների անցկացմանը, Գյումրիի և Մեղրիի ազատ տնտեսական գոտիներում բացվել են զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ՝ պետական աջակցությամբ Հայաստանի մարզերում արդեն գործում են 5 տեղեկատվական կենտրոններ, մեկնարկել է էլեկտրոնային մարքեթինգի ռազմավարության իրագործումը, նկարահանվել են Հայաստանի մասին գովազդային տեսահոլովակներ, ապահովվել է մասնակցությունը ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության մի շարք քննարկումներին ու նստաշրջաններին, սահմանային անցման գործընթացը դյուրացվել է Չինաստանի, ԱՄԷ-ի, Քաթարի, Ճապոնիայի, Հնդկաստանի և ՌԴ քաղաքացիների համար, մշակվել են ՀՀ կառավարության և Մեքսիկական Միացյալ նահանգների կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի նախագիծը, մշակման փուլում է գտնվում ՀՀ ու ՉԺՀ միջև համատեղ գործողությունների ծրագրի նախագիծը: Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 18.7%-ով: Նախորդ տարվա համեմատ զբոսաշրջության զարգացման ծրագրի ծախսերն աճել են 11.9%-ով կամ 9 մլն դրամով, որը պայմանավորված է նրանով, որ ծրագիրը սկսել է իրականացվել 2017 թվականի տարեսկզբից, մինչդեռ նախորդ տարի նրա իրականացումը սկսվել էր սեպտեմբեր ամսից:

2017 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 77.5 մլն դրամ՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 35.4%-ով կամ 42.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Գնումների վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարմամբ, որին 2016 թվականին միջոցներ էին հատկացվել պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների համար: Խմբում ընդգրկված են 3 ծրագրեր:

Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 38.6 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.7%-ով կամ 1.9 մլն դրամով՝ պայմանավորված օպտիմալացման արդյունքում հաստիքների կրճատմամբ:

Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման ծախսերը կազմել են 19.9 մլն դրամ՝ 99.5%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում նախագծող կազմակերպությունների կողմից մշակվել են «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու», «Հասարակական շենքեր և շինություններ», «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» և «Պողպատե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուները: Ծրագիրը սկսել է ֆինանսավորվել 2017 թվականին:

Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտությունների և տեխնիկական անձնագրավորման ծախսերը կազմել են շուրջ 19 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են թվով 64 տարբեր նշանակության շենքերի փաստացի տեխնիկական վիճակի մանրամասն հետազոտություններ, դրանց արդյունքների հիման վրա կազմվել են համապատասխան եզրակացություններ և տեխնիկական անձնագրեր: Նշված ծրագրի գծով 2016 թվականին պետական բյուջեից միջոցներ չէին հատկացվել:

2017 թվականին *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* գծով փաստացի ցուցանիշը կազմել է 5.1 մլրդ դրամ՝ նախատեսված 9.6 մլրդ դրամի և նախորդ տարվա փաստացի -883.9 մլն դրամի դիմաց: Խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են 6.1 մլրդ դրամ ծախսեր՝ 61.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 986.4 մլն դրամ, որը նախատեսված ցուցանիշը գերազանցել է 3.9 անգամ: Խմբի ծախսերի կատարողականը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով, մասնավորապես՝ Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը նվազել են 12.3%-ով կամ 850 մլն դրամով: 2016 թվականի պետական բյուջեում մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության ծախսերն ընդգրկված են եղել նշված դասում, իսկ 2017 թվականի պետական բյուջեով դրանք ներառվել են ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների դասում ընդգրկված հիդրոօդերևութաբանության ծառայությունների ձեռք բերման ծախսերում, ուստի 2017 թվականին նշված դասի ծախսերը 2016 թվականի համադրելի ցուցանիշի համեմատ նվազել են 8.4%-ով կամ 558.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տարածքային զարգացման հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցների և ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների համապատասխանաբար 20.9%-ով և 76.7%-ով նվազմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տարածքային զարգացման հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.2 մլրդ դրամ՝ 97.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է ծրագրի երկրորդ բաղադրիչի ուշ մեկնարկով: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի հունիսը: Ծրագրի նպատակը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի և հասանելիության բարելավումն է: Ծրագրի շրջանակներում իրականացվում է կրթական, առողջապահական և սոցիալական ծառայություններ ապահովող հիմնական սոցիալական ենթակառուցվածքների (դպրոցներ, մանկապարտեզներ, կլինիկաներ, համայնքային կենտրոններ, մարզադահլիճներ և խաղահրապարակներ) կառուցում, վերանորոգում, հիմնանորոգում և (կամ) ընդլայնում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեղադրում, հիմնանորոգում, ոռոգման ցանցերի վերանորոգման և գյուղերում էլեկտրաֆիկացման աշխատանքների

իրականացում: Նախատեսված է նաև դպրոցներին, մանկապարտեզներին և համայնքային կենտրոններին ապահովել կահույքով: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- նախատեսված ամբողջ ծավալով սկսվել են շինարարական աշխատանքները ՀՀ 10 մարզերի 21 ծրագրերում,
- նախատեսված ամբողջ ծավալով ավարտվել են շինարարական աշխատանքները ՀՀ 7 մարզերի 46 ծրագրերում,
- գնվել է կահույք ՀՀ մարզերի 17 դպրոցների, 20 մանկապարտեզների, 1 առողջապահական հիմնարկի և 6 համայնքային կենտրոնների համար,
- մշակվել է 28 նոր նախագիծ՝ նախատեսված 40-ի փոխարեն:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են շուրջ 52 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 13.5% կատարողական: Ծրագիրը սկսել է գործել 2017 թվականից և շարունակվելու է մինչև 2018 թվականի ավարտը: Ծրագրի նպատակն է՝ զարգացնել հարավային Հայաստանի համայնքապետարանների կարողությունները՝ վերջիններիս բնակիչներին կայուն ենթակառուցվածքների և ծառայությունների մատուցման ուղղությամբ: Այն նպատակաուղղված է լրացնել տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի երկրորդ բաղադրիչը: Բացի դրանից, մասնակի ֆինանսավորվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործառնական ծախսերը: Ծրագրի շրջանակներում գնվել է 2 տրակտոր և 1 հացահատիկային կոմբայն Վայոց Ձորի մարզի համայնքների համար: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է անհրաժեշտ տեխնիկայի ցուցակը ճշտելու հանգամանքով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 82% կատարողական: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի օգոստոսը: Ծրագրի նպատակը Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների միջոցով ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարմանը հասնելուն օժանդակելն է: Ծրագիրը նախատեսում է 14 խոշորացված համայնքային փնջերում, ըստ գերակայության սկզբունքի, ներդրումների կատարում համայնքային զարգացման համար, այդ թվում՝

- սոցիալական ենթակառուցվածքներում՝ կրթական, առողջապահական, մշակութային, սոցիալական նշանակության հաստատությունների կառուցում, վերակառուցում, վերանորոգում և գույքի տրամադրում,

- տնտեսական ենթակառուցվածքներում՝ խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի, համայնքային և միջհամայնքային ճանապարհների կառուցում, վերակառուցում, վերանորոգում,
- սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքներում՝ կոյուղու ցանցերի, հեղեղատարների, հանգստի գոտիների բարեկարգում, վերանորոգում:

Ծրագրի շրջանակներում 2017 թվականին սկսվել են շինարարական աշխատանքները ՀՀ 3 մարզերի 4 ծրագրերում, ավարտվել են շինարարական աշխատանքները ՀՀ Սյունիքի մարզի 1 ծրագրում, ՀՀ տարբեր մարզերի համայնքների համար գնվել են տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, կահույք և այլն, ավարտվել է ինժեներական լաբորատորիաների տրամադրումը: Ծախսերի ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է անհրաժեշտ տեխնիկայի ցուցակը ճշտելու հանգամանքով:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 81.5 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 82% կատարողական: Շեղումը պայմանավորված է մի քանի գործոններով, մասնավորապես՝ գնումների գործընթացում ապրանքները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով, ծրագրով նախատեսված հանրային իրազեկման միջոցառումների մի մասը պետք է իրականացվեր բազմաշահառու խմբի (ԲՇԽ) կողմից հաստատված հաղորդակցության ռազմավարության հիման վրա, որը նշված ժամկետում չի մշակվել, արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) երկրորդ փորձագետի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր նախատեսվածից կարճ ժամկետով, ԱՃԹՆ խորհրդի նիստի հետ կապված գործուղումներն իրականացվել են Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն է օժանդակել ՀՀ կառավարությանը՝ հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության խթանմանն ուղղված ջանքերի իրագործման հարցում: Հատկացված միջոցներն ուղղվել են հանրապետական երկրաբանական ֆոնդի տվյալների թվայնացման ու հրապարակման աշխատանքներին, արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI/ԱՃԹՆ) միանալուն ուղղված նախապատրաստական քայլերի իրականացմանը և հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 25.8 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 69.1% կատարողական: Ծրագիրը սկսվել է 2016 թվականի վերջին և շարունակվելու է մինչև 2021 թվականի ապրիլը: Ծրագրի նպատակն է՝ բարելավել ենթակառուցվածքի ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները Հայաստանի

ընտրված տարածաշրջաններում՝ տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող արդյունքի ավելացման համար: Ծրագրի գործունեության արդյունքում ակնկալվում է, որ կշահեն Հայաստանի հինգ մարզերի (Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Կոտայք և Լոռի) տեղաբնակները, զբոսաշրջիկները և տնտեսավարողները: Սպասվում է, որ վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միկրո ձեռնարկությունների քանակը, ՀՀ կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների գոհունակության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալություններում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և ակտիվների շահագործման ու պահպանման համար կարողությունների զարգացման առումով:

Ծրագիրն իրականացվում է երեք բաղադրիչներով.

- ժառանգության կենտրոնների վերածնում և զբոսաշրջության երթուղիների զարգացում, որը բաղկացած է չորս ենթաբաղադրիչներից՝ ժառանգության կենտրոնների վերածնում, զբոսաշրջության երթուղիների զարգացում, հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով, նախագծում և շինարարության վերահսկողություն:
- ինստիտուցիոնալ զարգացում,
- արձագանք չնախատեսված արտակարգ իրավիճակներին:

Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված շինարարական աշխատանքների մրցույթը չկայանալու հանգամանքով՝ որակավորված հայտեր չստանալու պատճառով: Ծրագրի շրջանակներում կատարվել են վճարումներ ընթացիկ ծախսերի գծով:

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված ավելի քան 3 մլրդ դրամ միջոցները չեն օգտագործել՝ պայմանավորված աշխատանքները 2018 թվական հետաձգելու հանգամանքով: 2017 թվականին ծրագիրն իրականացնելու համար համապատասխան կազմակերպություններն ընտրվել են տարեվերջին, որի արդյունքում ֆինանսական միջոցների հատկացումներ չեն կատարվել: Ծրագիրը միտված է Հայաստանի տարածքային համաչափ զարգացմանը, ենթակառուցվածքների բարելավմանը:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 281.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են շուրջ 22.8 մլն դրամ կամ նախատեսվածի 87.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 10.2%-ով կամ 2.6 մլն դրամով:

568.6 մլն դրամ են կազմել տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 98.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.5%-ով կամ 2.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի և տպագրական ծախսերի աճով:

Երևան քաղաքի Կառավարական N 2 մասնաշենքի հասցեում գտնվող շենքի բաղադրիչը համարվող տարածքները սեփականատերերից ձեռքբերման և Երևան քաղաքի Կառավարական N 2 շենքի սեփականատեր «Տանգո» ՓԲԸ օտարման գործարքների վճարահաշվարկային գործառնությունների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 1.5 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով 100% կատարողական:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապաամրագրման գործառնությունների գծով 2017 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նախատեսված 19.5 մլն դրամի դիմաց ստացվել են 19.8 մլն դրամ արտաբյուջետային միջոցներ, որոնցից նախատեսված 80.7 մլն դրամի դիմաց օգտագործվել է շուրջ 49.7 մլն դրամը:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են 702.2 մլն դրամի ծախսեր: Նշված գումարից 204.1 մլն դրամը կազմել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները, 368.8 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը և 129.2 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա շահութահարկի կամ շրջանառության հարկի գծով պարտավորության կատարման գծով ծախսերը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2017 թվականին *շրջակա միջավայրի պաշտպանության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 5.4 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 48.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աղբահանման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Սակայն, դրա հետ մեկտեղ, նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ծախսերն աճել են 21.2%-ով կամ 947.1 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում *աղբահանման* բնագավառի ծախսերը կազմել են 273.7 մլն դրամ կամ նախատեսվածի 5.5%-ը: Այս ցուցանիշը, ինչպես նշվեց, պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Մասնավորապես՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման» ծրագրի շրջանակներում նախատեսված 105.6 մլն դրամից օգտագործվել է 500.0 հազ. դրամ, որն ուղղվել է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) համար անհրաժեշտ բնապահպանական վճարի վճարմանը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 372 մլն դրամի դիմաց կատարողականը կազմել է 9.5 մլն դրամ, որի հիմնական մասը ծախսվել է որպես ծրագրի կատարման կանխավճար (ծրագրի պայմանագրերը կնքվել են 2017 թվականի տարեվերջին):

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման խորհրդատվության համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 384.2 մլն դրամի դիմաց կատարողականը կազմել է 228.8 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է խորհրդատվական կազմակերպության կողմից կատարված աշխատանքների ոչ լիարժեք լինելու հանգամանքով: 2017 թվականին ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն ուղղվել են նախագծի նախապատրաստական աշխատանքների իրականացմանը, կոշտ թափոնների կառավարման համակարգի պլանավորմանը, տվյալների/տեղեկատվության հավաքագրմանը, վերանայմանը, գեոտեխնիկական հետազոտությունների պլանավորմանը, ամսական հաշվետվությունների պատրաստմանը, պատվիրատուի և հիմնական շահառուների հաղորդակցության գծերի ստեղծմանը, գոյություն ունեցող կոշտ թափոնների կառավարման համակարգի մասին տեղեկատվության հավաքագրմանը և գնահատմանը, գնումների ընթացակարգերի

պատրաստմանը, աղբավայրի և փոխաբեռնման կայանի նախագծման աշխատանքների իրականացմանը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 305.5 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրամաշնորհային պայմանագիրը 2017 թվականին ստորագրված չէր, որի արդյունքում ծրագրի մեկնարկը չի տրվել:

Եվրոպական ներդրումային բանկի և Արևելյան եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված համապատասխանաբար 3 մլրդ դրամ և 780.7 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել, քանի որ մրցութային փաթեթները հաստատելու համար պահանջվել է երկար ժամանակ և, հետևաբար, նախատեսված աշխատանքները տեղափոխվել են 2018 թվական:

Խմբում ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների համար նախատեսված 34.9 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.8%-ով: Ծրագրի շրջանակներում «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ի կողմից իրականացվում են միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը, ինչպես նաև իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

2017 թվականին *շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի* բնագավառի ծրագրերին ուղղվել է 177 մլն դրամ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի դասի ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Հատկացված գումարից 16.6 մլն դրամը թափոնների ուսումնասիրության ծառայությունների ֆինանսավորման նպատակով տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որի կողմից իրականացվել է թափոնների ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն, առաջացած թափոնների հաշվառում և դասակարգում, դրանց հիման վրա հաշվետվությունների կազմում, 31 օբյեկտներում և շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) մնացորդային քանակների որոշում (390 հետազոտություններ), արդյունքների ամփոփում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանն ուղղվել է 160.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել

են ՀՀ մակերևութային ջրերի՝ մեծ և միջին մեծության 43 գետի, 6 ջրամբարի և Սևանա լճի ջրի որակի դիտարկումներ, ՀՀ բնակավայրերի օդային ավազանի գետնամերձ շերտի որակի մոնիթորինգ 11 քաղաքներում: Մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքների համաձայն Երևան քաղաքում ընդհանուր փոշու միջին ամսական պարունակությունը գտնվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) սահմանում: Ընդհանուր փոշով աղտոտվածությունը բարձր է Գյումրի, Արարատ և Ալավերդի քաղաքներում: Նախորդ տարվա համեմատ ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է շուրջ 2.9 մլրդ դրամ՝ 93.1%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 10.6% աճ՝ հիմնականում պայմանավորված 2017 թվականին Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի ֆինանսավորմամբ:

2017 թվականին Սևանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման ծառայություններին ուղղվել է 85.4 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: Հաշվետու տարվա ընթացքում մաքրվել է 78.1 հա տարածք, որից 64 հա-ը՝ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից, 14.1 հա-ը՝ ֆիզիկական անձանց կողմից՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքված ջրածածկ անտառների մաքրման պայմանագրերով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 27.4%-ով կամ շուրջ 32.3 մլն դրամով՝ պայմանավորված նախատեսված աշխատանքների ծավալներով:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններին ուղղվել է 7.6 մլն դրամ՝ 99.7%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարները 2017 թվականին կազմել են 2600 տոննա: Ծրագրի շրջանակներում կատարվել են նաև Սևանա լճի և էնդեմիկ ձկնատեսակների համար ձվադրավայր հանդիսացող 7 գետերի մանրակրկիտ հիդրոէկոլոգիական հետազոտություններ, ուսումնասիրվել է դրանց էկոլոգիական վիճակը, բացահայտվել են բնական ձվադրությանը խոչընդոտող գործոնները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

2017 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 249.4 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցով պարկի տարածքում իրականացվել են 8.48 հա

անտառավերականգնման աշխատանքներ: Ընդհանուր հաշվառված 4729 ապօրինի շինություններից 2017 թվականին ապամոնտաժվել են թվով 186-ը: Մարտունի համայնքի միջոցներով և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աջակցությամբ Մարտունի համայնքին հարակից հատվածում ստեղծվել է հանրային լողափ՝ մոտ 2 հա տարածքով: «Սևան» ազգային պարկի տարածքում առանձնացված է 11 հանրային լողափ՝ շուրջ 31.16 հա մակերեսով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.5%-ով կամ շուրջ 11.7 մլն դրամով՝ պայմանավորված նախատեսված աշխատանքների ծավալներով:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 107.7 մլն դրամն օգտագործվել է 99.5%-ով և կազմել 107.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: «Դիլիջան» ազգային պարկում պահպանության ռեժիմի արդյունավետությունը բարձրացնելու և ապօրինի ծառահատումների կանխարգելման նպատակով առավել ռիսկային 3 տեղամասերում՝ Հաղարծին, Դիլիջան և Շամախյան հատվածներում պահպանությունն իրականացվել է մասնագիտացված պահնորդական ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով: Անցում է կատարվել պահպանության շուրջօրյա ռեժիմի: Իրականացվել են տարեկան հերթական ստուգումներ, որի արդյունքում հայտնաբերվել են 116 անտառխախտման դեպքեր, որոնց համար կազմվել են արձանագրություններ 1083 ապօրինի հատված ծառերի համար: Անտառպահպանական աշխատանքների շրջանակներում իրականացվել են 2 կմ հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում, 4 կմ հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում, 1 կմ հանքայնացված շերտերի խնամք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.1%-ով՝ պայմանավորված նախատեսված աշխատանքների ծավալներով:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 133.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2017 թվականին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության Ստեփանավանի «Սոճուտ», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ», Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկերում, «Ջրվեժ» անտառպարկում, «Էրեբունի» պետական արգելոցում և «Որդան կարմիր» արգելավայրում իրականացվել են պահպանության, պաշտպանության և գիտական ուսումնասիրության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.8%-ով:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների իրականացման նպատակով հատկացվել է 117.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել պետական արգելոցի տնօրինման տակ գտնվող արգելավայրերի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության ու բնության ժառանգության պահպանության աշխատանքներին: Իրականացվել են հակահրդեհային նշանակության բազմաբնույթ աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից 45.3 մլն դրամ է հատկացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում փորձաքննության են ներկայացվել նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման թվով 204 հայտեր: Հաշվետու տարվա ընթացքում սահմանված կարգով տեխնիկական առաջադրանքներ են տրամադրվել թվով 72 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերին: Փորձաքննության գործընթացում են գտնվել 38 նախատեսվող գործունեությունների, հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ: Փորձաքննական եզրակացություններ են տրամադրվել թվով 124 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է շուրջ 40.2 մլն դրամ, որն օգտագործվել է 99%-ով և կազմել 39.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.9%-ով, ինչը պայմանավորված է նախատեսված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

2017 թվականին «Զիկատար» պետական արգելավայրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 15.6 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականին իրականացվել են «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության, գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքներ, պետական արգելավայրի ընդհանուր մակերեսով 150 հա տարածքներում պահպանության ընդհանուր միջոցառումներ: Արգելավայրի առավել հրդեհավտանգ 10000 քմ ընդհանուր մակերեսով տարածքներում իրականացվել է հողի հակահրդեհային

հանքայնացում (հողի վերին շերտի հեռացում): Իրականացված միջոցառումների արդյունքում ապահովվել է տարածքի հրդեհաանվտանգությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների նպատակով նախատեսված 7.1 մլն դրամ ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Հատկացված միջոցների հաշվին ՀՀ բնապահպանության նախարարության և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են մասնաճյուղի գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերը, որոնք նախորդ տարվա համեմատ մնացել են գրեթե անփոփոխ:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված շուրջ 133.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տարածքներում ուսումնասիրվել են ողնաշարավոր կենդանիների որոշ տեսակների (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ, եվրոպական այծյամ, փորսուղ, եվրոպական նապաստակ, գայլ, անտառային կատու և այլն) ինչպես ձմեռային կենսակերպը, այնպես էլ սեզոնային փոփոխությունների հետ կապված միգրացիան, տարիքային և քանակային կազմը: Իրականացվել են պահպանության աշխատանքներ ավելի քան 79 հազ. հա բնության հատուկ պահպանվող տարածքներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2017 թվականին Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություններին հատկացվել է 205.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել թունելի անխափան աշխատանքն ապահովմանն ու հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարմանը:

Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում 2017 թվականին կատարված ծախսերը կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ, կամ նախատեսվածի 88.9%-ը, ինչը տնտեսման արդյունք է: Արփա-Սևան ջրատարը բաղկացած է երկու թունելներից: Նախատեսված էր թունելով տարեկան տեղափոխել 450 մլն/խմ ջուր, սակայն «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված՝ ներկայումս Սևանա լիճ է տեղափոխվում 110-130 մլն/խմ ջուր: Ծրագիրը եռամյա է, այն նախատեսվում է իրականացնել 2017-2019թթ.: 2017 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են Արփա-Սևան N2 թունելի 46 կմ վթարային հատվածի հիմնանորոգման աշխատանքներ:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 14.1 մլն դրամ միջոցներ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի ավարտով պայմանավորված՝ դադարեցվել է «Արփա-Սևան» թունելի վերականգնման ԾԻԳ» պետական հիմնարկի գործունեությունը, և վերը նշված գումարն ուղղվել է հիմնարկի պարտավորությունների մարմանը:

2017 թվականին *այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության* դասի ծախսերը կազմել են 2.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 73.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ներառված՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Վերջինս մեկնարկել է 2017 թվականին, և հիմնականում դրանով պայմանավորված՝ արձանագրվել է նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերի 27% աճ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3.7%-ով կամ 49.3 մլն դրամով՝ պայմանավորված ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի պետական տեսչության հիմքի վրա ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստեղծմամբ:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար հաշվետու տարում ՀՀ համայնքներին տրամադրվել են 134.7 մլն դրամ սուբվենցիաներ՝ կազմելով ծրագրվածի 97.8%-ը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 14 համայնքների: Հատկացումները 2016 թվականի համեմատ աճել են 50.1%-ով կամ 44.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների կողմից վճարված բնապահպանական վճարների և ազդակիր համայնքների կողմից ներկայացված ծրագրերի թվի ավելացմամբ:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 20.5 մլն դրամ՝ ապահովելով

100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել են ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ծախսերը մնացել են անփոփոխ:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 45.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականի ընթացքում կատարվել են ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ 6 ջրավազանային կառավարման տարածքի 128 ստորերկրյա ջրաղբյուրներում, որոնք ներառում են 27 շատրվանող հորատանցք, 37 չշատրվանող հորատանցք և 64 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Որակական դիտարկումներ իրականացվել են ազգային ցանցում ընդգրկված 50 ստորերկրյա ջրաղբյուրներում: Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների արդյունքով բացահայտվել է, որ բոլոր ջրավազանային կառավարման տարածքների գետավազանների լեռնային մասերում ստորերկրյա ջրաղբյուրների որակական և քանակական փոփոխությունները ներկայումս կատարվում են բնական գործոնների ազդեցության տակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Հաշվետու տարում 75.4 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որն օգտագործվել է 98.2%-ով և կազմել 74.1 մլն դրամ՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 35.2%-ը՝ 410.7 մլն դրամ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է պայմանագրերը ուշ կնքելու արդյունքում ծրագրի ուշ մեկնարկով: Ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզում իրականացվել են փողոցային լուսավորության, ներհամայնքային ճանապարհների վերակառուցման, գյուղտեխնիկայի ձեռք բերման, բնության հատուկ պահպանվող տարածքներում և հարակից անտառամերձ համայնքների բնակելի տներում ջերմամեկուսիչ տեխնոլոգիաների ներդրման, կամուրջների, ոռոգման համակարգերի, խմելու ջրի ու ներքին ցանցերի, ինչպես նաև

մարզի որոշ համայնքների դպրոցների ճաշարանների և մարզադահլիճների վերանորոգման աշխատանքներ:

2017 թվականին «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 20.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը, որի հաշվին հիմնականում ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք, ինչպես նաև պարգևատրվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցները:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

2017 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 12.6 մլրդ դրամ՝ 72.4%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 50.8%-ով կամ 13 մլրդ դրամով նվազել են նախորդ տարվա համեմատ՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի կրճատմամբ:

Բնակարանային շինարարությանը 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 4.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.5%-ը և 15.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

«Բնակարանային շինարարություն» ծրագրի շրջանակներում հաշվետու տարում օգտագործվել է նախատեսված միջոցների 31.4%-ը՝ 22 մլն դրամ: Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է Արագածոտնի մարզում նախատեսված աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ուշ պատրաստ լինելու հանգամանքով, որի արդյունքում մրցույթը մարտ ամսվա փոխարեն կայացել է նոյեմբերին:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանը 2017 թվականի ընթացքում տրամադրվել է 544.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.2%-ը: Տրամադրված միջոցների հաշվին ծրագրի շրջանակներում լուծվել է ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում 91 ընտանիքի և ՀՀ Լոռու մարզի բնակավայրերում՝ 7 ընտանիքի բնակարանային խնդիր, որից Գյումրի և Սպիտակ քաղաքներում՝ համապատասխանաբար 82 և 1 ընտանիքինը՝ բնակարանի գնման վկայագրի, իսկ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում համապատասխանաբար 9 և 6 ընտանիքինը՝ ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով:

Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.6 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի

շրջանակներում պետական ծառայող հանդիսացող շահառուներին տրամադրվում են բնակարաններ բազմաբնակարան շենքային համալիրում՝ շուկայականից ցածր գներով և հիփոթեքային վարկերի արտոնյալ պայմաններով: Միջոցները, որոնք գոյացել են ծրագրի շահառուների կողմից կատարված կանխավճարներից և կառուցապատողին տրամադրված կանխավճարի դիմաց ստացված տոկոսներից, ուղղվել են կառուցապատողին՝ որպես կանխավճարներ, ինչպես նաև ծրագրի շահառուների կատարած կանխավճարի գծով օգնության գումարների վճարմանը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառի ծախսերի 41.9%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 5.3 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 57.8%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 70.9%-ով՝ հիմնականում պայմանավորված նշված ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում 292.2 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրին, որը հատկացվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին: Նշված ծախսերը կատարվել են 97.4%-ով, ինչը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 10.6%-ով՝ հիմնականում պայմանավորված գործառույթների ընդլայնման արդյունքում հաստիքային միավորների ավելացմամբ և աշխատավարձի բնականոն աճով:

2017 թվականին Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ 96.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագիրն ավարտվել է 2017 թվականի հունիսի 30-ին: Ծրագրի շրջանակներում ավարտվել է Երևանի Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շինարարությունը, որը կապահովի Երևանի և նրանից հյուսիս տեղակայված 5 այլ քաղաքների՝ Չարենցավանի, Աբովյանի, Նոր-Հաճնի, Բյուրեղավանի և Եղվարդի կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերի մաքրումը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում նախատեսված 709.5 դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2017 թվականի ընթացքում կատարվել են ավարտված շինանարարական աշխատանքների դիմաց կատարողականների հիման վրա պահված

հետավարտական և բանկային երաշխիքների գումարների վճարումներ: Ծրագիրն ավարտվել է 2017 թվականի հոկտեմբերի 31-ին:

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում 2017 թվականին նախատեսված ավելի քան 3.5 մլրդ դրամի փոխարեն օգտագործվել է 2.1 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվում են Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, 30 մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքներ: Մասնավորապես՝ Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 111.4 մլն դրամ կամ ծրագրվածի 8.7%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի համաձայնագիրը գտնվել է փոփոխման փուլում, և միջոցները հասանելի չեն եղել: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.1%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել շուրջ 18467 հատ անհատական ջրաչափական սարքեր ու ջրաչափական ֆիլտրեր և 19000 հատ փականներ: Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 82 մլն դրամ կամ նախատեսվածի 51.4%-ը: Տվյալ ծրագրի ցածր կատարողականը նույնպես պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի համաձայնագիրը գտնվել է փոփոխման փուլում, և միջոցները հասանելի չեն եղել: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներն ուղղվել են ներմուծված ջրաչափերի մաքսազերծմանը: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 5.2 մլն դրամ կամ նախատեսվածի 3.5%-ը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ, որոնց գծով խորհրդատուի վճարումը հիմնականում կատարվել է 2018 թվականին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում օգտագործվել է 324 մլն դրամ կամ նախատեսվածի 42.2%-ը: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական ներդրումային բանկի հետ համատեղ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարելավել Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի ընդհանուր թվով 11 քաղաքների և 47 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը՝ 555 կմ նոր ջրագծերի և 36.5 կմ կոյուղագծերի կառուցմամբ, 27400 հատ անհատական տների ջրաչափական հորերի տեղադրմամբ: Նախատեսվում է նաև կոյուղու մաքրման կայանների կառուցում Արմավիր, Մեծամոր և Սևան քաղաքներում: 2017 թվականին

բանակցություններ են վարվել միջազգային վարկատու և դոնոր կազմակերպությունների հետ ծրագրերի համաձայնագրերում ու պայմանագրերում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու ուղղությամբ, շարունակվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, որոնց համար վճարվել են կանխավճարներ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է առանձին համաձայնագրում կատարված փոփոխություններով, ինչպես նաև այն հանգամանքով, որ մշակված նախագծահետազոտական աշխատանքների փաթեթները 2017 թվականին դեռևս չէին հաստատվել:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլի շրջանակներում նախատեսված 2.2 մլրդ դրամ միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է ծրագրի առանձին համաձայնագրի փոփոխությունների ստորագրման հետաձգմամբ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի ջրային ոլորտի ներդրումային ծրագրի անցումային խորհրդատուի ընտրության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հատկացված միջոցներն օգտագործվել են 99.1%-ով՝ կազմելով 42.6 մլն դրամ: Ծրագիրն ավարտվել է 2017 թվականի մարտ ամսին: 2017 թվականին վճարվել է խորհրդատուի կողմից մատուցված ծառայության դիմաց ավարտական վերջին վճարումը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականության ապահովման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 312.2 մլն դրամի դիմաց օգտագործվել է 606.7 մլն դրամ կամ 94.3%-ով ավելի: Ծրագրի նպատակն է՝ ապահովել «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականությունը: 2017 թվականին վճարվել է վերջին ավարտական վճարումները: Նախատեսվածից բարձր կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2016 թվականի դեկտեմբերին ներկայացված կատարողականի դիմաց KfW բանկի կողմից վճարումը կատարվել է 2017 թվականի հունվարին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրիի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում օգտագործվել է 61.8 մլն դրամ կամ նախատեսվածի 88.6%-ը: Միջոցներն ուղղվել են 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների դիմաց վճարմանը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող իրականացվող Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում նախատեսված 15.4 մլն դրամը չի օգտագործվել՝

պայմանավորված Հայաստանի Հանրապետության և KfW բանկի միջև կնքված համաձայնագրով ֆինանսական միջոցների օգտագործման ժամկետի երկարաձգման հանգամանքով:

2017 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված 2.3 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 39.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2016 թվականին պետական բյուջեից հատկացված միջոցները կրճատվել էին՝ նշված ծախսերի իրականացումը նախատեսելով Երևան քաղաքի բյուջեի հաշվին:

2017 թվականին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի շրջանակներում նախատեսվել էին 962 մլն դրամ ծախսեր, որից օգտագործվել է 73.6 մլն դրամը: ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական կազմակերպության կողմից պատրաստվել են Երևանի 28 փողոցների լուսավորության մրցութային փաստաթղթերը, որոնք ուղարկվել են ՎԶԵԲ հաստատման: Հաշվի առնելով այն, որ լուսավորության ծրագիրն առաջին անգամ է իրականացվում Հայաստանում, ու ՎԶԵԲ ներքին ընթացակարգի համաձայն մրցութային փաստաթղթերը ենթակա են հաստատման մի քանի կառույցների կողմից, պահանջվում են երկարատև քննարկումներ, ինչի արդյունքում մրցույթների արդյունքներ չեն հաստատվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 821.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը: Նշված գումարը տրամադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 8.2%-ով՝ պայմանավորված ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի լուծարմամբ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերն աճել են 10%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի վերակազմակերպմամբ:

Առողջապահություն

2017 թվականին *առողջապահության* ոլորտում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են 83.2 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 97.1%-ը:

Բաժնի ծախսերի 47.9%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 32%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 10.1%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 5.8%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը և 4.2%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը: 2016 թվականի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերը նվազել են 6.1%-ով կամ 5.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում *դեղագործական ապրանքների* ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 3.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 91.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.9%-ով կամ 162.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծախսերի աճով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով ծախսվել է շուրջ 3.5 մլրդ դրամ՝ 90.9%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված բնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: Խնայողությունը պայմանավորված է ապրանքները նախահաշվային գներից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.8%-ով՝ հինականում պայմանավորված անվճար և արտոնյալ պայմաններով դեղ ստացող հիվանդների՝ շաքարային ու ոչ շաքարային դիաբետ և երիկամային անբավարարություն ունեցող հիվանդների քանակով: 2017 թվականին կենտրոնացված կարգով 9 հիվանդությունների համար ձեռք է բերվել թվով 51 անվանում դեղ, որից 7 հիվանդության դեղապահովումը կազմել է 100%, իսկ երկու հիվանդության դեղապահովումը՝ 80-83%:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 1.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 49.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Միջոցները գոյացել են ԳԱՎԻ (Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինք)

միջազգային կազմակերպության աջակցության շնորհիվ՝ իմունականխարգելման գործընթացի բարելավման և պատվաստումների ազգային օրացույցում պատվաստումների գործադրման նպատակով: Իմունականխարգելման ազգային ծրագրի միջոցները նախատեսվել են իմունականխարգելման ծառայությունների գործառնական ծախսերն իրականացնելու, պատվաստումների ազգային օրացույցում նոր պատվաստանյութերի ներդրման համար՝ հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցման, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխման և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովման նպատակով: Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2017 թվականի պաշտոնական դիրքորոշման համաձայն արգանդի պարանոցի քաղցկեղի արդյունավետ կանխարգելման նպատակով առաջարկվում է համապարփակ մոտեցում, այսինքն՝ սկրինինգային և պատվաստումային ծրագրերի համատեղ իրականացում, որի շնորհիվ միայն հնարավոր է վերահսկել հիվանդացությունը և մահացությունը: Պատվաստումների սահուն ներդրման և հաջող իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել լայնածավալ հանրային իրազեկում: Հայաստանի Հանրապետությունում 13 տարեկան աղջիկների շրջանում մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների ներդրմամբ հնարավորություն կընձեռվի ամբողջական դարձնել արգանդի վզիկի քաղցկեղի դեմ պայքարի համալիր կանխարգելիչ միջոցառումները: Այս նպատակով դեռևս 2016 թվականին ՀՀ առողջապահության նախարարությունն օժանդակության համար ծրագրային առաջարկով դիմել էր ԳԱՎԻ կազմակերպությանը, որը զգալի աջակցություն է ցուցաբերում կարիք ունեցող երկրներում նոր և սակավ կիրառվող պատվաստանյութերի ներդրմանը: ԳԱՎԻ կազմակերպության կողմից ծրագրային առաջարկը հավանություն է ստացել և ԳԱՎԻ-ն հայտնել է իր պատրաստակամությունը օժանդակելու Հայաստանին՝ տրամադրելով պատվաստանյութը և պատվաստումների օժանդակ պարագաները երկու տարվա ընթացքում, ինչպես նաև ներդրման համար նախապատրաստական միջոցառումների մի մասի ծախսերը: 2017 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են գիտելիքների գնահատում բուժաշխատողների շրջանում, հարցաթերթիկի տպագրություն, հանրային իրազեկման միջոցառումներ, ՄՊՎ պատվաստումների վերաբերյալ հասարակական կազմակերպությունների և մասնագիտական միավորումների հետ կլոր սեղանների կազմակերպում/քննարկումներ, տեղեկատվական նյութերի մշակում և տեղադրում, համացանցում իրազեկման, հանրակրթական դպրոցներում մանկավարժների, ծնողների շրջանում զրույցների կազմակերպում և իրականացում, արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման ազգային պլանի մշակում:

Բժշկական սարքերի և սարքավորումների դասի ծախսերը կազմել են 10.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 81% կատարողական: Միջոցներն ուղղվել են հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2017 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է 26.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.7%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 39.7%-ը կամ 10.5 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների, 32%-ը կամ 8.5 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 2.4%-ը կամ 637.6 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 26%-ը կամ 6.9 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը: 2016 թվականի համեմատ արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերը նվազել են 2.1%-ով՝ հիմնականում պայմանավորված բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների, ստոմատոլոգիական բժշկական օգնության և մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ծախսերի նվազմամբ:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների* դասի ծախսերը կատարվել են 99.3%-ով և կազմել 10.5 մլրդ դրամ: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանմանը և բժշկական օգնության բարելավմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժամանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով նաև տրամադրվել է դեղորայք: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.3%-ով կամ 357.7 մլն դրամով՝ պայմանավորված մի կողմից կոմունալ ծառայությունների գծով ծախսերի նվազման արդյունքում ամբուլատոր ծառայություններ մատուցող բուժհիմնարկների պահպանման ծախսերի նվազմամբ, մյուս կողմից՝ բնակչության սոցիալական հատուկ խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի մրցակցային ընթացակարգով ձեռքբերման գործընթացում առաջացած տնտեսումներով:

Ավելի քան 8.5 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված բժշկական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 98.4%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը և 1.2%-ով կամ 97.2 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայությունների ձեքբերման համար տրամադրվել է 278.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 2300 հաշմանդամ երեխաների՝ նախորդ տարվա 2200-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 7.5%-ով, որը պայմանավորված է ծրագրի շրջանակներում ծառայությունից օգտվող մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և զարգացման այլ խանգարումներով երեխաների թվի աճով:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2017 թվականին կազմել են 2.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.8% կատարողական: Հատկացված միջոցներով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին իրականացվել է 123.2 հազար սեանս՝ 2016 թվականի 117.7 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 7.8% կամ 26.2 մլն դրամ, որը պայմանավորված է հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի կարիք ունեցող հիվանդների թվի աճով, որը 2017 թվականին կազմել է 7.8%:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 1.5 մլրդ դրամ՝ 96%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրից շեղումը պայմանավորված է առանձին կազմակերպություններում բժշկական օգնության դեպքերի քանակով: Ծրագրի շրջանակներում նախածննդյան և հետծննդյան հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 45 հազար հղիների նկատմամբ՝ 2016 թվականի 50 հազարի դիմաց: Բուժօգնություն են ստացել նաև գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.8%-ով կամ 58.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված հղիների թվի նվազմամբ:

Հաշվետու տարում սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայությունների համար տրամադրվել է 118.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական, որը տրամադրվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 16.1%-ով կամ 16.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է ավելի մեծ քանակությամբ դեղորայքային միջոցների ձեռքբերմամբ, ինչպես նաև մեքենաների և սարքավորումներ ընթացիկ նորոգման համար հատկացված գումարների ավելացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունից միջազգային մրցաշարերին մասնակցող բոլոր մարզիկների խորացված բժշկական հետազոտում, նախապատրաստական ողջ ժամանակահատվածում բոլոր ուսումնամարզական հավաքների ընթացքում արտագնա բժշկական մասնագիտական խմբերի միջոցով վերահսկվել է մոտ 1320 մարզիկների առողջական վիճակը: Տարեկան բժշկական

հետազոտման են ենթարկվել 5016-ից ավելի մարզիկներ 16 մարզաձևերից, որից 589-ն անցել են խորացված բժշկական հետազոտություն՝ 2016 թվականի համապատասխանաբար 3100-ի և 2416-ի դիմաց:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններին տրամադրվել է 262.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրն իրականացվում է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում աշխատավարձի ֆոնդի և պահպանման ծախսերի նվազմամբ: 2017 թվականին ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվության, համաճարակաբանական հետազոտության և ՄԻԱՎ 1/2 հակամարմինների հայտնաբերման ուղղությամբ կատարվել են ավելի քան 28000 հետազոտություններ:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 4 մլրդ դրամ՝ 98.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է մարզային պոլիկլինիկաներում նեղ մասնագետների բացակայությամբ: Նեղ մասնագետների համար սահմանված են սպասարկման տարածքի բնակչության առավելագույն թվաքանակներ, որոնց գերազանցման դեպքում մեկ բնակչի հաշվով իրականացվում է ավելի ցածր ֆինանսավորում՝ մեկ բնակչի հաշվով հաստատված գնի 80%-ի չափով: 2017 թվականին հանրապետության տարբեր տարածաշրջաններում և հատկապես մարզերում փաստացի առկա են եղել հաստատված առավելագույն թվաքանակի գերազանցումներ, որի հետևանքով տարբեր մասնագետների մասով ի հայտ են եկել բյուջետային միջոցների ծախսման թերակատարումներ: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է 152 մլն դրամ՝ ապահովելով 96.7% կատարողական, որը պայմանավորված է ծրագիրն իրականացնող առանձին կազմակերպությունների կողմից մատուցված բժշկական օգնության ծառայությունների՝ նախատեսվածից փոքր ծավալով: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է ստացել 7.5 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 7.7 հազարի և նախորդ տարվա 8.8 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.3%-ով կամ 19 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է մեկ հիվանդի բուժման փաստացի միջին ծախսի աճով:

Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովման գծով 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված 5 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել

են 89.1%-ով, ինչը պայմանավորված է ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների ցանկի վերանայմամբ և հակաբեղմնավորիչ միջոցների առկա մնացորդով:

Ստոմատոլոգիական ծառայությունների շրջանակներում 2017 թվականին օգտագործվել է 637.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Միջոցներն ուղղվել են ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ծրագրին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14.8%-ով: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը 2017 թվականին կազմել է 238.2 հազար՝ բյուջեով նախատեսված՝ 252.7 հազարի և նախորդ տարվա 276.6 հազարի փոխարեն:

2016 թվականի համեմատ ստոմատոլոգիական ծառայությունների դասի ծախսերը նվազել են 22.8%-ով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի թվի նվազմամբ և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրին 2017 թվականին միջոցներ չհատկացնելու հանգամանքով:

Պարաբժշկական ծառայությունների շրջանակներում 2017 թվականին օգտագործվել է 6.9 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.3%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով՝ հիմնականում պայմանավորված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գծով ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում 3.2 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 99%-ով: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին սպասարկվել է 435.5 հազար կանչ՝ բյուջեով նախատեսված 431.0 հազարի և 2016 թվականի 466.2 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի համեմատ աճը փոխհատուցվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ շտապ բժշկական օգնության ծախսերը նվազել են 0.5%-ով:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել է 3.5 մլն հետազոտություն՝ բյուջեով նախատեսված 3.46 մլն-ի և 2016 թվականի 3.7 մլն-ի դիմաց: Բյուջեով նախատեսված հետազոտությունների թվի նկատմամբ ավել կատարված հետազոտությունների փոխհատուցումն ապահովվել է միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.7%-ով կամ 119.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ախտորոշիչ հետազոտություններից օգտվողների քանակի կրճատմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2017 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 564.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում ապահովվել է

զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված 352 բժիշկ-փորձագետների և 44 բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են 39.8 մլրդ դրամ՝ 99%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 37.4%-ը կամ 14.9 մլրդ դրամը կազմել են մոր և մանկան բժշկական ծառայությունների, 33.8%-ը կամ 13.4 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 28.9%-ը կամ 11.5 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների ծախսերը: 2016 թվականի համեմատ հիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերը նվազել են 1.3%-ով:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են 2.0 մլրդ դրամ՝ 99.4%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: 2017 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անհետաձգելի բուժօգնություն է ստացել 23.8 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 23.5 հազարի և 2016 թվականի 21.8 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի քանակի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի հատկացմամբ**:** Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի (ծրագրի շրջանակներում գործում է համավճարի սկզբունքով փոխհատուցման մեխանիզմը):

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 6.3 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.2% կատարողական: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է ստացել 64.5 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 64.9 հազարի և 2016 թվականի 63.1 հազարի դիմաց: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.7%-ով կամ 47.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 2017 թվականին գազի և էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ: Այս ծրագիրը

նպատակաուղղված է բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին՝ բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար:

Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 2.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98% կատարողական: Շեղումը պայմանավորված է դեպքերի քանակով: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն է մատուցվել 14.8 հազար հիվանդի՝ բյուջեով նախատեսված 15.7 հազարի և 2016 թվականի 12.8 հազարի դիմաց: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 5.7%-ով կամ 134.2 մլն դրամով, որը պայմանավորված է մի շարք ծառայությունների գների, հետևաբար՝ նաև մեկ հիվանդի բուժման միջին ծախսի նվազմամբ:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է մատուցվել 12.1 հազար հիվանդի՝ 2016 թվականի 9.9 հազարի դիմաց: Միաժամանակ իրականացվել են սոցիալական փաթեթի 95.6 հազար շահառուների կանխարգելիչ քննություններ: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 8.5%-ով: 2017 թվականին իրականացված բարեփոխումների շնորհիվ այս ծրագրում ներդրվել է ապահովագրական համակարգ, ինչի շնորհիվ երաշխավորում է առանց սահմանափակումների և հերթագրումների ծառայության ստացում ցանկացած բուժհաստատությունում: Նոր մոդելի հիմնական ձեռքբերումներից է այն, որ 2017 թվականի չորրորդ եռամսյակում հիվանդանոցային բուժօգնության 97%-ը եղել է վիրահատական միջամտություն՝ նախորդ տարիների 67%-ի փոխարեն:

Հաշվետու տարում 11.5 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ կազմելով ծրագրի 98.8%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով կամ 224.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է սրտի վիրահատությունների և տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում ծախսերի նվազմամբ:

2017 թվականին տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ 97.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների

երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն ստացած հիվանդների թիվը 2017 թվականին կազմել է 3.5 հազար՝ բյուջեով նախատեսված 5.1 հազարի և 2016 թվականի 3.7 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 5.3%-ով՝ պայմանավորված ծրագրի հիմնական կատարող «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հաստիքների կրճատմամբ, հիվանդների թվի, ինչպես նաև գազի և էլեկտրաէներգիայի սակագների նվազմամբ:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2017 թվականին պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է ստացել 13.1 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 12.3 հազարի և 2016 թվականի 12 հազարի դիմաց: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 2.8%-ով՝ պայմանավորված հիվանդների քանակի աճով:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին տրամադրվել է 173.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է ստացել 722 հիվանդ՝ 2016 թվականի 1.4 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.6%-ով, որը պայմանավորված է բուժօգնություն ստացած հիվանդների քանակի նվազմամբ և միաժամանակ մեկ հիվանդի գծով միջին ծախսի ավելացմամբ:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 2.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովում: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 6.3 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 6.4 հազարի և 2016 թվականի 6.3 հազարի դիմաց: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով՝ պայմանավորված բուժօգնության ծառայությունը մատուցող կազմակերպությունների օպտիմալացման արդյունքում ծախսերի կրճատմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 851.7 մլն դրամ՝ 96.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է մատուցվել 41.7 հազար հիվանդի՝ բյուջեով նախատեսված 49.5 հազարի և 2016 թվականի

43.2 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հիվանդների քանակի նվազման պայմաններում ծախսերն աճել են 0.7%-ով կամ 5.7 մլն դրամով, որը պայմանավորված է մեկ հիվանդի բուժօգնության միջին արժեքի աճով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի հատկացմամբ:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 99.6%-ով՝ կազմելով ավելի քան 1.1 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնար պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում: Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 10.7 հազար և բյուջեով նախատեսված 11.2 հազար հիվանդի դիմաց 2017 թվականին բուժօգնություն է ստացել 9.2 հազար հիվանդ: Ճառագայթային բժշկական օգնության համեմատաբար ավելի ցածր ծախսատարությամբ դեպքերի կրճատման արդյունքում ավելացել են ծրագրի շրջանակներում մեկ հիվանդի բուժման միջին ծախսերը և պետական պատվերի շրջանակներում փոխհատուցվող դեպքերի բուժման միջին տևողությունը: 2016 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.4%-ով, ինչը պայմանավորված է «Պրոֆեսոր Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքների կրճատմամբ, ինչպես նաև գազի և էլեկտրաէներգիայի սակագների նվազմամբ:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայությունների համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 609.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին նախատեսված և փաստացի բուժօգնություն ստացած հիվանդների թիվը կազմել է 3.8 հազար՝ 2016 թվականի 4.3 հազարի դիմաց: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված 2.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ դեպքերի բացակայության պատճառով:

Սրտի վիրահատությունների ծառայությունների նպատակով ծախսվել է 3.5 մլրդ դրամ՝ 99.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է մատուցվել 7.2 հազար հիվանդի՝ նախատեսված 6.8 հազարի և 2016 թվականի 5.7 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսվածի համեմատ ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 137.3 մլն դրամով կամ 3.8%-ով: Նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2017 թվականի հոկտեմբերից պետական հիմնարկների աշխատակիցներին

մատուցվող սրտի վիրահատության ծառայությունները մատուցվել են «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում՝ մաս կազմելով վերջինիս գծով առողջության ապահովագրության փաթեթների շրջանակներում մատուցվող ծառայությունների ցանկի:

Մոր և մանկան բժշկական ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 4 ծրագրեր, որոնց ծախսեր ընդհանուր առմամբ կատարվել են 98.9%-ով՝ կազմելով շուրջ 14.9 մլրդ դրամ: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով կամ 369 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում 6.4 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 97.7% կատարողական: Ծրագիրն ընդգրկել է ծննդաբերության հետ կապված՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնությունը: Այս ծրագրի գծով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին արձանագրվել է 54.5 հազար դեպք՝ բյուջեով նախատեսված 51.8 հազարի և 2016 թվականի 57.7 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի համեմատ ավել արձանագրված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5%-ով կամ 337.5 մլն դրամով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի քանակի, ինչպես նաև գազի և էլեկտրաէներգիայի սակագների նվազմամբ:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 337.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է տրամադրվել 4.5 հազար հիվանդի՝ բյուջեով նախատեսված 4.3 հազարի և 2016 թվականի 4.9 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.9%-ով կամ 17.2 մլն դրամով՝ պայմանավորված դեպքերի քանակով:

Հաշվետու տարվա ընթացքում երեխաներին բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանն ուղղվել է 8.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում մինչև 7 տարեկան երեխաներին տրամադրվել է հիվանդանոցային բուժօգնություն՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև մինչև 18 տարեկան երեխաներին՝ հիվանդանոցային բուժօգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում բուժօգնություն: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն է ստացել 67.1 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 66.9 հազարի և 2016 թվականի 67.7 հազարի դիմաց:

Բյուջեով նախատեսված դեպքերի համեմատ ավել արձանագրված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.2 մլն դրամով՝ պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի ապահովմամբ:

2017 թվականին անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 15.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 57.2%-ով կամ 20.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է տարվա ընթացքում ծրագրի արդյունավետության գնահատման նախնական արդյունքների հիման վրա ծրագրի ժամանակավոր դադարեցման և վերանայմանն ուղղված աշխատանքների մեկնարկով: Նշված ծրագիրը նախատեսված է եղել սոցիալապես անապահով, նպաստառու (30 և ավելի միավոր ունեցող) ընտանիքների անպտուղ զույգերին վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ մատուցելու համար՝ յուրաքանչյուր տարի 2 տարիքային խումբ ընդգրկելու ընթացակարգով, սակայն 2017 թվականի արդյունքներով ի հայտ են եկել նշված խմբի շահառուների հավաքագրման և ծառայությունների արդյունավետության գնահատման խնդիրներ, որից բխել է ծրագրի սկզբունքների վերանայման անհրաժեշտությունը:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից 4.8 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով՝ հիմնականում պայմանավորված իմունականխարգելման ազգային ծրագրի ծախսերի աճով: Տվյալ խմբի շրջանակներում ֆինանսավորվել են 5 ծրագրեր:

Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների ձեռքբերման համար 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 33.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 68.5%-ը: Միջոցներն օգտագործվել են հանրապետության զինված ուժերում հիգիենիկ, հակահամաճարակային ու կանխարգելիչ ծառայությունների կազմակերպման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 71.8 մլն դրամով կամ 68.3%-ով՝ պայմանավորված զորամասերի, բուժկետերի և հոսպիտալների ախտահանման ու վարակազերծման համար ախտահանիչ նյութերի և վարակազերծման միջոցների ձեռքբերման տեսականու և քանակությունների փոփոխությամբ:

Ամբողջությամբ օգտագործվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 41 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման

աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման ու նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 45.3%-ով կամ 34 մլն դրամով՝ պայմանավորված մեկ օջախի ախտահանման համար սահմանված գնի նվազմամբ՝ նախկին 17400 դրամի փոխարեն դառնալով 9300 դրամ: 2017 թվականին իրականացվել է 4409 վարակիչ օջախների ախտահանում՝ 2016 թվականի 4309 վարակիչ օջախի դիմաց:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 253 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոլյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը, ինչպես նաև հղի կանանց հակառեզուս իմունոգլոբուլենով ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել պատվաստումների ազգային օրացույցով նախատեսվող հնգավալենտ, ռոտավիրուսային և պնևմակոկային ԱԿԴՓ և ԱԴՓ-Մ (դիֆթերիա, հեպատիտ Բ, փայտացում, կապույտ հազ, հեմոֆիլուսային Բ տեսակի վարակ, ռոտավիրուսային վարակ, պոլիոմիելիտ, կարմրուկ, կարմրախտ, խոզուկ և տուբերկուլոզ հիվանդությունների դեմ) պատվաստանյութեր՝ կառավարելի վարակիչ հիվանդությունների դեպքերի կանխարգելման և կայուն հակահամաճարակային իրավիճակ ապահովելու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.8%-ով կամ 257.1 մլն դրամ՝ պայմանավորված պատվաստանյութերի լրացուցիչ խմբաքանակների ձեռքբերմամբ:

2017 թվականին պետական բյուջեից 2.8 մլրդ դրամ է օգտագործվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 97.7% կատարողական՝ պայմանավորված ծախսերի օպտիմալացման ուղղությամբ կատարված աշխատանքներով: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են հիվանդությունների կանխարգելմանն ուղղված ծառայությունների մատուցում՝ այդ թվում մշտադիտարկում, առողջ ապրելակերպի քարոզչություն, մանրէաբանական, միջատաբանական, մակաբուծաբանական, վիրուսաբանական, քիմիական,

ճառագայթաբանական հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ և օջախների, շրջակա միջավայրի հետազոտություններ, ինչպես նաև իրավիճակային վերլուծություններ և կանխատեսումներ, պատվաստանյութերի արդյունավետ կառավարման և վարակիչ օջախների ախտահանման ծառայություններ, երեխաների ամբողջական ընդգրկում բոլոր պատվաստումներում: Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 964.7 հազար փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2016 թվականի 1090.3 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով կամ 69.4 մլն դրամով՝ պայմանավորված համաճարակային բռնկումների թվի նվազմամբ:

Այլ դասերին չպատկանող առողջապահության ծախսերի խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում օգտագործվել է ավելի քան 8.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 86.5%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, մասնավորապես՝ Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի կատարողականով: Տվյալ խմբում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ընդհանուր առմամբ օգտագործվել է 4.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 80.9%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 35.1%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀԲ աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի և «Հայաստանում տուբերկուլյոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

2017 թվականին պետական բյուջեից 557.1 հազար դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Ծրագրի շրջանակներում այն հիվանդները, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ՝ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար 2017 թվականին կազմել է միջին հաշվով 92.8 հազար դրամ՝ 2016 թվականի 400 հազար դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 96.3%-ով: 2017 թվականին մեկնածների թիվը կազմել է 6՝ նախատեսված 6-ի և նախորդ տարվա 112-ի դիմաց: Նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2017 թվականի մարտ ամսին ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 22-ի «Պետության

կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրման և ճանապարհածախսի և փոխհատուցման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 37-Ն հրամանը, և ծրագիրը դադարեցվել է:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում օգտագործվել է 521.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.2%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 9.9%-ով, պայմանավորված նրանով, որ 2017 թվականի հոկտեմբերից պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցներին դժվարամատչելի ախտորոշիչ ծառայությունները մատուցվել են «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում՝ մաս կազմելով վերջիններիս տրամադրված առողջության ապահովագրության փաթեթների շրջանակներում մատուցվող ծառայությունների ցանկի: Մյուս կողմից աճել է մեկ հետազոտության փաստացի միջին գինը: Միջոցներն ուղղվել են յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ 39.9 հազար հետազոտությունների իրականացմանը (միջուկամագնիսական տոմոգրաֆ, համակարգչային տոմոգրաֆիա, կորոնարոգրաֆիա, հորմոնալ հետազոտություններ և այլն)՝ 2016 թվականի 47.5 հազարի դիմաց:

Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունների համար ծախսվել է 14 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 67.3%-ը: Շեղումը պայմանավորված է «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից փաստացի իրականացված փորձաքննությունների քանակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որբ դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքննություններ, հոգեմետ և հսկվող դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 32.7%-ով՝ պայմանավորված մարդասիրական ճանապարհով ստացված դեղերի ծավալի նվազմամբ:

Առողջապահական օբյեկտների շինարարության նպատակով ծախսվել է 1.3 մլրդ դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցման ավարտական աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 46%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալներով:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 369.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 94.9%-ը և 5.2%-ով

զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի նվազումը պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում մարդկային և նյութական ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը և օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով, որի արդյունքում հնարավոր է դարձել միևնույն ծավալի աշխատանքներն իրականացնել ավելի քիչ ռեսուրսներով: Ծրագիրը կապված է ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և դատարանների որոշումներին համապատասխան, հատուկ և վտանգավոր պայմաններում աշխատանքի (դիահերձում, արտաշիրիմում և այլ հետազոտական աշխատանքներ) հետ:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով 53 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մանկական մահերի և հիվանդությունների պատճառների բացահայտում՝ մանկամահացության մակարդակը նվազեցնելու նպատակով: 2017 թվականին կատարվել է շուրջ 6.8 հազար հետազոտություն:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների՝ օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 50.7 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Ծրագրի հատկացումներն ուղղվում են հենաշարժական խնդիրներով հիվանդ երեխաների բուժմանը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին պատրաստվել է 1501 օրթեզ և կորսետ՝ 2016 թվականի 1703-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 38%-ով՝ պայմանավորված հատկացված օրթեզների և կորսետների քանակի և փաստացի միջին գնի նվազմամբ:

Առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 25.8 մլն դրամ՝ ապահովելով 47.5% կատարողական, որը պայմանավորված է ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների վերանայմամբ: Մասնավորապես՝ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից նախկինում մատուցված ծառայությունները 2017 թվականին իրականացվել են «Բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում: Բացի այդ, 2017 թվականին առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության և լուսաբանման աշխատանքները հիմնականում կազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության սեփական ռեսուրսներով՝ ներգրավելով ոլորտի երիտասարդ մասնագետներին և մասնագիտական ասոցիացիաներին: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 70.5%-ով:

Բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է շուրջ 214.7 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական, որը պայմանավորված է «Առողջապահության ոլորտում ուսուցման» և «Մոր և մանկան առողջության ոլորտում բժիշկ-մասնագետների կողմից մատուցվող բժշկական» ծառայությունների անհրաժեշտության բացակայությամբ, քանի որ ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ դժվար է գնահատել վերջիններիս ազդեցությունն ընդհանուր առողջապահական ցուցանիշների բարելավման տեսանկյունից, և դրանց շարունակականության անհրաժեշտություն 2017 թվականին չի եղել: Միջոցներն ուղղվել են 2017 թվականի Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի կազմման, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման 2017 թվականի տարեկան զեկույցի կազմման, 2017 թվականի կլինիկական, բժշկատնտեսագիտական ստանդարտի մշակման, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, ֆինանսավորման մեխանիզմների բարելավման նպատակով նորմատիվ փաստաթղթի մշակման ծառայությունների ձեռքբերմանը, ճառագայթային դոզաչափական ծառայությունների ձեռքբերմանը և խիստ հաշվառման ձևաթղթերի տպագրությանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 4.7%-ով՝ պայմանավորված կազմմեթոդական օգնության ծավալների օպտիմալացմամբ:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայությունների համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 57.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով՝ պայմանավորված ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով:

Հաշվետու տարում ամբողջությամբ օգտագործվել են նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները, որոնց տրամադրվել է 40.7 մլն դրամ: Ծրագրի նպատակն է՝ բնակչությանը պահպանել տուբերկուլյոզի տարածման վտանգից, ապահովել հիվանդության վաղ հայտնաբերումը: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 34.5%-ով՝ պայմանավորված է ՀՀ ԱՆ «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով:

ԱՄՆ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 24.6 մլն դրամ՝ ապահովելով

ծրագրի 88.4% կատարողական; Շեղումը պայմանավորված է փաստացի իրականացված աշխատանքներով: 2017 թվականին շարունակվել է համաճարակաբանական հսկողության կայուն համակարգի մշակման և ստեղծման աշխատանքների իրականացումը՝ գրիպի համապատասխան լաբորատոր և ախտորոշիչ հզորություններով, որոնք հնարավորություն են ընձեռել արագ ախտորոշել կասկածելի դեպքերը և իրականացնել սեզոնային ու պանդեմիկ գրիպի դետքային վերահսկողություն, համապատասխան համաճարակաբանական հսկողություն և մարդկային ռեսուրսների հզորությունների հսկողություն, որը հնարավորություն է տվել արդյունավետ արձագանքելու սեզոնային և պանդեմիկ ներուժով գրիպի նոր ենթատեսակներով պայմանավորված վտանգներին, վերահսկելու սեզոնային գրիպի և շնչառական հիվանդությունների ազդեցությունը հանրային առողջության վրա, ինչպես նաև ընձեռել է հնարավորություն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (GISN) համագործակցության կենտրոններին ժամանակին տրամադրել որակյալ նմուշներ և բարձրացնել բուժօգնության և ծառայությունների որակն ու մատչելիությունը: Իրականացվել է գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության համակարգի գնահատում, որի արդյունքների հիման վրա վերանայվել են գործող իրավական ակտերը:

ՀԲ աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում օգտագործվել են համապատասխանաբար 2.5 մլրդ դրամ և 160.3 մլն դրամ միջոցներ՝ ապահովելով 96% և 80.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է սքրինինգային ծրագրի շրջանակներում փաստացի իրականացված աշխատանքների ծավալով և դրանց փոխհատուցման ժամանակացույցով:

2017 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Սքրինինգային հետազոտություններ: 2017 թվականին իրականացվել է շուրջ 446 հազար սքրինինգային հետազոտություն: Երևանում և մարզերում իրականացվել է սքրինինգային ծրագրի հանրային իրազեկման քարոզարշավ: Սքրինինգների ներկայացված կատարողականների փաստացի իրականացման վերիֆիկացիայի / մշտադիտարկման նպատակով այցելություններ են իրականացվել 177 առողջության առաջնային պահպանման հաստատություններ.
- Մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացում: 2016 թվականին մեկնարկել և 2017 թվականին շարունակվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային նոր մասնաշենքի շինարարական և ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները: ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հագեցման նպատակով ձեռք են բերվել բժշկական կահույք, սարքավորումներ և պարագաներ:

Հաշվետու տարում արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 20 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 86.9%-ով՝ պայմանավորված ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 26-ի N 1395-Ն որոշման համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բժշկական ապահովման վարչության լուծարման արդյունքում կրճատված քաղաքացիական ծառայության չորս հաստիքները «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ տեղափոխելու հանգամանքով, որոնց գծով ծախսերը 2016 թվականին ֆինանսավորվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից 39.8 մլն դրամ է տրամադրվել հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանման և շահագործման ծրագրին, որի գծով ծախսերը կազմել են նախատեսվածի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների ընթացիկ նորոգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 39.2%-ով՝ պայմանավորված 2016 թվականին տվյալ ծախսերի կատարողականով:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 750.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 48.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կարիքների վերագնահատման արդյունքում առաջացած տնտեսումներով, սոցիալական աջակցություն ստացող՝ տուբերկուլյոզով հիվանդների նախատեսված և փաստացի քանակների տարբերությամբ, տեխնիկական օժանդակությունների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ, դեղորայքի ձեռքբերման համար նախատեսված միջոցների տնտեսմամբ՝ պայմանավորված հիվանդների կանխատեսված և փաստացի թվի տարբերությամբ, ինչպես նաև ուղղակի գնման եղանակով նախատեսված դեղորայքի և բժշկական պարագաների ձեռքբերման նախատեսված և փաստացի ներկրված քանակների տարբերությամբ: Ծրագրի նպատակն է տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրումը, հանրության իրազեկումը, բժշկական անձնակազմի կրթական միջոցառումների իրականացումը, տուբերկուլյոզով ախտահարված հիվանդների հետ շփում ունեցող անձանց շրջանում վարակի վերահսկումը և կանխարգելումը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականի ընթացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- իրականացվել են վարակի վերահսկման ուժեղացման միջոցառումներ՝ տուբերկուլոզով հիվանդների կոնտակտավորների հետ տեղեկատվության տրամադրման նպատակով հանդիպումների իրականացման միջոցով,

- տուբերկուլյոզով հիվանդներին բուժման խրախուսման նպատակով տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ դրամային փոխանցումների տեսքով,
- ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում, դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով, հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,
- ժամանակի կամ բժշկական (տեղաշարժման) հակացուցումներ ունեցող հիվանդների համար կազմակերպվել է տնային բուժում,
- Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տրամադրվել է լրացուցիչ ֆինանսական աջակցություն, գրասենյակի աշխատակիցների կողմից իրականացվել են ստուգայցեր տուբերկուլյոզային հաստատություններ, ներդրվել է էլեկտոնային տուբերկուլյոզ (ETB) ծրագիրը, իրականացվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ տուբերկուլյոզի ոլորտում,
- տուբերկուլյոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակով առաջին և երկրորդ շարքի հակատուբերկուլյոզային դեղորայք, բժշկական ծախսանյութեր և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ, գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 665.6 մլն դրամ՝ ապահովելով 92.7% կատարողական: Շեղումը հիմնականում կապված է գնումների մի մասը հաջորդ տարի տեղափոխելու հետ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է եղել դրամաշնորհային միջոցների հաշվին ձեռք բերվող ապրանքների փաստացի առկա պաշարներով, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի նպատակն է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրումը, սեմինար-վարժանքների կազմակերպումը, տեղեկատվական համակարգի հզորացումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ստեղծումը և համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը:

2017 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՄԻԱՎ վարակի հայտնաբերման և ախտորոշման համար նախատեսված թեստ-հավաքածուների ձեռքբերում.
- ՄԻԱՎ վարակի հակառետրովիրուսային բուժման համար նախատեսված դեղամիջոցների ձեռքբերում.

- ՄԻԱՎ վարակի ընթացքում առաջացած օպորտունիստական վարակների բուժման համար նախատեսված դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում.
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության (ԽՀ) կետերին և լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում.
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ առավել ռիսկային խմբերում վարքագծային և կենսաբանական համաճարակաբանական հետազոտության իրականացում.
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հզորացում.
- ՀՀ ԱՆ Նարկոլոգիական հանրապետական կենտրոնում, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, Սյունիքի մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, ինչպես նաև 9 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում.
- ՀՀ քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտության իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2017 թվականի ընթացքում 1530 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 501 թմրամիջոց գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում: Իրականացվել է 2200 դատապարտյալների և կալանավորների, 44288 հղիների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում 1.6 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանմանը՝ ապահովելով 85.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության տեսչական մարմնի վերակազմակերպման արդյունքում տեսչական մարմնի գործունեության որոշակի ժամանակով դադարեցմամբ և հաստիքների կրճատմամբ, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 13.5%-ով՝ հիմնականում պայմանավորված ծախսերի օպտիմալացման ուղղությամբ կատարված աշխատանքներով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում տուբերկուլյոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 66.6 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2017 թվականի ընթացքում իրականացվել են աշխատանքներ պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման հաստատված

չափորոշիչների, ուղեցույցների և գործելակարգերի ուսումնասիրության և վերլուծության ուղղությամբ, մեկնարկել են հատկապես տուբերկուլյոզի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական ուղղությամբ ֆինանսավորման և բժշկատնտեսագիտական ստանդարտների հիման վրա գնագոյացման նոր մոդելների մշակման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում իրականացվում է նաև ՀՀ պետական պատվերի շրջանակներում ձեռք բերվող դեղորայքի և բժշկական պարագաների կենտրոնացված կերպով գնումների մեթոդաբանության մշակումը և ներդրումը:

Հանգիստ, մշակույթ և կրոն

2017 թվականին *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 26 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերը նվազել են 2.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արվեստի բնագավառի ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի ծառայություններին* տրամադրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ՝ 99.2%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 0.9%-ով:

ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը և առաջնությունների անցկացմանը 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 972.7 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Հատկացված միջոցները նպատակաուղղվել են մարզական միջոցառումների իրականացմանը, դրանց քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերի՝ երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը: Ծրագրում ընդգրկված 32 մարզական ազգային ֆեդերացիաները կազմակերպել են 126 ուսումնամարզական հավաք, Հայաստանի Հանրապետության 95 առաջնություններ, մասնակցել են 176 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների: 2017 թվականին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկները 15 մարզաձևերից աշխարհի և Եվրոպայի առաջնություններում նվաճել են 61 ոսկե, 49 արծաթե և 91 բրոնզե մեդալ, ընդհանուր հաշվարկով՝ 201 մեդալ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերն աճել են 6%-ով՝ հիմնականում պայմանավորված մարզական ազգային ֆեդերացիաների քանակի աճով:

2017 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 127.9 մլն դրամ է տրամադրվել «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին՝ կազմելով ծրագրի 100%-ը: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման ճանապարհով շախմատի մասսայականացումը: Նշված նպատակների իրագործման համար մշակվել են համապատասխան ծրագրեր, որոնցից են՝ մարզերում շախմատային խմբակների ստեղծումը, որտեղ երեխաներն անվճար ուսանում են շախմատ, լավագույնները մասնակցում են մրցաշարերի, ստանում որակավորում, միջազգային և ազգային մրցաշարերի կազմակերպումը, մարզիչների որակավորումը բարձրացնելու նպատակով սեմինարների կազմակերպումը, որտեղ արտերկրից հրավիրվում են փորձառու մարզիչներ՝ իրենց փորձը կիսելու և շախմատային գիտելիքներ հաղորդելու համար, լավագույն սաների համար հավաքների կազմակերպումը: Նախորդ տարվա համեմատ շախմատիստների պատրաստման ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով հատկացվել է 50 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Բացի նշված գումարից, այս նպատակով ևս 133.8 մլն դրամ հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Ծրագրի շրջանակներում դրամական մրցանակներ են հանձնվել օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի (նաև՝ օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու և շախմատ մարզաձևերի) աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում և շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադայում 1-ից 3-րդ տեղերը գրաված մարզիկներին, ազգային հավաքական թիմերի գլխավոր մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին, ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչներին, բժիշկներին և մարզիկին պատրաստող մարզական կազմակերպություններին:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է 6.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.4%-ը: Խաղերն անցկացվել են Երևանի և ՀՀ մարզերի 38 վարչական միավորներում, այդ թվում՝ Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, 4 փուլով: Ռազմամարզական խաղերին մասնակցել են շուրջ 30000 ավագ տարիքի դպրոցական պատանիներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ուսանողական մարզական միջոցառումներին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 23 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.8%-ը: 2016 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 5.3 անգամ, որը պայմանավորված է 2017 թվականին անցկացված համաշխարհային

ունիվերսիադային Հայաստանի մասնակցությամբ: 2017 թվականին կազմակերպվել են նաև ՀՀ ուսանողական 18-րդ հանրապետական մարզական խաղերը՝ 9 մարզաձևում:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման ծախսերը կազմել են ծրագրի 99.1%-ը կամ 6.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրում ընդգրկված են 7 մրցաձևեր: Փառատոնն անցկացվել է ՀՀ 48 քաղաքներում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել է 20000 մարդ:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով օգտագործվել է 77.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.4%-ը: Ծրագիրն անցկացվել է 3 փուլով՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում և 6 շրջաններում: 2017 թվականի հունիսի 1-15-ն անցկացվել է մրցույթի 1-ին փուլը, որին մասնակցել են 61 համայնքի 1516 ընտանիք՝ 4548 մարդ: Մրցույթի եզրափակիչ փուլն անցկացվել է հուլիսի 17-22-ը՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի գլխավոր մարզահամալիրում, որին մասնակցել են 144 ընտանիք և հաշմանդամություն ունեցող 23 ընտանիք (շուրջ 501 մասնակից): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 31.9%-ով, ինչը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ծրագրից հանվել է 1-ին՝ համայնքային փուլի պարգևատրման գումարը: Արդյունքում իրականացվել է 3 նոր ծրագիր՝ «Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում», «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադայի անցկացում» և «ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում»:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.8%-ը: Սույն ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվում «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց՝ ինքնադրսևորվելու և լիարժեք ինտեգրվելու հասարակության մեջ: 2017 թվականին ծրագրի շրջանակում իրականացվել է 8 միջոցառում, որոնց մասնակցել է հաշմանդամություն ունեցող 443 անձ: Նախորդ տարվա համեմատ հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունն ավելացել է 5.4%-ով՝ պայմանավորված միջոցառումների քանակի աճով:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է 5.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2017 թվականին Բուլղարիայում կայացած նավամոդելային սպորտի Աշխարհի առաջնությունում Հայաստանն արժանացել է Աշխարհի

չեմպիոնի կոչումներին՝ միաժամանակ մեծահասակների և երիտասարդների առաջնություններում, շահել է 3 ոսկե, 2 արծաթե մեդալ, սահմանել համաշխարհային նոր ռեկորդ և ստացել լավագույն արդյունք ցուցաբերած 2 անվանական գավաթները: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացման նպատակով տրամադրվել է 44.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 93.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.7%-ով՝ պայմանավորված ՀՀ հավաքական թիմերի ավագ մարզիչների և աշխարհի չեպիոնների քանակի աճով:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով տրամադրվել է 3.7 մլն դրամ (99.7%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 46.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: 2017 թվականի փետրվարի 11-18-ը Թուրքիայի Էրզրում քաղաքում տեղի է ունեցել Եվրոպայի երիտասարդության ձմեռային օլիմպիական փառատոնը, որին մասնակցել է 8 մարզիկ: 2017 թվականի հուլիսի 22-30-ը Հունգարիայի Գյոր քաղաքում իրականացվել է Եվրոպայի երիտասարդական ամառային օլիմպիական փառատոնը, որին Հայաստանից մասնակցել է 29 մարզիկ: 2016 թվականին այս ծրագիրը չէր իրականացվել:

Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 4.3 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի տարբերությամբ:

Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով նախատեսված 150 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել: 2016 թվականին ցուցաբերած մարզական բարձր արդյունքների համար ՀՀ հավաքական թիմերի 206 մարզիկներին և նրանց մարզիչներին (այդ թվում՝ 87 մարզիկի և 119 մարզչի) 2017 թվականին հատկացվել է ՀՀ Նախագահի անվանական թոշակ:

ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով տրամադրվել է 71.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով, որը պայմանավորված է մարզահագուստի պահանջարկի և գների աճով:

2017 թվականին Ֆրանկոֆոնիայի 8-րդ մարզամշակութային խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 28.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 96.6%-ը: 2016 թվականին այս ծրագիրը չէր իրականացվել:

«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 16.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Ծրագրին մասնակցել են լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող և մտավոր սահմանափակումներ ունեցող 192 անձինք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացման համար տրամադրվել է 19.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.5%-ը: Ծրագիրն անցկացվել է 3 փուլով՝ համայնքային, մարզային և եզրափակիչ, որոնց մասնակցել են ՀՀ մարզերի և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 243 նախադպրոցական հաստատությունների 2916 մասնակիցներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Հետևյալ 9 ծրագրերը 2017 թվականին իրականացվել են առաջին անգամ:

«Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացման համար տրամադրվել է 4.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 92.6%-ը: Մարզական միջոցառումն իրականացվել է 2 փուլով: Մրցույթին մասնակցել են 12 հաստատությունների 300 մասնակիցներ:

Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացման համար տրամադրվել է 12.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Հանրապետական ուսանողական մարզական խաղերն անցկացվում են 6 մարզաձևերից՝ վոլեյբոլ, հնգամարտ, ուժային եռամարտ, հրաձգություն, բասկետբոլ և ֆուտզալի մրցումներ: Միջոցառմանը մասնակցել է շուրջ 3000 մարդ:

ՀՀ մարզերի, Երևանի քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 20.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրով անցկացվել են մրցումներ 4 մարզաձևերից: Սպարտակիադան անցկացվել է 3 փուլով՝ 1-ին փուլը՝ համայնքներում, 2-րդ փուլը՝ ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում՝ սեպտեմբեր ամսին, իսկ եզրափակիչ փուլը հոկտեմբեր ամսին՝ Երևան քաղաքում: Միջոցառմանն ընդհանուր առմամբ մասնակցել է շուրջ 30000 դպրոցական:

ՀՀ մարզերի, Երևանի քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման համար տրամադրվել է 28.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.1%-ը: Միջոցառումն իրականացվել է Երևանի 12 վարչական շրջաններում, ՀՀ մարզերի քաղաքային համայնքներում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում՝ 3 փուլով: Մարտի 10-15-ն անցկացվել է միջոցառման 1-ին փուլը՝

ՀՀ մարզերի համայնքներում, Երևանի վարչական շրջաններում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել են 605 դպրոցների 1-3-րդ դասարանների և 680 դպրոցների 4-7-րդ դասարանների շուրջ 13000 աշակերտներ: Միջոցառման 2-րդ՝ Երևան քաղաքի և մարզային փուլն անցկացվել է ապրիլի 20-29-ը, իսկ 3-րդ՝ եզրափակիչ փուլը՝ մայիսի 11-17-ը:

ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացման համար տրամադրվել է 4.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.6%-ը: Գյուղական մարզական խաղերն անցկացվել են 3 փուլով. 1-ին փուլը՝ հուլիս ամսին գյուղերում, 2-րդ փուլը՝ օգոստոսի 10-20-ը ՀՀ մարզերում, և եզրափակիչ փուլը՝ հոկտեմբերի 1-4-ը Վանաձոր քաղաքում: Միջոցառմանը մասնակցել է շուրջ 5000 մարդ:

Տարեցների հանրապետական խաղերի անցկացման համար տրամադրվել է 8.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 89.4%-ը, ինչը պայմանավորված է նրանով, որ ԼՂՀ-ի թիմը չի մասնակցել ծրագրին: Խաղերը անցկացվել են 3 փուլով: 1-ին փուլն անցկացվել է հուլիս ամսին, 2-րդ փուլը՝ օգոստոսի 10-20-ը և 3-րդ՝ եզրափակիչ փուլը՝ սեպտեմբերի 7-10-ը Ծաղկաձորում: Միջոցառմանը մասնակցել է շուրջ 1500 մարդ:

«Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացման համար տրամադրվել է 665 հազ. դրամ՝ կազմելով նախատեսվածի 95%-ը: ՀՀ պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության մրցումներն անցկացվել են 2017 թվականի փետրվարի 23-24-ը, որոնց մասնակցել են 32 պետական մարմինների, այդ թվում՝ ՀՀ կառավարության և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմերի, ՀՀ նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր պետական մարմինների, ՀՀ մարզպետարանների շուրջ 200 աշխատակիցներ:

Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանն աջակցության ծախսերը 2017 թվականին կազմել են 13 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է չորս առաջնություն (այդ թվում՝ երիտասարդների բաց առաջնություն, ՀՀ մեծահասակների առաջնություն), մեկ միջազգային մրցաշար ՌԴ Ուլյանովսկ քաղաքում և մեկ սեմինար:

2017 թվականին Թուրքիայի Սամսուն քաղաքում կայանալիք 23-րդ ամառային սուրդլիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման ծրագրով նախատեսված 15.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2017 թվականի հուլիսի 18-30-ը Թուրքիայի Սամսուն քաղաքում կայացած 23-րդ ամառային սուրդլիմպիկ խաղերին Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության տասը մարզիկով: Ձյուդո մարզաձևում հանդես եկող 1 մարզիկ 60 կգ քաշային կարգում գրավել է 2-րդ տեղը՝ նվաճելով արծաթե մեդալ: Հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտ մարզաձևերում հանդես եկող 4 մարզիկներ գրավել են 3-րդ տեղերը:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից 13.9 մլրդ դրամ է տրամադրվել *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 99.5%-ը: 2016 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերը նվազել են 3.6%-ով՝ հիմնականում պայմանավորված արվեստի բնագավառի ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարում ավելի քան 1.6 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցները նվազել են 6.3%-ով՝ հիմնականում պայմանավորված Հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների գծով ծախսերի նվազմամբ: 2017 թվականին 1.6 մլրդ դրամ ուղղվել է 16 գրադարանների կողմից իրականացվող գրադարանային ծառայություններին: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոբուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է ՀՀ Արագածոտն, Արմավիր, Գեղարքունիք, Շիրակ և Լոռի մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Ազգային գրադարանի միջոցով իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության հավատարմագրման վկայական ստացած 2 համայնքային գրադարանների վերազինումը՝ համաձայն հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման դրամաշնորհային ծրագրի: Իրականացվել է «Համայնքային գրադարանավարների վերապատրաստում» դրամաշնորհային ծրագիրը, որի շնորհիվ ՀՀ տասը մարզերից վերապատրաստվել են 62 համայնքային գրադարանավարներ: Նախորդ տարվա համեմատ գրադարանային ծառայությունների ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին հատկացվել է 11.3 մլն դրամ, որն ուղղվել է գրապալատի աշխատակիցների 2 ամսվա աշխատավարձերի վճարմանը: Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականին նոյեմբերի 24-ի

N 1204-Ն որոշման «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է՝ միացվելով «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին: Արդյունքում նշված ծախսերը 85.7%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը:

2017 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված մշակութային օյեկտների շինարարության ծախսերի ավելացմամբ:

Մշակութային օյեկտների հիմնանորոգման նպատակով 2017 թվականին տրամադրվել է 49.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 98.6%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի հատկացումների հաշվին իրականացվել են ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքները:

Ավելի քան 2 մլրդ դրամ է տրամադրվել թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ֆինանսավորմանը, որն իրականացվել է 100%-ով: Հատկացումների հաշվին ապահովվել է 32 թանգարանների գործունեությունը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը, հանրահռչակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Թանգարանների և ցուցասրահների դասի մշակութային օբյեկտների շինարարության հատկացումները կազմել են 336.1 մլն դրամ, որն իրականացվել է 99.6%-ով: 2017 թվականին այս ծրագրի շրջանակներում իրականացվել են «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի հիմնակմախքի կառուցման շինարարական աշխատանքները և 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի հետևանքով զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի նախագծահետազոտական աշխատանքները:

Թանգարաններին և ցուցասրահներին աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին հատկացվել են 243.3 մլն դրամ սուբվենցիաներ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Թանգարաններում ներդրումների ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.7 մլն դրամ, որը տնտեսումներով պայմանավորված կազմել է ծրագրային ցուցանիշի 89.9%-ը: 2017 թվականին ծրագրի շրջանակներում «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի մշակութային արժեքների էլեկտրոնային շտեմարանի

գործարկման նպատակով իրականացվել է տեխնիկական վերազինում: 2017 թվականին այս ծրագիրն իրականացվել է առաջին անգամ:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից 304.6 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որն օգտագործվել է 99.2%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 58.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված մշակութային օյեկտների շինարարության ծախսերի ավելացմամբ:

Տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորգմանը տրամադրվել է 150.8 մլն դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Շենիկ համայնքի և Սևան քաղաքի մշակույթի տների հիմնանորոգման, որակի նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության, Բամբակաշատ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման, տեխնիկական և հեղինակային հսկողության, ինչպես նաև՝ Արգավանդ համայնքի և Իջևանի քաղաքային մշակույթի տների հիմնանորոգման նախագծային աշխատանքները:

Հաշվետու տարում համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը հատկացված 47.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նշված գումարից 35.9 մլն դրամը հատկացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնին՝ վերջինիս գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով: Միջոցներ են տրամադրվել նաև Սյունիքի և Կոտայքի մշակույթի կենտրոնների, Եղեգնաձորի մշակույթի տան ստեղծագործական գործունեության աջակցմանն ու խթանմանը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել է նաև տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների շինարարության ծրագիրը, որի շրջանակներում 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 106.6 մլն դրամ: Միջոցները նախատեսված էին ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի մշակույթի տան շինարարական աշխատանքների համար, որոնք ամբողջությամբ իրականացվել են:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 844.9 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

527.7 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի Ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մշակութային արժեքների փորձաքննության ծառայություններին 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 29.7 մլն դրամ: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների

փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2017 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 252 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել:

Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 35.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստան-սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստման և տարածման, համահայկական լրատվական ռեսուրսների (համահայկական կայքերի, տեղեկագրերի, հեռուստատեսային լրատվական հաղորդումների, հեռուստակամուրջների և այլն) ստեղծման աշխատանքներ:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 7.4 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.8%-ով և 8.2%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի ավարտով:

Արվեստի բնագավառի մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը 2017 թվականին տրամադրվել է 4.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 61.8%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, ինչպես նաև Գյումրու Վ.Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տանիքի հիմնանորոգման և Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Ծրագիրն իրականացվել է օպերային և բալետային

արվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, դասական ու ժամանակակից օպերային և բալետային ստեղծագործությունների բեմադրման նպատակով:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի համար նախատեսված սուբսիդիան՝ կազմելով 312.4 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորման և բավարարման, դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 5.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է էներգետիկ ծառայությունների ծախսերի նվազմամբ, ինչպես նաև բեմադրական ծախսերի համար նախատեսված միջոցները «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրին ուղղելու հանգամանքով:

Մշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 1.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.4%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2017 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցությունը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ մշակութային միջոցառումների իրականացման ծախսերը նվազել են 1%-ով՝ պայմանավորված 2016 թվականին «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, որը տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ:

Տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների շինարարությանը 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 110.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում շինության կառուցման աշխատանքները:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում հատկացվել է 15 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Վրաստանում հայալեզու թատերական ներկայացումների բեմադրմանը, ինչպես նաև Վրաստանի հայաշատ վայրերում հյուրախաղերի կազմակերպմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար օգտագործվել է 36.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.8%-ով, ինչը պայմանավորված է հանրապետությունում գտնվող պատվովճար ստացողների քանակի նվազմամբ:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 363.3 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 1.7 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են նախատեսված ծավալով: Ծրագիրն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.6%-ով:

2017 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված 1.6 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2017 թվականի պետական բյուջեով թատրոններում ներդրումների նպատակով ծախսվել է 19.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 96.5%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի հատկացումների հաշվին իրականացվել են Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի լուսաձայնային տեխնիկայի և բեմական հագուստի (վարագույրներ, բեմական մեխանիզմներ) ձեռքբերման և տեղադրման աշխատանքները:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին աջակցության ծրագրի շջանակներում 26.1 մլն դրամ է հատկացվել Վենետիկում հայ-համաեվրոպական երկխոսության միջազգային կենտրոնի պահպանման համար, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի վճարման ծառայությունների համար տրամադրվել է 185.6 հազար դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 40.7%-ը՝ պայմանավորված բանկերի միջոցով իրականացվող վճարումների տեսակարար կշռի աճով: Նշված ծախսերը 5.7%-ով գերազանցել են նախորդ տարվա

ցուցանիշը, որը պայմանավորված է 2017 թվականին 13 ամսվա (2016 թվականի դեկտեմբեր և 2017 թվականի հունվար-դեկտեմբեր) ծախսերի ֆինանսավորմամբ:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը հաշվետու տարում տրամադրվել է 20 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ, մասնավորապես՝ իրականացվում են հայ համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

Ազգային ակադեմիական խմբերգային համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովմանը: Նշված ծախսերը կազմել են 166.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել: Միջոցներն ուղղվել են խմբերգային արվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երգչախմբային արվեստին հաղորդակցմանը, խմբերգային արվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը:

Համերգների, փառատոների և այլ միջոցառումների իրականացման նպատակով «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 163 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ:

Ոսկան Երևանցու տպագրությամբ հայերեն առաջին Աստվածաշնչի (1666թ.) 350-ամյակին նվիրված՝ «Տպագրության մարգարիտ» խորագրով կոնֆերանսի և ցուցահանդեսի՝ 2017 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային միջոցներից հատկացված 7.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Մշակույթային այս ծրագրի իրականացման նպատակն էր հասարակության լայն շերտերի շրջանում հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի վերաբերյալ իրազեկության բարձրացումը:

«Գեղարդի վանական համալիրի ժայռափոր եկեղեցիների և ջրահեռացման համակարգի պահպանության և ամրակայման մեթոդաբանությունները» թեմայով խորհրդաժողովի անցկացմանը 2017 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 4.8 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ: Մշակութային այս ծրագրի իրականացման նպատակն էր նպաստել մշակութային ժառանգության պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը և օգտագործմանը:

«Մերձավոր Արևելքի աստղագիտական ժառանգությունը» թեմայով միջազգային խորհրդաժողով» ծրագրին 2017 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 16.8 մլն դրամ, որը նույնպես օգտագործվել է

նախատեսված ծավալով: Մշակութային այս ծրագրի իրականացման նպատակն էր Մերձավոր Արևելք տարածաշրջանի ուսանողների և երիտասարդ աստղագետների մասնագիտական աճը, ովքեր կշարունակեն իրենց գիտական հետազոտություններն իրենց իսկ ինստիտուտներում, ինչպես նաև կօգտագործեն մշակույթն իբրև գործիք աստղագիտության դասավանդման և հանրայնացման գործում:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է շուրջ 660.4 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 454 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: 2017 թվականին նկարահանվել են 16 խաղարկային, 10 վավերագրական ֆիլմեր և 5 մուլտֆիլմեր:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի Ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2017 թվականին այդ ուղղությամբ նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 155.8 մլն դրամ և 4.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որով իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում «Կինեմատոգրաֆիայի հայեցակարգի մշակում»-ը:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին վերականգնվել է 2 ֆիլմ, իրականացվել է 5 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Փաստավավերագրական կինոծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 43.3 մլն դրամ: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման դասին ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 359.3 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 88.5%-ը: Շեղումը պայմանավորված է հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման ծախսերի կատարողականով: Վերջիններս նվազել են նաև նախորդ տարվա համեմատ, որով հիմնականում

պայմանավորված է տվյալ դասի ծախսերի 19.2%-ով նվազումը: Դասում ընդգրկված մյուս 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով:

Մասնավորապես՝ հաշվետու տարում 4 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար 2017 թվականին տրամադրվել է 98.9 մլն դրամ: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված 200 հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և թողարկման, 150 հուշարձանների հաշվառման և ցուցակագրման, 200 հուշարձանների հաշվառման և վկայագրման, ինչպես նաև հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի կազմման և թվայնացման աշխատանքներ: Կատարվել են նաև վտանգված և վերականգնվող պատմամշակութային անշարժ հուշարձանների 3 պեղումներ: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի 1-ին հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով՝ պայմանավորված հուշարձանների կադաստրի միասնական համակարգի ներդրման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 53 մլն դրամ աջակցություն: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 11.7%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է 400 պատմամշակութային հուշարձանի վավերագրում՝ նախորդ տարվա 470-ի փոխարեն:

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 203.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 81.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև նախատեսված որոշ աշխատանքներ՝ 5 հրատապ ուսումնասիրման, ամրակայման ու վերականգնման և 1 պատմամշակութային անշարժ հուշարձանի պեղման աշխատանքները չկատարելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 28.3%-ով: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների

բացահայտմանն ու դրանց լուծմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 14 հուշարձանի վերականգնման աշխատանքներ, 3 գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքներ:

2017 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են 8.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել են 0.8%-ով՝ պայմանավորված հրատարակչությունների և խմբագրությունների դասի ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարում *հեռուստառադիոհաղորդումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 7.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 378.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2017 թվականին հեռուստառադիոհաղորդումների դասի ներքոհիշյալ 10 ծրագրերը կատարվել են նախատեսված ողջ ծավալով:

Հեռուստառադիոհաղորդումների դասի հատկացումների գերակշիռ մասը՝ 4.9 մլրդ դրամ, տրամադրվել է հեռուստատեսային ծառայություններին, որից 4.8 մլրդ դրամը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: 99.3 մլն դրամ դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին՝ արբանյակային ունակության վարձակալության նպատակով: Նախորդ տարվա համեմատ հեռուստատեսային ծառայությունների ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում ռադիոծառայությունների շրջանակներում 785.3 մլն դրամ դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը մնացել է նախորդ տարվա մակարդակին:

Ռադիո և հեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 94.6 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը նույնպես նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծախսերը կազմել են 159.5 մլն դրամ: Ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և ստանալու համար: Այն հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծախսերը

նախորդ տարվա համեմատ աճել են 10%-ով՝ հիմնականում պայմանավորված եթերային ժամերի ավելացմամբ:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 44.3 մլն դրամի պետական աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել:

Գնումների գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով 2017 թվականին տրամադրվել է 19 մլն դրամ: Ծրագիրը նախատեսված է պետական գնումների կատարման համար անհրաժեշտ մրցույթների կազմակերպման, պետության կողմից կատարվող գնումների վերաբերյալ հանրությանը հրապարակային տեղեկատվության տրամադրման, մասնագետների վերապատրաստման արդյունավետ իրականացման համար: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազվել են 16.8%-ով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալի կրճատմամբ:

Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 52.5 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.9%-ը և նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխություն չի կրել: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են հայապահպանություն քարոզող հաղորդումներ, ֆիլմաշարեր և տեսահոլովակներ՝ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների ծախսերը կազմել են 150.2 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել: Միջոցները տրամադրվել են «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 101.9 մլն դրամ, իսկ տեխնիկական վերազինմանը՝ 199.9 մլն դրամ կապիտալ դրամաշնորհներ:

Հաշվետու տարում, ինչպես և 2016 թվականին, 70 մլն դրամ կապիտալ դրամաշնորհ է հատկացվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ վերջինիս շենքի հիմնանորոգման նպատակով:

2017 թվականի պետական բյուջեից տնտեսական վերլուծությունների ծառայությունների շրջանակներում 172.6 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ին: Տվյալ ծախսերը կազմել են ծրագրային ցուցանիշի 94.9%-ը և 6.5%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1422-Ա որոշման համաձայն «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է՝ միանալով

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին: 2017 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- «Հրապարակում» հեռուստահաղորդաշարի հաղորդումների պատրաստում և եթերի ապահովում Հանրային հեռուստատեսությամբ՝ շաբաթը մեկ անգամ, ՀՀ կառավարության գործունեության, ՀՀ վարչապետի այցերի և հանդիպումների նկարահանումների ապահովում և արխիվացում, հրատապ նյութերի տրամադրում հեռուստաընկերություններին,
- Հեռուստահաղորդումների, էլեկտրոնային կայքերի և հանրապետական թերթերի շուրջօրյա մշտադիտարկում, տեղեկատվության մշակում, ամփոփում համառոտ տեղեկանքներում,
- ՀՀ կառավարության գործունեությանը վերաբերող վերլուծությունների իրականացում, կառավարության գործունեության լուսաբանում էլեկտրոնային և տպագիր զանգվածային լրատվամիջոցներով,
- Մարզերում ՀՀ կառավարության գործունեությունը և կառավարության կողմից իրականացված ծրագրերը հանրությանը ներկայացնելու նպատակով իրազեկման բնույթ կրող հեռուստառեպորտաժների պատրաստում և հեռարձակում մարզային հեռուստաալիքների եթերում,
- Սոցիալական ցանցերում շրջանառվող տեղեկատվության մշտադիտարկում, վերլուծական-տեղեկատվական բնույթի հրապարակումների նախապատրաստում, նյութերի զետեղում սոցիալական ցանցերում, կառավարության գործունեության հետ առնչվող տարբեր աղբյուրներից ծագող տեղեկատվության փոխանակում և հետադարձ կապի ապահովում,
- Արտաքին կապերի ծառայություն և միջազգային ԶԼՄ-ների մշտադիտարկման իրականացում: Արտասահմանյան լրատվամիջոցների մշտադիտարկում, որի նպատակը ինչպես Հայաստանի կառավարության գործունեությանն առնչվող հրապարակումների հավաքագրումն ու վերլուծումն է, այնպես էլ՝ Հայաստանի, հայաստանյան տնտեսության հետ ուղղակի և անուղղակի առնչվող գործընթացների վերլուծությունը:

2017 թվականի պետական բյուջեում ավելի քան 1 մլրդ դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 99.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերը նվազել են 8.8%-ով՝ հիմնականում պայմանավորված «Էկոնոմիկա» ՓԲԸ-ի լուծարման հետ կապված տնտեսագիտական հրապարակումների ծրագրի կրճատմամբ:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 73.5 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար, և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Հաշվետու ժամանակաշրջանում լույս է տեսել «Հայաստանի

Հանրապետություն» թերթի՝ 235 և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի 89 համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 72.2 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին հրատարակվել է 39 անուն գիրք՝ նախորդ տարվա 27-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.4%-ով՝ պայմանավորված նախատեսված աշխատանքների ծավալի կրճատմամբ:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 78.8 մլն դրամ: Ֆինանսավորումը հատկացվում է գիտական հրատարակումների մակարդակի բարձրացման, գրախոսվող ամսագրերի՝ միջազգային ստանդարտներին մոտեցման, գիտական արդյունքների վերլուծության, միջազգային տեղեկատվական բազաներում գրանցվելու և հանրապետությունում հրատարակվող գիտական ամսագրերի, հրատարակումների միջազգային ճանաչման խնդրի լուծման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 48.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Հաշվետու ժամանակաշրջանում, ինչպես և նախորդ տարի, ծրագրի շրջանակներում հրատարակվել է 63 անուն թերթ և ամսագիր: Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում ստանալու տեղեկատվություն: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 47.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 1.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է 2017 թվականից ուժի մեջ մտած «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն պարտադիր հարկման ենթակա դրոշմանիշային վճարով՝ աշխատակիցներին նվազագույն աշխատավարձ ապահովելու հանգամանքով: Հատկացումների հաշվին սուբսիդավորվել են «Աղբյուր», «Ծիծեռնակ», «Լուսապսակ», «Խատուտիկ», «Փերի», «Մանկանց երկիր» և «Կանչ» մանկական թերթերը և ամսագրերը:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 379.1 մլն դրամ կամ ծրագրվածի 98.3%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական

ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացներում և ՀՀ արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման, «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.1%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2017 թվականին անհրաժեշտություն է եղել գումար հատկացնել ՀՀ մուտքի արտոնագրերի, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության համար:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված գումարն օգտագործվել է 99.7%-ով՝ կազմելով 216.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել: 2017 թվականին թարգմանվել է 25581 էջ՝ 2016 թվականի 25749 էջի դիմաց:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 26.3 մլն դրամ աջակցություն՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: Հատկացումների հաշվին հրատարակվել է 15 անուն գիրք և 1 թարգմանական ծրագիր՝ նախորդ տարվա 83 գրքի, 8 խտասկավառակի և 1 թարգմանական ծրագրի համեմատ: Արդյունքում 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 59.4%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 30.1 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի համալրման ու «Արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրման ու սպասարկման աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.3%-ով, որը պայմանավորված է կումանալ ծախսերի նվազմամբ:

Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 8.7 մլն դրամ, որն օգտագործվել է 96.3%-ով: 2017 թվականին ծրագրի շրջանակներում 16938 կտոր գրականություն է առաքվել 38 երկրների հայ գաղթօջախների ուսումնական հաստատություններին և կազմակերպություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.7%-ով, որը պայմանավորված է ստացված հայտերի քանակով:

«Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակման նպատակով օգտագործվել է շուրջ 6 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն

փոփոխվել: Տարեգրքի նպատակն է՝ արժևորել, գրի առնել, լրացնել և ամբողջական դարձնել սփյուռքի հայ համայնքների գործունեությունը, Հայաստան-սփյուռք գործակցության ոլորտում իրականացվող ծրագրերը և ձեռնարկները: Տարեգիրքը կարող է հիմք հանդիսանալ էական քայլեր իրականացնելու համար սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ, համապարփակ տեղեկատվություն տարածել տարբեր երկրներում գործող հայկական համայնքների մասին: Տարեգրքի միջոցով լուսաբանվում են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում սփյուռքի հետ իրականացված ծրագրերը, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկները՝ դրանք հասանելի դարձնելով աշխարհասփյուռ հայությանը:

Գրական ժառանգության պահպանման և տարածման համար նախատեսված 26.4 մլն դրամ միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում ապահովվում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում *տեղեկատվության ձեռքբերման* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 423.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.1%-ով՝ հիմնականում պայմանավորված հանրային իրազեկման ապահովման ծախսերի աճով:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հատկացվել է 85.6 մլն դրամ՝ «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման նպատակով, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 338 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են աշխատանքներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության և համայն հայության շահերին առնչվող պետական քաղաքականության տեղեկատվական սպասարկմանը, տեղեկատվական հոսքերի դիտարկմանն ու կառավարմանը, ռիսկերի ախտորոշմանն ու գնահատմանը, դրանց կանխարգելմանը և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.5%-ով՝ պայմանավորված տեղեկատվական տվյալների մշակման աշխատանքների ծավալի աճով:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից 1.1 մլրդ դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են

98.8%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեից «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 818.6 մլն դրամ է տրամադրվել *երիտասարդական ծրագրերի* դասին, որի ծախսերը կատարվել են 99%-ով և նախորդ տարվա համեմատ աճել 7.6%-ով: Նշված գումարից 257 մլն դրամն ուղղվել է «Երիտասարդական ծրագրեր»-ին՝ ապահովելով 99.7% կատարողական և գրեթե պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է ավելի քան 7.1 մլն դրամ կամ նախատեսվածի 89.2%-ը: Նշված գումարից 5.7 մլն դրամը տրամադրվել է «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին, 1.5 մլն դրամը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին: Տնտեսումն առաջացել է նախատեսվածից ցածր գներով ծառայությունների ձեռքբերման արդյունքում: Դրանով պայմանավորված՝ տվյալ ծախսերը 10.8%-ով զիջել են նաև նախորդ տարվա ցուցանիշը:

2017 թվականին «Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան ճանաչողական այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 92 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են 13-20 տարեկան հայազգի երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում, մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի, նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերի: Ծրագրի գլխավոր նպատակներից է սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին պետական բյուջեից Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում անցկացվել են թվով 12 միջոցառումներ, շահառուների թիվը կազմել է շուրջ 1167 մարդ: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 98.5%-ով՝ կազմելով 450.4 մլն դրամ և 14.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է շահառուների թվի աճով: Ծրագրի շրջանակներում սուբսիդավորումն իրականացվում է վարկավորմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ծրագրում նախատեսված 2720 շահառուի և նախորդ տարվա 2095 շահառուի դիմաց 2017 թվականին փաստացի ընդգրկվել է 2593 շահառու:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծախսերը 2017 թվականին կազմել են 276.4 մլն դրամ՝ 98.4%-ով ապահովելով ծրագիրը և 15.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Օգտագործված գումարից 155.5 մլն դրամը տրամադրվել է ՀՀ երիտասարդական հիմնադրամին, որին վերապահված է եղել 2017 թվականի ընթացքում հասարակական կազմակերպությունների միջև դրամաշնորհային մրցույթների կազմակերպման իրավասությունը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված որոշ ծրագրեր մրցութային հանձնաժողովի կողմից հավանության չեն արժանացել, քանի որ ծրագրային փաթեթները չեն բավարարել պահանջվող չափանիշներին, բացի այդ մի քանի հասարակական կազմակերպություններ ունեցել են խնայողություններ, որոնք վերադարձրել են պետական բյուջե: Համապատասխանաբար 20 մլն դրամ և 100.9 մլն դրամ է հատկացվել հասարակական կազմակերպություններին և քաղաքական կուսակցություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են:

Այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում ծախսվել է 740.4 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների ծրագրերի իրականացման գրասենյակների լուծարմամբ:

Կրթություն

2017 թվականին *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 124.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: 2016 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերն աճել են 1.6%-ով կամ 2 մլրդ դրամով՝ մեծ մասամբ պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից կրթությանը հատկացված միջոցներից 725 մլն դրամն ուղղվել է *նախադպրոցական կրթությանը*՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.8% կատարողական և 8.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված երեխաների թվի և նախադպրոցական կրթության հաստատությունների աճով: Ծրագիրն ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: Նշված գումարից 716.3 մլն դրամը տրամադրվել է ՀՀ մարզերի, 8.6 մլն դրամը՝ Երևան քաղաքի նախադպրոցական հաստատություններին:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով 74.8 մլրդ դրամ, որից 26.3 մլրդ դրամը կազմել են տարրական, 35 մլրդ դրամը՝ հիմնական, 13.5 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Հանրակրթության համակարգում 2017 թվականին գործել է 1379 դպրոց՝ միջին հաշվով 349.9 հազար աշակերտով՝ 2016 թվականի 1354 դպրոցի և 352.6 հազար աշակերտի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերը նվազել են 0.3%-ով՝ հիմնականում պայմանավորված միջնակարգ ընդհանուր կրթության մակարդակում սովորող աշակերտների թվի նվազմամբ:

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է 388.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հատկացումների հաշվին ապահովվել է «Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով կամ 2.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված սովորողների թվի աճով. այն 2017 թվականին կազմել է 100՝ 2016 թվականի 90-ի դիմաց:

Շուրջ 7.9 մլն դրամ է կազմել երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Նշված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ:

2017 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով ավելի քան 3 մլրդ դրամ, որից 965.7 մլն դրամն ուղղվել է տարրական, 1.5 մլրդ դրամը՝ հիմնական, 583.8 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառների հատուկ կրթական հաստատություններին: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 6.4%-ով կամ 205.3 մլն դրամով՝ պայմանավորված չորս հատուկ դպրոցների վերակազմակերպմամբ մանկավարժահոգեբանական գնահատման տարածքային կենտրոնների՝ համընդհանուր ներառական կրթության անցմամբ, որը և հանգեցրել է աշակերտների թվի նվազման:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար ծախսվել է ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.8%-ը: 2017 թվականին համակարգում գործել է 6 դպրոց, աշակերտների միջին տարեկան թիվը կազմել է 2433՝ 2016 թվականի 2458-ի դիմաց: 2016 թվականի համեմատ մասնագիտացված հանրակրթական ուսուցման ծախսերը նվազել են 10%-ով կամ 204.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված սաների թվի նվազմամբ:

2017 թվականին ավելի քան 12 մլն դրամ է տրամադրվել մասնագիտացված հանրակրթական հաստատությունների սաների կրթաթոշակների վճարմանը, որը կատարվել է 89.9%-ով: Շեղումը պայմանավորված է կրթաթոշակի տրամադրման չափանիշներին բավարարող սաների՝

նախատեսվածից պակաս թվով: Արդյունքում նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 6.8%-ով: 2017 թվականին կրթաթոշակ ստացող սաների թիվը կազմել է 325՝ նախորդ տարվա 291-ի դիմաց: Չնայած սաների թվի աճին՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 8.9%-ով անկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սաների թիվն աճել է նոր ուսումնական տարում, և ավելացած սաները կրթաթոշակ են ստացել չորս ամիս (սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին):

2017 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 98.4%-ով՝ կազմելով 3.7 մլրդ դրամ, որից 1.7 մլրդ դրամը՝ տարրական, 1.9 մլրդ դրամը՝ հիմնական և 137.9 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Ծախսերի տնտեսումը հիմնականում պայմանավորված է աշակերտների չհաճախելու հետևանքով սննդի և տրանսպորտային ծախսերի խնայողությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսավորման բանաձևում կիրառվող չափաքանակների գործակիցների բարձրացմամբ: Միաժամանակ հարկ է նշել, որ 2016-2017 ուսումնական տարում ներառական կրթություն իրականացնող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության 12 դպրոցների, 2017 թվականի սեպտեմբերից ներառական կրթություն իրականացնող, ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության 16, ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության 5 դպրոցների ծախսերը ֆինանսավորվել են հանրակրթական դպրոցներին հատկացված միջոցների հաշվին, որոնք նախկինում ֆինանսավորվում էին ներառական կրթության ծրագրի շրջանակներում:

Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ընդգրկված՝ երեկոյան ուսուցման ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է 44.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.6%-ով՝ պայմանավորված սաների թվի նվազմամբ:

2017 թվականին *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* խմբի ծախսերը կազմել են 9.8 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.5%-ով: Նշված գումարից 7.2 մլրդ դրամը կազմել են միջին մասնագիտական, 2.6 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.6%-ով և 99.9%-ով: Միջին և նախնական մասնագիտական կրթության ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 9.3%-ով ու 6.4%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են 2.3 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 99.9% կատարողական:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է «Ուստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ՝ ուստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակներում կրթություն ստացող սովորողներին ուսման ողջ ժամանակահատվածում նվազագույն ամսական աշխատավարձի չափով վարձատրություն վճարելու հանգամանքով: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 357.7 մլն դրամ կրթաթոշակ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի նվազմամբ:

2017 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 6.5 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 624.3 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված երկու ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 99.6%-ով և 99.8%-ով: Նշված միջոցները նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 9.2%-ով և 10.5%-ով, ինչը պայմանավորված է սովորողների թվի աճով, ինչպես նաև «Ուստիկանության ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված վերոհիշյալ փոփոխությամբ:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից 12 մլրդ դրամ տրամադրվել է *բարձրագույն կրթության* բնագավառին, որից ավելի քան 11.1 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 852.2 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 99.5%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 3.1%-ով կամ 355 մլն դրամով: Նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում արձանագրվել է բարձրագույն մասնագիտական կրթության և բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծրագրերում:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր: Դրանցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները, որոնք օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով 8.2 մլրդ դրամ: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ուսանողական նպաստներ ստացող ուսանողների թվի աճով:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 911.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.3%-ով՝ պայմանավորված «Ուստիկանության ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված վերոհիշյալ փոփոխությամբ:

Ավելի քան 2 մլրդ դրամ են կազմել բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 98.1%-ով և 9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված բարձրագույն կրթություն ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թվի աճով:

2017 թվականին *հետբուհական մասնագիտական կրթության* բնագավառի ծախսերը կատարվել են 98.3%-ով՝ կազմելով 852.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.5%-ով՝ հիմնականում պայմանավորված հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծախսերի նվազմամբ:

43 մլն դրամ տրամադրվել է հետբուհական մասնագիտական կրթության գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը նախատեսված է եղել օտար լեզվի և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկայից նախապատրաստական դասընթացներ և տարբերակված ստուգումներ անցկացնելու համար: Նշված ծախսերը կատարվել են 89.3%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվաքանակի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության քննությունը չհաղթահարելու հետ: Արդյունքում նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 11.7%-ով:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների վճարման համար 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 35 մլն դրամ, որը կատարվել է 99.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.2%-ով, որը պայմանավորված է ասպիրանտների և դոկտորանտների թվի նվազմամբ: Այն 2017 թվականին կազմել է 215՝ 2016 թվականի 267-ի դիմաց:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծախսերը կազմել են 551.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 99.5%-ով: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծրագրի կատարողականը պայմանավորված է օտար լեզվի ու ինֆորմատիկայի դասընթացների կազմակերպման համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Ծրագիրն իրականացվել է 17 բարձրագույն ուսումնական հաստատություններում, ասպիրանտների թիվը կազմել է 857, օրդինատորներինը՝ 234, ինտերնատուրայում սովորողներինը՝ 12, դոկտորանտներինը՝ 18: Բացի այդ, վերապատրաստվել են թվով 1200 բժիշկ և բուժքույր, ավելի քան 727 քաղաքացիական, պետական ծառայողներ և այլ կազմակերպությունների աշխատակիցներ, պետական պատվերի շրջանակներում սովորել է 75 մագիստրոս: Նախորդ տարվա համեմատ նպաստների գծով ծախսերը նվազել են 5.9%-ով:

2017 թվականին հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել են 222.3 մլն դրամ՝ ապահովելով 96.9% կատարողական: Շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նվազումը հիմնականում պայմանավորված է ուսանողների փաստացի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.5%-ով:

Հաշվետու տարում *ըստ մակարդակների չդասակարգվող կրթության* խմբի ծախսերը կազմել են 5.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը, որից 4.5 մլրդ դրամը կազմել են արտադպրոցական դաստիարակության, 1.2 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.7%-ով և 97.1%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է «Վերապատրաստման ծառայություններ» և «ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվեր» ծրագրերի կատարողականով: 2016 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերը նվազել են 7.4%-ով կամ 448.4 մլն դրամով: Ընդ որում՝ 5.2%-ով նվազել են արտադպրոցական դաստիարակության, 14.6%-ով՝ լրացուցիչ կրթության ծախսերը:

Արտադպրոցական դաստիարակությանը 2017 թվականի պետական բյուջեից հատկացված 19.1 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում անցկացվել են ՀՀ դպրոցականների շախմատի 11-րդ օլիմպիադայի 2-4-րդ փուլերը: Բացի այդ, ՀՀ պատվիրակությունը մասնակցել է դպրոցականների ԱՊՀ երկրների 5-րդ միջազգային մարզական փառատոնին՝ 6 մարզաձևերի մրցումներում: Շախմատի մրցապայքարում ՀՀ մասնակիցները թիմային պայքարում գրավել են 2-րդ տեղը, իսկ անհատական պայքարում նվաճել են 1 ոսկե և 2 արծաթե մեդալներ: Սեղանի թենիսի մրցապայքարում թիմային հաշվարկով ՀՀ մարզիկները գրավել են 4-րդ տեղը, իսկ անհատական պայքարում նվաճել են 1 ոսկե, 1 արծաթե մեդալ: Բասկետբոլի տղաների հավաքականը գրավել է 3-րդ տեղը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 90.5%-ով՝ պայմանավորված ՀՀ դպրոցականների շախմատի 11-րդ օլիմպիադայի անցկացմամբ:

Ավելի քան 2.8 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 100% կատարողական: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով՝ հիմնականում պայմանավորված մեկ նոր՝ «Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիրի մարզադպրոց» ՊՈԱԿ-ի ստեղծմամբ և երկու արտադպրոցական դաստիարակության հաստատությունների վերակազմակերպմամբ:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 17.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

«Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 640.8 մլն դրամ, որը կատարվել է 98.9%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 18.4.%-ով՝ պայմանավորված մեկ մարզական հաստատության փակմամբ: Հատկացված միջոցների հաշվին 3 հասարակական կազմակերպությունների 22 մանկապատանեկան մարզադպրոցներում մարզվել են 5180 մարզիկներ՝ 2016 թվականի 5535-ի դիմաց:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 465.6 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Արտադպրոցական դաստիարակության գծով ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման համար նախատեսվել է շուրջ 219.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է 77.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը մեթոդիստ-մանկավարժների և հանրապետության առաջատար մասնագետների միջոցով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների 8923 մանկավարժների և սովորողների ցուցաբերել է մեթոդական օգնություն և դասալսում՝ նախատեսված 6570-ի և 2016 թվականի 6400-ի դիմաց: Նշված միջոցները նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել: Մեթոդական օգնություն ստացածների փաստացի թիվը պայմանավորված է «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի 9-րդ հանրապետական մրցույթի իրականացմամբ: Հիմնադրամի մեթոդիստ-մանկավարժները և հանրապետության առաջատար մասնագետները ուսումնամեթոդական և գործնական օգնություն են ցուցաբերել վերոնշյալ մրցույթի մասնակից 64 երգչախմբերի, որոնցում միջին թիվը կազմում է շուրջ 20 աշակերտ:

2017 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար նախատեսված 15 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին տպագրվել են 20 անուն դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ՝ նախորդ տարվա 24-ի դիմաց: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթօջախներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.2%-ով՝ պայմանավորված հրատարակված գրականության քանակով:

Արտադպրոցական դաստիարակության բնագավառում «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 37.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով հատկացվել է 4.8 մլն դրամ կամ նախատեսվածի 62.3%-ը, որը պայմանավորված է վերապատրաստվող մարզիչներին վճարվող օրապահիկի և գիշերակացի ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն

էական փոփոխություն չեն կրել: 2017 թվականին վերապատրաստվել են 185 մարզիչ-մանկավարժներ՝ 2016 թվականի 174-ի դիմաց:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված 8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանն աջակցության նպատակով 2017 թվականին տրամադրվել է 16 մլն դրամ՝ 93%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 31%-ով՝ պայմանավորված գեղագիտական դաստիարակության հաստատությունների վերակազմակերպմամբ: 2017 թվականին «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ը միացման ձևով վերակազմակերպման միջոցով միացել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ վերանվանվելով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով տրամադրվել է 12.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 80.7%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի հաշվին երաժշտական դպրոցների համար ձեռք է բերվել 13 անուն 98 երաժշտական գործիք՝ բյուջեով նախատեսված 14 անուն 69 գործիքի և 2016 թվականի 17 անուն 41 գործիքի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 27.7%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականին ձեռք են բերվել ինչպես ուսումնական, այնպես էլ բարձրարժեք համերգային գործիքներ, իսկ 2017 թվականին՝ միայն մատչելի գներով ուսումնական գործիքներ:

2017 թվականին շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանն աջակցության նպատակով նախատեսված 15.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված 15 շնորհալի պատանի երաժիշտ-կատարողներ 2017 թվականին մասնակցել են 70 հանրապետական և միջազգային նախագծերի՝ մրցույթների, փառատոների, մենահամերգների, վարպետության դասերի և այլ նպատակային ծրագրերի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության իրականացման գծով 2017 թվականին նախատեսված 129.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2017 թվականի ընթացքում ապահովվել է «Պատանի երկրապահ» ակումբի 72 ստորաբաժանումների բնականոն

գործունեությունը, կազմակերպվել են թվով 5600 պատանի երկրապահների ուսումնամարզական վարժանքները և հանգիստը, կազմակերպվել են տոնական միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին պետական բյուջեից 1.2 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 97.1%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ կրթության ծախսերը նվազել են 14.6%-ով՝ հիմնականում պայմանավորված 2017 թվականին հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման նպատակով միջոցներ չնախատեսելու և հարկային ու մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերի նվազմամբ:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի շրջանակներում 2017 թվականին օգտագործվել է 23.5 մլն դրամ՝ ապահովելով 65.4% կատարողական: Ծրագրից շեղումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստումներով, պետական մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով, կադրերի հոսունությամբ: Արդյունքում նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 20.7%-ով: 2017 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել է 1779 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 1821-ի դիմաց:

Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվերի շրջանակներում տրամադրվել է ավելի քան 18 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ծախսերի կատարումը: Միջոցները հատկացվել են ՀՀ դատախազությանը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է փորձաքննությունների նշանակման մասնագիտական վերապատրաստման 26 դասընթաց, մասնակիցների քանակը կազմել է 362 մարդ՝ նախորդ տարվա 40 դասընթացի և 360 մասնակցի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է 315.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2017 թվականին, ինչպես և 2016 թվականին, վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների քանակը կազմել է 2525: 2017 թվականին մեկ դասընթացի տևողությունը եղել է 72 ակադեմիական ժամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.2%-ով կամ 17.1 մլն դրամով՝ պայմանավորված վերապատրաստման և հատուկ ուսուցման մեկ ակադեմիական ժամի համար սահմանված արժեքով:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման համար նախատեսված 59.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների գծով նախատեսված 120.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են 10.1 մլն դրամ կամ նախատեսվածի 72%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 28%-ով: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախարդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է չորս ունկնդրի կողմից ճանապարհածախսի ֆինանսավորման համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերը չներկայացնելու հանգամանքով:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 225 հազար դրամ՝ ապահովելով 65.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է վերապատրաստված ծառայողների քանակով: 2017 թվականին վերապատրաստվել է 30 պետական ծառայող՝ նախատեսված 73-ի և 2016 թվականի 25-ի դիմաց: Չնայած վերապատրաստված ծառայողների թվի աճին՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.3%-ով, որը պայմանավորված է մեկ ունկնդրի հաշվով կատարված ծախսի նվազմամբ:

306.5 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին՝ 94.6%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցների և համայնքային ծառայողների վերապատրաստմանը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ծախսերի կատարողականով, որը կազմել է 6.4 մլն դրամ կամ 35%: Անարդյունավետ ծախսերից խուսափելու համար վերապատրաստման գործընթացը կիրականացվի համայնքների խոշորացման գործընթացների ավարտից հետո: Վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 5.1%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ արդարադատության նախարարության՝ վերապատրաստված դատական ծառայողների և դատախազության աշխատակազմի պետական ծառայողների քանակով, որը 2017 թվականին կազմել է 1032՝ 2016 թվականի 986-ի դիմաց:

Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրման նպատակով օգտագործվել է ծրագրով նախատեսված միջոցների 99.5%-ը՝ 47.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին մասնագիտական վերապատրաստում է անցել 36 ունկնդիր՝ 2016 թվականի 18-ի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.1 անգամ:

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է 266.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.3%-ով կամ 76.7 մլն դրամով, որը պայմանավորված է «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի ԱԱՀ-ի դիմաց առաջացած պարտքի նվազմամբ: 2015 թվականի 2-րդ կիսամյակից գործող օրենսդրական փոփոխության արդյունքում «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը ներառվել է ԱԱՀ վճարողների ցանկում: 2015 թվականին վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը ՊՈԱԿ-ին հատկացվել էր 2016 թվականին: Ծախսերի անկումը պայմանավորված է նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում հաստիքների կրճատմամբ: Արդյունքում 2017 թվականին վերապատրաստում են անցել 2020 հարկային և մաքսային տեսուչներ՝ 2016 թվականի 3320-ի դիմաց:

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 4.1 մլն դրամ՝ ապահովելով 74% կատարողական: 2017 թվականին համապատասխան հայտերի համաձայն վերապատրաստվել են 37 հոգի՝ բյուջեով նախատեսված 50-ի դիմաց: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականից:

2017 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 9%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կատարվել են 98.2%-ով կամ կազմել 11.2 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի կատարողականով: 2016 թվականի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերն աճել են 11.8%-ով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2017 թվականին սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են 36.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին վերապատրաստվել են 16 երկրի 53 մասնակից՝ 47 ուսուցիչ և 6 օտարերկրացի ուսանող: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.9%-ով, որը պայմանավորված է ծրագրի բովանդակային և որակական հարստացմամբ, մասնավորապես՝ բարելավվել են սփյուռքահայ ուսուցիչների կեցության և դասավանդման պայմանները:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են 674.9 մլն դրամ՝ 98%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է մրցութային գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հիմնանորոգվել են 22 օբյեկտներ՝ 2016 թվականի 39-ի դիմաց:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է 80 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում կատարվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի, ինչպես նաև՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքները:

Ուսանողներին զեղչված գներով հանրակացարանային պայմանների տրամադրման ծախսերը կատարվել են ամբողջությամբ և կազմել 32.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 6.3%-ով՝ պայմանավորված բնակվողների թվաքանակով, որը կազմել է 204՝ նախորդ տարվա 192-ի դիմաց:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 51.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.2%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ծաղկաշենի նոր մանկապարտեզի, ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի դպրոցի մարզադահլիճի, ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի նոր երաժշտական դպրոցի, ՀՀ Կոտայքի մարզի գ.Գեղաշենի նոր մանկապարտեզի, ՀՀ Շիրակի մարզի գ.Արեգնադեմի դպրոցի, ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղիի համայնքի նոր մանկապարտեզի և ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի նոր մանկապարտեզի կառուցման նախագծային աշխատանքները, ինչպես նաև՝ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի կառուցման տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները:

2017 թվականին 272.7 մլն դրամ է հատկացվել կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 99.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի, ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի կառուցման աշխատանքները, ինչպես նաև՝ ՀՀ Տավուշի մարզի գ. Այգեձորի համայնքային նշանակության նոր մարզադահլիճի կառուցման նախագծային աշխատանքները:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 480.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2017 թվականին, ինչպես և նախորդ տարի, ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 4800 երեխայի ամառային հանգիստը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ավարտական փաստաթղթերի՝ գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 283.9 մլն դրամ՝

ապահովելով 98.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել 32270 հատ վկայականներ, 23870 հատ ատեստատներ, 3600 հատ դիպլոմներ, 40000 հատ գովասանագրեր, 21585 հատ դասամատյաններ, 88 հատ հուշամեդալներ, 119 հատ առաջադիմության մեդալներ, 44 անուն ուսումնական ձեռնարկներ, մանկավարժական պարբերականներ և ուսումնադիտողական պարագաներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 4.9%-ով՝ պայմանավորված ձեռք բերված որոշ փաստաթղթերի և պարագաների քանակի ու գների աճով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի շրջանակներում ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից կատարվել են 783.9 մլն դրամ ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 19.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ավագ դպրոցների դասագրքերը վերատպագրվում են չորս տարին մեկ անգամ, ուստի 2017 թվականին դրանց տպագրման համար միջոցներ չեն նախատեսվել:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով տրամադրվել է 40.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 96.1%-ը: Ծրագրի շրջանակներում գործուղված մանկավարժների թիվը 2017 թվականին կազմել է 237՝ 2016 թվականի 235-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով կամ 1.2 մլն դրամով: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է գործուղված մանկավարժների պակաս աշխատաժամանակով:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 73.8 մլն դրամ՝ ապահովելով 98.3% կատարողական: Ծրագրի շեղումը հիմնականում պայմանավորված է 2017թ. որոշ երթուղիներ որոշակի ժամանակահատվածով չսպասարկելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետության յոթ մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով, որը պայմանավորված է ծառայությունից օգտվող սովորողների ու մանկավարժների թվով:

Ռազմագիտության կաբինետները ուսումնաօժանդակ նյութերով ապահովման նպատակով տրամադրվել է 15.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 99.8%-ը: Ձեռք են բերվել թվով 37338 ռազմագիտական ուսումնադիդակտիկ պաստառներ: Այս նպատակով 2016 թվականին ծախսեր չէին նախատեսվել:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Անց են կացվել ՀՀ անկախության 26-րդ տարեդարձին նվիրված՝ դպրոցականների հանրապետական 26-րդ խաղերը 9 մարզաձևերից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով, հանրապետական եզրափակիչ վերջնական փուլին մասնակցել է 240 դպրոցական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 61.7 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2017 թվականին անց են կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից, որոնց մասնակցել են 1492 դպրոցականներ, համահայկական հայագիտական 8-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 76 դպրոցական: Հանրապետական փուլերի հաղթող լավագույն 29 դպրոցականները մասնակցել են 7 միջազգային օլիմպիադաների, 18 դպրոցականներ մասնակցել են Ժաուտիկովյան միջազգային օլիմպիադային: Ընդհանուր առմամբ հայ դպրոցականներն արժանացել են 2 ոսկե, 5 արծաթե, 13 բրոնզե մեդալի և 4 գովասանագրի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.6%-ով՝ պայմանավորված մեկ միջազգային օլիմպիադային չմասնակցելու հանգամանքով:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 151.7 մլն դրամ՝ ապահովելով 94.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 82.2%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ դպրոցներին ինտերնետ կապի տրամադրումը 2017 թվականից սկսած իրականացվում է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից: Արդյունքում տնտեսվել են կապիտալ ծախսերի համար նախատեսված միջոցները, որով պայմանավորված է տվյալ ծրագրի ծախսերի կատարողականը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի կրթական ցանցի սպասարկումը և ամենօրյա հսկողությունը, որում ընդգրկված են Հայաստանի 1420 ուսումնական հաստատություններ: Կազմակերպվել են դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ և ԼՂՀ համայնքների 503 աշակերտ և 329 ուսուցիչ, հարստացվել է www.armedu.am «Հայկական կրթական միջավայր» և մի շարք այլ պորտալներ: «Պաշարների շտեմարան» կայքում տեղադրվել են 1613 նոր ուսումնամեթոդական էլեկտրոնային նյութեր: «Հեռավար ուսուցում» համակարգում կազմակերպվել են շուրջ 200 դասընթացներ՝ գրանցված 2620 մասնակիցների համար:

Հաշվետու տարվա ընթացքում 391.8 մլն դրամ հատկացվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որոնք մատուցվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել են 3.3%-ով՝ պայմանավորված հանրակրթական հաստատությունների

շրջանավարտների թվի նվազմամբ: 2017 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

- պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպում, մրցույթի անցկացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- տարրական, միջին և ավագ դպրոցների ավարտական քննությունների քննական թեստերի մշակում և դպրոցներին տրամադրում, քննությունների արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- հանրակրթական ուսումնական հաստատություններում արտաքին ընթացիկ գնահատումների իրականացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- սովորողների գիտելիքների ստուգման ազգային ստուգատեսի կազմակերպում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- էքստեռն քննությունների թեստերի մշակում ու տրամադրում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը,
- միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերում սովորելու հավակնող շրջանավարտների քննական թեստերի մշակում ու տրամադրում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը հատկացված 125.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը կազմել է շուրջ 10 հազար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում ընթացել են աշխատանքներ վեց հիմնական ուղղություններով՝

- հեղինակային կրթական ծրագրերի լրամշակման, իրականացման և տարածման բաց համակարգ. 1-3-րդ, 4-5-րդ, 6-9-րդ, 10-12-րդ դասարանների ուսումնական պլանների մշակում, 9-12-րդ դասարանցիների մասնագիտական կողմնորոշման բաց նախագծեր և այլն,
- աջակցություն մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացման, հեղինակային կրթական ծրագրի տարածման բաց համակարգին. կազմակերպվել են մանկավարժական աշխատողների բաց դպրոցների գործունեություն, հեղինակային կրթական ծրագրերի տարածման տեսադասեր, ուսուցիչների և սովորողների կլոր սեղանների կազմակերպում. մանկավարժական փորձի փոխանցման, ստեղծագործական հավաքներ տարբեր կրթական հաստատություններում, մանկավարժական նորարարության ճամբարի գործունեություն և այլն,
- անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ. սովորողների նախասիրությունների զարգացման բաց ակումբների, ակումբային բլոգների աշխատանքներ, առարկայական ամենամսյա ֆլեշմոբներ 11 առարկաներից, 9-րդ ամենամյա Դիջիթեք 2017,

մասնակցություններ միջազգային ճամբարային նախագծերին, համերգների, ցուցադրությունների, պլեներների, մրցաշարերի, ստեղծագործական բաց հավաքների կազմակերպում,

- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրումրացուցիչ կրթության ծրագրերի իրականացում. երաժշտության, պարի, կերպարվեստի և տեխնոլոգիայի, օտար լեզուների, մարզական, շախմատի, ուսումնական ագարակ, մեդիագրադարան, լրացուցիչ կրթության ծրագրերի, սովորողների նախասիրությունների զարգացման ուսումնական բաց նախագծերի կազմակերպում, համերգների, մրցույթների կազմակերպում, սպորտային խմբակների գործունեություն և այլն,
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կրտսեր դպրոցների, քոլեջի կազմում գործող նախակրթարանների գործունեություն. 5 նախակրթարան, 217 սան, դաստիարակների 25 բլոգ, տարբեր տարքիային խմբերի երեխաների ուսուցման շաբաթական աշխատանքային նախագծեր.
- հեղինակային, կրթական ծրագրեր մշակող, իրականացնող և տարածող կրթահամալիրին աջակցություն. մանկավարժության լաբորատորիայի, ուսումնական կենտրոնների, այդ թվում՝ գրադարանի գործունեություն, ձայնադարանի, ֆիլմադարանի գործունեություն, ռադիոհաղորդումներ, «Դպիր» ամսագրի հրատարակում:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման ու տրամադրման համար ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 97.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Ծրագրի նպատակներն են՝ աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուծացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը, նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը: Ծրագրով բավարարվել են աշխարհի ավելի քան 40 երկրների 371 կրթօջախների հայտեր, տրամադրվել են 87500 կտոր ուսումնական գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից հատկացվել է 42.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1197, տրամադրվել է 201 խորհրդատվական տեղեկանք: Ճանաչման վերաբերյալ որոշում է կայացվել 3 օտարերկրյա որակավորումների վերաբերյալ: Տրամադրվել է 994 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի գերակշիռ մասը կազմել է Վրաստանին տրամադրվածը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների նպատակով հաշվետու տարում ծախսվել է 23 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի անդամների և Բոլոնիայի գործընթացի աշխատանքային խմբերի անդամների գործուղումներ օտարերկրյա պետություններ, ապահովվել է մասնակցությունը Բոլոնիայի քարտուղարության աշխատանքներին, կազմակերպվել են Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության հանրային քննարկումներ, համաժողովներ, ոլորտում հետազոտությունների իրականացում: Նախորդ տարվա համեմատ բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների գծով ծախսերը նվազել են 67.1%-ով, ինչը պայմանավորված է նախատեսված միջոցառումների և գործուղումների քանակի նվազմամբ:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 39.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.5%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի տանիքի, ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ Շիրակի մարզի ք. Գյումրու «Հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի և ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և հիմնանորոգման աշխատանքները:

Հաշվետու տարում պետական բյուջեից 476.6 մլն դրամ է հատկացվել կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը 2017 թվականին կազմել է 10322: Փորձաքննություն են անցել շուրջ 127 անուն դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնամեթոդական նյութեր, ծրագրեր և այլ ուսումնական գրականություն՝ 28937 էջ ծավալով: Կազմակերպվել են թվով 58 սեմինարներ տարբեր մասնագետների համար: Իրականացվել է թվով 91 խորհրդատվություն, մշակվել են հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցեր, ընդհանուր առմամբ՝ 124 հատ: Մշակվել և լրամշակվել են թվով 10 նորմատիվ բնույթի փաստաթղթեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2017 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են

166.3 մլն դրամ ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 3.4%-ով գերազանցելով 2016 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է նախորդ տարի ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ չկատարելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում վերանայվել են 17 ՄԿՈՒ չափորոշիչները և դրանց համապատասխան իրականացվել է ուսումնական պլանների ու մոդուլային ուսումնական ծրագրերի փորձաքննություն: Վերապատրաստվել են հաստատությունների ղեկավարներ, դասախոսներ, փորձագետներ, հրատարակվել են «Մասնագիտական կրթություն և ուսուցում» հանդեսի չորս համար, կատարվել են այլ աշխատանքներ:

2017 թվականին 68 մլն դրամ է հատկացվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից, որը կատարում է մասնագիտական կրթության ոլորտի ուսումնասիրություններ, վերլուծություն, խորհրդատվություն և գնահատում:

2017 թվականին 1.5 մլն դրամ է տրամադրվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցմանը՝ կազմելով նախատեսվածի 51.7%-ը, որը պայմանավորված է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների՝ նախատեսվածից պակաս քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.2%-ով՝ պայմանավորված աշակերտների թվի աճով:

2017 թվականին ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են 3.5 մլն դրամ կամ ծրագրի 81.5%-ը, որը պայմանավորված է գրենական պիտույքների և ուսուցիչների ատեստավորման նպատակով իրականացվող գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.6%-ով՝ պայմանավորված ատեստավորված ուսուցիչների թվի աճով:

2017 թվականին «Հայրենյաց ասպետներ» հայրենասիրական կրթադաստիարակչական ծրագրին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 68.6 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ցուցանիշի 98.8%-ը: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող «Հայ ասպետ» հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 96 դպրոցների 1056 աշակերտներ, ինչպես և 2016 թվականին: Իրականացվել են ազգային տոների (Սբ. Զատկի, Համբարձման և Խաղողօրհնեքի) համատեղ անցկացման ծրագրեր, հեռուստամրցույթին մասնակցող թիմերի աշակերտների հետ կազմակերպվել են հավաքներ: Իրականացվել է բանակային «Հայ ասպետ» հեռուստանախագիծը, որի մասնակցել է 44 զորամասի 220 զինվոր: Ծրագրված ցուցանիշից շեղումը պայմանավորված է

նախատեսված մեկ արշավ չիրականացնելու հանգամանքով: Արդյունքում արձանագրվել է նաև 2016 թվականի համեմատ տվյալ ծախսերի նվազում 1.1%-ով:

Արտասահմանում սովորող ուսանողներին հաշվետու տարում հատկացվել է 100 մլն դրամ աջակցություն, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից, որի առաքելությունն է՝

- ստեղծել ու համախմբել առաջադեմ և ստեղծագործ մտածելակերպ ունեցող ուսանողների սերունդ՝ բազմապատկելով աշխարհի լավագույն համալսարաններ հաճախող հայ ուսանողների թիվը՝ նրանց տրամադրելով նյութական, մենթորական և այլ աջակցություն,
- ստեղծել ենթակառուցվածք, որն ի մի կբերի «Լույսի»-ի ուսանողների գիտելիքները, փորձառությունն ու կապերը, և կառաջարկի ծրագրեր, որոնք կօգնեն ուսումնական ձեռքբերումներից անցում կատարել իրական աշխարհի նվաճումներին՝ ի բարօրություն Հայաստանի:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանն ուղղվել է 151.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 94.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից պակաս ատեստավորված ուսուցիչների թվով: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 51.8%-ով՝ պայմանավորված հավելավճար ստացող՝ որակավորում ստացած ուսուցիչների թվի աճով:

Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման նպատակով նախատեսվել է 49.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է 3.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս անցկացրել է հայոց լեզվի դասընթաց Բուխարեստի համալսարանում, դասախոսի կողմից մշակվել է հայերենի դասագիրք ռումինախոսների համար: Հայերենի՝ իբրև օտար լեզվի տարածման նպատակով պատրաստվել է առցանց դասընթաց: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրմանը հատկացվել է 3.6 մլն դրամ, որը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է դասախոսություն սփյուռքագիտության ոլորտում՝ Զալցբուրգի համալսարանում, Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի հայագիտության բաժնում: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2017 թվականին 60 մլն դրամ է տրամադրվել հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ծրագրին՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հրապարակվել և բաշխվել են «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» և «Հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույց-ձեռնարկները, իրականացվել են բարձրագույն կրթությունից բավարարվածության գնահատման սոցիոլոգիական հետազոտություն (https://lib.armedu.am/resource/18063) և դպրոցների վարկանիշավորման տվյալների երկրորդային վերլուծություն (https://lib.armedu.am/resource/18209): 2016 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծրագրին տրամադրվել է 81.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում, ինչպես և 2016 թվականին, նախատեսվել և մատուցվել են կրթաբուժական ծառայություններ թվով 65 երեխաների: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

2017 թվականին «Ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրում» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսված 57.6 մլն դրամի դիմաց տրամադրվել է 53.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.4% կատարողական, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ սուբսիդավորումն իրականացվել է վարկավորում իրականացնող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 25.3%-ով՝ պայմանավորված շահառուների թվի աճով:

Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ծրագրի շրջանակներում ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից կատարվել են 716.3 հազար դրամ ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Անվճար դասագրքերը բաշխվել են 5-12-րդ դասարանների աշակերտներին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 24%-ով՝ պայմանավորված աշակերտների թվի աճով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Նորարարական մրցակցային հիմնադրամի բաղադրիչի շրջանակներում հաստատությունների կողմից տարեվերջին ներկայացված հաշվետվություններն արտացոլվել են 2017 թվականին կատարված աշխատանքների ցուցանիշներում, իսկ դրանց հիման վրա համապատասխան վճարումները՝ 2018 թվականին:

2017 թվականին նշված վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

«Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի շրջանակներում հիմնվել են 3 նոր նախակրթարաններ ՀՀ Գեղարքունիքի մարզում: Վերապատրաստվել են նախակրթարաններում ընդգրկված թվով 46 դաստիարակներ: Ավարտվել են 12 ավագ դպրոցների շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Դրանց վերաբերյալ ստացվել են ՀԲ-ի դրական եզրակացությունները: Շարունակվել են վարկային ծրագրով նախատեսվող՝ հիմնանորոգման ենթակա թվով 17 ավագ դպրոցներից 5-ի հիմնանորոգման աշխատանքները, որոնք ընթանում են ժամանակացույցերին համապատասխան: Նախատեսվում է նաև բոլոր ավագ դպրոցներում հիմնել բնագիտական առարկաների լաբորատորիաներ: Մշակվել և ՀԲ-ի կողմից հաստատվել է ավագ դպրոցների համար բնագիտական առարկաների լաբորատոր սարքավորումների գնման մրցութային փաթեթը, ինչպես նաև մշակվել են անհրաժեշտ լաբորատոր կահույքի համակազմն ու նկարագիրը:

2017 թվականին մեկնարկել են ՏՀՏ վերապատրաստումների կարիքների գնահատման, ՏՀՏ կիրառմամբ առարկաների դասավանդման համար վերապատրաստման մոդուլների մշակման և վերապատրաստողների վերապատրաստման աշխատանքները: Մշակվել են վերապատրաստման 6 մոդուլներ, որոնք նախատեսված են շարունակական վերապատրաստումներ իրականացնելու համար: Ստեղծվել են բնագիտական առարկաների մասով էլեկտրոնային նյութեր, որոնք իրենցից ներկայացնում են ինտերակտիվ վիրտուալ լաբորատորիաներ՝ ինչպես առցանց, այնպես էլ օֆլայն տարբերակներով http://esource.armedu.am/ կայքով: Ավարտվել են մասնագիտական և հանրակրթական կառավարման տեղեկատվական համակարգերը մեկ միասնական համակարգի մեջ ինտեգրելու աշխատանքները: Կազմակերպվել է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի նոր շենքի հիմնանորոգման աշխատանքների մրցույթը, որն ամփոփման փուլում է:

Կատարվել է հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտությունը: Կազմակերպվել են հանրային քննարկումներ, որի արդյունքում որոշվել է, որ ամբողջական մոտեցման ապահովման նպատակով առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայումն անհրաժեշտ է իրականացնել իբրև հանրակրթական պետական ծրագրի մի մաս:

«Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը» բաղադրիչի շրջանակներում 12 դրամաշնորհառու բուհեր շարունակել են նորարարական զարգացման ծրագրերի իրականացումը: Արդյունքում բուհերը համալրվում են մասնագիտական նոր

լաբորատորիաներով, հեռավար ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ պարագաներով և ուսումնական գործընթացների արդիականացմանն ուղղված այլ միջոցներով:

«Դպրոց կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության (ԻԱՄ) աջակցության նպատակով օգտագործվել է 20 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: 2017 թվականի ընթացքում միության կողմից կազմակերպված մասնագիտական հավաքներին մասնակցել են հանրակրթական դպրոցների տնօրեններն ու աշակերտները: Կազմակերպվել են տարբեր ցուցահանդեսներ, մրցույթներ, միջոցառումներ և այլն: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման գծով նախատեսված 8.4 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են դպրոցների 222 ուսուցիչներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի աճը կազմել է 1.8%, որը պայմանավորված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի հետ կապված ծախսի նախատեսմամբ:

Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացման գծով նախատեսված ավելի քան 126.9 մլն դրամը ևս ամբողջությամբ օգտագործվել է: 2017 թվականին դպրոցներում ռոբոտաշինության խմբակների թիվը կազմել է 220՝ 2016 թվականի 60-ի փոխարեն: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.4 անգամ:

Պրահայի Կարլովի համալսարանում հայոց լեզվի դասավանդման նպատակով նախատեսվել է 5.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի և պատմության դասավանդում Պրահայի Կարլովի համալսարանում: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 666.3 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով՝ պայմանավորված 3 քննական առարկաների մշակման համար աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ:

Ծրագրի իրագործման ընթացքում՝

- Շարունակվել է Արարատյան բակալավրիատի (ԱԲ) դպրոցների ցանցին անդամակցելու գործընթացը: Դիմում-հայտ են ներկայացրել 55 դպրոց, որոնցից ընտրվել են 21-ը: Իրականացվել են աշխատանքային այցեր այն դպրոցներ, որոնք հետագայում կարող են հավաստագրվել որպես Արարատյան բակալավրիատի դպրոց.

- Մեկնարկել են Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագրի մշակման աշխատանքները՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ համագործակցությամբ.
- Ավարտվել է Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի փորձարկումը, որը մեկնարկել էր 2015 թվականին: Մասնակցել է 3 խումբ՝ 52 ուսուցիչ.
- Մեկնարկել են Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի համամարզային և Արցախի 1-ին ու 2-րդ փուլերը.
- Արարատյան բակալավրիատը ներկայացվել է Միացյալ Թագավորության բուհական ընդունելության միասնական համակարգում.
- Առաջին անգամ անցկացվեցին Արարատյան բակալավրիատի ընդունելության քննություններ 9-րդ դասարանի շրջանավարտների համար, ովքեր ցանկանում էին ընդունվել ԱԲ ծրագիրն առաջարկող ԱՅԲ ավագ դպրոց: Անցկացվել են ԱԲ ավարտական և բուհական ընդունելության քննություններ 4 առարկայի համար.
- Շարունակվել են ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքները, որոնց արդյունքում 2017 թվականին ԱՄՆ-ի, Եվրոպայի, Ճապոնիայի և Հոնկոնգի 20-ից ավելի համալսարաններ հաստատել են, որ ԱԲ-ն ընդունելի է իրենց համար:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից 2015 թվականից և շարունակվելու է մինչև 2020 թվականի ավարտը: Ծրագիրը կօժանդակի Աղետների ռիսկի նվազեցման ազգային ծրագրի իրականացմանը՝ բարելավելով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը, նվազեցնելով դպրոցներում հնարավոր զոհերը և վնասները տարերային աղետների ժամանակ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի (ՍԱԲԾ) շրջանակում նախանշված առնվազն 47 դպրոցների շենքերի շինարարության, ամրացման և հիմնանորոգման աշխատանքներ: Կմշակվի արտակարգ իրավիճակներին արձագանքման գործողությունների ծրագիր ՍԱԲԾ շրջանակում ամրացված կամ հիմնանորոգված յուրաքանչյուր դպրոցի համար: Կտրամադրվեն սարքավորումներ սեյսմիկ մոնիտորինգի 15 համալիր դիտակետերն արդիականացնելու նպատակով: Բացի դրանից, ֆինանսավորվում են ՀՏԶՀ գրասենյակի գործառնական ծախսերը: 2017 թվականին մեկնարկել են շինարարական աշխատանքները Հայաստանի Հանրապետության 7 դպրոցներում (Երևանում՝ 2 դպրոց, Արմավիրում, Գեղարքունիքում, Լոռիում, Սյունքում և Վայոց ձորում՝ 1-ական դպրոց):

Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանում հայոց լեզվի դասավանդման նպատակով նախատեսվել է 11.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ

դասախոս իրականացրել է հայոց լեզվի և գրականության դասավանդում նշված համալսարանում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրման գծով պետության կողմից Երևան համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով տրամադրվել է ավելի քան 24.9 մլն դրամ, ապահովելով ծրագրի 97.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից ավելի քիչ ատեստավորված ուսուցիչների թվով: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 91.9%-ով՝ պայմանավորված հավելավճար ստացող՝ որակավորում ստացած ուսուցիչների թվի աճով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման, հրատարակման և ձեռքբերման գծով նախատեսվել է 16 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նշված ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 4000 մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, 9 տեսակ զարգացնող ուսումնական նյութերի փաթեթ 220 հատ ընդհանուր քանակով, 2000 բրայլյան տետրեր: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ծախսերը կազմել են 501.2 մլն դրամ կամ նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 189.7%-ով՝ պայմանավորված նրանով, որ ծրագիրը ենթարկվել է բովանդակային և ծավալային փոփոխության համընդհանուր ներառական կրթության անցման հետևանքով, որոշ հատուկ կրթություն իրականացնող դպրոցներ վերակազմավորվել են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կենտրոնների, որոնք 2017 թվականին եղել են թվով 8-ը: Գնահատվել է 3459 երեխա:

«Դասարան» ուսումնատեղեկատվական ծրագրի իրականացմանն աջակցության նպատակով նախատեսված 90 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Ծրագրի շրջանակում ապահովվել են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների էլեկտրոնային մատյանի, էլեկտրոնային օրագրի, տնօրենների էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական բնականոն աշխատանքները, ստեղծվել է դպրոցներում թափուր հաստիքների հայտարարությունների միասնական առցանց համակարգը: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականից:

2017 թվականին «Երևան քաղաքի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի և Սյունիքի մարզերի բժշկական ուսումնական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ կրթության և ուսուցման որակի բարելավման նպատակով վերապատրաստման դասընթացներ-սեմինարներ» ծրագրին արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 12.5 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ: Կրթական այս ծրագրի իրականացման նպատակն է Երևան

քաղաքի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի և Սյունիքի մարզերի բժշկական ուսումնական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ կրթության և ուսուցման որակի բարելավման նպատակով վերապատրաստման դասընթացներ-սեմինարների կազմակերպումը, որն իրականացվել է:

«Դասընթացավարների վերապատրաստում, կանանց ազդեցության և տղամարդկանց ու կանանց իրավահավասարության խթանում» ծրագրին 2017 թվականին արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 12 մլն դրամ, որն նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Կրթական այս ծրագրի իրականացման նպատակն էր դասընթացավարների վերապատրաստումը, կանանց ազդեցության և տղամարդկանց ու կանանց իրավահավասարության խթանումը:

Չեխիայի Հանրապետության դեսպանատան կողմից ՀՀ Արմավիրի մարզում «Ավելի կանաչ Հայաստան, աղբի տեսակավորում» թեմայով դասընթացների և բնակչության շրջանում քարոզչության անցկացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3.4 մլն դրամ կամ նախատեսվածի 82.9%-ը: Ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի դեկտեմբերից, որի արդյունքում հնարավոր չի եղել աշխատանքները կատարել ամբողջությամբ, և դրանք տեղափոխվել են 2018 թվական: Ծրագրի ընթացքում ձեռք են բերվել համակարգիչներ և տպիչներ, որոնք տրամադրվել են ՀՀ Արմավիրի մարզի մի շարք դպրոցների, կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ:

Այլ դասերին չպատկանող կրթության դասի շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերն ընդհանուր առմամբ կատարվել են 99.4%-ով՝ կազմելով 1.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.4%-ով՝ հիմնականում պայմանավորված «Հորիզոն-2020 հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» դրամաշնորհային ծրագրի մեկնարկով:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմին տրամադրվել է 856.3 մլն դրամ կամ ծրագրի 99.4%-ը, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին՝ 158.4 մլն դրամ կամ ծրագրի 98.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Հորիզոն-2020 հետազոտությունների և նորարաության շրջանակային ծրագիր (2014-2020)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 195.6 մլն դրամ արտաբյուջետային միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Այս արտաբյուջետային հաշվի նպատակ է՝ ապահովել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև 2016 թվականի մայիսի 19-ին Բրյուսելում ստորագրված «Հորիզոն-2020. հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին»

համաձայնագիրը՝ համապատասխան ֆինանսավորումը ստանալու և միջազգային կազմակերպությունների կողմից օժանդակվող ծրագրերին տրամադրվող գումարների շրջանառությունը: 2017 թվականին օգտագործված միջոցներն ուղղվել են ծրագրին ՀՀ անդամակցության ծախսերին:

Սոցիալական պաշտպանություն

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 27.2%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են շուրջ 409 մլրդ դրամ՝ ապահովելով 99% կատարողական: 2016 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 3.1%-ով կամ 12.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների և ծերության դասերի ծախսերի աճով:

Հաշվետու տարում շուրջ 1.2 մլրդ դրամ տրամադրվել է *վատառողջության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 92% կատարողական: Նշված ծախսերը 2016 թվականի համեմատ նվազել են 5.8%-ով՝ հիմնականում պայմանավորված անաշխատունակության դասի ծախսերի նվազմամբ:

Վատառողջության դասին տրամադրվել է 195.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 4.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերի նվազմամբ: Հաշվետու տարում նշված ծրագրին տրամադրվել է 83.9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.5%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 8.9%-ով: Ծախսերի անկումը պայմանավորված է շահառուների թվաքանակի կրճատմամբ՝ նախատեսված 450 անձի և նախորդ տարվա 448-ի փոխարեն հաշվետու տարում փոխհատուցում են ստացել 420-ը:

Բժշկասոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 111.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: 2017 թվականին բժշկական օգնություն է տրամադրվել 3 հիվանդությունների գծով 496 հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց՝ նախատեսված և նախորդ տարվա 500-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում ավելի քան 979.5 մլն դրամ տրամադրվել է *անաշխատունակության* դասին՝ ապահովելով 90.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերը նվազել են 6.2%-ով կամ 64.7 մլն դրամով: Ծախսերի ծրագրից շեղումը, ինչպես նաև

նախորդ տարվա համեմատ անկումը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերով:

Տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 10.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2017 թվականին տպագրվել են 42327 թերթ բրայլյան գրքեր, 320 հատ բրայլյան տետրեր, 74400 թերթ «Բյուլետեն» ամսագիր, 1600 ժամ «Խոսող գիրք»: 2016 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 747.7 մլն դրամ՝ ապահովելով 90.8% կատարողական: Սույն ծրագրի շրջանակներում հաշմանդամներին տրամադրվել են տրամադրել է 3810 պրոթեզաօրթոպեդիկ պարագա՝ նախատեսված 4675-ի փոխարեն, 3232 վերականգնողական պարագա՝ նախատեսված 7936-ի փոխարեն, 100 ձայնաստեղծ սարք՝ նախատեսվածին համապատասխան, 186 աչքի պրոթեզ՝ նախատեսված 200-ի փոխարեն և 543 պրոթեզաօրթոպեդիկ պարագայի վերանորոգում՝ նախատեսված 634-ի փոխարեն: Տնտեսումը պայմանավորված է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների գնման ընթացակարգերի մի մասը դատարանի վճռով կասեցնելու և փաստացի դիմած հաշմանդամների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքներով: Նշվածով պայմանավորված՝ արձանագրվել է նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի 9.7%-ով անկում:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 70.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում 3 հիվանդությունների գծով անվճար բժշկական օգնություն է տրամադրվել 318 հիվանդի, ինչպես և նախորդ տարի:

Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման համար օգտագործվել է 27.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի նպատակը մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երիտասարդների ու պատանիների սոցիալական վերականգնումն է ցերեկային կենտրոնում ծառայությունների մատուցման միջոցով: Ծրագիրն իրականացվում է ««Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից, որտեղ սպասարկվում է 50 շահառու: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին կատարվել է կենտրոնի 24 աշխատողի աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի, կապի և տրանսպորտային

նյութերի ծախսերի վճարում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 71.9 մլն դրամ կամ նախատեսվածի 75.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշմամբ հաշմանդամների սայլակները և լսողական սարքերը պետական հավաստագրերի միջոցով ուշ ձեռք բերելու և փաստացի դիմած հաշմանդամների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքներով: 2017 թվականին հատկացվել է 200 հաշմանդամի սայլակ՝ նախատեսված 600-ի փոխարեն, և 285 շահառուի հատկացվել է հավաստագիր մինչև 2018 թվականի փետրվարի 15-ը ստանալու պայմանով, 491 լսողական սարք՝ նախատեսված 1100-ի փոխարեն, և 207 շահառուի հատկացվել է հավաստագիր մինչև 2018 թվականի փետրվարի 15-ը ստանալու պայմանով, և 400 լսողական սարքերի ներդիր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.9%-ով կամ 9.7 մլն դրամով:

Եվրոպական արտադրության կամ դրան համարժեք լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի տրամադրման ծախսերը կազմել են 13.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 83%-ը և 7.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է լսողական սարքեր ստանալու նպատակով փաստացի դիմած անձանց քանակով: Ծրագրի շրջանակներում լսողական խնդիրներ ունեցող հաշմանդամներին և տարեցներին լսողական սարքեր ձեռք բերելու նպատակով տրամադրվել է 166 հավաստագիր՝ նախատեսված 200-ի և 2016 թվականին տրամադրված 180-ի փոխարեն:

Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը ցերեկային կենտրոնում իրականացնելու նպատակով «Լիարժեք կյանք» ՀԿ-ին փոխհատուցվել են 13 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը, որոնք կազմել են 11.5 մլն դրամ (99.4%): Միջոցներն օգտագործվել են 60 հաշմանդամ դեռահասների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով՝ պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի հատկացմամբ:

«Աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնում» ծրագրին տրամադրվել է 26.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Միջոցները տրամադրվել են «Աուտիզմ Ազգային Հիմնադրամ» ԲՀԿ-ին՝ 18 տարին լրացած աուտիզմ ունեցող 80 դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության ու սոցիալ-հոգեբանական

ծառայությունների տրամադրման նպատակով, փոխհատուցվել են 30 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականից:

Ծերության դասի ծրագրերին 2017 թվականին տրամադրվել է 296.5 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրի 99.8%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.8%-ով՝ հիմնականում պայմանավորված «Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում» և «Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը հաշվետու տարում կազմել են 25.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6%-ով կամ 1.4 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է թոշակառուների թվի աճով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 592.6 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 8.4%-ով կամ 54.2 մլն դրամով, որը բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվի նվազման հանգամանքով:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող սոցիալական նպաստների ծախսերը կատարվել են 100%-ով և կազմել 13.9 մլրդ դրամ: 2016 թվականի համեմատ դրանք աճել են 1.1%-ով կամ 148.8 մլն դրամով, որը բացատրվում է սոցիալական նպաստառուների թվի աճով:

ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են 2.5 մլրդ դրամ, ապահովելով 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7%-ով կամ 64.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուների թվի աճով:

Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է շուրջ 2 մլրդ դրամ՝ ապահովելով 94.2% կատարողական: Տնտեսումը պայմանավորված է տարեցների շուրջօրյա խնամք և սպասարկում իրականացնող 5 կազմակերպությունների կողմից նախատեսվածի նկատմամբ փաստացի պակաս թվով տարեցների սպասարկելու (1210 շահառուի փոխարեն 1173 շահառու), գնումների գծով մրցույթների արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսման և կոմունալ ծախսերի որոշակի հոդվածների տնտեսման հանգամանքներով: Հիմնականում դրանով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.8%-ով: Սույն ծրագրի նպատակն է՝ շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրել դրանց կարիքն ունեցող տարեց և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած

անձանց՝ նրանց համար ապահովելով արժանապատիվ կենսապայմաններ: Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունները ներառում են կացարանի, կենսապահովման համար անհրաժեշտ պայմանների, սնունդով, հագուստով, կոշկեղենով, անկողնային պարագաներով ապահովումը, բժշկական օգնության ու սպասարկման, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրումը, մշակութային միջոցառումների կազմակերպումը և այլն:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով նախատեսված հատկացումներն օգտագործվել են 97.8%-ով՝ կազմելով 140.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվում է միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ տնային պայմաններում, գնահատված կարիքներին համարժեք խնամքի ծառայությունների տրամադրումը, նրանց կյանքի որակի բարելավումը: Միջոցառման շրջանակում «Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով ծառայություններ են մատուցվում Երևան քաղաքում բնակվող միայնակ տարեց ու հաշմանդամություն ունեցող շուրջ 1500 անձի: Ծրագրից շեղումը պայմանավորված է փաստացի սպասարկվող շահառուների՝ նախատեսվածից պակաս թվով (1500 շահառուների փոխարեն 1424 շահառու) և կոմունալ ծախսերի որոշակի հոդվածների տնտեսմամբ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով 2017 թվականին տրամադրվել է 6.7 մլն դրամ պետական աջակցություն, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 37.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ում գործող ցերեկային կենտրոնի փաստացի սպասարկվող շահառուների՝ նախատեսվածից պակաս քանակով (30 շահառուների փոխարեն 14 շահառու) և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է տվյալ ծախսերի 54.4%-ով անկում: Ծրագրի նպատակն է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնումը և նրանց կյանքի որակի բարելավումը: Ցերեկային կենտրոնում սպասարկվում են ակտիվ բուժման կարիք չունեցող՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, որոնց տրամադրվում են սոցիալ-հոգեբանական օգնության և հոգեկան առողջության վերականգնման տարբեր ծառայություններ՝ նաև աշխատանքային թերապիայի միջոցով նպաստելով նրանց սոցիալական ներառմանը հասարակություն:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում ու տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով տրամադրվել է շուրջ 221.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսված միջոցների 99.4%-ը: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Առաքելություն» ՀԿ-ի 3590

միայնակ տարեցների և հաշմանդամներին տնային պայմաններում և ցերեկային կենտրոնում սպասարկելու նպատակով փոխհատուցվում են 182 աշխատողների նվազագույն աշխատավարձերը, և 1662 տարեցներ ապահովվում են օրական մեկանգամյա սննդով: Տնտեսումը պայմանավորված է սննդամթերքից օգտվող շահառուների՝ նախատեսվածից պակաս թվով (1692 շահառուների փոխարեն 1662 շահառու, մեկ շահառուի մեկ օրվա սննդամթերքի արժեքը՝ 144 ՀՀ դրամ): Նշված ծախսերը 2016 թվականի նկատմամբ աճել են 2.8%-ով, որը պայմանավորված է 2017 թվականից ուժի մեջ մտած՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի հատկացմամբ:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն աշխատանքային կենսաթոշակների ծախսերը, որոնք կազմել են 220.7 մլրդ դրամ և օգտագործվել են 99.8%-ով: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.8%-ով կամ 1.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուների թվի նվազման, ինչպես նաև «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի լիարժեք ներդրման, վարչարարության ուժեղացման (վճարումների հասցեականության ապահովման) հանգամանքներով:

Վանաձորի տարեցների տանը խնամվողների շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագրին հատկացված միջոցները կազմել են 24 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Վանաձորի տարեցների տուն» ՀԿ-ին 55 տարեցների խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով վճարվել է 27 հաստիքային միավորների աշխատավարձը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.8%-ով՝ պայմանավորված 2017 թվականից ուժի մեջ մտած «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի հատկացմամբ:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում 2017 թվականին ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 31.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցները նախատեսվել են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնակցի համար կուտակային վճարի սահմանված չափը լրացնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.2%-ով կամ 5.7 մլրդ դրամով՝ պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցների թվի աճով:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից *«Հարազատին կորցրած անձինք»* դասի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 5.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.6%-ով:

Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի գծով ծախսերը կազմել են 160.8 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական և 9.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է փաստացի պահանջի աճով:

Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ծախսերը կազմել են 4.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը՝ 0.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 73.6%-ով՝ կազմելով 43.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 18.1%-ով:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 63.8 մլրդ դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով կամ 502.3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է մայրության նպաստների գծով ծախսերի աճով:

Խմբի ծախսերի զգալի մասը՝ շուրջ 36.8 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.4%-ը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին փաստացի նպաստ են ստացել ամսական միջինը 101870 ընտանիք՝ նախատեսված 101169 ընտանիքի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 122.4 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ, որոնք ֆինանսավորվել են ներկայացված հայտերին համապատասխան՝ կազմելով նախատեսվածի 29.1%-ը և 59%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

2017 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Սույն ծրագրով փաստացի երեխայի խնամքի նպաստ է ստացել ամսական միջին հաշվով 11654 երեխա: 2016 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 1.5%-ով, որը պայմանավորված է երեխաների թվի (ծնունդների) նվազման հանգամանքով:

Մայրության նպաստի գծով ծախսերը կազմել են 10.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2016 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 11.2%-ով կամ շուրջ 1.1 մլրդ դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվին ապահովադիրների մոտ տեղերում կատարված ծախսերը փոխհատուցվել են 2017 թվականի առաջին եռամսյակի ընթացքում:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է շուրջ 10.2 մլրդ դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: 2016 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 0.7%-ով՝ հիմնականում պայմանավորված երրորդ և հաջորդ երեխաների ծնունդների թվի աճով:

2017 թվականին վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 67.3%-ով, որոնք կազմել են 370.3 մլն դրամ՝ նախորդ տարվա 542.3 մլն դրամի դիմաց:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.7%-ը: Ծրագիրն իրականացվել է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունների կողմից, որոնցում 2017 թվականին խնամվել է միջինը 617 երեխա՝ նախատեսված 649-ի դիմաց: Ծրագրված ծախսերից շեղումը պայմանավորված է ինչպես երեխաների թվով, այնպես էլ գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.6%-ով՝ հիմանականում պայմանավորված խնամվող երեխաների թվի նվազմամբ:

Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 98.3%-ով՝ կազմելով 22.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում «Առավոտ» ՀԿ-ի միջոցով ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել են 60 երեխաների՝ խնամքի հաստատություններից բեռնաթափման և 40 երեխաների՝ նշված հաստատություններ մուտքի կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով:

Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների մատուցման ծախսերը կազմել 203.6 մլն դրամ կամ նախատեսվածի 85.5%-ը: Ծրագրի շրջանակներում չորս ցերեկային կենտրոններում իրականացվել է միջին հաշով 270 երեխաների ցերեկային խնամք՝ նախատեսված 300-ի փոխարեն: Ծրագրված ծախսերից շեղումը

պայմանավորված է ինչպես երեխաների թվով, այնպես էլ գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 16.4%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը 2016 թվականի 4-րդ եռամսյակում ֆինանսավորվել է սույն ծրագրի շրջանակներում, իսկ 2017 թվականի պետական բյուջեում այն նախատեսվել է որպես առանձին ծրագիր:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերը Հայաստանի Հանրապետության կողմից ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններին տրամադրվել է 698.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.5%-ով կատարում: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին 6 գիշերօթիկ հաստատությունների կողմից իրականացվել են տարեկան միջինը 375 շահառուների խնամքի աշխատանքներ՝ նախատեսված 600-ի դիմաց: Ծրագրված ծախսերից շեղումը պայմանավորված է ինչպես երեխաների թվով, այնպես էլ գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.9%-ով՝ պայմանավորված շահառուների թվի կրճատման հանգամանքով:

2017 թվականին երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 74.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով, և այն իրականացնող «Հույսի կամուրջ» ՀԿ-ին 4 ցերեկային կենտրոններում 250 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով կատարվել են 84 հաստիքային միավորների աշխատավարձերի վճարումները: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.8%-ով:

Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրումը կազմել է 37 մլն դրամ կամ նախատեսվածի 94.1%-ը, որը պայմանավորված է խնամատար ընտանիք տեղափոխվող երեխաների՝ նախատեսվածից պակաս քանակով. 25 շահառուի փոխարեն ծրագրից օգտվել է 24 շահառու: Նշված ծախսերը 2016 թվականի նկատմամբ աճել են 32.7%-ով՝ պայմանավորված երեխաների թվաքանակի աճի հանգամանքով:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրման նպատակով հաշվետու տարում օգտագործվել է շուրջ 4 մլն դրամ կամ նախատեսվածի 69.3%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի

երեխաների գրպանի ծախսերի համար: Շեղումը պայմանավորված է 195 երեխաների փոխարեն տարեկան միջին փաստացի 134 դպրոցահասակ երեխաների դրամական աջակցություն տրամադրելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.9%-ով՝ պայմանավորված երեխաների թվի նվազմամբ, որը նախորդ տարի կազմել էր 153:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 650 հազար դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 160% աճը պայմանավորված է շահառուների փաստացի քանակով. այն կազմել է 13՝ նախորդ տարվա 5-ի դիմաց:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 20.2 մլն դրամ, որն իրականացվել է 98.9%-ով: Սույն ծրագիրը հանդիսանում է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» ծրագրի բաղադրիչ մասը: Ծրագրի շրջանակներում 100 շահառուի (60 կենսաբանական և 40 կանխարգելված ընտանիքների) տրամադրվել է բնաիրային օգնության փաթեթ: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 1.2%-ով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի՝ Հայաստանի Հանրապետության կողմից փոխհատուցումը կազմել է 3.2 մլն դրամ (100%): 2016 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը ևս ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 7.2 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ այս ծախսերը նույնպես չեն փոփոխվել:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 30.7 մլն դրամ կամ տարեկան ծրագրի 87.6%-ը: Ծրագրի շրջանակներում 3-18 տարեկան երեխաներին մինչև 6 ամիս ժամկետով տրամադրվում են շուրջօրյա խնամքի ծառայություններ: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախատեսված 17 երեխայի փոխարեն 15 երեխա խնամելու հանգամանքով և գնումների գծով հայտարարված մրցույթների արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.2%-ով՝ պայմանավորված շահառուների թվի նվազման հանգամանքով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի 08.06.2012թ. Գործ N ԵԴԿ /1247/02/10/ վճռի համաձայն կերակրողին

կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը Հայաստանի Հանրապետության կողմից կազմել է 369.4 հազար դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Տվյալ ծախսերը պահպանվել են նախորդ տարվա մակարդակին:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցմանը տրամադրվել է 26.4 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով փոխհատուցվում են Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզի 18 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը՝ 24 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու համար: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայությունները կազմել են 71.4 մլն դրամ կամ նախատեսվածի 61.7%-ը: Տնտեսումը պայմանավորված է նախատեսված 100 երեխաների փոխարեն 91 երեխա ցերեկային կենտրոն հաճախելու հանգամանքով, ինչպես նաև գնումների գծով հայտարարված մրցույթների արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսմամբ և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականից:

2017 թվականին պետական բյուջեից 498 մլն դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 57.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման և ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրման ծախսերի ցածր կատարողականով: 2016 թվականի համեմատ գործազրկության բնագավառի ծախսերը նվազել են 75%-ով՝ հիմնականում պայմանավորված սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության ծրագրի ավարտով:

Հաշվետու տարվա ընթացքում աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական աջակցությունը կազմել է շուրջ 10.7 մլն դրամ կամ ծրագրի 96.1%-ը և 79.8%-ով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեությանն աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է: ՀՀ կառավարության Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում կատարված փոփոխության համաձայն ֆինանսավորվել են միայն 2016 թվականին սկսված և 2017 թվականին շարունակվող ծրագրերը:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության ծախսերը կազմել են 21.1 մլն դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը և 82.9%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Այս ծրագրի շրջանակներում նույնպես Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում կատարված փոփոխության համաձայն ֆինանսավորվել են միայն 2016 թվականին սկսված և 2017 թվականին շարունակվող ծրագրերը:

Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 47.5 մլն դրամ կամ նախատեսվածի 59.1%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերը նվազել են 59%-ով: ՀՀ կառավարության Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում կատարված փոփոխության համաձայն ֆինանսավորվել են միայն 2016 թվականին սկսված և 2017 թվականին շարունակվող ծրագրերը:

Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 27.3 մլն դրամ՝ ապահովելով 91.1% կատարողական և 6.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագիրն իրականացնող «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերակազմակերպմամբ, որը միացել է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծախսերը կազմել են շուրջ 40 մլն դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: Ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է: Ծրագրի շահառուներն են գործազուրկները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 31%-ով՝ պայմանավորված Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում կատարված փոփոխությամբ, որի համաձայն ֆինանսավորվել են միայն 2016 թվականին սկսված և 2017 թվականին շարունակվող ծրագրերը:

2017 թվականին աշխատանքի տոնավաճառի կազմակերպմանը տրամադրվել է 8.4 մլն դրամ, որն իրականացվել է 99.9%-ով և նախորդ տարվա համեմատ աճել 9.2%-ով: Ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով մի կողմից աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրման ապահովումը: 2017 թվականի ընթացքում կազմակերպվել է 12 տոնավաճառ՝ նախորդ տարվա 11-ի դիմաց:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների ծրագիրն իրականացվում է «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ 540 հաշմանդամ անձանց մասնագիտական կողմնորոշման ձևավորման ու աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան աշխատանքային ունակությունների վերականգնման, ինչպես նաև լիարժեք կյանքին նրանց ինտեգրման նպատակով: Նշված ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 12.1 մլն դրամ կամ նախատեսվածի 64.8%-ը և 28.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 1159–Ն որոշմամբ «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարմամբ:

Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին տրամադրվել է շուրջ 111.2 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 67% կատարողական: Ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է: Հաշվետու տարում ծրագրում ընգրկվել է 511 գործազուրկ՝ նախատեսված 654 անձի փոխարեն: Նշված հանգամանքով է պայմանավորված տվյալ ծրագրի կատարողականը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 25.5% նվազումը:

2017 թվականին աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին տրամադրվել են 178 մլն դրամ միանվագ փոխհատուցումներ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 40.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է ծրագրի իրականացման կարգի փոփոխությամբ. նախկինում մեկ ծրագրի իրականացման համար նախատեսված 200.0 հազար դրամի փոխարեն տրամադրվող գումարի չափն այժմ տատանվում է 50.0-200.0 հազար դրամի սահմաններում՝ կախված անձի անմրցունակության աստիճանից: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 20.4%-ով կամ 30.2 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվի աճով:

2017 թվականին աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար նախատեսված էր 300 հազ. դրամ աջակցության տրամադրում: Ծրագրով նախատեսված էր ընդգրկել 2 անձ, սակայն փաստացի ծրագրում շահառու չի ընդգրկվել:

Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրման ծախսերը կազմել են 23.6 մլն դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Ծրագրով ընդգրկվել է 172 գործազուրկ: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 69.5%-ով: ՀՀ կառավարության կողմից Զաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում կատարված փոփոխության համաձայն՝ ֆինանսավորվել են միայն 2016 թվականին սկսված և 2017 թվականին շարունակվող ծրագրերը:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար տրամադրված աջակցությունը կազմել է 13.7 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական և նախորդ տարվա համեմատ նվազելով 65.8%-ով: Վերջինս պայմանավորված է ՀՀ կառավարության որոշմամբ Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում կատարված փոփոխությամբ, որի համաձայն ֆինանսավորվել են միայն 2016 թվականին սկսված և 2017 թվականին շարունակվող ծրագրերը:

«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ իրականացնելու նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 4.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 83.6%-ը: ՀՀ կառավարության որոշմամբ Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում կատարված փոփոխությամբ, որի համաձայն ֆինանսավորվել են միայն 2016 թվականին սկսված և 2017 թվականին շարունակվող ծրագրերը՝ 74 անձի ընդգրկմամբ: 2016 թվականին տվյալ ծրագրի շրջանակներում միջոցներ չէին օգտագործվել:

Բնակարանային ապահովման խմբի ծրագրերին ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 97.6% կատարողական: Միջոցների գերակշիռ մասը՝ 1.5 մլրդ դրամ՝ (98.7%) ուղղվել է զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են շուրջ 3 անգամ, ինչով էլ պայմանավորված բնակարանային ապահովման խմբի ծախսերն աճել են 3.1 անգամ:

««Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի ննջարանային մասնաշենքի տարածքում բնակվող ընտանիքներին բնակարանով ապահովման նպատակով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 79.3 մլն դրամ՝ ապահովելով 81% կատարողական: Ծախսերի կատարողականը պայմանավորված է նրանով, որ նախատեսված 9 ընտանիքներից բնակարանի գնման վկայագիր է հատկացվել 8-ին: Այս նպատակով 2016 թվականին պետական բյուջեից միջոցներ չէին հատկացվել:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 13.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.8% կատարողական և 3.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է Հայրենական Մեծ պատերազմի (ՀՄՊ) մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների և վետերանների պատվովճարների գծով ծախսերի նվազմամբ:

2017 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին տրամադրվել է 348 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 25.5%-ով՝ պայմանավորված ՀՄ պատերազմի վետերանների թվի նվազման (մահացության) հանգամանքով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին տրամադրվել է 31.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 9.8%-ով, որը պայմանավորված է փախստականների թվի նվազման հանգամանքով: 2017 թվականին փախստականների թիվը կազմել է 624՝ 2016 թվականի 775-ի դիմաց:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2017 թվականին տրամադրվել է 25 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 22.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից հատկացված գումարը հաշվարկված է եղել տարեկան 40 ապաստան հայցողի համար՝ յուրաքանչյուրին 90 օր կեցության ապահովման հաշվարկով, սակայն 2017 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում ապաստան հայցողների մեծ մասի վերջնական հարցը լուծում է ստացել շուրջ 120 օրվա ընթացքում:

ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարները կազմել են 11.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՄՊ մասնակից վետերանների թվի նվազման (մահացություն) հանգամանքով:

Հաշվետու տարվա ընթացքում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների շրջանակներում 56.1 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ին, որն իրականացրել է 100 անօթևանների շուրջօրյա խնամք և սպասարկում: Ծախսերը կազմել են տարեկան ծրագրով նախատեսված գումարի 99.1%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ ավանդի փոխհատուցման իրավունք ունեն սոցիալապես անապահով տարեց, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» անապահովության միավորից բարձր անապահովության միավոր ունեցող մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձինք, ինչպես նաև ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակից և սահմանամեձ բնակավայրերի բնակիչ ավանդատու անձինք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններին տրամադրվել է 42 մլն դրամ՝ ապահովելով 84.5% կատարողական: Տնտեսումը պայմանավորված է «Հանգրվան» ՊՈԱԿ-ի վերակազմակերպմամբ, որը միացել է «Երևանի թիվ 1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ-ին, ինչով էլ պայմանավորված՝ նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 12.1%-ով:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2017 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 27 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ:

Հաշվետու տարում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը կազմել են ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 98.1% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: 2016 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի բնականոն աճով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվել են 97.5%-ով և կազմել շուրջ 2.1 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով կամ 15.8 մլն դրամով:

Հաշվետու տարում 501 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից Երևան համայնքի ղեկավարին

պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 99.3%-ով: Հատկացված միջոցներով պետության կողմից Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարներին լիազորությունների պատվիրակման միջոցով նշված համայնքների աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային բաժինների գործունեության կազմակերպման համար ֆինանսավորվում են 237 հաստիքային միավորների աշխատավարձերը և պահպանման ծախսերը: 2016 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 0.5%-ով՝ պայմանավորված կոմունալ ծախսերի նվազմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 66.7%-ը:

Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում,
- Աշխատանքի և զբաղվածության ռազմավարություն,
- Կենսաթոշակային համակարգի արդիականացում,
- Սոցիալական աջակցության և մոնիտորինգի համակարգի բարելավում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2017 թվականին ավարտվել են Վանաձորի, Ամասիայի, Թալինի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, Զբաղվածության պետական գործակալության կենտրոնական գրասենյակի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները: Թվով 6 տարածքային կենտրոնների շինարարական աշխատանքները կշարունակվեն նաև 2018 թվականի ընթացքում:

Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Ստեփանավանի, Շենգավիթի և Հրազդանի Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՀՍԾՏԿ) պայմանագրերով նախատեսված շինվերանորոգման աշխատանքներն անժամկետ կասեցվել են՝ ՀՀ կառավարության նոր մոտեցմամբ պայմանավորված: Բացի այդ, խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով կնքված որոշ պայմանագրերում կատարվել են փոփոխություններ, որոնցով նախատեսված ծառայությունները տեղափոխվել են 2018 թվական: 2017 թվականին չեն կայացել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ), Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ), Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ԱՍՀԱԻ) և «Նորք» ՓԲԸ-ի կարիքների համար օդորակիչների գնման մրցույթները, ինչպես նաև Կենսաթոշակների էլեկտրոնային

տեղեկատվական համակարգի արդիականացման ապահովման, ՀՀ ԱՍՀՆ համակարգի կառավարման ներքին պորտալի մշակման և ներդրման մրցույթները, որոնք վերահայտարարվել են 2018 թվականին:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և Նիդերլանդների անվտանգության ու արդարադատության նախարարության միջև կնքված՝ Նիդերլանդներից վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման օգնության շրջանակներում խորհրդատվության և ուղղորդման ծառայության մատուցման մասին դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում 2017 թվականին օգտագործվել է 11.6 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 43.5%-ը: Կատարողականը պայմանավորված է շահառուների փաստացի քանակով, որին համապատասխան հատկացվել է նաև դոնոր կազմակերպության կողմից ֆինանսավորումը, ինչպես նաև եվրոյի՝ կանխատեսվածից ցածր փոխարժեքով: Ծրագիրը նախատեսված է Նիդերլանդներից հարկադիր վերադարձող Հայաստանի քաղաքացիների վերաինտեգրման շրջանակներում փոքր բիզնես սկսելուն կամ աշխատաշուկա մուտք գործելուն աջակցության, ուսումնական կամ մասնագիտական վերապատրաստման, սոցիալական, իրավական, բժշկական աջակցության, ժամանակավոր կացարանի տրամադրման, օդանավակայանում դիմավորման և անահատական այլ կարիքների համար: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 59.4%-ով:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասի ծախսերը կազմել են 21 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.1%-ը, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 46.4%-ով՝ հիմնականում պայմանավորված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարների փոխանցումներով Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին:

2017 թվականին փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 14 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով 100% կատարողական: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 63.7-ով՝ պայմանավորված «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարմամբ:

Հաշվետու տարում պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 9.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 88.2%-ը, որը պայմանավորված է շահառուների փաստացի թվով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 3.2 մլն դրամ: Նշված ծախսերը կատարվել են 76.9%-ով՝ պայմանավորված մրցույթի արդյունքում ձևավորված գներով: 2016 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 6.7%-ով՝ պայմանավորված որոշ ձևաթղթերի քանակի նվազմամբ:

Սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների գծով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 9.1 մլն դրամ՝ ապահովելով 84.6% կատարողական, որը պայմանավորված է մրցույթի արդյունքում ձևավորված գներով: 2016 թվականին այս նպատակով միջոցներ չէին հատկացվել:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 89.5 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվել են հետազոտություններ, մշակվել ձեռնարկներ և կազմակերպվել սոցիալական ոլորտի 700 աշխատողների մասնագիտական ուսուցում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեքբերմանը տրամադրվել է 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 8.5%-ով աճը հիմնականում պայմանավորված է 2017 թվականին 13 ամսվա գումարների վճարման հանգամանքով:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 20.8 մլն դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում պատրաստվել ու հեռարձակվել է 25 հեռուստահաղորդում, տպագրվել են 500 հատ գրքույկ, 1000 հատ պաստառ, 1000 հատ բուկլետ, 500 հատ տեղեկագիր և մատուցվել են 1400 հատ լուսանկարչական ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.6%-ով՝ պայմանավորված հանրային իրազեկման աշխատանքների ծավալի նվազմամբ:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերը կազմել են շուրջ 2.7 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.7%-ով՝ հիմնականում պայմանավորված 2016 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների պարտավորությունները 2017 թվականի առաջին եռամսյակում մարելու հանգամանքով:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 2.9 մլն դրամ՝ ապահովելով 16.9% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է գործուղման ծախսերի համար նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Հիմնականում նշվածի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 84.1%-ով:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության ծախսերը կազմել են 7.6 մլն դրամ կամ նախատեսվածի 68.6%-ը՝ պայմանավորված ձևաթղթերի փաստացի պահանջով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 498 հազար դրամ՝ կազմելով նախատեսվածի 45.2%-ը, որը նույնպես պայմանավորված է ձևաթղթերի փաստացի պահանջով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով և կազմել 19.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում սոցիալ-հոգեբանական ծառայություններ են մատուցվել 8 շահառուի: Ծրագիրն իրականացվում է «Ամքոր» ՀԿ-ի հետ համաֆինանսավորման սկզբունքով, փոխհատուցվում են 14 աշխատողների աշխատավարձերը և տարածքի վարձակալության ծախսերը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 1.2%-ով՝ պայմանավորված 2017 թվականից ուժի մեջ մտած «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի հատկացմամբ:

Հաշվետու տարում շուրջ 7 մլն դրամ է տրամադրվել զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որոնք կատարվել են 99.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2017 թվականին պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն

ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 314 մլն դրամ: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվել են սոցիալական պաշտպանության ոլորտի 13 տեղեկատվական համակարգերի վարում, սպասարկում, արդիականացում, տվյալների տրամադրում, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում գործող սոցիալական ապահովության պետական ծառայության և նրա տարածքային բաժինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների շուրջ 6000 համակարգչային տեխնիկայի սպասարկում, վերանորոգման ծառայությունների մատուցում և սոցիալական պաշտպանության ոլորտում գործող թվով 6 վեբկայքերի սպասարկում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.5%-ով՝ պայմանավորված ինտերնետ կապի տրամադրումը ՀՀ կառավարության կողմից կենտրոնացված իրականացնելու հանգամանքով:

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 42 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 18.2 մլն դրամ և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայությունների համար նախատեսված միջոցները նախատեսված ծավալով օգտագործվել են՝ կազմելով 17.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

775.3 հազար դրամ է տրամադրվել զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքների անդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայություններին, որը կազմել է նախատեսված միջոցների 50.1%-ը՝ պայմանավորված վճարումների որոշակի մասը բանկային համակարգի միջոցով իրականացնելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.2%-ով՝ պայմանավորված 2017 թվականին 13 ամսվա (2016 թվականի դեկտեմբեր և 2017 թվականի հունվար-դեկտեմբեր) ծախսերի ֆինանսավորմամբ:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում օգտագործվել է 441.8 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով օգտագործվել է շուրջ 19.2 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 16.7%-ով՝ պայմանավորված վճարումները առավելապես բանկային համակարգի միջոցով կատարելու հանգամանքով:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության իրականացման ապահովման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր հատկացնել 5.8 մլն դրամ, իսկ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության իրականացման ապահովման նպատակով՝ 1 մլն դրամ: Նշված միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության՝ Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրում նշված ծրագրերը չեն ներառվել:

Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներին հաշվետու տարում տրամադրվել է 44.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.3%-ով, որը պայմանավորված է փաստացի մատուցված ծառայությունների ծավալով:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության ենթակայության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված ապաստան հայցողներին դրամական օգնության տրամադրման համար հաշվետու տարում նախատեսված 1.3 մլն դրամը չի օգտագործվել, որը պայմանավորված է շահառուների բացակայությամբ:

Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրումը կազմել է 1 մլն դրամ կամ նախատեսվածի 57.1%-ը: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հետ կապված՝ 4 անձի կրած վնասների մասնակի դրամական փոխհատուցում՝ նախատեսված 7 անձի փոխարեն: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականից:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին փոխանցումները կազմել են 5.9 մլրդ դրամ (100%): «Հայատանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի փոխհատուցման մասին» ՀՀ օրենքի նպատակը Հայատանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների հատուցումն ապահովելու հատուկ համակարգի ներդրումն է: Ծրագիրը մեկնարկել է 2017 թվականից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող Սոցիալական ոլորտի բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի

շրջանակներում օգտագործվել է 111.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 99.9%-ը: Ծրագրի նպատակն ու ակնկալվող հիմնական արդյունքը սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի ներդրումն է, «Այ Բի Էմ» սոցիալական ծառայությունների «Կուրամ» համակարգի հենքի վրա տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոնի գործարկումն է, որը հնարավորություն կտա ոչ միայն Հայաստանում ունենալ սոցիալական ոլորտը սպասարկող ժամանակակից տեխնոլոգիաներ, այլ նաև վերջիններս արտահանել այլ երկրներ: Սույն բաղադրիչի իրականացման նպատակով կնքվել է պայմանագիր ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի հետ:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցվելիք նոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 113.1 մլն դրամ, որը կազմել է 94.8%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներն օգտագործվել են «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքում կառուցված նոր մասնաշենքի հիմնական միջոցների ձեռք բերման նպատակով: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՊՈԱԿ-ի հին մասնաշենքի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային աշխատանքները չիրականացնելու և հիմնական միջոցներից 72 հատ շարժական սեղանի գնման համար հայտարարված ընթացակարգը չկայանալու հանգամանքով:

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 23 մլրդ դրամ կամ նախատեսվածի 80%-ը: Տրամադրված միջոցներից 15.3 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 74.8%-ը, 7.7 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 92.9% կատարողական: 2016 թվականի համեմատ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծախսերն աճել են 52.1%-ով:

Հույժ գաղտնի

ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեն կատարվել է 267 մլրդ դրամ պակասուրդով՝ 11.2%-ով գերազանցելով տարեկան ճշտված ծրագիրը: Պակասուրդի ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է եկամուտների նկատմամբ ծախսերի առավել բարձր կատարողականով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում ձևավորված ազատ միջոցներից օգտագործումը կազմել է 22.1 մլրդ դրամ՝ տարեկան ծրագրով նախատեսված 14.4 մլրդ դրամով աճի փոխարեն: Նշենք, որ 2016 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր շուրջ 278 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2016 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 3.9%-ով՝ պայմանավորված ծախսերի նկատմամբ եկամուտների առաջանցիկ աճով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2017 թվականին կազմել է 4.8%՝ կանխատեսված 2.8%-ի և 2016 թվականի 5.5%-ի դիմաց: Առանց «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի՝ պակասուրդ / ՀՆԱ ցուցանիշը 2017 թվականին կազմել է 3.2%՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց: 2016 թվականի համեմատ որոշ չափով փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 38.6 և 61.4 տոկոսը, ապա 2017 թվականին նշված ցուցանիշները կազմել են 26.4 և 73.6 տոկոս:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման *ներքին աղբյուրները* կազմել են 70.6 մլրդ դրամ՝ նախատեսված 21.6 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր 107.2 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում 45.7 մլրդ դրամ են կազմել *փոխառու զուտ միջոցները*՝ նախատեսված 45 մլրդ դրամի դիմաց: 2017 թվականին ծրագրով նախատեսված էր պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորել 45 մլրդ դրամով: Այդ նպատակով նախատեսվում էր տեղաբաշխել 160 մլրդ դրամ ծավալով պարտատոմսեր և մարել 110.4 մլրդ դրամի պարտատոմսեր, ինչպես նաև շարունակել ամենամսյա հետգնումների քաղաքականությունը: Հաշվետու տարվա ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին պակասուրդը փաստացի ֆինանսավորվել է 45.7 մլրդ դրամով՝ 1.6%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է գանձապետական պարտատոմսերից մուտքերի տեղաբաշխման ծավալների ճշգրտմամբ:

Ընդհանուր առմամբ տեղաբաշխվել են 182.5 մլրդ դրամի պարտատոմսեր, և տեղաբաշխումից ստացված մուտքը կազմել է 183.2 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի մարմանը և հետգնմանն ուղղվել է 137.5 մլրդ դրամ:

2017 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 13.09%՝ 2016 թվականի 13.15%-ի դիմաց, պարտքի ժամկետայնությունը՝ 2787 օր (2016թ.՝ 2208 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2047 թվականն է: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 549.7 մլրդ դրամ (2016թ.՝ 508.3 մլրդ դրամ): Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 22.6 մլրդ դրամ կամ 4.1% (2016թ.՝ 78.8 մլրդ դրամ կամ 15.5%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 241.4 մլրդ դրամ կամ 43.9% (2016թ՝ 212.7 մլրդ դրամ կամ 41.8%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 282.5 մլրդ դրամ կամ 51.4% (2016թ.՝ 214.7 մլրդ դրամ կամ 42.2%), խնայողական պարտատոմսերինը՝ 3.17 մլրդ դրամ կամ 0.6% (2016թ.՝ 2.15 մլրդ դրամ կամ 0.4%):

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող գանձապետական պարտատոմսերի 98.2%-ը (540 մլրդ դրամ) ձեռք են բերվել ռեզիդենտների կողմից, իսկ մնացած 1.8%-ը (9.7 մլրդ դրամ)՝ ոչ ռեզիդենտների կողմից:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 619.5 մլրդ դրամ, այդ թվում՝

- ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 540 մլրդ դրամ.
- ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 75.1 մլրդ դրամ.
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված ներքին երաշխիքների ծավալը կազմել է շուրջ 4.4 մլրդ դրամ:

Մուրհակների մարման նպատակով նախատեսված 2.2 մլն դրամ վճարումներն ամբողջությամբ կատարվել են:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում *ներքին ֆինանսական զուտ ակտիվները* կազմել են 24.8 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված ծրագրով նախատեսված -23.4 մլրդ դրամի դիմաց:

Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով 2017 թվականին նախատեսված 102.2 մլրդ դրամի դիմաց բաժնետիրական ընկերությունների կանոնադրական

կապիտալի ավելացման համար հատկացվել է 101.9 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը պայմանավորված է ԱՄՆ դոլարի՝ կանխատեսվածից ցածր փոխարժեքով:

2017 թվականին ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 23.2 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 68.4%-ը: Միջոցները տրամադրվել են արտաքին աղբյուրներից ստացվող վարկային և դրամաշնորհային նպատակային ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին տրամադրվել են 13.9 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 89.5%-ը, ինչը պայմանավորված է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի միջև կնքված պայմանագրերը ՌԴ ֆինանսների նախարարության կողմից ուշ հաստատելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են էներգաբլոկի ուսումնասիրման խորհրդատվական ծառայությունների, կատարված շինարարական աշխատանքների, մատակարարված սարքավորումների և սահմանված կարգով նախատեսված հարկերի ու տուրքերի դիմաց:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվել է 1.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 39%-ը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կատարվել է ծրագրով նախատեսված մի շարք վարկային միջոցների մասհանման կապակցված ցուցանիշների (ՄԿՑ-ներ) առաջանցիկ վճարում: Ծրագրի նպատակն է աջակցել էլեկտրաէներգիայի համարժեք և հուսալի մատակարարման պահպանման ջանքերին՝ էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների և էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակը բարելավելու համար: Միջոցները տրամադրվել են «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ներին, որոնք «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ծախսվել են առևտրային վարկերի մարման և ձեռքբերված միջուկային վառելիքի դիմաց, իսկ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից մարվել են առևտրային վարկերը և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած բնական գազի պարտքերը:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում 893.7 մլն դրամ ենթավարկ է տրամադրվել «Բարձրավորլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 25.6%-ը: Վերջինս պայմանավորված է ծրագրի գլխավոր կապալառուների կողմից հաշիվ ապրանքագրերի ուշ ներկայացմամբ՝ թեև աշխատանքներն իրականացվել են ժամանակին: Մնացած վճարումներն իրականացվել են 2018 թվականին: Ծրագրի նպատակն է՝ բարելավել էլեկտրացանցի հուսալիությունը, թողունակությունը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Այն կարևոր նշանակություն ունի հանրապետությունում հուսալի

էլեկտրամատակարարում ապահովելու գործում: 2017 թվականի ընթացքում նշված վարկային միջոցների հաշվին շարունակվել և ավարտին են հասցվել ՀՀ էներգահամակարգի հուսալիության բարձրացման նպատակով կառուցվող շուրջ 230 կմ երկարությամբ «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» 220 կՎ էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման աշխատանքները, և գծերը դրվել են լարման տակ: Իրականացվել է թերությունների վերացման և աշխատանքների ընդունման գործընթաց:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «Բարձրավորլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել են 988.8 մլն դրամի վարկային միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 19.8%-ը: Շեղումը պայմանավորված է գլխավոր կապալառուի կողմից հաշիվ ապրանքագրերի ուշ ներկայացմամբ՝ թեև աշխատանքներն իրականացվել են ժամանակին: Մնացած վճարումներն իրականացվել են 2018 թվականին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանները: Նպատակն է՝ բարելավել էլեկտրացանցի հուսալիությունը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցներն ուղղվել են ենթակայանների վերակառուցման աշխատանքների վերահսկողության խորհրդատվական ծառայությունների, կապալառուների իրականացրած շինարարական աշխատանքների, նախագծման, սարքերի ու սարքավորումների ներկրման դիմաց վճարումների իրականացմանը, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի վճարմանը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագրի շրջանակներում «Բարձրավորլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել է 425.3 մլն դրամ կամ նախատեսվածի 41.1%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2017 թվականին նախատեսվում էր ընտրել ենթակայանի շահագործման ու պահպանության համար մեքենամեխանիզմների և պահեստամասերի մատակարարման ծառայություն իրականացնող կազմակերպություն, կնքել պայմանագիր, կատարել կանխավճար և ձեռք բերել մեքենամեխանիզմներ և պահեստամասեր: Սակայն ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության գործընթացի երկարաձգմամբ պայմանավորված, կանխավճարն իրականացվել է 2017 թվականի դեկտեմբերի 29-ին: Մեքենամեխանիզմների և պահեստամասերի մատակարարումն իրականացվել է 2018 թվականին: Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիությունը, ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն ուղղվել են մեքենամեխանիզմների և պահեստամասերի ձեռքբերման նպատակով տեխնիկական մասնագրերի և մրցութային փաստաթղթերի պատրաստմանը, մրցութային

գործընթացի և հայտերի գնահատման խորհրդատվական ծառայություններին, ինչպես նաև մրցույթի արդյունքում ընտրված մատակարար կազմակերպությանը տրամադրվող կանխավճարի և սահմանված կարգով նախատեսված հարկերի ու տուրքերի վճարմանը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 4.7 մլրդ դրամ՝ ամբողջությամբ ապահովելով 2017 թվականի համար նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն նախատեսում է Որոտան համալիրի (Տաթև ՀԷԿ, Շամբ ՀԷԿ, Սպանդարյան ՀԷԿ) էլեկտրական և մեխանիկական համակարգերի հինգ (բացառությամբ Սպանդարյան ՀԷԿ-ի) էներգաբլոկների ամբողջական վերականգնում: Արդյունքում կբարելավվի հիդրոէլեկտրակայանների, դրանց բլոկների և հարակից սարքավորումների աշխատանքը, հուսալիությունը և հասանելիությունը՝ վերականգնելով այս կարևոր էներգաբլոկների ամբողջական ֆունկցիոնալությունը: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում միջոցները հատկացվել են Որոտան ՀԷԿ-երի համալիրի վերականգնման ծրագրի աշխատանքներն իրականացնող կապալառուներին կանխավճարների վճարման, ինչպես նաև խորհրդատվական և ինժեներական ծառայությունների դիմաց վճարման նպատակով:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի շրջանակներում ևս ամբողջությամբ ապահովվել է տարեկան ծրագիրը և կազմել 367.7 մլն դրամ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը ծրագրի իրականացման տարածքում՝ ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ: Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի շրջանակում շեշտը դրված է սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավմանը, վերաֆինանսավորման և ներդրումային գործիքների տրամադրմանը: 2017 թվականին իրականացվել է գնումների գործընթացը, տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացման և ծրագրի վարկային պրոդուկտների մշակման համար ընտրվել է խորհրդատվական կազմակերպություն:

Հաշվետու տարում ևս 706.4 մլն դրամ վարկ է տրամադրվել Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող գյուղական կարողությունների ստեղծման դրամաշնորհային ծրագրի միջոցներից՝ կազմելով նախատեսվածի 94.1%-ը, ինչը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի տատանմամբ: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի շրջանակներում

իրականացվում է այգեգործական վարկերի տրամադրում բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով:

Նախկինում տրամադրված ներքին վարկերի վերադարձից 2017 թվականին պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 127.9 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 100.6%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նախկինում տրամադրված վարկի գծով չմարված գումարներից շուրջ 433.5 մլն դրամի չափով 2017 թվականի ընթացքում մարելու հանգամանքով, որից 165 մլն դրամը մարվել է «Մասիսի Բերիություն» ՍՊԸ-ի կողմից, իսկ 334.5 մլն դրամը՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից, ինչպես նաև որոշ վարկերի գծով վաղաժամկետ մարումով: Հաշվետու տարվա ընթացքում վերադարձված վարկերի գումարից 68.8 մլրդ դրամը ստացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ից, 10.9 մլրդ դրամը՝ «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ից, 8.3 մլրդ դրամը՝ «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ից, 7.8 մլրդ դրամը՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ հիմնադրամից, 5.9 մլրդ դրամը՝ «Նոր Ակունք» ՓԲԸ-ից: 6.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ կենտրոնական բանկից՝ «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կարգավորման գրասենյակի կողմից տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի վերադարձից, որն իրականացվել է նախատեսված ծավալով:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է 22.1 մլրդ դրամ՝ նախատեսված 14.4 մլրդ դրամ ավելացման փոխարեն, որից կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից նախատեսված 3.4 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

2017 թվականին պետական բյուջեի պակասուրդն *արտաքին աղբյուրներից* ֆինանսավորվել է 196.5 մլրդ դրամով՝ 89.9%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Մասնավորապես՝ արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 233 մլրդ դրամ և 89.2%-ով ապահովել ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է ստացված վարկերի ծավալով:

Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 280.9 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ 90.9%-ով կատարելով ծրագիրը: Դա հիմնականում պայմանավորված է նպատակային վարկային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում ստացվել է շուրջ 176.6 մլրդ դրամ՝ նախատեսված 204.9 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 61.4 մլրդ դրամ ստացվել է միջազգային կազմակերպություններից՝ նախատեսված 87.4 մլրդ դրամի դիմաց և շուրջ 115.2 մլրդ դրամ՝ օտարերկրյա կազմակերպություններից՝ նախատեսված 117.5 մլրդ դրամի դիմաց: Եվս 104.3 մլրդ դրամ՝ նախատեսվածի չափով ստացվել է բյուջետային աջակցության վարկային ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես՝ 47.5 մլրդ դրամ է տրամադրվել Եվրասիական զարգացման բանկի բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում, 22.5 մլրդ դրամ՝ Գերմանիայի կառավարության Քաղաքականության վրա հիմնված բազմաոլորտային վարկի շրջանակներում, 19.1 մլրդ դրամ՝ ԱԶԲ Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագրի շրջանակներում, 14.3 մլրդ դրամ՝ ԱԶԲ ենթակառուցվածքների կայունության աջակցման

ծրագրի շրջանակներում և 950.7 մլն դրամ՝ ՀԲ Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 47.9 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 99.8%-ը: Տարբերությունը հիմնականում պայմանավորված է SDR-ի կանխատեսումային և 2017 թվականի ընթացքում փոխարկումների համար կիրառվող փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ, ինչպես նաև ըստ առանձին արտաքին վարկերի գծով ստացումների պլանի թերակատարմամբ, որոնց գծով սկսվել է իրականացվել մայր գումարի մարում, և մարման ենթակա գումարը փոխկապակցված է մարման օրվա դրությամբ փաստացի մասհանված և չմարված պարտքի մնացորդի հետ:

Նշված գումարից 18.8 մլրդ դրամն ուղղվել է Համաշխարհային բանկի, 11.1 մլրդ դրամը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, 8.3 մլրդ դրամը՝ այլ միջազգային կազմակերպությունների, 9.4 մլրդ դրամը՝ օտարերկրյա պետությունների, 359.9 մլն դրամը՝ առևտրային բանկերի նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը: Նախորդ տարվա համեմատ արտաքին վարկերի և փոխատվությունների մարմանն ուղղված փաստացի վճարումներն աճել են 42.2%-ով կամ 14.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությամբ և մի շարք վարկերի գծով արտոնյալ ժամկետների ավարտմամբ, ինչպես նաև հերթական մարման ենթակա գումարի (մասնաբաժնի) ավելացմամբ:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 85.7%-ով՝ կազմելով -36.5 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը պայմանավորված է վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդի 12.3 մլրդ դրամ օգտագործումով՝ նախատեսված 6.2 մլրդ դրամի փոխարեն:

2017 թվականին ամբողջությամբ տրամադրվել է ԼՂՀ-ի միջպետական վարկը, որը կազմել է 47.4 մլրդ դրամ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարումը նույնպես կատարվել է նախատեսված ծավալով՝ կազմելով 601.4 մլն դրամ:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է նախատեսված շուրջ 2 մլրդ դրամն ամբողջությամբ:

Հաշվետու տարում 12.3 մլրդ դրամն օգտագործվել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդի հաշվին, այդ թվում՝ 10.3 մլրդ դրամ օգտագործվել է ծրագրերի իրականացման գրասենյակներով շրջանառվող միջոցների մնացորդից և 2 մլրդ դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների մնացորդից:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 2,660.1 մլրդ դրամ (5,494.9 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 47.7%-ը՝

2016 թվականի 2,325.6 մլրդ դրամի (4,805.6 մլն ԱՄՆ դոլարի) և 45.8%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 2,368.9 մլրդ դրամը (4,893.4 մլն ԱՄՆ դոլարը) ՀՀ կառավարության պարտավորություններն են, 291.2 մլրդ դրամը (601.5 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքը բացարձակ արտահայտությամբ աճել է 689.3 մլն ԱՄՆ դոլարով (334.5 մլրդ դրամով)՝ 14.3%-ով և դրա տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում գրեթե մնացել է անփոփոխ՝ 80.9%-ից հասնելով 81.1%-ի: Ընդ որում հիշյալ աճը մեծամասամբ արձանագրվել է ի հաշիվ ՀՀ կառավարության արտաքին պարտքի, որն աճել է ավելի քան 592.5 մլն ԱՄՆ դոլարով՝ ապահովելով ընդհանուր աճի 85.9%-ը:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 288.8 մլն ԱՄՆ դոլար, որից 235 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 53.7 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 6.8%՝ նախորդ տարվա 6.6%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ՝ 11.3%, նախորդ տարվա 9.4%-ի դիմաց: ԱԱՀ-ի վերադարձված գումարները բյուջեի եկամուտներում հաշվի չառնելու դեպքում՝ բյուջեի եկամուտների նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմում է 11.4%՝ 2016 թվականի 9.9%-ի դիմաց:

2017 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշը (ԶՆԱ) աճել է՝ 2016 թվականի 4002.5 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 4722.2 մլն ԱՄՆ դոլար: Աճել է նաև ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2016 թվականի 37.9%-ի դիմաց կազմելով 40.9%, սակայն նվազել է ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2016 թվականի 114.3%-ից հասնելով 110.5%-ի:

Ամփոփելով ՀՀ պետական պարտքի ցուցանիշները՝ նշենք, որ 2017 թվականի վերջի դրությամբ այն կազմել է 3,279.6 մլրդ դրամ (6,774.6 մլն ԱՄՆ դոլար)) կամ ՀՆԱ-ի 58.8%-ը, որից ՀՀ կառավարության պարտքը՝ 2,988.4 մլրդ դրամ (6,173.1 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 53.6%-ը, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը՝ 291.2 մլրդ դրամ (601.5 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 5.2%-ը: 2017 թվականի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ անվանական արտահայտությամբ աճել է 404 մլրդ դրամով կամ 14%-ով (832.5 մլն ԱՄՆ դոլարով): Ընդ որում, դա հիմնականում տեղի է ունեցել ՀՀ կառավարության պարտքի աճի հաշվին, որը կազմել է 357 մլրդ դրամ կամ 13.6%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքն աճել է 47 մլրդ դրամով կամ 19.2%-ով: